



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ  
ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐԵՎԵԼԱՅԱՅ ԵՎ ԹՈՒՐՔ  
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ  
2010

ՀՏԴ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (23)  
Խ 282

Տպագրվում է Հայաստանի ազգային արխիվի  
և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի  
գիտական խորհուրդների որոշումներով

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԸ

Կազմողներ և խմբագիրներ՝

Վ. Ն. Ղազախեցյան (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)

Ա. Ս. Վիրաբյան (պատմ. գիտ. դոկտոր)

Ս. Ս. Միրզոյան (պատմ. գիտ. թեկնածու)

Խ 282 Խաչատրյան Աստվածատուր: Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները / Ա. Խաչատրյան, Կազմողներ և խմբագիրներ՝ Վ. Ն. Ղազախեցյան և ուրիշ.-Եր.: Հայաստանի ազգային արխիվ, 2010.- 287 էջ:

Սույն աշխատության հեղինակային ձեռագիր օրինակը շուրջ 90 տարի պահել ու պահպանել է Հայաստանի արխիվը: Ըստ հեղինակ Աստվածատուր Խաչատրյանի կենսագիր Գաբրիել Լազյանի՝ «Հայրենիքի» խմբագրության մօտ անտիպ կը մնա «Հայ Դիվանագիտութեան Պատմութիւնը»-ի ձեռագիրը», որը, հավանաբար, նույն աշխատությունն է և ձեռագրի այլ օրինակ: Այն Ա.Խաչատրյանը գրել է Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ Ալ. Խատիսյանի պատվերով՝ որպես Տրապիզոնի և Բաթումի միջպետական բանակցությունների վավերագրերի հավաքածուի «նախաբան», և որն արժանացել է Սիմոն Վրացյանի գրավոր ուշադրությանը:

Գիրքը լուսաբանում է հայ-թուրքական հարաբերությունների 1918թ. գործընթացը, դրա հանգուցային հիմնահարցերը՝ Հայաստանի Հանրապետության ծնունդը, դրա հետ առնչվող իրադարձություններով: Կարելի է ասել, որ 1920թ. գրված այս գրքույկը հիմնահարցի ուսումնասիրության առաջին և հաջողված փորձն է և ունի այժմեական նշանակություն:

Հեղինակը իր գիրքը՝ նրա վերնագրում, ներկայացրել է որպես «Բ մաս», իսկ դրանից առաջ կա նաև այլ՝ «Հայ ազատագրությունը և եվրոպական դիվանագիտությունը» վերնագիր, որը հուշում է, որ այն կարող է կամ կարող էր վերաբերել «Ա մասին», որի մասին այլ բան մեզ հայտնի չէ: Ս. Վրացյանի 1920 թ. գրված և այս գրքում բեռմած «Կուռճիկ»-ը և չի օգնում տվյալ հարցի լուծմանը:

ISBN 978-99941-878-6-7

© Հայաստան

Աստվածատուր (Ասատուր) Խաչատրյանի տպագրվող ուսումնասիրությունը, որը գրվել է 1920թ., հիմնախնդրին նվիրված առաջին փորձն է հայ պատմագրության մեջ: 1917թ. նոյեմբեր-1918թ. հոկտեմբեր ընդգրկող ժամանակաշրջանը հազեցած է հայ ժողովրդի կյանքում պատմական և բախտորոշ նշանակություն ունեցող խոշորագույն իրադարձություններով: Գլխավորը Հայաստանի Հանրապետության հռչակումն էր 1918թ. մայիսի 28-ին՝ հայկական անկախ պետականության վերականգնումը: Հարցի հետազոտությունը դրված է հայ-թուրքական հարաբերությունների հիմքի վրա, քանզի Հայաստանի անկախության ստեղծումը գրքի հեղինակը մեծապես դիտարկել է որպես օսմանյան թուրքիայի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի արդյունք:

Անկախության ձեռքբերումը լայն իմաստով արդյունք էր ժողովրդական և ազատագրական պայքարի ծավալման, որ սկսվեց 1917թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակով և շարունակվեց հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում, երբ Ռուսաստանում իշխանությունը գրավեց բոլշևիկների սոսակցության կողմից: Անդրկովկասում անկախ պետականությունները սաղմնավորվեցին ազգային շարժումների հիման վրա, հանդես բերելով իշխանության այնպիսի ձև, որպիսին է ազգային խորհուրդը (հայկական, վրացական, ադրբեջանական և այլն): Եթե Ռուսաստանի կենտրոնական շրջաններում 1917թ. հաստատվել էր երկիշխանություն (կենտրոնական ժամանակավոր կառավարություն և նրա տեղական մարմիններ՝ ինչպես Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (Օզակոմ), բանվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդների գործադիր կոմիտեներ), ապա Անդրկովկասի երկրամասում գործում էր նաև երրորդ իշխանություն (բազմիշխանություն)՝ հանձին ազգային խորհուրդների, որպես տեղական առանձնահատկության արդյունք: Ազգային խորհուրդները աստիճանաբար նվաճեցին լայն ժողովրդականություն և ազդեցություն՝ ի հակակշիռ իշխանության մյուս մարմինների: Հայոց ազգային խորհուրդը, 15 մարդուց բաղկացած, կազմակերպել էր 1917թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսում կայացած համահայկական (արևելահայերի) համախորհրդակցությունը (համագումարը): Ըստ վերջինիս որոշման Անդրկովկասի հայկական գավառների համար օրենսդիր մարմին էր ծառայելու Ազգային ժողովը, իսկ գործադիր մարմին՝ ազգային խորհուրդը: Սակայն իրադարձությունների ընթացքում Ազգային ժողովը գրեթե չգումարվեց (միայն մեկ անգամ), և Ազգային խորհուրդը դարձավ միակ փաստական իշխանության մարմին, որը գործում էր Թիֆլիսում: Հենց այս մարմինն էր, որ 1918թ. մայիսի 28-ին ստանձնեց Անդրկովկասի հայկական գավառների կառավարումը: Ընդ որում, եթե Հայոց ազգային խորհուրդը հանդիսանում էր հայկական պետական կյանքի գլխավոր ուժը, ապա քաղաքական կյանք-

քի առաջնորդողը Հայ Հեղափոխական Ղազնակցությունն էր՝ նկատել է Ա. Վրացյանը սույն աշխատության կապակցությամբ գրած «Կարծիքում» (տես տպագրվող գիրքը):

Սկստենք, որ Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի հետ միաժամանակ ստեղծվել և գործում էր նաև արևմտահայերի ազգային խորհուրդ, որը դիտվում էր որպես ռուսական զորքերի կողմից Արևմտյան Հայաստանի ազատագրված տարածքների իշխանության մարմին, երբ այնտեղ կվերադառնար գաղթական դարձած արևմտահայ բնակչությունը, ինչպես այդ սպասվում էր կամ թվում էր 1917 թվականին:

Համախորհրդակցությունը, ճիշտ է, պաշտպանում էր Ռուսաստանի ժամանակավոր կառավարության քաղաքականությունը և Անդրկովկասն ու Հայաստանը դիտում էր ընդհանուր պետության սահմաններում, այնուամենայնիվ, խոսակցություն էր զնում նաև ինքնավարության ու ազգային պետականության հարցերի մասին: Ազգամիջյան հարաբերությունների հարցի լուծումը համախորհրդակցությունը տեսնում էր ազգերի ինքնորոշման իրավունքը, - ասված է նրա բանաձևում, որի նախագիծը մշակել էր համապատասխան սեկցիան, - հայ ժողովուրդը պիտի ձգտի իրականացնել իր այդ իրավունքը պետականության հիմունքներով և սկզբունքներով, անդրկովկասյան ժողովուրդների դեմոկրատիայի փոխադարձ համաձայնությամբ»: <sup>1</sup> Համախորհրդակցության նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ «պետականության հիմունքներն ու սկզբունքները» կարող էր և պետք է լինեին ինքնավարության որևէ ձևը կամ մակարդակը: Ընդ որում, հարցի բուն լուծումը սպասվում էր միայն Ռուսաստանի սահմանադիր ժողովից հետո, նրա որոշումների հիման վրա: Հարցի նախապատրաստության ուղղությամբ կարևոր աշխատանք էր կատարել 1917թ. ամռանը Պետրոգրադում տեղի ունեցած խորհրդակցությունը, որին մասնակցել էին նաև Ալ. Խատիսյանը և Ա. Շահխաթունյանը (Ա. Շահխաթունի): Վերջինս առաջարկություն և նախագիծ էր մշակել Անդրկովկասում տեղական ինքնակառավարման (զեմստվային) համակարգ հաստատելու և այդ կապակցությամբ երկրամասը նոր սահմանաբաժանման (передел) ենթարկելու մասին, <sup>2</sup> որն այնուհետև նա տպագրեց առանձին գրքով:

Ընդ որում հայ իրականության մեջ համազգային խորհրդակցությունը առիթ տվեց խորհելու նաև անկախ պետություն ստեղծելու անհրաժեշտության մասին: Այդ տեսակետից ուշագրավ է Պետրոգրադի (Սանկտ Պետերբուրգի) բնակիչ, զինվորական ինժեներ, գնդապետ Թա-

դևու Տեր-Հովսեփյանցի նամակը, որը նա նախատեսել էր համախորհրդակցության ուշադրությանն արժանացնելու համար: Պատերազմում հայ ժողովրդի զավակների թափած արյունը և արևմտահայ ժողովրդի ցեղասպանությունը, ասված է նամակում, «մեզ իրավունք են տալիս բարձրաձայն կոչել և պահանջել Հայաստանի անկախությունը»: Յուրաքանչյուր հայի նշանաբանը պետք է լինի, և նա պարտավոր է բարձրաձայնել ամենուրեք՝ «Մի կտոր չոր հող, որի անունը լինի անկախ Հայաստան»:<sup>3</sup>

Իրադարձությունների զարգացման համար բեկումնային դարձավ 1917թ. հոկտեմբերյան հեղափոխությունը և խորհրդային Ռուսաստանի հանդես գալը: Նախահեղափոխական և հետհեղափոխական ժամանակաշրջանում բոլշևիկների կուսակցությունը ազգային քաղաքականության մեջ կարևոր դեր էր հատկացնում ազգերի ինքնորոշման իրավունքի, ընդհուպ մինչև անկախություն, կարգախոսին: Բոլշևիկների համար այդ կարգախոսի հիմնական նպատակն էր՝ մի կողմից Ռուսաստանի ազգային շրջանները միավորել ցարիզմը տապալելու և, մյուս կողմից, խորհրդային հանրապետություններին, կամավոր հիմունքներով, մեկ ընդհանուր պետականության մեջ միավորելու համար: Այդպես էր ընդունում բոլշևիկների և խորհրդային իշխանության առաջնորդ Վ. Լենինը տվյալ կարգախոսի իմաստը: Եթե ռուս սոցիալ-դեմոկրատն ասում է՝ անջատվիր, ապա ոչ ռուս սոցիալ-դեմոկրատը պետք է ասի՝ միանա՞նք: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ինքնորոշման մասին որոշում ընդունեց (1917թ. դեկտեմբերի 30) նաև իր զորքերի կողմից ազատագրված Արևմտյան Հայաստանի (Թուրքահայաստանի) մասին: Սակայն միաժամանակ նա իր զորքերը դուրս բերեց (համաձայն հաշտության մասին դեկրետի) ազատագրած տարածքներից, ուր շուտով ներխուժեցին օսմանյան Թուրքիայի ռազմական ուժերը:

Ռազմաճակատի մերկացումը, որը հայ ժողովրդին դեմ առ դեմ միայնակ կանգնեցրեց վաղեմի թշնամի թուրքերի դեմ և Բրեստ-Լիտվսկի պայմանագրի կնքումը, որը թշնամու ձեռքը հանձնեց Արևմտյան Հայաստանը և Կովկասյան Հայաստանի զգալի մասը, հայերի նկատմամբ, ինչպես արտահայտվել է Ավ. Ախարոնյանը 1925թ. ԽՍՀՄ արտգործոժողկոմ Գ. Հիչերինին հասցեագրված բաց նամակում, Ռուսաստանի իրականացրած առաջին երկու դավաճանական գործողություններն էին (որոնց հետագայում հաջորդեցին ևս երեք նման գործողություններ):<sup>4</sup>

Բրեստ-Լիտվսկի պայմանագիրը, ավելի ճիշտ նրա 4-րդ հոդվածը դժգոհության ալիք առաջացրեց հայության շրջանում, իսկ Մոսկվայի հայկական կոմիտեն նույնիսկ փորձեց հանդես գալ Ռուսաստանի կողմից նրա

<sup>1</sup> Հայոց ազգային համախորհրդակցությունը. Թիֆլիս, 1917թ. սեպտեմբեր-հոկտեմբեր: Փաստաթղթեր ու նյութեր: Կազմողներ՝ Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան, խմբագիր՝ Վ. Ղազարխեցյան // Բանբեր Հայաստանի արխիվների, 1992, N 1-2, էջ 77:

<sup>2</sup> Տե՛ս Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918.

<sup>3</sup> Տես Հայոց ազգային համախորհրդակցությունը, էջ 144-145:

<sup>4</sup> Տե՛ս Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии. Т.2, ч.1, Составитель, отв. ред. Ю. Барсегов. М., 2003, с.626-628.

վավերացման դեմ: Վավերացման հարցը քննարկվում էր Ռուսաստանի կոմկուսի 7-րդ համագումարում 1918թ. մարտին: Պայմանագրին դեմ էր նաև այդ կուսակցության մեջ «ծախսերի» հոսանքը Ն. Բուխարինի ղեկավարությամբ, որը պաշտպանում էր Գերմանիայի դեմ «հեղափոխական պատերազմ» մղելու տեսակետը: Մոսկվայի հայկական կոմիտեի անդամներ Կարեն Միքայելյանը (գրող) և Յովսեփ Թադևոսյանը (Լազարյան ճեմարանի ուսուցիչ) պատրաստեցին բողոք-հայտարարություն, որը ցանկանում էին ընթերցել համագումարում, դա փորձելով հաջողացնել Ալ. Մյասնիկյանի օգնությամբ, որը, սակայն, չհաջողվեց: Բրեստի պայմանագրով հայկական հողերը թուրքիային զիջելը բողոք-հայտարարության հեղինակները հակադրում էին «Թուրքահայաստանի մասին» ՌՍՖՍՀ ժողկոմխորհի ղեկընտնի, որով Արևմտյան Հայաստանի հայկական վիլայեթներին շնորհվում էր ինքնորոշման իրավունք: Հայերը բողոքում էին դաշնագրի 4-րդ հոդվածի դեմ, որը «ջուրն էր նետում թրքահայերին խոստացուած իրաւունքները» և պահանջում «ապահովել դաշնագրի մէջ հայ ժողովրդի քաղաքական անկախութիւնը Թուրքիայի արեւելեան նահանգներում», - կարդում ենք բողոք-փաստաթղթի հեղինակներից Յովսեփ Թադևոսյանի հոդվածում:<sup>5</sup>

Անդրկովկասի ազգային-քաղաքական ուժերն ու կուսակցությունները հրաժարվեցին ճանաչել Ռուսաստանի բուլշևիկների իշխանությունը՝ քաղաքական կողմնորոշում պահելով դեպի Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը և նրա հռչակած Սահմանադիր ժողովը: Նման ակնկալիքներով 1917թ. նոյեմբերին ստեղծվեց Անդրկովկասյան կոմիսարիատը, ապա հրապարակ եկավ Անդրկովկասյան սեյմը, կազմավորվեց Անդրկովկասյան դաշնային պետությունը, որը երկրամասի երեք հիմնական ժողովուրդների՝ հայերի, վրացիների ու ադրբեջանցիների դաշնային հանրապետություն էր: Այս պետականության գործընթացները տեղի էին ունենում ազգամիջյան սուր բախումների պայմաններում, երբ բացահայտ էր նաև հայ ժողովրդի շահերի դեմ վրաց-ադրբեջանական շահերի համատեղումը: «Այդպիսով,- գրել է Ռուբեն Տեր-Մինասյանը,- մի ամանի մէջ ամփոփուած երեք ժողովուրդները մնում էին իրարու հակառակ եւ նոյնիսկ թշնամի»:<sup>6</sup>

Այս ներքին հակասություններին շուտով միացավ արտաքին ճնշումը Օսմանյան Թուրքիայի կողմից, որը, խախտելով Երզնկայում ստորագրված (1917թ. դեկտեմբերի 5) ռուս-թուրքական զինադադարը, և, լավագույնս օգտվելով այն դատարկությունից, որ ստեղծել էին ռուսական զորքերը Կովկասյան ճակատում, հեռանալով այնտեղից, 1918թ. սկզբին հարձակման անցավ ճակատի ամբողջ երկարությամբ: Դատարկ ճակատը

տեղնուտեղը զբաղեցնում էին նոր կազմավորվող Հայկական կորպուսի ստորաբաժանումները: Վրացական ուժերի դիմադրությունը ձևական նշանակություն ուներ: Ինչ վերաբերում է ադրբեջանցիներին, ապա նրանք ոչ միայն կռվին մասնակցել չէին պատրաստվում, այլ օր առաջ սպասում էին ցեղակից թուրք զորքի ժամանմանը՝ համատեղ պայքարելու համար Բաքվի խորհրդային իշխանության դեմ: Հայկական ուժերը միայնակ անկարող գտնվեցին լուրջ դիմադրություն ցույց տալու թշնամուն և, ստիպված, նահանջում էին: Շուտով թուրքերը գրավեցին Արևմտյան Հայաստանի ազատագրված տարածքները և ներխուժեցին Կարսի մարզ, ապա Երևանի նահանգ: Թուրքական զորքերի ներխուժումը և խորացումը հայկական ու անդրկովկասյան տարածքներում, որ տեղի էր ունենում Տրապիզոնի և Բաթումի բանակցությունների ամբողջ ընթացքում, ինչպես գրել է Անդրկովկասյան պատվիրակության քարտուղար և «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական պատմությունը» մենագրության հեղինակ Միքայել Թումանյանը, «հայ ժողովրդին դրեց ֆիզիկական լրիվ ոչնչացման սպառնալիքի առաջ»: Նույն ժամանակ, շարունակվում է Մ. Թումանյանը, թուրքերը չէին թաքցնում իրենց համակրությունը Անդրկովկասի թաթար բնակչության նկատմամբ, ովքեր իրենց հայտարարել էին չեզոք, բայց ամեն կերպ ձգտում էին օգնած լինել թուրքերի առաջխաղացմանը: Ինչ վերաբերում է վրաց մենշևիկներին, ապա նրանք հաջողացրին հասնել Գերմանիայի հովանավորությանը:<sup>7</sup> Հայ զորքի ու հայ ժողովրդի համար հետագա նահանջի տեղ այլևս չկար, քանզի թիկունքում թշնամական տարածքներ էին: Եվ նրանք ծառայեցին թուրք նվաճողների ու արևմտահայ ժողովրդի ցեղասպանների դեմ՝ հաղթական ճակատամարտեր տալով Սարդարպատում, Բաշ-Ապարանում ու Դարաքիլիսայում: Հայկական զորքի քաջությունն ու արիությունը ճանաչեց ու գնահատեց նաև թուրքական բանակի հրամանատարությունը: Թշնամին ստիպված էր ընդունել նաև հայկական պետության ստեղծման անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ մեկտեղ: Հարկադրելով Անդրկովկասին Ռուսաստանից անջատվել, Թուրքիան միաժամանակ նպաստեց նրա տրոհմանը և Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի պետականությունների ստեղծմանը:

Հայաստանի Հանրապետության առաջին ճանաչողը Թուրքիան էր, որը 1918թ. հունիսի 4-ին նրա հետ կնքեց հաշտության պայմանագիր: Մինչև հայկական պատվիրակության հետ թուրքերի բանակցելը՝ Բաթումում բանակցություններ էին ընթացել թուրքական և Անդրկովկասյան կառավարության պատվիրակությունների միջև: Բաթումում կայացած բանակցություններին նախորդել էին Տրապիզոնի բանակցությունները:

<sup>5</sup> Թադևոսյան Յովսեփ, Փշրանքներ անցեալի յուշերից.- Հայրենիք, 1938, թիվ 4, էջ 88-93 (հոդվածում «ծախս» կոմունիստները շփոթել են «ծախս» տեսների հետ):

<sup>6</sup> Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, Գ. հրատ., Թեհրան, 1982, էջ 134:

<sup>7</sup> Տե՛ս Туманян М. Дипломатическая история Республики Армения в период с момента провозглашения независимости по день установления советской власти, ԳԱԱ, ֆ. 1712, ց. 1, գ. 327, ք.4:

Իր դաշնակից Գերմանիայի աջակցությամբ օսմանյան թուրքիան հասել էր նրան, որ 1918թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում ստորագրված ռուս-գերմանական պայմանագրում տեղ գտած 4-րդ հոդվածի համաձայն Ռուսաստանը պարտավորվել էր թուրքիային զիջել Բաթումի, Արդահանի և Կարսի սանջակները: Անդրկովկասի կառավարությունը, որը երկրամասը անջատված էր դիտում Ռուսաստանից, չէր ընդունում Բրեստի պայմանագիրը և հրաժարվում էր հանձնել իր տարածքները: Այս հարցի շուրջն էր, որ Տրապիզոնում ընթացել էին բանակցություններ կողմերի միջև: Ընդ որում թուրքական պատվիրակությունը Տրապիզոնի հանդիպումը ներկայացնում էր որպես կոնֆերանս և ոչ թե բանակցություններ, նշելով, որ հարցի լուծումը արդեն կայացել է Բրեստ-Լիտովսկում, իսկ Տրապիզոնում Անդրկովկասի պատվիրակությունը պարզապես պետք է ընդունի արդեն կայացած որոշումը և որ բանակցությունների անհրաժեշտությունը չկա, հակառակ դեպքում թուրքական զորքերը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սահմաններին հասնելուց հետո կշարունակեն իրենց առաջխաղացումը Անդրկովկասում: Անդրկովկասյան պատվիրակությունը փորձում էր չենթարկվել թուրքական ճնշմանը՝ նրան չհանձնել հիշյալ սանջակները, պատճառաբանելով, որ Անդրկովկասը չի ճանաչում խորհրդային Ռուսաստանի իշխանությունը և նրա ստորագրած մարտի 3-ի պայմանագիրը: Գործին չօգնեց նաև Անդրկովկասյան սեյմի կողմից կատարված հայտարարությունը՝ երկրամասը Ռուսաստանից անջատելու մասին:

Նշելի է, որ Անդրկովկասի պատվիրակությունը և նրա հայ անդամները Տրապիզոն էին մեկնել իրենց առաջարկություններով, որոնք միանգամայն մերժվեցին թուրքական պատվիրակության կողմից: Սեյմի կողմից ընդունված հաշտության բանակցությունների սկզբունքներն էին՝

- Սեյմն իրավասու է հաշտություն կնքել Թուրքիայի հետ (սա իր մեջ պարունակում էր խորհրդային Ռուսաստանից անջատվելու սաղմը)։

- Սեյմը նպատակ ուներ հասնել Թուրքիայի հետ «վերջնական խաղաղության» հաստատմանը։

- Հաշտության հիմքում դրվելու էր 1914թ. սահմանների վերականգնումը։

- Եվ 4-րդը՝ Անդրկովկասի պատվիրակությունը իրավասու էր բարձրացնելու Արևելյան Անատոլիայի ինքնորոշման իրավունքի հարցը, մասնավորապես «Թրքահայաստանի ինքնավարությունը թուրք պետության շրջանակում»:

Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի կողմից ընդունված «հայերի առավելագույն պահանջները» հիմնականում ելնում էին Սեյմի առաջարկություններից, որոշ մասնակի տարբերություններով:

Թուրքական կողմը, սակայն, բանակցություններին մոտենում էր հաղթողի ու նվաճողի դիրքերից: Եվ ինչպես Անդրկովկասի պատվիրակության քարտուղար Մ. Թումանյանն է արտահայտվել՝ «Թուրքերը բնավ չեն ուզեր մեր ժողովն անուանել «հաշտութեան կոնֆերանս», այնպես որ

մեզի համար հաշտութիւն՝ անոնց համար կռիւ է, այս պատճառով ալ անոնք միշտ կաշխատեն անուանել պարզաբար «Տրապիզոնի կոնֆերանս»:

Տրապիզոնի բանակցություններն ընդհատվեցին և անդրկովկասյան պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս՝ իր կառավարությանը ստեղծված դրության մասին զեկուցելու համար: Ելնելով նոր իրադրությունից, երբ թուրքական զորքերը շարունակում էին առաջխաղացումը և զենքի ուժով լուծում Բրեստի որոշումները, այսինքն գրավում Արդահանը, Բաթումը և Կարսը, կառավարությունը որոշեց ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանները: Իսկ Թուրքիան, խախտելով Բրեստ – Լիտովսկի պայմանագիրը, ներխուժեց նաև Անդրկովկասի սահմաններ: Թշնամին զավթեց Ալեքսանդրապոլը և Երևանի նահանգի այլ տարածքներ: Միայն այդ ժամանակ Գերմանիան որոշեց սահման դնել իր դաշնակիցի «ախորժակին»: 1918թ. ապրիլի 27-ին Կ.Պոլսում կնքվեց թուրք-գերմանական գաղտնի պայմանագիր, որը կոչված էր Անդրկովկասում բաժանել Գերմանիայի և Թուրքիայի ազդեցության գոտիները: Ըստ այդմ Թուրքիային անցնում էին Անդրկովկասում նրա գրաված, փաստորեն հայկական, բոլոր տարածքները, ինչպես նաև Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: Անդրկովկասի մնացած տարածքները դառնում էին Գերմանիայի ազդեցության գոտի:<sup>8</sup> Ապրիլի 27-ին գերմանա - թուրքական պայմանագրին հաջորդեց թուրքմուսավաթական գաղտնի պայմանագրի ստորագրումը, որով բացվում էր Թուրքիայի ճանապարհը դեպի Ադրբեջան ու Բաքու: Դա ասես մարտահրավեր էր Գերմանիայի շահերին և գալիս էր խորացնելու քառյակ միության երկու դաշնակիցների բավական սրված հակասությունները: Բնավ ոչ պատահականորեն շուտով Գերմանիան Վրաստանի կողմից ստացավ «հովանավորության» իրավեր, իսկ 1918թ. օգոստոսի 27-ին ստորագրված Բրեստ-Լիտովսկի լրացուցիչ պայմանագրով Գերմանիան խորհրդային Ռուսաստանի հետ լուծում էր Բաքվի նավթի իր պահանջը բավարարելու խնդիրը:

Եվ, այնուամենայնիվ, Թուրքիային հաջողվեց առաջ տանել իր պլանները Անդրկովկասում: 1918թ. մայիսի 11-ին վերսկսվեցին թուրք-անդրկովկասյան բանակցությունները Բաթումում, որն արդեն գտնվում էր թուրքական տիրապետության տակ: Այս դեպքում թուրքական պատվիրակությունը, չբավարարվելով երեք սանջակներով, ներկայացրեց նոր, լրացուցիչ պահանջներ, որոնք վերաբերում էին հիմնականում հայկական տարածքներին ու Անդրկովկասի երկաթուղիների օգտագործմանը՝ իրենց զորքերի տեղաշարժերի համար: Ակտիվ դիվանագիտական աշխատանք կատարվեց թուրքական պահանջները մեղմացնելու համար: Միաժամանակ Անդրկովկասյան պատվիրակության վրացի և ադրբեջանցի պատվիրակները հայ պատվիրակներից գաղտնի ձգտում էին տարածայնություն-

<sup>8</sup>Տե՛ս Пуня Г.В. Германский империализм в Закавказье в 1910-1918гг. М., 1978, էջ 101:

ները լուծել հայկական շահերի դեմ, իսկ վրացիները հասան նրան, որ գաղտնի պայմանագիր ստորագրեցին Գերմանիայի հետ, ընդունելով նրա հովանավորությունը:

Վրաց - գերմանական շփումները սկսվել էին ավելի վաղ: Վրաց դիվանագետ Ջուրաբ Ավալովը փորձել է հիմնավորել իրենց քաղաքական նոր կողմնորոշումը: Վրաց ազգը, գրել է նա, ռուսական տիրապետության տակ «պարզապես ուժասպառ վիճակի էր հասած», ուստի որոշեց «յարիլ եւրոպային»՝ Գերմանիային, դա ճիշտ և շահավետ համարելով երկու կողմերի համար էլ:

Իսկ երիտթուրքերի կուսակցության կենտրոնի անդամ Ռիզա-բեյը (Յուսուֆ Ռիզա) 1919թ. այդ կուսակցության դատավարության ժամանակ, տվյալ հարցի կապակցությամբ, տվել է հետևյալ ցուցումները. «Վրաստանը գնում էր (խոսքը պատերազմի մասին է - Վ.Դ.) Թուրքիայի ու Գերմանիայի հետ համագործակցաբար»: Այդ պատճառով է, շարունակում է Ռիզա-բեյը, որ իրենք լայն զիջումներ արեցին Վրաստանին Բրեստ-Լիտովսկի պայմանագրում: «Խոսքը գնում էր գաղտնի դաշնակցի մասին, - եզրափակում է Ռիզա-բեյը, - նրան հատուցում էին թաքուն գործունեության համար»:<sup>10</sup>

Վրաց - գերմանական կապերը բազմակողմանի ու սերտ դարձան հատկապես Երզնկայի զինադադարից (1917թ. դեկտեմբերի 5) և Բրեստ - Լիտովսկի պայմանագրից (1918թ. մարտի 3) հետո, երբ կայսերական Գերմանիան և Օսմանյան Թուրքիան նախապատրաստվում էին Կովկասի նվաճման և մերձավոր արևելյան իրենց քաղաքականության կենսագործման նոր փուլին:

Այդ ընթացքում վրաց ազգայնականները ընդհուպ մոտենում էին իրենց երկրի անկախությանը: Վրաստանը կանջատվի Անդրկովկասից՝ վերջնագրի լեզվով խոսում էին նրանք հայերի հետ, եթե վերջիններս չվերադառնան Անդրկովկասի կառավարություն: Դա ապրիլի 12-ին էր (հին տոմարով), երբ Կարսը թուրքերին հանձնելու մասին կառավարության նախագահ Չխեիժեի արձակած հրամանի պատճառով հայ նախարարները հեռացել էին այնտեղից, - գրել է Ա. Խատիսյանը իր «Օրագրում»: Ըստ նույն աղբյուրի՝ բանակցությունների համար Բաթում մեկնած պատվիրակության անդամ Չաօխնսկին հայերին հայտնել է այն մասին, թե ենվեր փաշան իրեն խնդրել է մատնացույց անել վրաց իշխանների, «ովքեր կկարողանան վրացական կառավարություն կազմել»:<sup>11</sup> Այդ նշանակում է, որ Գերմանիայի հետ Թուրքիան ևս մասնակցում էր Վրաստանի անկախացման գործընթացին:

Վերջապես, 1918թ. մայիսի 14-ին, երբ Բաթումում սկսվել էին թուրք - անդրկովկասյան բանակցությունները, վրացական ազգային խորհուրդը որոշեց ընդունել Գերմանիայի հովանավորությունը: Արագ և գաղտնի կերպով Վրաստանը և Գերմանիան նախապատրաստեցին համապատասխան պայմանագրերի նախագծերը:<sup>12</sup>

Մայիսի 26-ին թուրքական պատվիրակությունը իր պահանջները ներկայացրեց վերջնագրի ձևով: Վերջնագիրն ընդունեց ոչ թե անդրկովկասյան միացյալ պատվիրակությունը, այլ նրա հայ, վրացի և ադրբեջանցի անդամները, որովհետև միացյալ պատվիրակությունը ներկայացնող Անդրկովկասյան սեյմը հրաժարվում էր լուծել պատերազմի ու խաղաղության հարցը, այն թողնելով ազգային խորհուրդներին: Նույն օրը Անդրկովկասյան սեյմը հայտարարեց իր ինքնալուծարման մասին, իսկ Վրացական ազգային խորհուրդը հռչակեց Վրաստանի անկախությունը: Դրան հետևեց Ադրբեջանի և Չայաստանի անկախությունների հռչակումը:

Չայոց ազգային խորհրդի մայիսի 28-ի որոշումից հետո Բաթում վերադարձավ հայկական պատվիրակությունը՝ Ալ. Խատիսյան, Գ. Քաջագունի և Ս. Պապաջանյան կազմով, Չայոց ազգային խորհրդի անունից, որն արդեն ընդունել էր թուրքական վերջնագիրը, թուրքական պատվիրակության հետ բանակցությունները, արդեն նոր հիմունքներով, շարունակելու համար: Բանակցությունները հանգեցրին հունիսի 4-ի պայմանագրի ստորագրմանը:

Շատ էական է, որ պայմանագրում (պետք է կարծել, որ նրա նախագծում ևս, որ կազմել էր թուրքական կողմը), տեղ էր գտել «իրեն անկախ հռչակած Չայաստանի Չանրապետություն» ձևակերպումը: Ստորև ցույց կտրվի, թե այդ երբ և ինչպես Օսմանյան Թուրքիան Բաթումի բանակցությունների սկզբում, դեմ լինելով հայկական պետականության ստեղծմանը, այժմ հաշտվել էր այդպիսի պետության անհրաժեշտության մտքի հետ:

Չարցի լուսաբանության համար կարևոր փաստաթուղթ է նախ Ալ. Խատիսյանի 1918թ. հունիսի 2-ի նամակը Ավ. Ահարոնյանին, որում ներկայացված է հայկական պատվիրակության հանդիպումը թուրք պատվիրակներ Վեհիբ փաշայի և Չալիլ բեյի հետ:<sup>13</sup> Առաջինը Կովկասյան ճակատի թուրքական զորքերի հրամանատարն էր, իսկ երկրորդը՝ Թուրքիայի արդարադատության նախարարը և պատվիրակության ղեկավարը, չնայած բանակցությունները փաստորեն վարում էր Վեհիբ փաշան: Կան նաև բազմաթիվ այլ վավերագրեր ևս, որոնք դարձյալ կկայանալուց վեն այստեղ:

<sup>12</sup> Տե՛ս Ստոյա Գ.Յ. Германский империализм в Закавказье в 1910-1918гг., М., 1978, էջ 103: Его же, Политика Германии в Закавказье в 1918г. Тбилиси, 1971, էջ 34-41:

<sup>13</sup> Տե՛ս Ավետիսյան Գ., Չայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս; եր., 1998, էջ 240-245:

<sup>9</sup> Տե՛ս Ավալով Զ., Վրաստանի անկախությունը.- Չայոենից, 1935, թիվ 5, էջ 68-69, ուսերեն գրքի թարգմանությունից:

<sup>10</sup> ՉԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 278, թ. 6:

<sup>11</sup> Խատիսյան Ա., Օրագրություն, 9 ապրիլի և 6 մայիսի:

Հունիսի 2-ին,<sup>14</sup> երբ արդեն տեղի էր ունեցել պայմանագրի նախատորագրումը, կողմերի զրույցից պարզ դարձավ, որ հաշտության գալու հայերի ձգտումը Կ. Պոլսում թողել էր «շատ լավ տպավորություն»: Վեհիբ փաշան, գրել է նամակում Ալ. Խատիսյանը, հայտնել է, որ Թուրքիայի կողմից հայկական պետություն կազմակերպելու համաձայնության տրամադրությանը նպաստել են մի քանի, թվարկում է չորս, պատճառներ. ա) հայերի քաղաքականության պարզությունը (այսինքը դեպի հաշտության հակվելը), բ) խաղաղ համաձայնությունը Ադրբեջանի հետ, գ) վերջնագիրը ժամանակին ընդունելը, և, վերջապես, դ) Ղարաքիլիսայում իրենց հայրենիքը պաշտպանող հայերի հերոսությունը, որը և հարգանք է ներշնչում նրանց նկատմամբ: Այդ մարտում հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են լինել «լավագույն զինվորներն աշխարհում»: Ղարաքիլիսայի ճակատամարտը, ըստ Վեհիբ փաշայի, «այս պատերազմի պատմության մեջ» սակավադեպ կռիվ էր:

Ա. Խաչատրյանը իր ուսումնասիրության մեջ վերլուծել է բերված պատճառները և միանգամայն իրավացի կերպով ցույց տվել, որ Վեհիբ փաշայի նշած առաջին երեք պատճառները էական դեր ու նշանակություն չէին կարող ունենալ հայկական պետության ստեղծման գործում, և նա շեշտը դնում է չորրորդ պատճառի՝ մայիսյան հերոսամարտերի, նաև Ղարաքիլիսայի ճակատամարտի նշանակության վրա, որը և թշնամուն հարկադրեց ընդունել հայոց պետության հռչակումը և ստեղծումը: Անկախ նրանից, որ ճակատամարտի կամ ճակատամարտերի նշանակությունը թվարկված է վերջին տեղում, կարևոր է այն, որ դա (նշանակությունը) ընդունվում է թշնամու կողմից: Սյուսը, որ կցանկանայինք նկատել, այն է, որ Ղարաքիլիսայում հայ զինվորների հերոսության բարձր գնահատականը ինքնանպատակ չէր: Մեր կարծիքով դա կապ ունի թուրքերի արած ու բազմիցս կրկնած առաջարկության հետ՝ կնքել հայ-թուրքական ռազմական դաշինք, միություն (entente), որը պետք է ուղղված լիներ դաշնակից երկրների դեմ և հայկական զինուժը մտցնել նրանց դեմ կռվի մեջ:

Սակայն խոսքը տանք Ա. Խաչատրյանին: Խորը վերլուծելով Վեհիբ փաշայի թվարկած պատճառները, նա եզրակացրել է, որ «առաջին երեքը բնաւ չունին այն կարևորութիւնը, որ կարողանային յառաջ բերել այս կամ նման փոփոխութիւն մը (այսինքը՝ դարձակետ Թուրքիայի պատմության մեջ՝ հայերի հետ թշնամությունից համաձայնության անցնելը- Վ.Ղ.)»: «Իրականն ու կարևորը, -գրել է նա,- չորրորդն է՝ հայ զորքի հերոսական դիմադրութիւնն է, որուն չէին սպասեր և այժմ խորհել կը թելադրէ թուրք դիւանագետներուն»: Միաժամանակ Ա. Խաչատրյանը ուշադրություն է

հրավիրում մեկ այլ հանգամանքի վրա ևս: Խոսքն այն մասին է, որ Կովկասի սահմաններում հայկական պետության հաստատումով Թուրքիան կարող էր Հայկական հարցը լուծված համարել և կանխել Արևելյան Անատոլիայում հայերի համար ինքնավարության հնարավոր պահանջը՝ դաշնակից երկրների ապագա հաշտության կոնֆերանսի կողմից:

«Ահա այն իրական պատճառները, մեր կարծիքով,- եզրափակել է իր վերլուծությունը Ա. Խաչատրյանը,- որոնք ազդեցին Վոսփորի դիւանապետներու մտքի վրա և ճիշտ ասոր համար խալիլ պէյն իր փակման ճառի մէջ (հունիս 4-ին, Բաթումի պայմանագրի ստորագրման առթիվ-Վ.Ղ.) մասնաւորապէս կը շեշտէ, «թէ վերջին թուրքերն օսմանեան կառավարութիւնը մեծ վճռակամութեամբ տիրեր է իր զգացումներուն», որոնք միշտ թշնամական էին, հասկանալի է, դեպի հայերը և «իրեն յանձնարարեր ստորագրել փաստաթուղթ մը, որ կը ճանչնայ հայ կառավարութեան մը գոյութիւնը»:

Ա. Խաչատրյանի դատողությունները հարկ ենք համարում լրացնել և ամրապնդել մեր տրամադրության տակ եղած փաստական նյութերով ու տվյալներով: Ըստ դրանց՝ հայկական պետականության ստեղծման մասին առաջին հիշատակումը գրանցված է Ա. Խատիսյանի օրագրության մեջ 1918թ. մայիսի 25-ին, երբ երեկոյան ժամը 10-ին Անդրկովկասյան պատվիրակության անդամներ Ա. Խատիսյանը և Յ. Քաջազունին հանդիպում են ունենում գերմանական պատվիրակության ղեկավար Ֆոն Լոսովի հետ: Դա այն բանից հետո էր, երբ հայտնի էր դարձել, որ հաջորդ օրը տեղի է ունենալու Անդրկովկասյան սեյմի ինքնացրումը, Վրաստանը հռչակվելու է անկախ հանրապետություն, ունենալով Գերմանիայի հովանավորությունը, և որ Ֆոն Լոսովը վերադառնում է Գերմանիա: Վերջինս, կարողում ենք Ա. Խատիսյանի օրագրում, «խնդրեց նախևառաջ պատվիրակություն ուղարկել Բեռլին (Գերմանիայից օգնություն ստանալու հույսով-Վ.Ղ.) և Հայաստանը հայտարարել անկախ»<sup>15</sup>:

Վերջնագրի կապակցությամբ Լոսովը, հենվելով Հալիլ բեյի վրա, հայտնել է, որ թուրքերը «վերցնում են Երևանի (հասկանալի նահանգի-Վ.Ղ.) լավ մասը, սկզբունքով ընդունում են հայերի անկախությունը և խոստանում են նրանց տարածքն ընդլայնել ի հաշիվ Կովկասի, դրա համար առաջարկելով գնալ Կ. Պոլիս՝ թերևս հաջողվի որոշ համաձայնության գալ»<sup>16</sup>:

Մի քանի օր անց, մայիսի 28-ին. Լոսովի մտադրությունների մասին տեղեկություններ է հայտնել նրա հետ Գերմանիա մեկնող հայկական պատվիրակության ղեկավար Յ. Օհանջանյանը: Մեկ դեպքում Ֆոն Լոսովը կասկած է հայտնել Հայաստանի անկախություն հայտարարելու նպատակահարմարության վերաբերյալ, բացատրելով, թե Թուրքիան այդ անկախ երկրի հետ կարող է վերաբերվել ցանկացած ձևով: Դրանից հետո խոր-

<sup>14</sup> Այլ տվյալներով հունիսի 1-ին: Այսպես՝ հայկական պատվիրակության անդամները հունիսի 2-ին հեռագրել են գեներալ Թ. Նազարբեկյանին. «Հայտնում ենք, որ երեկ մենք ստորագրել ենք Թուրքիայի հետ պայմանագիրը».-տես՝ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.23, ք.51: Խոսքը պայմանագրի նախաստորագրման մասին է:

<sup>15</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.8, ք.1-133:

<sup>16</sup> Նույն տեղում, ֆ. 222, ց.1, գ.141, ք. 230 հակ.-231:



հուրդ է տվել թուրքական վերջնագիրն ընդունել, սակայն, վերապահությամբ՝ նրա հետ պայմանագիրը ստորագրել Քառյակ միության մյուս անդամ պետությունների հետ, միաժամանակ հարկավոր է հայտարարել Հայաստանի անկախության մասին և այլն:<sup>17</sup>

Մայիսի 25-ի դրությամբ սույն տվյալները պատվիրակության անդամ Մ. Պապաջանյանը հրապարակել է Հայոց ազգային խորհրդի մայիսի 27-ի նիստում, Բաթումից վերադառնալուց անմիջապես հետո: Մայիսի 26-ին Մ. Պապաջանյանն անձամբ էր հանդիպել Հալիլ բեյի հետ, որը նախ նրան տեղեկացրել էր, որ սույն օրը վերջնագիր է ներկայացնելու Անդրկովկասյան կառավարությանը, կամ, նրա չգոյության դեպքում, հայերի, վրացիների ու թաթարների ազգային խորհուրդներին, պատասխանի համար սպասելով 3 օր: «Եթե հայերը կցանկանան ընդունել վերջնագիրը, շարունակել է Հալիլ բեյը, - ապա իրենք դեմ չեն լինի, եթե հայերը իրենց 10 հազար քառակուսի վերստի վրա կառուցեն առանձին պետություն, որին իրենք կճանաչեն և նրա հետ կկնքեն պայմանագիր»<sup>18</sup>: Միաժամանակ Հալիլը հայտնել է այն մասին, որ իրենք դարձյալ չեն առարկի, եթե հայերն ուզենան համադաշնություն հաստատել մուսուլմանների հետ:

Մայիսի 26-ի երեկոյան ժամը 10-ին Հալիլ բեյը թուրքական պահանջները ներկայացրեց հայ պատվիրակներին՝ այն բանից հետո, երբ ցերեկվա ընթացքում տեղի էր ունեցել Վրաստանի անկախության հռչակումը, այնուհետև Անդրկովկասյան սեյմի ինքնացրումը: Այսպիսով, միացյալ Անդրկովկասի կազմալուծումը տեղի ունեցավ Վրաստանի նախաձեռնությամբ, ինչպես նաև օսմանյան թուրքիայի ճնշումով:

Անդրկովկասյան պատվիրակության հայ անդամները թուրքական պայմանագրի բովանդակությանը ծանոթ էին սկսած մայիսի 13-ից՝ բանակցությունների առաջին օրերից: Դրա շուրջ կողմերը բանակցություններ էին վարում երկու շաբաթ շարունակ, առանց համաձայնության գալու: Վերջապես մայիսի 26-ին թուրքերն իրենց փաստաթղթին տվեցին վերջնագրի ձև, պատասխանի համար սահմանելով 3-4 օր ժամանակ: Վերջնագիրն ընդունողը եղավ ոչ թե Անդրկովկասյան պատվիրակությունը, որն այլևս գոյություն չուներ, այլ երկրամասի երեք ժողովուրդներին ներկայացնող մարմինները, հայերի կողմից՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը:

Մայիսի 27-ին կայացավ Ա. Խատիսյանի ու Յ. Քաջազնունու հանդիպումը Հալիլ բեյի ու Վեհիբ փաշայի հետ: Վերջինս հայտնել է, թե սույն օրը գրավելու են Ղարաբաղի ստացումը: Ընդ որում Հալիլ բեյը «խնդրում էր պատասխանը տալ հայկական կառավարության անունից»,

ասելով, որ կսպասի մինչև մայիսի 30-ի երեկոն, և որ ինքը շատ լավ է գիտակցում հայերի ու Հայաստանի դրությունը, սակայն հույս էր հայտնում, որ տարածքային հարցում կարելի կլինի համաձայնության գալ հաշտության ստորագրումից հետո: «Նա,- գրել է Ա. Խատիսյանը,- խնդրեց ասել, որ թուրքերը ոչինչ չուեն Անդրկովկասի սահմաններում Հայաստանի կազմավորման (հասկանալ պետության-Վ.Ղ.) դեմ և որ Անդրկովկասյան դաշնությունը մոտակա ապագայի հարց է:

Այնուհետև Վեհիբ փաշան կարևոր խոստովանություն է անում ընթացող ճակատամարտերի մասին, որն ուղիղ կապ ունի հայկական պետականություն ընդունելու հետ. «Հայկական զորքերը լավ են մարտնչում: Անդրանիկն արտակարգ լավ է կատարում իր գործը, և ինքը՝ Վեհիբը մեծ բավականությամբ հույս է տածում կնքել հայ-թուրքական ռազմական կոնվենցիա»:<sup>19</sup>

Մոտենում էր Բաթումի բանակցությունների այն փուլի ավարտը, երբ դրանք ընթանում էին Թուրքիայի և Անդրկովկասյան կառավարության միջև (1918թ. մայիսի 11 - մայիսի 26): «Երեք շաբաթների ծանր ու մռայլ տպավորություն», - ասես անփոփում էր այդ փուլի ընթացքը Ա. Խատիսյանը, որը կլինի մասնակից նաև բանակցությունների երկրորդ փուլում (մայիսի 30 - հունիսի 4), երբ դրանք կընթանան Թուրքիայի և հայկական պատվիրակության միջև՝ նոր բովանդակությամբ, երբ Թուրքիան կորդեզորի նոր մոտեցում Հայաստանի ու հայկական հարցի նկատմամբ, չնայած այդ մոտեցումն արդեն սկսվել էր:

Ալ. Խատիսյանին կարևոր խոստովանություն է արել թուրքական պատվիրակության ղեկավար Հալիլ բեյը հունիսի 4-ին ունեցած հանդիպման ժամանակ: «Նա,- գրել է հայ պատվիրակը,- ինձ հանգամանորեն պատմեց 4. Պոլսում այս երեք շաբաթների ընթացքում Անկախ Հայաստանի գաղափարի ծագման պատմությունը և այն խիզախ պայքարի մասին, որից հետո այդ գաղափարը հաղթանակել է»:<sup>20</sup>

Նույնպիսի խոստովանություն է արել Վեհիբ փաշան Բաթումի կոնֆերանսում՝ պատվիրակությունների տեխնիկական հանձնաժողովի նիստի ժամանակ, որի նախագահն էր ինքը: Վերջինս, ըստ Ալ. Խատիսյանի, ասել է. «Վերջին օրերի վարմունքը լավ տպավորություն է թողել, ձեր զորքը հիմնալի է կռվել, մոտ ապագայում կարող եք եվրոպական լավ զորք ունենալ: Ըստ Շեֆիկ փաշայի տեղեկության՝ նա նման կռիվ չէր տեսել տաճկական ոչ մի զորաճակատում: Չնայած մեր ուժերի ու տեխնիկական առավելությունների՝ չորս օր տևեց»: Այնուհետև էական է դրանից հետևող եզրակացությունը: «Այդ կռիվը, շարունակում է մեջբերել Վեհիբ փաշայի խոսքը Ալ. Խատիսյանը,- զանազան խորհրդածությունների նյութ է դառնում, և ես հավատում եմ, որ Կովկասում դուք բռնելու եք Բուզա-

<sup>17</sup> Տես Հայաստանի Հանրապետությունը. 1918-1920թթ. (քաղաքական պատմություն), Երևան, 2000, էջ 19-20:

<sup>18</sup> ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք. 230 հավ.-231:

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.8, ք.101-133:

<sup>20</sup> Նույն տեղում, գ.23, ք.79:

րիայի տեղը: Պոլսում երկու հոսանք է եղել,- այնուհետև շարունակել է Վե-  
հիբ-փաշան,-մեկը հակառակ Հայաստանի անկախության է, մյուսը կողմ-  
նակից է եղել»:<sup>21</sup>

Այդ պայքարն ընթացել է երիտթուրքերի կուսակցության կենտրո-  
նական կոմիտեում: Ըստ Հալիլ բեյի՝ ինքը և Վեհիբ փաշան գտնվել են  
«կոմիտեի մեջ չափաւոր, հաշտարար հոսանքում»: Հակառակ հոսանքը  
ներկայացրել են Թալեաթ (Թալաաթ) և Էնվեր փաշաները, ովքեր «կ'ուզեն  
ի սպառ ոչնչացնել հայկական հողը»:<sup>22</sup>

Իրադարձությունների ընթացքում հայկական պետության օգտին  
եզրակացության գալու մասին է տեղեկացրել նաև Կ. Պոլսում Գերմա-  
նիայի դեսպան Բերնսդորֆը: Վերջինս հունիսի 23-ին ընդունել է հայ պատ-  
վիրակներ Ա. Սհարոնյանին և Ալ. Խատիսյանին, և խոսել Գերմանիայի  
մոտեցումների մասին՝ տարբեր հարցերի վերաբերյալ: Ինչ վերաբերում է  
հայկական պետության հարցին, ապա նա ասել է. «Մեզ զարմացրեց, որ  
Թիւրքիան, որը ութ օր առաջ չէր ուզում լսել ամզամ Հայաստան ստեղ-  
ծելու մասին (մանաւանդ Էնվեր և Թալեաթ փաշաները), յանկարծ համա-  
ձայնութիւն տուեց, և իմ յայտնած զարմանքին նրանք պատասխանեցին,  
որ մտածելուց յետոյ նրանք վճռեցին, որ այդպէս աւելի լաւ կը լինի»: Այս  
միտքը հարկ ենք համարում հաստատել ու ամրապնդել այլ վկայու-  
թյուններով ու տվյալներով ևս, ելնելով դրա կարևորությունից: Այսպես,  
Հայկական պատվիրակության և երիտթուրքերի կուսակցության կենտրոնի  
անդամներ Բեհաեդդին Շաքիր-բեյի ու Ռիզա-բեյի հանդիպման ժամանակ,  
որը կայացել է հուլիսի 25-ին, վերջիններս նշում էին, թե լավ կլինի, եթե  
հայերը չչոշափեն «Թիւրքիայում հայկական հարցը», որ դա իրենք  
կկարգավորեն, որպէս իրենց ներքին խնդիր: Այս փաստը արձանագրել է  
հայկական պատվիրակության քարտուղար Հակոբ Քոչարյանը 1918թ.  
հուլիսի 25-30 ընդգրկող «Համառօտ տեղեկութիւն տեսակցութիւնների  
մասին» փաստաթղթում: Հաջորդ օրը, հուլիսի 26-ին, ըստ նույն արձրուրի,  
հանդիպում է կայացել Ռաուֆ-բեյի (Տրապիզոնում թուրքական պատ-  
վիրակության ղեկավար) մոտ, երբ վերջինս հայերի առաջ բացել է Հայաս-  
տանի ու հայերի վերաբերյալ Թուրքիայում գոյություն ունեցող տեսա-  
կետը, ավելի ճիշտ երկու տեսակետները: Առաջին տեսակետը արտահայ-  
տել է փոքր և համեմատաբար թույլ խումբը, ըստ որի Կովկասում հանգս-  
տություն հաստատելու համար հարկավոր էր այնտեղ կազմավորել միմ-  
յանց հետ պայքարի մեջ գտնվող 3 պետություններ, քանի որ Թուրքիայի  
համար մեծ վտանգը գալիս էր ոչ թե Ռուսաստանից, այլ Կովկասից: Մյուս  
տեսակետը ներկայացնում էր ավելի ուժեղ խումբը, որը «սաստիկ ուզում է  
միացած Անդրկովկաս», բայց քանի որ Վրաստանը դրան դեմ է, նա իր

համար, որպէս հովանավոր, գտել է Գերմանիային: Անձամբ Ռաուֆ-բեյը,  
որը նախկինում կողմնակից էր «մի Անդրկովկասի», «այժմ կանգնած է  
առանձին պետությունների տեսակետի վրա»: Հայաստանը, այսինքն հայ-  
կական պետությունը, պետք է Թուրքիայի հանգստության համար, երաշ-  
խիք՝ որ թուրքահայերը իրենց հանգիստ կպահեն: Թուրքիայի հասարա-  
կական կարծիքի ու պաշտոնական Թուրքիայի համար, նշել է Ռաուֆ-բեյը,  
շատ զմահատելի էր այն հանգամանքը, որ հայկական հանրապետու-  
թյունը չէր խառնվում թուրքահայերի ներքին գործերին:<sup>23</sup>

Այլ կերպ ասած՝ հայկական պետությունը պետք էր Թուրքիային,  
որ իրեն զգա հանգիստ, վերջ տալով միջամտություններին իր ներքին գոր-  
ծերին և ցույց տալու, որ լուծել է Հայկական հարցը, և որ շատ կարևոր է,  
իր սահմաններից դուրս՝ Անդրկովկասում:

Չմայած ասվածի համոզությանը, շարունակենք զարգացնել մեր  
վկայակոչումները:

Տաճկական կառավարությունը, գրել է «Ձանգ» թերթը հոկտեմբերի  
2-ին, երկու շաբաթ մտածելուց հետո՝ ստեղծել, արդյոք, անկախ Հայաս-  
տան, թե ոչ, որոշեց ստեղծել՝ քանի որ այդպես ավելի ձեռնտու էր թե հա-  
յերի, և թե թուրքերի համար:

Ալ. Խատիսյանն իր հերթին հիշատակել է Թալեաթ փաշայի  
խոսքերն այն մասին, թե «փոքրիկ Հայաստան մը ստեղծելով՝ մենք լուծած  
կ'ըլլանք Հայկական հարցը եւ այդպէս կը ներկայանանք հաշտութեան  
միջազգային խորհրդաժողովին»:<sup>24</sup>

Եական է, որ հենց այս իրադրության պահը զուգահիստում է հայ-  
կական գործի հաղթանակներին թուրք նվաճողների դեմ Սարդարապատի  
ճակատամարտում և ոչ պակաս հաջող սկսած կռիվներին՝ Ղարաքիլիսայի  
մոտ: Այդ ճակատամարտերի նշանակության մասին արտահայտվել են ոչ  
միայն հայերը, այլև նույնիսկ թշնամին և օտարներ: Երբ Բաթումում  
հաշտության հասնելու փորձերը մատնվում էին անհաջողության և ապար-  
դյուն էր անցնում գերմանական կողմի միջամտությունը, գրել է Ալ. Խա-  
տիսյանը, հայկական շրջաններում ընթանում էր կանոնավոր պատերազմ,  
«որու ընթացքին տեղի ունեցած իրադարձութիւններէն կարելոր եւ  
պատմական նշանակութիւն ունեցան երկու ճակատամարտեր՝ Սարդարա-  
պատի մէջ՝ մայիս 24-29 եւ Ղարաքիլիսի մէջ՝ մայիս 25-29», և այն, շարու-  
նակում է Ալ. Խատիսյանը, «ինչ որ ինձ ըսած են ռուս, թուրք եւ հայ զինու-  
րական հեղինակաւոր անձինք, իրաւունք կու տայ պնդելու, թէ այդ ճակա-  
տամարտերը հայ զէնքի ամենէն լուրջ եւ փայլուն կռիւներն են եղած»:<sup>25</sup>

Ըստ Ալ. Խատիսյանի՝ Սարդարապատը և Ղարաքիլիսան ստեղ-  
ծեցին հայ ժողովրդի այն ռազմական ոգին ու կամքը, «որ անհրաժեշտ են

<sup>21</sup> ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, ք. 55;

<sup>22</sup> Խատիսյան Ա., Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ  
հրատ., 1968, էջ 72;

<sup>23</sup> Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 41, ք. 13, գ. 657 (2-րդ մաս), ք. 121-127:

<sup>24</sup> Խատիսյան Ա., նշվ. աշխատ., էջ 89:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 79:

անկախ պետութիւն մը կազմելու համար»:<sup>26</sup> Ղարաքիլիսայի տակ տեղի ունեցած 4-օրյա արյունահեղ ճակատամարտը (25-29 մայիսի), ինչպես նաև հայկական զորքի հաղթանակը Սարդարապատի տակ (մայիսի 24), գրել է իրադարձությունների ժամանակակից Միքայել Թումանյանը, «ազդեցին բանակցությունների ընթացքի վրա և թուրքերը որոշ տարածքային զիջումներ կատարեցին», ուստի, շարունակում է գրել ժամանակակիցը, թուրքերը համաձայնեցին հայկական պետության կազմավորումը, «չնայած Բաթումում գերմանացիները հայ պատվիրակներին խստիվ հավատացնում էին, թե «թուրքերը որոշել են հայ ժողովրդին լրիվ ոչնչացնել»:<sup>27</sup>

Ոչ մեծ ու աղքատ, բայց ազատ Հայաստանի համար, գրել է նաև Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը Երևանի ազգային խորհրդին ուղարկած գրության մեջ, «մենք պարտական ենք մեր զորքի ինքնագոհողությանը»: Որքան մեզ հայտնի է, գերմանացիներն ու թուրքերը Կովկասը բաժանում էին Կրաստանի ու Ադրբեջանի միջև, ապահովելով միայն հայերի ֆիզիկական գոյությունը: Ապա լրացնում է. «Պետք է ենթադրել, որ միայն մեր զորքի դիմադրությունը ստիպեց թուրքերին ճանաչելու նաև Հայաստանին»:<sup>28</sup>

Ժամանակի մտայնության ճշմարտացի արտահայտություն պետք է դիտել ՀՀ ապագա ռազմական նախարար Բ. Արարատյանի զեկուցագիրը, որը Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի ճակատամարտերի վերլուծության հետ մեկտեղ, զնահատել է դրանց նշանակությունը և այն դերը, որ պետականության կերտման գործում խաղացել են մասնավորապես Արամ Մանուկյանը, զեներալ Սիլիկյանը և Դրաստամատ Կանայանը (Դրոն): Հայ ժողովուրդը, գրել է Բ. Արարատյանը, մեկ մարդու նման ոտքի կանգնեց պաշտպանելու հայրենիքը՝ երբ մնացել էր նրա վերջին հողակտորը, Երևանն ու սուրբ Էջմիածինը: Այդ ամբողջ ընթացքում Երևանի նահանգում ամբողջ իշխանությունը կենտրոնացել էր Երևանի ազգային խորհրդի ձեռքում, որն ամուր պահում էր Արամ Մանուկյանը, համագործակցությամբ զեներալ Սիլիկյանի և զորքին ու ժողովրդին ոգևորող Դրոյի: «Եվ եթե, - կարդում ենք տվյալ փաստաթղթում, - մեզ՝ հայերիս հետ հաշվի են նստել այդ ժամանակ և ներկայումս, ապա դա կարող են վերագրել բացառապես երեք մարդու՝ Արամին, զեներալ Սիլիկյանին և Դրոյին»:<sup>29</sup> Հասկանալի է, որ «հաշվի նստողը» առաջին հերթին վերագրվում է թշնամի թուրքերին, ովքեր ստիպված եղան ընդունել և ճանաչել Հայաստանի անկախ պետականության գոյության իրավունքը:

Միանգամայն իրավացի է իրադարձությունների մասնակից Հ. Տեր-Հակոբյանը (Իրազեկ), ով, ի մի բերելով փաստերը, գրել է. «Բարեբախտաբար հայութիւնը Սարդարապատի, Ղարաքիլիսայի և Բաշ-Ապարանի հերոսամարտերով բաւական ամրացրել էր իր անկախութեան հիմունքները...: Ահա թէ ինչու թուրքը արժանի համարեց Յունիս 4-ին ստորագրելու Բաթումի դաշնագիրը հայ պատուիրակութեան հետ, ճանաչելով Հայաստանի անկախութիւնը և հայութեան ազատ ապրելու իրաւունքը՝ թէկուզ մէկ շատ փոքրիկ հողաշերտի վրայ ու ամենածանր պայմաններում»:<sup>30</sup>

Մայիսյան ճակատամարտերի դերի ու նշանակության և ընդհանրապես հայկական հարցի պատմության խոր վերլուծություն է Կ. Պոլսում հայկական պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանի զեկույցը Փարիզում գտնվող Դիվանագիտության միջազգային ակադեմիային, որում ինքը և Գ. Նորատունկյանը ներկայացնում էին Հայաստանը:

Նախ, զեկույցի հեղինակը Հայաստանի անկախության հռչակումը ներկայացրել է որպես արդյունք «հայ ժողովուրդի գերմարդկային ճիգին», որ գործադրվեց նրա ազատագրական պայքարի որոշակի փուլում: Այնուհետև այդ ճիգը ներկայացվում է ավելի առարկայորեն որպես Ղարաքիլիսայի ճակատամարտ, որը տևեց 4 օր և վերջացավ մայիսի 28-ին: Երբ այդ ժամանակ կռիվը դադարում էր «անորոշ վիճակում» (անորոշ էին պարտվողն ու հաղթողը)՝ նույն օրը Հայոց ազգային խորհուրդը հայտարարում էր Հայաստանի անկախության մասին: «Խիստ նշանակալից իրողություն է», շարունակում է Ա. Ահարոնյանը, որ Հայաստանի անկախության հռչակումից մեկ շաբաթ չանցած, այն առաջինը ճանաչում է Թուրքիան: «Թուրքերի ցոյց տուած այս հապճեպը տարօրինակ է թւում, - շեշտում է նա, - նկատելով, որ պատերազմը շարունակում էր դեռ եւ հայերը վճռականօրէն կանգնած էին Դաշնակիցների կողքին»: Թե ինչու՞ այդպես հապճեպ տեղի ունեցավ անկախության ճանաչումը հարցին, որ առաջադրել էր Ա. Ահարոնյանը, հետևում է իր իսկ պատասխանը: Դեպի նավթային Բաքու առաջանալու դեպքում թուրքերը չէին կարող իրենց հետևում թողնել թշնամի երկիրը և թշնամական բանակներ: «Ահա՛ այդ էր պատճառը, որ փութացին հաշտութիւն կնքել եւ իրենց թիկունքը ապահովել Բաթումի դաշնագրով», - եզրափակում է հարցի ուսումնասիրությունը Ա. Ահարոնյանը:

Մայիսյան հերոսամարտերի նշանակությունը Ա. Ահարոնյանը դիտարկել է նաև Բաքվից հայկական զինյալ ուժերի հեռանալու համար ժամանակ ունենալու և Միջագետքի ճակատում դաշնակիցներին օգնելու տեսանկյունից:<sup>31</sup>

<sup>26</sup> Խատիսեան Ա., նշվ. աշխատ., էջ 80:

<sup>27</sup> Թումանյան Ա., նշվ. մեքենագիր աշխ., ք. 5:

<sup>28</sup> Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., էջ 42:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 33-34:

<sup>30</sup> Իրազեկ Յ., Մօտիկ անցեալից. պատմական դէպքեր եւ ապրումներ. 1917-1922, 1956, Պէյրուք, էջ 37:

<sup>31</sup> Տե՛ս Հայրենիք, 1933, թիվ 2, էջ 57-70: Ա. Ահարոնյանի զեկույցը՝ «Հայաստանի միջազգային կացությունը» (Statu International de l' Arménie Actuelle) վերնագրով

Անհրաժեշտաբար հարկ է դիմել նաև մեկ այլ ուսումնասիրության արդյունքին, որի հեղինակն է Վահան Մինախորյանը, և ով հարցի քննարկումը կատարել է հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման (ցեղասպանության) տեսանկյունից, այդ նպատակով հենվելով նաև խորհրդային պատմաբան ակադեմիկոս Ե. Տարլեի վրա, որի կարծիքը, ըստ Վ. Մինախորյանի, «ի դեպ ասած, յատուկ արժեք ունի, իբրև խորհուրդներից լսուող մի կարծիք»։ Վկայակոչելով Ե. Տարլեի համապատասխան տվյալները, Վ. Մինախորյանը բերել է նրա այն միտքը, թե «խնդիրը ոչ այնքան ֆիզիկական ոչնչացման մեջ է, որքան ողջ մնացածների հայրենի հողից անյոյս կերպով դուրս վտարուելու եւ տարագրուելու մեջ»։ Այսինքն ցեղասպանության փաստից հետո, Ե. Տարլեն, որին և պաշտպանում է Վ. Մինախորյանը, շեշտադրում են հայրենագրության հանգամանքը։

«Խնամքով ծրագրված եւ լաւագոյն քաղաքական պայմանների մեջ գործադրուած աղետի չափերը կարող էին անհամեմատ աւելի մեծ լինել,- կարողւմ ենք Վ. Մինախորյանի հողվածում,- եթէ դիմադրութեան հանդիպելով չկորցնէր իր տարերային թափը եւ ջարդարարական շարժումը չկասեցուէր Սարդարապատի տակ»։ Այստեղ «Սարդարապատի» մեջ պետք է ընկալել խտացված մայիսյան հերոսամարտերն ամբողջությամբ։ Այնուհետև մեջբերվում են Ե. Տարլեի խոսքերը. «Երիտասարդ թուրքերի կառավարութիւնը մեղաւոր չէր, եթէ կարելի եղաւ հայերը բնաջնջել ոչ թէ 100, այլ միայն 65 տոկոսով»։ Հետևաբար, եզրակացնում է Վ. Մինախորյանը, «Հայաստանում եղած նախապատերազմական հայութեան 35 տոկոսի գոյութիւնը պարտական ենք հայ ազատամարտի ջանքերին», «Հայ օրհասական գոյամարտը այս դէպքում պարզապէս թուի պայքար էր։ Թուրքերը ցանկանում էին, որքան կարելի է շատ հայ կոտորել. հայերը ձգտում էին, որքան կարելի է շատ հայ ազատել»։<sup>32</sup>

Ընդ որում, այն օրերին, երբ ընթանում էին հայ ժողովրդի հերոսական ճակատամարտերը և դրանց ազդեցության տակ Թուրքիայի պաշտոնական շրջանները շրջվում էին դեպի հայկական պետականության ստեղծումը, այդ նույն ժամանակ Բաթումի բանակցություններում և դիվանագետների միջավայրում իշխում էին այլ տրամադրություններ, որոնց մասին կարելի է տեղեկանալ՝ ըստ վրացական դիվանագետ Զ. Ավալովի տվյալների։

21 մայիսի 1918թ.։ Հայ պատվիրակները հրաժարվեցին Գանձակի նահանգի որոշ մասերից (Ղարաբաղ) և մահմեդականները համաձայն են, որ Անդրկովկասում կազմակերպվի առանձին հայկական կանտոն (օրինակ՝ զենստվային երազների շրջանի «Ալեքսանդրապոլի նահանգի» ծա-

վալով)։ Ընդհանուր առմամբ մահմեդական պատվիրակները հավատացնում են, որ ամեն զեղով պաշտպանելու են «եռյակ միություն» Անդրկովկասը։ Սակայն միաժամանակ գտնում են, որ տաճիկների՝ դրան դեմ լինելու դեպքում, երբ ծրագրվող կանտոններից մեկը բացակայի (պետք է հասկանալ հայկականը - Վ.Ղ.), ապա իրենք կփափագեն «պահպանել Անդրկովկասը գեթ «երկեակ միութեան» ձեւով» (այսինքն՝ առանց հայերի ու Հայաստանի- Վ.Ղ.)։

Այս դեպքում վրացիները իրենց ազատ էին համարելու, թե «իւրաքանչիւր կողմ պէտք է իր գործը տեսնէ»։ Նրանք, սակայն չէին խոստովանում, որ իրենք գաղտնի կերպով սկսել էին իրենց անկախանալու գործընթացը, երբ, նույն հեղինակի վկայությամբ, «Գերման-վրացական» աշխատանքը բուռն թափով ընթանում էր «անդրկովկաս-տաճիկական» աշխատանքին զուգահեռ։

22 մայիսի։ «Վճռական խորհրդակցություն Անդրկովկասին սպառնացող փլուզումի առիթով, Վրաստանի անկախության հռչակման անհրաժեշտության մասին (վրացիների մեկուսի գործունեություն- Վ.Ղ.)։ Ծրագիրն այն է, որի մասին վաղուց արդէն ես, որպէս «խորհրդական», շարունակում է Զ.Ավալովը, այնդում են այստեղ եւ որին Չխենկելին եւ միւսները համաձայն են։ Վրաստանի անկախութիւնն ու հողային ամբողջութիւնը ապահովւում են Գերմանիայի կողմից։ Արեւելեան Անդրկովկասը պահում է գործելու ազատութիւն եւ կարգաւորում է տաճիկների օգնութեամբ։ Հայերը նոյնպէս ստիպւած պիտի լինեն հռչակել իրենց անկախութիւնը։ Գրեցի Վրաստանի անկախութեան յայտարարութեան նախագծի մէկ օրինակը»։

24 մայիսի։ «Շատերը սկսում են գլխի ընկնել, որ բեմի ետեւը խուլ աշխատանք է կատարւում»։

Հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների համար նոր փուլ է սկսվում, երբ 1918թ. հունիսին Հայաստանի Հանրապետության պատվիրակություն է մեկնում Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաք Կ. Պոլիս։ Նպատակը Բաթումի պայմանագրի վավերացման առիթով կայանալիք կոնֆերանսում զիջումներ կորզելն էր Թուրքիայից, Բրեստ-Լիտովսկի սահմաններին վերադառնալը։ Հայ պատվիրակները բազմաթիվ հանդիպումներ ունեցան օսմանյան պետության ղեկավարների հետ, սակայն որևէ արդյունքի չհասան։ Այս հանդիպումների մանրամասն նկարագրությունը ներկայացված է Ալ. Խատիսյանի «Օրագրության» մեջ, որը ևս կարևոր աղբյուր է ծառայել Ա. Խաչատրյանի ուսումնասիրության համար։ Ելնելով կարևորությունից՝ «Օրագրությունը» բերվում է սույն գրքում՝ որպես հավելված։ Այստեղ հստակ երևում է այն էվոյուցիան, որ տեղի ունեցավ թուրքական կառավարող շրջաններում՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ վերաբերմունքում։ Այդ փոփոխության հիմքում ընկած էր օսմանյան Թուրքիայի մոտալուս պարտությունը համաշխարհային պատերազմում և խուսափելը այն պատասխանատվությունից, որ Հայկական

տպագրվել է Դիվանագիտության միջազգային ակադեմիայի «Դիվանագիտական բառարանում» (Dictionnaire Diplomatique)։

<sup>32</sup> Մինախորյան Վ. Հայկական հարցը եւ իր տարրերը. տե՛ս Հայրենիք, 1934թ., թիվ 12, էջ 94-106։

հարցում կարող էր տեղի ունենալ հաշտության կոնֆերանսում: 1918թ. հոկտեմբերի կեսերին օսմանյան կառավարությունը, որի գլուխ կանգնած էին երիտթուրքական կուսակցության ղեկավարները, հրաժարական տվեց, կառավարության անդամները ճողոպրեցին այս ու այն կողմ, կազմվեց նոր կառավարություն, Իզզեթ փաշայի գլխավորությամբ: Նա շտապեց որոշում ընդունել իր գործերը Անդրկովկասից դուրս բերելու մասին՝ մինչև Բրեստ-Լիտովսկի պայմանագրության սահմանները, այդ մասին գրավոր փաստաթուղթ հանձնելով հայկական պատվիրակությանը, մի բան, որը երկար ժամանակ ձգձգում և հրաժարվում էին անել:

Ա. Խատիսյանի օրագրությունը արժանագրել է ոչ միայն իրադարձությունների ու ղեպքերի սոսկ հաջորդականությունը, այլ և ավելին: Այն հագեցած է հայ-թուրքական դիվանագիտական պայքարի մանրամասն նկարագրությամբ և ղեպքերի մեկնաբանություններով: Օրագիրը 1918թ. շրջադարձային տարվա պատմության ուսումնասիրության բացառիկ ու հարուստ սկզբնաղբյուր է, որը, սակայն, ուսումնասիրողների կողմից պատշաճ ուշադրության չի արժանացել:

Ա. Խատիսյանի «Օրագրությունը» սկսվում է փետրվարի 23-ին և ավարտվում է 1918թ. հոկտեմբերի 31-ին ստորագրված Մուղդոսի զինադադարով ու նոյեմբերի 11-ին հայկական պատվիրակության վերադարձով:

Հավելվածի մյուս փաստաթղթերն ունեն օժանդակ, լրացնող նշանակություն Ա. Խատիսյանի «Օրագրության» համար: Դրանցից մեկն է միայն Տրապիզոնի կոնֆերանսին նվիրված անդրկովկասյան պատվիրակության գործերի կառավարչի հուշագիրը:

Մյուս փաստաթղթերը Կ. Պոլիս մեկնած հայկական պատվիրակության օրագրությունը և նիստերի արձանագրություններն են, որոնք ներկայացնում են պատվիրակության գործունեության «ներքին խոհանոցը», ինչպես են նախապատրաստվել թուրք ղեկավարների հետ հանդիպումները և այլ իրադարձություններ:

Պատվիրակության օրագրությունն ընդգրկում է հունիսի 13-ից մինչև օգոստոսի 31-ը, այսինքն ավելի կարճատև ժամանակաշրջան, քան Ա. Խատիսյանի օրագրությունը, և բովանդակության տեսակետից ունի վերջինիս հետ նմանություն, այնպես էլ տարբերություն, բոլոր ղեպքերում օգտակար է որպես ուսումնասիրության աղբյուր: Պատվիրակության նիստերի արձանագրությունները կատարված են, իհարկե, սեղմ շարադրանքով, սակայն պարունակում են օգտակար տեղեկություններ՝ սկսած 1918թ. հունիսի 25-ից մինչև հոկտեմբերի 18-ը կամ պատվիրակության գործունեության ամբողջ ակտիվ ժամանակը:

Պատվիրակությունը մշակել է մեկ այլ փաստաթուղթ՝ «Համառոտ ամփոփում մեր ունեցած տեսակցությունների՝ սեպտեմբերի 2-ից» վերնագրով, որը, փաստորեն օրագրության շարունակությունն է, չնայած ընդ-

գրկում է կարճ ժամանակ՝ մինչև սեպտեմբերի 21-ը, բայց պարունակում է ուշագրավ տեղեկություններ:

Հայ դիվանագետների հանդիպած գործիչների թվում էին Էնվեր և Թալեթ փաշաները, Վեհիբ-փաշան, Նեսիմի, Հալիլ-բեյերը, երիտթուրքերի կուսակցության կենտկոմի անդամ Բեհաեդդին Շաքիր-բեյը, նոր կառավարության ղեկավար Իզզեթ փաշան, ծովային նախարար Ռաուֆ-բեյը, արտաքին գործերի նախարար Նիքմեթ բեյը, Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Լոսովը և ուրիշներ: Լրացնենք, որ Եվրոպա մեկնած հայկական մյուս պատվիրակությունը, Համո Օհանջանյանի ղեկավարությամբ, Բեռլինում և Վիեննայում հանդիպումներ էր կազմակերպում քառյակ միության մյուս պետությունների՝ Գերմանիայի ու Ավստրո-Յունգարիայի ղեկավարների, նաև Գերմանիայում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Իոֆֆեյի և այլոց հետ, դրանց ընթացքի մասին պարբերաբար տեղեկացնելով Կ. Պոլսի հայ պատվիրակությանը:

Ընդ որում, Բեռլինում ապրիլ-մայիս ամիսներին գործել էր Հայոց ազգային խորհրդի մեկ այլ պատվիրակություն՝ Գևորգ Մելիք-Ղարաբաղյան, Արշակ Ջամալյան, Լիպարիտ Նազարյան կազմով:

Խոսակցությունների ու դիմումների մյուսը հիմնականում եղել է թուրքական գործերը Բրեստ-Լիտովսկի սահմաններում պահելը կամ այնտեղ վերադարձնելը: Այս հարցում հայերն օգտագործում էին նաև այն հակասությունը, որ գոյություն ուներ Քառյակ դաշինքի երկու անդամների՝ Գերմանիայի և Թուրքիայի միջև, երբ վերջինս, ներխուժելով Անդրկովկաս, խախտել էր Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:

Քննարկումների մյուս հարցը վերաբերում էր ռազմաքաղաքական դաշինքի ստեղծմանը, ընդ որում՝ թուրքական կողմն էր ավելի շահագրգիռ և որն էլ անընդհատ հիշեցնում էր դաշինք (entente) ստեղծելու անհրաժեշտության մասին: Այս մասին թուրքերը խոսակցություն էին սկսել դեռևս Բաթումի բանակցությունների ժամանակ: Այսպես, Վեհիբ փաշան այդ բանակցությունների ժամանակ, բարձր գնահատելով Ղարաբաղիսյանի ճակատամարտում հայկական զորքի հատկանիշները, նշում էր. «Ընդհանրապես Ղարաբաղիսյան ամրություն է, և ինքը երջանիկ կլիներ, եթե թուրքերն ու հայերը միասին ամրացնեին Ղարաբաղիսյան, քանի որ այժմ հայերի և թուրքերի քաղաքականությունը պետք է լինի միատեսակ»:<sup>33</sup>

«Օրագրությունը» հուլիսի 5-9 օրերի համար արձանագրել է Էնվեր և Վեհիբ փաշաների հետ հանդիպումների՝ նրանց քաղաքախոսություն և որևէ խոստում չտալու մասին: Իսկ Վեհիբ փաշան որոշակի կերպով արտահայտվել էր «նազմական կոնվեցիա» կնքելու մասին, որը կարող էր ուղղված լինել իսլամական երկրների դեմ: Հայերը, խուսափելով որոշակի պատասխանից, խուսանավել են: Նշելով, թե իրենք սկզբունքորեն չեն առարկում դաշինքին, նրանք մտահոգություն են հայտնում հայկական

<sup>33</sup> Տե՛ս Խատիսյան Ալ., Օրագրություն, 1918թ. հունիսի 2:

պետության փոքր տարածքի և բնակչության փոքրաքանակության համար, և մատնանշում, որ հայկական ուժերը ցրված են չորս պետությունների միջև (հասկանալի՝ Կրաստան, Ադրբեջան, Թուրքիա, Իրան – Վ. Ղ.), որից բխում են չորս քաղաքականություններ: Հայ պատվիրակները, փաստորեն, թուրքերի հարցադրումը կամ առաջարկությունը հանգեցնում էին Հայկական հարցի լուծման անհրաժեշտությանը, համարձակվելով ցույց տալ նաև հայկական կենսունակ պետության համար անհրաժեշտ որոշ չափորոշիչներ, ինչպես նրա տարածքը 45 հազար քառակուսի կիլոմետրի և բնակչության թիվը 1,5 միլիոն հասցնելը:

Հուլիսի 26-ին Ռաուֆ-բեյը հայտնել է, որ ռազմական կոնվենցիայի մասին Վեհիբ փաշան բանակցություններ սկսել է ենվեր փաշայի հանձնարարությամբ և ընդհատել է Գերմանիայի պահանջով՝ քանի որ Թուրքիան չպետք է անջատ, դաշնակիցներից առանձին համաձայնության ձգտի:<sup>34</sup>

Ռաուֆ բեյը հայ պատվիրակներին ծանոթացրել է նաև այն տարբեր տեսակետներին, որ գոյություն ունեին թուրքական պաշտոնատար շրջաններում և հասարակական խավերում «Հայաստանի վերաբերմամբ», և որպիսիք տեղ են գտել մեր շարադրանքում:<sup>35</sup>

Հայկական պատվիրակությունը ուշադրությամբ հետևել է թուրք հասարակության մտայնության մեջ տեղի ունեցող փոփոխություններին, որոնք արտահայտվում էին մասնավորապես մամուլի էջերում: «Տաճկական լրագրերը, - գրել է պատվիրակության քարտուղար Հակոբ Քոչարյանը իր նամակներից մեկում, սեպտեմբերի 10-ին, - բոլորն էլ փոխել են իրենց տոնը եւ միաբերան պաշտպանում են մեր դատը»:<sup>36</sup>

Նշված «մեր դատը» տվյալ պահին նշանակում էր թուրքական զորքերի ետքաշում դեպի Բրեստի պայմանագրի սահմանները: Նկատենք, որ թուրքական մամուլի, ինչպես նաև կառավարող շրջանների մեջ տեղի ունեցող փոփոխությունը բխում էր Թուրքիայի մոտալուտ պարտության հետ կապված պարտադրանքից:

Բավական ուշագրավ է այն տեղեկատվությունը, որը պատվիրակության սեպտեմբերի 1-ի նիստում բացահայտում է Մ. Պապաջանյանը օգոստոսի 20-ին ենվեր փաշայի հետ տեղի ունեցած հանդիպման վերաբերյալ, և երբ խոսակցությունն ընթացել է ռուս-գերմանական պայմանագրի շուրջ (Բրեստ-Լիտովսկի լրացուցիչ պայմանագրի ստորագրման ֆոնի վրա): «Օգոստոսի 20-ի տեսակցության միջոցին ենվեր փաշան մեր առջև դրեց մի հարց, որը իր (Մ. Պապաջանյանի-Վ. Ղ.) կարծիքով ուլտիմատումի բնույթ ուներ, այն է՝ ընդունում ենք, արդյոք, մենք entente կամ դաշն կամ confederation թուրքերի հետ, թե ոչ»: «Եվ այդ հարցին, - շարունակում է Մ. Պապաջանյանը, - մենք պետք է այժմ որոշ պատասխան

տանք: Մենք պետք է ասենք, որ 1. մենք ընդունում ենք սկզբունքով entente թուրքերի հետ, 2. մեր մասնակցությունը entente-ի մեջ չի կարող լինել ագրեսիվ, այդ իրենք թուրքերն էլ ընդունում են, այլ միայն պաշտպանելու համար մեր չեզոքությունը, Թուրքիային նպաստավոր (благожелатель-ным) չեզոքություն»:

Ռազմական դաշինքը նշանակում էր 10-հազարանոց հայկական զորքի տրամադրում Թուրքիային՝ դաշնակից երկրների դեմ կռվի մետելու համար, և դա փաստորեն այն պահին, երբ պատերազմը մոտենում էր ավարտին, դաշնակից երկրների հաղթանակի հեռանկարով:

Ինչ վերաբերում է դաշնությանը կամ համադաշնությանը, ապա խնդրի էությունը հետևյալն էր, որ ներկայացրել է գերմանական մամուլն այդ օրերին (բովանդակությունը բերված է հայկական պատվիրակության 1918թ. սեպտեմբերի 13-ի նիստի արձանագրության մեջ): Պատվիրակության նիստն արձանագրել է «Kreuz-Zeitung» թերթի այդ օրվա հեռագրերի լուրը, ըստ որի «Ռուսաստանի կողմից Թուրքիայի սահմանները ապահովելու համար պիտի Թուրքիային կապվի և նրա կազմի մեջ մտնի կոնֆեդերատիվ կապերով՝ ամբողջ ավտոնոմ Հայաստանը»:

Ընդ որում այդ թերթի թղթակից Մոսկովյան պարզաբանել է, թե «Թուրքիան կովկասում պիտի ստանա սահմանների ապահովություն, հավանորեն ամբողջ ավտոնոմ Հայաստանը միացնելով ֆեդերատիվ հիմքերի վրա»: Այնուհետև նա լրացրել է, թե այդ գաղափարը պատկանում է Գերմանիային և ծագել է այն դիտավորությամբ, որ բավականություն տրվի թե՛ Հայաստանին, և թե՛ Entente-ի պետությունների պահանջներին: Գերմանիան դրանով, ինչպես և Լեհաստանի ու այլ խնդիրների լուծումով, կամենում է կանխել այն բոլոր հարցերի լուծումը, որոնք պիտի դրվեն ապագա կոնգրեսում»: Այնուհետև շարունակում է. «Այդ գաղափարը միևնույն ժամանակ մասամբ բավարարում է նաև թուրքերին, քանի որ նա ստեղծում է Ռուսաստանի և Թուրքիայի սահմանի վրա ինքնավար Հայաստան, իբրև կիսապատվար»: Թղթակցի կարծիքով կենտրոնամետ հակումներով ղեկավարվող թուրքական կառավարությունը հազիվ թե լիովին ընդունելի համարեր այդ գաղափարը և թե կարող էր համաձայնվել «միայն արտաքուստ և հետո արդեն ոչնչացնել հայերին իրենց սահմաններում»:

Վերջապես, Հայաստանի կառավարության տեսակետի մասին (ըստ վարչապետ Քաջազնունու սեպտեմբերի 27-ի և հոկտեմբերի 3-ի նամակների), որ հրահանգվել էր պատվիրակությանը. դաշինքը նպատակահարմար է, զուցե և անհրաժեշտ, բանն այն պայմաններն են, որ կառաջարկեն թուրքերը, ինչ են ուզում հայերից և ինչ են տալիս: Քառյակի հետ կոնֆեդերանսի չկայանալու դեպքում ընդունելի էին անջատ բանակցությունները Թուրքիայի հետ, վերջնական պայմանների մշակումը վերապահելով հայկական կառավարությանը:<sup>37</sup>

<sup>34</sup> Տես ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.657 (2-րդ մաս), ք. 121-127:

<sup>35</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>36</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, N 1(101), էջ 32:

<sup>37</sup> Տես ՀԱԱ, ֆ.275, ց.5, գ.68, ք.1-4:

Թուրքական պլանների մասին խոսակցություն է ծավալվել նաև սեպտեմբերին կայացած հանդիպումների ժամանակ, երբ Թալեթը գտնվում էր Բեռլինում՝ ուր մեկնել էր բանակցություններ վարելու: Պոլսի և Եվրոպայի Հայկական պատվիրակությունները սպասում էին դրանց արդյունքներին, թե նա ինչ պատասխան կբերի իրենց հուզող հարցերի՝ Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչման, սահմանների (Բրեստ-Լիտովսկի սահմանների) և այլ հարցերի վերաբերյալ:

Սեպտեմբերի 16-ի հանդիպման ժամանակ Նեսիմի բեյը Ալ. Խատիսյանին հայտնել է, թե Հայաստանի անկախության գաղափարը համակրություն է գտնում նաև Թուրքիայի հասարակական շրջաններում, որն արտահայտվում է մամուլում, և որ Թալեթը Բեռլինից կվերադառնա 7-8 օր հետո, այնուհետև կշարունակվեն բանակցությունները entente-ի շուրջ:

Սեպտեմբերի 18-ին թուրքական պառլամենտի փոխնախագահ Հուսսեյին Ջահիդը անդրադարձել էր Թուրքիայի և Ադրբեջանի տարածքների կապի անհրաժեշտությանը, թե «անպայման պետք է մի անցք (passage) թողնել Թուրքիայից դեպի Ադրբեջան, որը կարելի է կամ Արաքսի հովտով կամ Բորչալուի վրայով»:

Հաջորդ օրը Թուրքիայի մայրաքաղաքում բնակվող, երիտթուրքերի ադրբեջանցի գործընկեր և լրագրող Ահմեդբեկ Աղաևը նորից անդրադարձել է համադաշնության հարցին, պնդելով, որ «Թուրքիայի համար դա կենսական պահանջ է՝ հայկական հարցը կարգավորելու հենց այդ ճանապարհով»:

Բեռլինում Թալեթի վարած բանակցությունների արդյունքների մասին գաղափար է տալիս Վրաստանում Հայաստանի Հանրապետության հավատարմատար Արշակ Ջամալյանի 1918թ. հոկտեմբերի 5-ի զեկուցագիրը հանրապետության արտգործնախարարությանը՝ Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Ֆոն Կրեսսի հետ ունեցած խոսակցության մասին:

Ըստ դրա Թալեթը Գերմանիայի և Թուրքիայի մյուս զինակիցների առաջ պաշտոնապես պարտավորվել էր իր զորքերը հետ քաշել մինչև Բրեստի պայմանագրի սահմանները: Փոխարենը Գերմանիան և Ավստրո-Հունգարիան լրացուցիչ ուժեր էին ուղարկելու Կ. Պոլսի պաշտպանության համար:

Բեռլինում կոնֆերանսում դրվել էր Հայաստանի Հանրապետության անկախությունը ճանաչելու հարցը: Հարցը բարձրացվել էր այն բանից հետո, երբ Վրաստանի անկախության հարցը տեղ էր գտել ռուս-գերմանական 1918թ. օգոստոսի 27-ի պայմանագրում, որը հայտնի է որպես 1918թ. մարտի 3-ի՝ Բրեստ-Լիտովսկի լրացուցիչ պայմանագիր: «Ռուսաստանը, - ասված է պայմանագրում, - հայտարարում է իր համաձայնության մասին, որ Գերմանիան ճանաչում է Վրաստանը որպես ինքնուրույն պետական մարմին»:<sup>38</sup>

<sup>38</sup> Տե՛ս Документы внешней политики СССР, т.1, Москва, 1957, т. 443:

Գերմանիան, ըստ Ֆոն Կրեսսի, խոստացել էր օգնել, որպեսզի Ռուսաստանը չհակառակվեր Հայաստանի ճանաչմանը, որից հետո Գերմանիան և նրա դաշնակիցներն ընթացք կտային գործին:<sup>39</sup>

Ինչպես ցույց տվեցին Գերմանիայում Թալեթի փաշայի վարած բանակցությունները՝ Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի անկախությունների ճանաչումը այնքան էլ դյուրին գործ չէր, ինչպես ենթադրում էին հայ և վրաց պատվիրակությունները: Ըստ վրաց պատվիրակության անդամ Ջ. Ավալովի՝ Թալեթի փաշայի բանակցություններն ավարտվել էին անարդյունք, որևէ փաստաթուղթ չէր ստորագրվել: Չստորագրվեց նաև Վրաստանի անկախությունը ճանաչելու վրաց-գերմանական պայմանագրի նախագիծը:<sup>40</sup>

Կ. Պոլսում ընթացող հայ-թուրքական բանակցություններում հայերի նկատմամբ զիջումներին հակվելը թուրքերը փորձում էին բացատրել իրենց բարի ցանկությամբ: Հոկտեմբերի 4-ին Նեսիմի բեյը տեղեկացրել է, որ կառավարությունը հայերի հետ բանակցությունների համար նշանակել է Հալիլ բեյին, որ հայերը գոհ կլինեն, քանի որ ստանում են ավելին, քան սպասում էին, և որ դա իրենք անում էին ոչ թե իրենց կրած պարտությունների պարտադրանքով, այլ սեփական համոզմունքով, և որ այսուհետ զլխավորն այն է, որ Հայաստանն ու Թուրքիան լինեն լավ հարևաններ: Իսկ հոկտեմբերի 1-ին, գտնվելով Թալեթի մոտ, որը նոր էր վերադարձել Բեռլինից, նա հայերին ասել է. «Որոշել է հայերին լայնորեն բավարարել, որպեսզի թուրքերն ու հայերը բարեկամաբար ներկայանան կոնգրեսին (հասկանալ ապագա հաշտության համաժողովը-Վ. Ղ.), փոխադարձ բավարարված: Ակնհայտ անհաջողության բերումով նա ստիպված էր «հայերին բավարարելու, հայկական հարցին վերջ տալու» նախագիծ մշակել:

Այնպես որ միանգամայն տեղին ու ճշմարիտ է այն գնահատականը, որ տվել են հայ պատմաբանները 1918թ. իրադարձություններին. «Հայաստանի Հանրապետության ստեղծումը թուրքերի «նվերը» չէր հայ ժողովրդին: Եթե այդ հարցի լուծումը կախված լիներ Թուրքիայից, անկախ Հայաստան երբեք էլ չէր ստեղծվի»:<sup>41</sup>

Բաթումի կոնֆերանսում հայերին ցույց տված «օգնության» և արած «նվերի» առասպելի ժխտումը վերաբերում է նաև Ադրբեջանին: Տակավին 1918թ. որոշ ադրբեջանցի գործիչներ փորձում էին հավատացնել, թե հայերն իբրև խոստացել են չբարձրացնել Ղարաբաղի հարցը: Հենց սույն գրքում ընթերցողը կգտնի հակառակն ապացուցող նյութեր՝ Ղարաբաղի վրա թուրք-թաթարական հարձակման դեմ Կոստանդնուպոլսում

<sup>39</sup> Տե՛ս, ՀԱՍ, ֆ.200, ց.1, գ.66, ք.149-155:

<sup>40</sup> Տե՛ս Ավալով Ջ., Վրաստանի անկախությունը.-Հայրենիք, 1935, թիվ 5, էջ 61-79, ռուսերեն գրքի թարգմանությունից:

<sup>41</sup> Տե՛ս Պալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Եր., 1999, էջ 31:

գործող հայկական պատվիրակության քայլերի մասին (1918թ. սեպտեմբերին թուրք-թաթարական ուժերը Բաքվում հայ բնակչության զանգվածային ջարդ կազմակերպելուց հետո հոկտեմբերին ներխուժել էին Լեռնային Ղարաբաղ, որը կառավարվում էր Հայաստանի Հանրապետության կողմից, հայկական ազգային խորհրդի միջոցով):

Այսպիսով, բերված տվյալներն ու փաստերը, մասնավորապես թուրք պետական ու ռազմական գործիչների արած խոստովանությունները, համոզում են, որ կովկասյան հայկական պետության ստեղծման հիմնական ու վճռական պատճառը 1918թ. Մայիսյան հերոսական կռիվներն էին, որ մղեց հայ ժողովուրդը թուրք նվաճողների դեմ: Վերջիններս ստիպված էին հաշտվել հարավային Կովկասում ազգային նոր պետականության՝ Հայաստանի Հանրապետության ստեղծման հետ: Կովկասի սահմաններում հայկական պետության հռչակումը թուրքերը փորձում էին դիտել որպես Հայկական հարցի լուծում, այն հեռացնելով Արևմտյան Հայաստանից (Արևելյան Անատոլիայից): Մոտեցող համաշխարհային պատերազմի ավարտը և Թուրքիայի, ինչպես նաև նրա դաշնակից Գերմանիայի համար դրա աննպաստ ընթացքն ու վերջը, այդ պետություններին անհանգստացնող ու սպառնացող գործոններ էին, որոնք նրանց ահազանգում էին մտածել իրենց շահերի պաշտպանության մասին, ուստի հաշտվում էին հայկական պետության փաստի հետ՝ միայն թե նա գտնվեր Կովկասում, այլ ոչ թե Թուրքիայում (Արևմտյան Հայաստանում):

Թուրքիայի համար ռազմավարական խնդիր է եղել նաև այդ պետությանը իր հարևանությամբ ունենալ թույլ՝ ամեն տեսակետից, որի համար նա քիչ ջանքեր չգործադրեց: Այդ իմաստով բնորոշ են Թուրքիայի դաշնակից Գերմանիայի դիվանագետներից մեկի հետևյալ խոսքերը, որը նա գրել է տակավին 1918թ. օգոստոսի 7-ին. «Իմ կարծիքով մենք երբեք չենք կարող Թուրքիային շրջել դեպի կենսունակ Հայաստանի ստեղծումը»:<sup>41ա</sup>

Կովկասյան պետությունները Թուրքիային կտրում էին Ռուսաստանի հետ անմիջական սահմանակցությունից և նվազեցնում նրան սպառնացող ռազմական վտանգը, որ երկար ժամանակ գոյություն է ունեցել իր հյուսիսային հարևանի՝ «ամենն սարսափելի թշնամին»՝ Ռուսիային» (Ալ. Խատիսյան): Իսկ այդ պետությունների դաշնային կապերի, առավել ևս նրանց նկատմամբ ազդեցության կամ հովանավորության դեպքում, որի մասին երազում էր Թուրքիան, այդ երկիրն առավել պաշտպանված կլիներ Ռուսաստանի վտանգից:

Թուրքիայի շահերից էր բխում նաև ռազմական դաշինք ստեղծելու մասին Հայաստանին արած առաջարկը, ըստ որի հայերը տրամադրելու էին 10 հազարանոց զորք, և որը մտցվելու էր ռազմաճակատ՝ դաշնակից երկրների դեմ կռվելու: Ոչ մի տեսակետով այդ առաջարկը ընդունելի չէր

հայերի համար, ուստի հայկական պատվիրակությունը այն փաստորեն մերժում էր: Դաշինքի ստեղծմանը, և ոչ միայն դրան, խիստ առարկում էր նաև Եվրոպայում գործող հայկական պատվիրակությունը, որի ղեկավար Համո Օհանջանյանը 1918թ. սեպտեմբերի 11-ի նամակում (Բեռլինից ուղարկած՝ 4. Պոլսի հայկական պատվիրակությանը) գրել է. «Ղուք այդտեղ հավանաբար անդարձ կերպով որոշել եք անկախության և entente-ի մասին հարցը դնել որպես անկյունաքար: Այդ հանգամանքը ինձ ստիպում է (չնայած գիտեմ, որ անարդյունք) ընդգծել այդպիսի քաղաքական կուրսի ամբողջ կեղծությունն ու վնասակարությունը»:<sup>42</sup>

Պետք է նկատել, որ դաշինքի առաջարկության հարցին 4. Պոլսի հայկական պատվիրակությունը ևս դեմ է եղել, միայն նրա պատասխանը թուրքերին եղել է դիվանագիտորեն ձևակերպված՝ խուսանավոր:

Հայկական պատվիրակությունը, սակայն, չէր կարող անվերջ խուսանավել և ստիպված էր հստակ ձևակերպել իր դիրքը «entente»-ի հարցում, այն է՝ համաձայնվել Թուրքիայի հետ ռազմական դաշինքի ստեղծմանը, այն վերապահությամբ, որ հայկական գործը չպետք է կռվի մեջ մտնող Թուրքիայի թշնամիներին դեմ:

Այս և այլ հարցերի գծով հայկական պատվիրակությունը հայտարարություն արեց Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունում:

Անկախության հարցում ևս Հ. Օհանջանյանը առարկում էր 4. Պոլսի հայկական պատվիրակությանը՝ հանձին Ա. Խատիսյանի: Անկախությունը ոչ թե սկզբունքի, այլ նպատակահարմարության հարց է, նշում էր նա: Դա հակադրվում էր Ռուսաստանի և Գերմանիայի շահերին, որոնք հենց նոր էին կնքել օգոստոսի 27-ի Բրեստի լրացուցիչ պայմանագիրը, փոխադարձաբար իրենց շահերը ձևակերպելով՝ Բաքվի վրա ազդեցության, նավթի արտադրության ու Վրաստանի անկախությունը ճանաչելու պայմանների և այլ հարցերում:

Անկախության ճանաչման (Գերմանիայի կողմից), ինչպես նաև դաշինքի հարցերը օսմանյան Թուրքիայի համար նախապայմաններ էին՝ Բրեստի սահմաններին վերադառնալու համար: Հ. Օհանջանյանը վստահ չէր, որ թուրքերը չեն առաջադրի նոր նախապայմաններ՝ առաջինների կատարումից հետո: Վերադառնալով թուրք-հայկական դաշինքի (entente) հարցին, Հ. Օհանջանյանը եզրակացնում է, որ այն ուղղված է Վրաստանի ու Ռուսաստանի, հետևաբար նաև Գերմանիայի դեմ, որից Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն ոչինչ չէր շահում, այլև իր դեմ էր հանում այդ պետություններին: «Միաժամանակ-շարունակում է Հ. Օհանջանյանը, մենք կկորցնենք մեր իսկական դեմքը, իջնելով թուրքական ծայրագավառի դրության, ընդունելով թուրքահայերի երկրորդ ճակատագիրը»:

Ընդ որում Թուրքիայի համար գլխավորը Գերմանիայից տնտեսական-ֆինանսական օգնություն խնդրելն էր, որի համար Թալեաթ փաշան

<sup>41ա</sup> Пуня Г.В. Политика Германии в Закавказье в 1918 году, с.134.

<sup>42</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 80, ք. 40-42:



բանակցելու էր մեկնել Բեռլին: Ինչ վերաբերում է հայերին, ապա թուրքիայի մտահոգությունը նրանց հետ կապված հարցերը օգտագործելն էր՝ սեփական շահերի համար:

Համո Օհանջանյանի գործունեության կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ նրա դեկավարած պատվիրակության անդամ էր Արշակ Ջուրաբյանը, մասնակից էին դարձել նաև Գրինֆիլդը (հայ էր մոր կողմից) և բանաստեղծ Ավետիք Իսահակյանը:

1918թ. հունիսի 18-ին Համո Օհանջանյանը ժնկից նամակ է ուղարկել Բեռլին՝ Ավետիք Իսահակյանին, խնդրելով իր մասնակցությունը բերել այն պայքարին, որի իմաստը Բրեստի պայմանագրի սահմանների վերականգնումն էր: «Այս հուսահատական դրությունից,- գրել է Հ. Օհանջանյանը,- ազատել կարող է մեզ միայն Գերմանիան, եթե նա յուր դաշնակից Տաճկաստանին առաջադրի հարգելու Բրեստի դաշինքով որոշված սահմանները»:<sup>43</sup>

1918թ. հուլիսի 27-ին Բեռլինում Ավետիք Իսահակյանն ընդունվել է Գերմանիայի արտգործնախարարի օգնական Գեոպպերտի կողմից և «երկար խոսակցություն ունեցել», շոշափելով երկու խնդիր՝ դիմել և խնդրել Գերմանիայի կառավարությանը՝ «աջակցություն հայկական դատին Կովկասի մեջ», որը նշանակում էր թուրքական զորքերի հետքաշում մինչև Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սահմանները: Գեոպպերտը պատասխանել է, որ Գերմանիան հայերին օգնելու համար զորք չունի, և որ դա կարող է անել Ավստրիան, միայն թե հարկավոր է նախապես ունենալ ռուսական կառավարության համաձայնությունը:<sup>44</sup>

Զնայած քառյակ դաշինքի ներսում Գերմանիայի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող հակասություններին, այնուամենայնիվ, նրանք չէին կարող միասին չլինել այն հարցերում, որոնք վերաբերվում էին իրենց առաջիկա ճակատագրին: Հակամարտող դաշնակիցները այդպիսի միասնության օրինակ ցույց տվեցին նաև Անդրկովկասի բաժանման հարցում: «Այժմ (գերմանա-թուրքական 1918թ. ապրիլի 27-ի պայմանագրին հաջորդող ժամանակաշրջան - Վ.Ղ.) գերմանական իմպերիալիստների և թուրք զավթիչների համար, - կարդում ենք Գ. Պիպիայի մենագրությունում, - շահավետ էր, որպեսզի միասնական Անդրկովկասյան հանրապետության փոխարեն գոյություն ունենան երեք «անկախ պետություններ»:<sup>45</sup> Այդպիսի միասնության համար հիմք էր հանդիսանում այն պատասխանատվու-

<sup>43</sup> Ղազախեցյան Վ., Երկու նամակ Ավետիք Իսահակյանին (Հայաստանի Հանրապետության ժամանակ բանաստեղծի հասարակական-քաղաքական գործունեությունից).-Նորք, 1998, N 2, էջ 105-109:

<sup>44</sup> Տվյալ խնդրի վերաբերյալ Ավ. Իսահակյանի 1918թ. օգոստոսի 4-ին և 9-ին Բեռլինից գրած նամակները տե՛ս ԲՀԱ, 2006, N1, էջ 43-46:

<sup>45</sup> Пипия Г.В. Германский империализм в Закавказье в 1910-1918гг. Москва, 1978, с. 102.

յունը, որը սպառնում էր Թուրքիային՝ որպես արևմտահայության ցեղասպանության պատասխանատուի և Գերմանիային, որը մեղքի բաժին ուներ իր դաշնակցի գործած հանցանքում: Առարկայորեն Հայաստանի պետականության ստեղծումը Թուրքիային և Գերմանիային պետք էր նաև որպես Հայկական հարցի լուծում ներկայացնելու համար և այլն:

Սակայն վերադառնանք հայ-թուրքական հարաբերությունների քննարկման բուն ընթացքին: Այստեղ պետք է նշել նաև այն մասին, որ ի դեմս Կովկասյան հայկական պետության, ինչպես Ավ. Խատիսյանն է նշում, «թուրքերը կցանկանային ունենալ հողամաս մը, ուր կարողանային հավաքել հայերու մնացորդները Թուրքիոյ սահմաններէն»:

Ամփոփենք, թուրքական բռնազրավումներից դուրս մնացած հայկական գավառներում ազգային անկախ պետության հռչակումը և կազմակերպումը տեղի ունեցավ հայերի կողմից որպես օսմանյան Թուրքիայի դեմ նրանց տարած ռազմական հաղթանակների արդյունք: Ինչ վերաբերում է այդ պետության ճանաչմանը և ընդունմանը Թուրքիայի կողմից՝ ապա վերջինս շտապեց կողմնորոշվել՝ խուսափելու համար հնարավոր վտանգներից: Միաժամանակ թուրքական դիվանագիտությունը ամբողջ 1918թ., քանի դեռ իրականություն չէին դարձել անխուսափելի ու մոտալուտ պարտությունը և հաշտության համաժողովը, ամեն կերպ ձգտում էր հարցերը լուծել: Հանրագումարի բերելով իր կատարած ուսումնասիրության արդյունքները, Ա. Խաչատրյանը հանգել է այն եզրակացությանը, որ 1918թ. սեպտեմբերին արդեն Թուրքիան այլ ելք չուներ, քան հայերի հետ հաշտվելը և բարեկամ ձևանալը ու որպես այդպիսին ներկայանալը ընդհանուր հաշտության սեղանին: «Հայերու վերաբերմամբ այնքան դաժան ու անողոք քաղաքականութիւնը հիմայ մէկէն կը փոխուեր և կը դառնար ջերմ, սիրալիր բարեկամութեան և ամեն ջանք գործ կը դրուէր օր առաջ հայերու հետ խնդիրը կարգադրել և «թևանցուկ, ինչպէս իրենք կըսէին, մտնել ընդհանուր հաշտութեան ժողովասրահը»: Միաժամանակ, շարունակում է հեղինակը, Թուրքիան ձգտում էր լուծած լինելու երկու այլ խնդիր ևս, այն է՝ լինի հայկական պետություն Թուրքիայի և Ռուսաստանի միջև, որպես «պաշտպանած պետություն», և երկրորդը՝ հաշտության ժողովին ներկայացնել անկախ Հայաստան, «ուր կրնային ամփոփուիլ և թրջահայերը»:

Սա հայերի հետ Թուրքիայի հարաբերությունների, այսպես ասած, նոր փուլն էր: Առաջինը 1918թ. մայիսի վերջն էր, երբ Օսմանյան Թուրքիան ստիպված էր ընդունել հայկական պետության անհրաժեշտությունը, միայն թե այն գտնվի Կովկասում, Թուրքիայի սահմաններից դուրս:

Կարելի է վկայակոչել նաև հայ պատվիրակների սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների վաճառագրերն այն մասին, թե ինչպես էր փոխվել թուրքերի ու գերմանացիների վերաբերմունքն իրենց նկատմամբ: Այսպես, Հ. Օհանջանյանը գրել է, թե վերջերս պատմության անփվը պտտվում է մեծ արագությամբ, մեզ համար բացելով բոլորովին նոր հորիզոններ, և եթե

նախկինում մեզ գրեթե հաշվի չէին առնում, ապա քաղաքական նոր իրադրության պայմաններում, երբ հայկական խնդիրը կարող էր խաղաղության կոնգրեսում «խառնել սրանց բոլոր հաշիվները», նրանք արդեն աշխատում են «նախօրոք այդ խնդիրը լուծել և օրվա հարցերից միջազգային կոնգրեսում բոլորովին հանել»:<sup>46</sup>

Թուրքիան նույնիսկ դիմեց Կ.Պոլսի հայկական պատվիրակությանը՝ միջնորդի դեր ստանձնել իր և հաղթանակած Անտանտի երկրների միջև: Իսկ Գերմանիան, մեծացնելով իր հետաքրքրությունը Հայաստանի անկախության նկատմամբ, դիմեց Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը՝ Բրեստի լրացուցիչ պայմանագիրը Հայաստանի անկախությունը ճանաչելու մասին հողվածով լրացնելու կապակցությամբ, ինչպես նաև հյուպատոս ուղեվորովեց երևան:<sup>47</sup>

Հայկական պատվիրակություններն էլ իրենց հերթին գտնում էին, որ նոր իրադրության պայմաններում իրենք կարող են դառնալ «ավելի պահանջկոտ» և չհամաձայնվել «շատ նեղ ու վատ պայմաններին», որ կարող էին իրենց ստիպել, և արդեն մտածում էին իրենց նոր նախապատրաստության մասին: Հենց այդ մասին է խոսվում Գ. Օհանջանյանի հոկտեմբերի 14-ի գրության մեջ, որտեղ հիշատակվում է նաև Ավ. Իսահակյանից բացիկ ստանալու, ինչպես նաև «նախապատրաստական աշխատանքների համար միջոցներ ձեռք առնելու մասին»:<sup>48</sup> Ընդ որում, խոսք էր գնում նաև այն մասին, որ այդ նոր գործի մեջ ներգրավվի նաև պրոֆեսոր Նիկողայոս Աղոնցը՝ որպես «մեր ընդհանուր խաղաղութան պատվիրակության գլխավոր մասնագետ»:<sup>49</sup>

Ի վերջո հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Հայկական պետականության ծնունդը, լինելով 1918թ. մայիսյան հերոսամարտերի անմիջական արդյունք, ընդունելի էր նաև Թուրքիայի համար՝ նախ և առաջ Հայկական հարցի լուծման տեսանկյունից: Տասնամյակներ շարունակ հարցը մեծ տերությունների կողմից օգտագործվել է Թուրքիայի վրա ճնշում գործադրելու, իրենց շահերին ծառայեցնելու նպատակով: Հայաստանի Հանրապետության ստեղծումը, դիտելով որպես Հայկական հարցի լուծում, Թուրքիան հնարավորություն էր ստանում այլևս չանդրադառնալ դրան: Բացի այդ, եթե անցյալում հարցը դիտարկվում էր Արևմտյան Հայաստանում, այսինքն Թուրքիայի պետության ներսում բարենորոգումներ անցկացնելու իմաստով, ապա այսուհետ հայաթափված Արևմտյան Հայաստանը Արևելյան Անատոլիա ներկայացնելով Հայկական հարցը նենգափոխում էին Թուրքիայից դուրս, Կովկասի սահմաններում հայկական պետականության ստեղծման: Միաժամանակ

Թուրքիայում ուժեղանում է Հայկական հարցի լուծում պահանջելը ներկայացնել որպես միջամտություն իրենց ներքին գործերին: Այս իմաստով բավական ուշագրավ է Գերմանիայի արտգործնախարար Կյուլմանի 1918թ. մարտի 2-ի նամակը Թուրքիայում իր դեսպանին, որը վերջինիս պատվիրում էր թուրքերի ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ դաշնակից երկրները հաշտության համաժողովում հայերի համար ինքնավարություն կպահանջեն Արևելյան Անատոլիայում, ուստի հարկավոր է, որ Թուրքիան փոխի իր քաղաքականությունը հայերի նկատմամբ:

Մի խոսքով Հայաստանի Հանրապետության ընդունումը և ճանաչումը բխում էր նախ և առաջ Թուրքիայի շահերից:

2. Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անկախ հանրապետությունների ստեղծումը դիտարկվում էր որպես պատմեչ, բուֆեր՝ վտանգավոր հյուսիսային հարևան Ռուսաստանից պաշտպանվելու համար, որը շատ անգամ էր պատերազմի մեջ մտել Թուրքիայի դեմ: Անդրկովկասի բուֆերային դերի ուժեղացման նպատակին էին ուղղված Թուրքիայի ջանքերը՝ այդ հանրապետությունների դաշնային կամ համադաշնային միություն կազմավորելու ուղղությամբ:

Թուրքիան մեծ ճիգեր էր անում նաև Հայաստանի հետ ռազմաքաղաքական դաշինք (entente) ստեղծելու համար: Նա հատկապես ձգտում էր ռազմաճակատում հայկական ռազմուժի օգտագործմանը:

3. Թուրքիան, չկարողանալով իրականացնել իր համաթուրքական ու համախլանական ծրագրերը, և հաշտվելով իր նվազագույն սահմանների հետ, այսպես ասած, «զիջում էր» նաև հայկական պետականության հարցում, հոգալով, սակայն, որ իր հարևանությամբ այդ պետությունը որևէ վտանգ չներկայացնի, ունենա փոքր հող, քիչ բնակչություն, կենսունակ պետություն դառնալու հնարավորությունից ու պայմաններից զուրկ:

Թուրքիան Հայաստանի նկատմամբ նույն քաղաքականությանը հետևում է նաև ժամանակակից պայմաններում, նրա հետ թև թևի տված նաև Ադրբեջանը, երբ տևականորեն շրջափակման մեջ էին պահում Հայաստանի Հանրապետությանը, դարաբաղյան խնդրի պատճառով:

4. 1918 թ. աշնանը, երբ մոտենում էր առաջին աշխարհամարտի ավարտը Քառյակ միության երկրների պարտությանը, Թուրքիային ու Գերմանիային սկսեց անհամզատություն պատճառել՝ առաջինին՝ որպես ցեղասպանության իրականացնողի, իսկ երկրորդին՝ դաշնակից ցեղասպան պետության պաշտպանի, պատասխանատվության խնդիրը: Ուստի հատկապես թուրք գործիչները ձգտում էին հայերի մոտ ունեցած վեճերը լուծել նախապես և հաշտության ժողով մտնել միասին, թևանցուկ արած: «Թուրքիան այժմ,- գրել է Ա. Խատիսյանը,- ձեռք կ'առնի իր նուազագույն ծրագիրը, որու էական կետերն են՝ պահել Բրեստի սահմանները, սահմանակից չմնալ Ռուսիային և կարգադրել հայկական խնդիրը, որը, այժմ

<sup>46</sup> Տե՛ս ԶԱԱ, ֆ.200, ց.1, գ.80, ք.89-90, 119-121:

<sup>47</sup> Տե՛ս Թումանյան Միքայել, նշված անտիպ աշխատությունը, ք. 31-32:

<sup>48</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>49</sup> Տե՛ս նույն տեղում, ք.100:

արդեն համոզուած էին, անպատճառ ընդհանուր հաշտութեան ժողովին նիւթ պէտք է դառնար»:

«Մեր ներքին թշնամիները, - գրել է թուրքական «Աթի» թերթը 1918թ. օգոստոսին,- որոնց հետ ամեն հաշիվ պէտք էր վերջացնել պատերազմի ընթացքում, այժմ արդէն քրիստոնեայ եղբայրներ են, որոնց օրինական պահանջներուն պէտք էր բաւարարութիւն տալ»: Ավելի պարզ է արտահայտվել ու խոստովանել «Վաքըթ» թերթը 1918թ. սեպտեմբերին. «Եթէ կ'ուզենք պաշտպանել հայերը՝ բնաւ անոր համար չէ, որ կը սիրենք հայերը, այլ որովհետև շահ ունենք այսպէս վարուելու»:

Միաժամանակ թուրքերը դիմում էին ինքնապաշտպանութեան միջոցների, ուժեղացնելով իրենց քարոզչությունը իբրև թէ պատերազմի ժամանակ արևմտահայերի «դավաճանության», ապստամբություն կազմակերպելու և ռուսների կողմը անցնելու մասին, երբ իրենք ստիպված են եղել դիմելու հայ բնակչության տեղահանությանը (ղեպորտացիային) և այլն: Նույնիսկ 1918թ. իրենց ներխուժումը հայկական տարածքներ փորձում էին կապել թուրք-թաթարական ընդհարումների հետ, թէ ստիպված են եղել դիմելու իրենց ցեղակիցների ու կրոնակիցների պաշտպանությանը:

Ինչ վերաբերվում է Գերմանիային, ապա նա իր հերթին իրեն օգնության դիմած հայկական պատվիրակություններին պատասխանում էր, թէ իրենց օգնությունից առաջ հայերը պէտք է հրաժարվեն Գերմանիայի մեղակցության շուրջ ծավալած քարոզչությունից:

Նույնիսկ 1919 թ. կազմակերպված թուրքական դատավարությունները, որ ամեն կերպ ձգտել են թուրքական պետությանը հեռու պահել հայերի ցեղասպանության պատասխանատվությունից, այնուամենայնիվ խոստովանել և դատապարտել են «Միություն և առաջադիմություն» կուսակցության ու իշխանության ղեկավարներին, ովքեր պատերազմական իրադրությունը և հայերի տեղահանությունը օգտագործել են նրանց վերացնելու համար: «Տեղահանության հիմնական նպատակը հայերի ոչնչացումն է»: Դա, նշել է Թալեաթը, երկրի փրկությունն է: Բերվում է Վեհիբ փաշայի վկայությունը, որ հայերի նկատմամբ կատարված վայրագություններն ու կոտորածները, ունեցվածքի թալանն ու կողոպուտները որոշված է եղել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից»: Իսկ Տրապիզոնի նահանգի իրադարձություններին նվիրված դատավճռում կարդում ենք. «Այս դատավարության վերջին նիստում պարզվեց, և մենք բոլորս համոզված ենք, որ կոտորածն ու կողոպուտը մտահղացված է եղել ոչ թէ Տրապիզոնում, այլ նրա սահմաններից դուրս, այն էլ կանոնավոր ու խիստ կազմակերպված»:

Ընդ որում, նույն դատավարությունների նյութերում կարելի է խոստովանություն գտնել նաև այն մասին, թէ ինչպես են ոչնչացվել թուրքական կարևոր փաստաթղթերը: Մեղադրական եզրակացություններից մեկում նշվում է հետաքննության կողմից պարզված այն իրողության մասին, որ Երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեի և նրա գաղտ-

նի կազմակերպությանը վերաբերող «կարևոր գրությունները մեջտեղից վերացված են»<sup>50</sup> Մինչդեռ այսօր Թուրքիայի ղեկավարները, ժխտելով հայերի ցեղասպանության փաստը, միաժամանակ հայտարարում են, թէ իրենց արխիվները բաց են ուսումնասիրողների համար, և թէ դրանցում համապատասխան փաստաթղթեր չկան:

5. Վերջապես՝ մերժելի են այն բացատրությունները, որ հունիսի 2-ին ներկայացրել է Վեհիբ փաշան, թէ ինչն է նպաստել «հայ պետության (թեպետ և փոքր) կազմության տրամադրությանը»:

Այդ բացատրություններն են.

«ա. Դայերու քաղաքականութեան յստակութիւնը նախապէս թշնամական, այժմ հաշտարար:

բ. Համաձայնելը իրենց պայմաններուն և խաղաղ համաձայնութիւն Ադրբեջանի հետ:

գ. Որոշ պատասխան վերջնագրի ժամանակ»:

Դրանք այնպիսի պարագաներ են, իրավացիորեն գրել է Աստ. Խաչատրյանը, որ «բնաւ չունին այն կարևորությունը, որ կարողանային յառաջ բերել այս կամ նման փոփոխութիւն մը»: Այդպիսին նա ընդունում է թուրքերի թվարկած չորրորդ պարագան՝ «հայերու հերոսութիւնը հայրենիքը պաշտպանելու, Ղարաքիլիսէ՝ յարգանք կը ներշնչեն իրեն», այսինքն՝ Վեհիբ փաշային: «Գյավուրները գեշ կկռվին,- խոստովանել է վերջինս,- ո՞ր են պատվիրակները՝ վերջացնենք» (խոսքը պայմանագիրը ստորագրելու մասին է - Վ.Ղ.):

Նշված երեք պայմանների դերի ժխտումը հիմնավորվում է նաև նրանով, որ դրանք փաստորեն երևան են գալիս հայերի կողմից թուրքական վերջնագիրը ընդունելով, որի մասին հայկական պատվիրակությունը թուրքական պատվիրակությանը տեղեկացնում է մայիսի 30-ին, երբ վերադառնում է Բաթում, և որը նշանակում էր, որ նա եկել է հաշտության բանակցություններ վարելու և պայմանագիր կնքելու համար: Մինչդեռ Թուրքիայի շրջադարձը դեպի «Հայաստանի կազմակերպումը» փաստորեն արտահայտվել էր մինչև այդ:

6. Դայերի հայրենագրությունը, նրանց ցեղասպանության ենթարկելու միջոցով, թուրքական քաղաքականության գլխավոր նպատակն էր, բացառելով հանդերձ կոտորածներից փրկվածների վերադարձը իրենց հայրենի օջախներ: Արևմտյան Հայաստանը հայաթափելուց հետո թուրքերը այն բնակեցրին մահմեդական բնակչությամբ, իսկ Կարսի, Արդահանի և Բաթումի օկրուգների ռազմակալումից հետո, քրիստոնյա բնակչության նկատմամբ հաստատած տեղորի ռեժիմի պայմաններում անցկացրին հանրաքվե, կանխորոշելով դրա արդյունքները Թուրքիային միա-

<sup>50</sup> Դայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա.Գ.Փափազյանի: Եր., 1988, էջ 39-40, 46, 161, 168:

նալու օգտին: Դա Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կոպիտ խախտում էր, որի դեմ հանդես եկավ պայմանագիրը ստորագրած Խորհրդային Ռուսաստանը, նշելով, որ Օսմանյան Թուրքիայի գործողությունները վերացրել են երկու երկրների ստորագրած Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, ավելի ճիշտ նրա 4-րդ հոդվածը:<sup>51</sup>

Այսուհետ Թուրքիայի համար Հայաստանը Ռուսահայաստանն էր, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Անատոլիայի նահանգներ: Թուրքական պետական քաղաքականության համար Թուրքիա դարձավ թուրքերով բնակեցված տարածքը, նույնիսկ փորձ արվեց միջազգային հանրությանը հրամցնել այն միտքը, թե իրենց երկրում չկա որևէ տարածք, որը գերազանցապես բնակեցված լինի հայերով:

Թուրքը զրկեց իր հպատակ ու ոչ հպատակ հային տունուտեղից, ունեցվածքից, հետևաբար նրան դարձնելով պահանջատեր: Այնպես որ ժամանակակից Թուրքիայի պարտքն է հայերի ցեղասպանության հետ ընդունել նաև նրանց հայրենագրվելու պատասխանատվությունը, դրանից բխող հետևանքներով հանդերձ:

\*\*\*

Արևմտահայ գործիչ, պատմաբան-լեզվագետ, պրոֆ. Աստվածատուր (Ասատուր) Խաչատրյանի ներկայացվող աշխատությունը ունի հետևյալ ծագումը: Գործի բերումով նա հայտնվել էր Հայաստանի Հանրապետությունում, կարգավորել Տրապիզոնի և Բաթումի հայ-թուրքական բանակցությունների պաշտոնական վավերագրերը՝ հրատարակության համար և գրել համապատասխան նախաբան, և «որը (նախաբանը-Վ.Դ.) դարձավ,- գրել է Աստ. Խաչատրյանը,- այս պատմությունը», այսինքն տպագրվող աշխատությունը:

Հավանորեն պետք է ավարտված լիներ աշխատանքը նաև պաշտոնական փաստաթղթերի կարգավորման գծով, որոնք, ինչպես հեղինակն է արտահայտվել, նախապես թղթերի ամբողջ դեպ էին, շատերը տասնյակ օրինակներով, խառնիխուռն: Նրա կարգավորած փաստաթղթերի գործերը այսօր էլ նույնությամբ պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում:

Այդ նախաբան-պատմությունը հեղինակը զրքի ձեռագրի վերնագրում ներկայացրել է որպես «Բ մաս», իսկ, ինչպես արդեն նշվել է, դրանից առաջ դրված է նաև «Հայ ազատագրութունը և երուպական դիվանագիտութունը» վերնագիրը: Առկա է միայն վերնագիրը, առանց այդ հարցի ուսումնասիրության:

Այլ հատիսյանի կողմից տվյալ գործի համար Ա. Խաչատրյանի թեկնածության ընտրությունը պատահական չէր: Այլ հատիսյանը նրան ոչ միայն ճանաչել, այլև վստահել է:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Ա. Խաչատրյանի հեղինակած գործը արժանացել է Սիմոն Վրացյանի ուշադրությանը, ով ընթերցել է այն և գրել կարծիք, և որը բերվում է սույն հրատարակության մեջ:

\*\*\*

Աստվածատուր Խաչատրյանը ծնվել է 1861 թ. Արևմտյան Հայաստանի Բագրևանդի գավառի Ուլքիլիսա գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Բագրևանդի ծխական դպրոցում, իսկ 1882-1885թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Նրա ավարտական վկայականում բոլոր 13 առարկաների դիմաց նշված է նույն՝ «յոյժ գովելի» գնահատականը, որն այսօրվա «գերազանցն» է:

Ուսումնառությունից դուրս Ա. Խաչատրյանը դասավանդել է ճեմարանի տարրական դպրոցում՝ ձեռք բերել մանկավարժական փորձ, ինչպես նաև ներկայացրել ատենախոսություն հին հայերենի գծով, որը մանկավարժական խորհրդի կողմից արժանացել է ճեմարանի մրցանակագրին:<sup>52</sup> Հետագայում՝ 1892-1896թթ., կրթությունը շարունակել է Ստրասբուրգի (Գերմանիա) համալսարանում, աշակերտելով հայտնի հայագետ, պրոֆ. Գյուլբեյմանին, մասնագիտանալով լեզվաբանության բնագավառում:

Մանկավարժությունը դարձավ Ա. Խաչատրյանի աշխատանքային գործունեության հիմնական բնագավառը: Մինչև համալսարան ընդունվելը, ինչպես նաև այն ավարտելուց հետո, աշխատել է Երզրումի Սանասարյան վարժարանում՝ որպես մանկավարժ և տնօրեն՝ մինչև վարժարանի Սեբաստիա փոխադրվելը (1911թ.): Ըստ պրոֆ. Աստվածատուր Խաչատրյանի կենսագիր Գաբրիել Լազյանի՝ վարժարանի տեղափոխության պատճառը եղել է Երզրումում քաղաքական լարված մթնոլորտը, երբ վարժարանի պահպանողական ղեկավարությունը սկսեց չհանդուրժել քաղաքում ուժեղացող եռուզեռն ու համակրանքը դեպի դաշնակցությունը:<sup>53</sup>

Դեմ լինելով վարժարանի տեղափոխությանը, Ա. Խաչատրյանը 1912թ. մեկնում է Կ. Պոլիս, ստանձնելով Կեդրոնական վարժարանի հայագիտական ճյուղը:

Դեռևս Երզրումում նա ընտանիք էր կազմել 1909թ. «սպանուած հայ յեղափոխական եւ հասարակական գործիչ Եղիշէ Թովճեանի այրիին» և նրա Արմենակ անունով զավակի հետ և քենեկալն էր «ներհուն բանասէր Նիկոլ Աղբալեանի»:<sup>54</sup>

1915թ. հոկտեմբերի 23-ին Ա. Խաչատրյանը ձերբակալվում և քստրովում է Դիարբեքիր: Ամերիկայի «Ասպարեզ» թերթում տպագրված «Յուշապատումում» նա նկարագրել է քստրականի կրած սարսափները: Նա փորձել է անձնասպան լինել, այնուհետև հաջողվել է, թուրք ոստիկա-

<sup>51</sup> Տե՛ս ДВП СССР, т.1, М., 1957, էջ 490-492:

<sup>52</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.312, ց.2, գ.585, ք.3:

<sup>53</sup> Տե՛ս Լազյան Գ., Դեմքեր հայ ազատագրական շարժումն, Գահիրե, 1949, էջ.145:

<sup>54</sup> Տե՛ս Գուսաբեք, 9 մայիսի, 1945թ., N32:

նին կաշառելով, ազատվել վերահսկողությունից, ապա թափառականի կյանք անցկացնել Սուլթանիե, Գոնիա, Զալեպ և այլ քաղաքներում, վերջապես ապաստանելով անգլիական գործերի կողմից գրավված Բաղդադ քաղաքում, որտեղ դառնում է Ազգային վարժարանի տնօրեն՝ մինչև պատերազմի ավարտն ազդարարող զինադադարը:

Ա. Խաչատրյանը 1919-1920թթ. ակտիվ մասնակցություն է ունեցել հայ ազգային շարժմանը և ՀՀԿ կուսակցական գործունեությանը՝ արտասահմանում և Հայաստանի Հանրապետությունում: Նա կուսակցության մեջ գտնվել է 1906-1922 թվականներին: Պողոս Նուբար փաշայի հրավերով և Միջագետքի հայ փախստականների կողմից նա դարձավ Հայ ազգային 1-ին համագումարի 38 պատվիրակներից մեկը:

Օրերից մի օր, գրել է Ա. Խաչատրյանի վաղեմի ընկեր, բժիշկ Պ. Միսաքյանը, նամակ ստացա իրենից: «Պրոֆեսորը կը տեղեկացներ, թե Միջագետքի հայ գաղթականներու ներկայացուցիչի հանգամանքով Փարիզ կը գտնուէր եւ կանդամակցէր Հայաստանի պատկերակութեան: Դերերը փոխուած են, կը գրէր. Երեկուան մահապարտը այսօր դատաւորի աթոռին վրայ նստած՝ իր թշնամիներէն արդարութիւնը պիտի պահանջէ»:<sup>55</sup>

Համագումարը կայացավ Փարիզում, 1919թ. փետրվար-ապրիլին: Համագումարը նախագահող Գ. Նորատունկյանը մարտի 12-ին բարի գալուստ է մաղթել «բարբարոս ճիրաններէ ազատած եւ երկար ծամբորդութենէ մը յետոյ նոր Փարիզ հասած, Միջագետքի պատգամաւոր Տիար Բրոֆ. Խաչատրեանի, որ փոխադարձ շնորհակալութիւն յայտնեց»:<sup>56</sup>

Համագումարի օրակարգի գլխավոր հարցերից մեկը, եթե ոչ ամենագլխավորը, միացյալ և անկախ Հայաստանի կազմակերպման հիմնական սկզբունքների որոշումն էր՝ ընդհանուր պառլամենտի, ընդհանուր կառավարության և միացյալ պատվիրակության կազմավորումը: Հայտնի իրողություն է, թե ինչպիսի սուր տարածայնություններ էին ծագել հայության երկու կողմերի միջև, մի կողմից սփյուռքը ներկայացնող Պողոս Նուբար փաշան, ռամկավարներն ու Հայ ժողովրդական կուսակցությունն էին, մյուս կողմից Հայաստանի Հանրապետությունն ու պետությունը դեկավարող Հայ Հեղափոխական Դաշնակցությունը: Համագումարը միատարր չէր իր կազմով, ինչպես նաև հարցերի նկատմամբ արտահայտված մոտեցումներով: Ընդ որում, համագումարին խորհրդակցական ծայնի իրավունքով ներկա էին նաև Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող Հ. Օհանջանյանը և Ա. Սիարոնյանը:

Երկարատև ու հանգամանակի քննարկումից հետո համագումարը քվեարկության է դնում Ա. Չոբանյանի և Ա. Խաչատրյանի բանաձևերի նախագծերը, երկուսն էլ չեն ընդունվում, անհրաժեշտ թվով ձայներ չհավա-

քելով: Պրոֆ. Ա. Խաչատրյանի նախագիծը, որն ավելի մոտ էր Հայաստանի Հանրապետության մոտեցումներին, ազդարարում էր (բերվում է ամբողջությամբ)։

«Բ բանաձև

Հայաստանի միացման համար առաջարկներ.

1. Նկատելով, որ հայ ազգին առաջին անգամն ըլլալով կազատագրուի իր դարաւոր ստրկութենէն իր իսկ հերոսական ճիգերով Հայաստանի մէկ մասին մէջ եւ այսպիսի պայմաններու մէջ անհնար է ամէն բան սահմանադրական կանոններով կարգադրել,

2. Նկատելով, որ փաստօրէն հաստատուած Հայաստանի Հանրապետութիւնը հիմնուած է հայրենիքի այն մասին մէջ, որ միշտ պատմական աթոռանիստն է եղեր հայ քաղաքական իշխանութեան եւ դարերէ հետէ կը շարունակէ նոյնը մնալ հայ հոգեւոր նուիրապետութեան «Ամենայն Հայոց Հայրապետովը»,

3. Նկատելով, որ ընդհանրապէս նոր ազատագրուած ազգերը հազիւ անգամ մը յաջողին առաջին քայլէն իսկ տէր դառնալ իրենց ամբողջ պատմական հայրենիքին, այլ մէկ կեդրոնէ հետզհետէ կը տարածեն իրենց իշխանութիւնը ամբողջ երկրի վրայ,

4. Նկատելով, որ Հայաստանի հայութեան դուրս գտնուած շատ մասեր (Միջագետք, Սիւրիա, Գոնիա, Իզմիր, Պոլիս եւ ուրիշ գաղթավայրեր) եւ երկրի մէջ ալ Կիլիկիա ի վիճակի են մասնակցելու Հանրապետութեան խորհրդարանին անդամ ընտրելու գործողութեան,

5. Նկատելով, որ Հայաստանի Հանրապետության անմիջապես համազգային ճանչնալու ու յայտարարելու մեծ կարևորութիւն պիտի ունենայ մեր Դատի ամբողջութեան յաջողութեանը համար եւ միև կողմէ ամբողջ հայութիւնը պիտի ոգեւորէ մեզի համար այնքան կենսական համերաշխութեան ու սիրոյ շունչով մը,

Կառաջարկենք, որ համագումարն անմիջապէս յայտարարէ Հայաստանի Հանրապետութիւնը իբրև կորիզը համազգային պետութեան եւ անմիջապէս ծեռնարկէ պատրաստել ընտրական հրահանգներ, որով ապահովուի Հայաստանի Հանրապետութեան մէջ դեռելս բաժին չունեցող հայութեան մասնակցութիւնը:

Ա. Խաչատրեան՝ Ներկայացուցիչ Միջագետքի հայ փախստականներուն

Ամերիկահայ ներկայացուցիչներ՝ Պ.Պ.Միքայելեան, Ձ. Մաթիկեան, Մ. Համբարձումեան»:<sup>57</sup>

Այսպիսով, ըստ Ա. Խաչատրյանի՝ Միացյալ և անկախ Հայաստանն ստեղծվելու էր Հայաստանի Հանրապետության հիման վրա, որն ավելի իրական մոտեցում էր, քան հակառակ առաջարկությունը, ըստ որի «Կովկասի Հայկական Հանրապետութիւնը իր ծնած օրէն իսկ որոշած է միանալ

<sup>55</sup> Տե՛ս Հուսաբեր, 9 հուլիսի 1945թ., N84:

<sup>56</sup> Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.), Փաստ. և նյութերի ժողովածու, պատ. խմբ. Ամատունի Վիրաբյան, Եր., 2004, էջ 399:

<sup>57</sup> Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.), էջ 497-498:

Արեւմտեան Հայաստանին, անմիջապէս որ այս վերջինս հայ եւ Ռաշնակից ոյժերով ազատի թիւրք տիրապետութեան յետին մնացորդներէն եւ ըստ Ռաշնակից պետութեանց որոշ յայտարարութիւններուն՝ անկախ հայ կեանքի վերածուի»:<sup>58</sup>

Համագումարի այլ՝ քրդական, ասորական, Պոնտոսի հայերի, Հայկական լեզոնի վերաբերյալ հարցերի քննարկումներին ևս Ա. Խաչատրյանը ցուցաբերել է ակտիվ մասնակցություն: Խոսել է Ռիզե նավահանգիստը Միացյալ և անկախ Հայաստանի սահմանների մեջ ընդգրկելու անհրաժեշտության մասին: Նա «խօսք առնելով նկարագրեց վերջին կոտորածներու, Միջագետք եւ այլուր ցրուած հայ փախստականներու եւ տեղահանեալներու կացութիւնը, իբր ականատես շատ մը շահեկան տեղեկութիւններ տուաւ ժողովին»: Ա. Խաչատրյանի մասնակցությամբ համագումարի հանձնախումբը Փարիզում ուսումնասիրել է հայ-հունական (Հայաստանի Հանրապետության – Պոնտոսի հույներ) հարաբերությունների խնդիրը՝ Միացյալ և անկախ Հայաստանի կազմավորման առիթով: Նա հետազայում երևանում ևս մասնակցել է նույն հարցի շուրջ բանակցություններին և 1920թ. հունվարի 4-ին պատրաստել «Հայաստանի և Պոնտոսի ներկայացուցիչներու յարաբերութիւնները» տեղեկագիրը<sup>59</sup>:

1919թ. ժամանելով Երևան, Ա. Խաչատրյանը մասնակցել է սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 3-ը կայացած ՀՀԴ կուսակցության 9-րդ ընդհանուր ժողովի աշխատանքներին: Նախ, նա ներկա է համագումարի պատգամավորների տպագրված լուսանկարներից մեկում:<sup>59ա</sup> Բացի այդ, 1938թ. բանտարկության ժամանակ կատարված հարցաքննության նյութերում կարդում ենք. ժամանելով Երևան, Ա. Խաչատրյանը մասնակցություն է ունեցել համագումարի աշխատանքներին և իր ելույթում համագումարին կոչ է արել «իր գործունեության մեջ ընդունել անգլիական կողմնորոշում»:

Հիշյալ հարցաքննության ժամանակ նա ցուցմունք է տվել, որ Երևան է եկել լուծելու որոշ միջկուսակցական վիճելի հարցեր, որ գոյություն ունեն ռամկավարների ու դաշնակցականների միջև: Հարցը վերաբերում էր Հայ ազգային 1-ին համագումարում և նրա սահմաններից դուրս դրսևորված տարածայնություններին՝ Միացյալ և անկախ Հայաստանի ղեկավար մարմինների (խորհրդարան, կառավարություն, միացյալ պատվիրակություն) կազմավորման սկզբունքներին: Նա Ազգային պատվիրակության կողմից առաջադրամք է ունեցել Երևանում Հայաստանի կառավարությանը ընդունել տալու Պողոս Նուբար փաշայի թեկնածությունը՝

<sup>58</sup> Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.), էջ 497:

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 425, 435: Հայաստանի Հանրապետություն, Բաղաքական պատմություն, էջ 152-154:

<sup>59ա</sup> Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1998: Լազեան Գ., նշվ. աշխ.:

որպես Միացյալ Հայաստանի կառավարության նախարարապետի, ապրելով Փարիզում: «Ժամանելով Հայաստան՝ ես բոլոր ջանքերը գործադրեցի այդ ուղղությամբ, բայց հաջողության չհասա»:

Ռաշնակցականների համագումարին (1919թ. սեպտեմբեր-նոյեմբեր) գրեթե զուգընթաց (1919թ. հոկտեմբեր-նոյեմբեր) Երևանում Միացյալ և անկախ Հայաստանի ղեկավար մարմինների կազմակերպման սկզբունքների շուրջ բանակցություններ են վարել Հայաստանի Հանրապետության և Ազգային պատվիրակության ներկայացուցիչները, ղեկավարությամբ (համապատասխանաբար) Սիմոն Վրացյանի և Վահան Թեքեյանի: Բանակցությունների արձանագրությունները տակավին 1920թ. հրատարակել է Ս. Վրացյանը<sup>61</sup> և, հետազայում, երկրորդ անգամ տպագրել է «Վեմ» պարբերականը<sup>62</sup>: Ըստ դրանց, Ա. Խաչատրյանը Ազգային պատվիրակության ներկայացուցիչների թվում բացակա է: Նրա կազմում են, բացի նախագահ Վ. Թեքեյանից, Սամ. Հարությունյանը, Ն. Տեր-Ստեփանյանը և Ա. Մխիթարյանը:

Հայաստանի Հանրապետությունում Ա. Խաչատրյանը ներգրավվում է այլ գործերի մեջ ևս: Համագումարի ավարտից հետո՝ 1919թ. դեկտեմբերին էր, երբ Ալ. Խատիսյանը հանձնարարեց նրան ուսումնասիրել Տրապիզոնի և Բաթումի բանակցությունների նյութերը:

Ա. Խաչատրյանի անունը հիշատակվում է այն միջոցառումների հետ, որոնք տեղի ունեցան Երևանում, 1920թ. հունվարին, Մեծ Բրիտանիայի գլխավոր կոմիսար Ջոն Օլիվեր Ուորդրոպի ժամանելու առիթով: Նա ղեկավարել է պառլամենտի ու Ուորդրոպի առաքելության շենքի առջև տեղի ունեցած միտինգները:<sup>63</sup> Հնարավոր է, որ Ա. Խաչատրյանը ներկա եղած լինի նաև Ալեքսանդրապոլում Հայաստանի պետական համալսարանի հանդիսավոր բացման արարողությանը, քանի որ մասնակիցների մեջ է եղել նաև Ջոն Ուորդրոպը:

Արտաշես Աբեղյանի հետ Ա. Խաչատրյանը եղել է Երևանի արտակարգ դատարանի անդամ (նախագահ՝ բժ. Հ. Տեր-Ղավթյան, պետական մեղադրող՝ Խոսրով Թութունջյան, ավելի ուշ՝ Վարդես Ախարոնյան):<sup>64</sup> Արտակարգ դատարանները կազմակերպվել էին 1920թ. մայիսին՝ բոլշևիկների կազմակերպած հակապետական խռովության կազմակերպիչներին ու մասնակիցներին դատապարտելու համար: Գրականության մեջ տեղ են

<sup>61</sup> Տես ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.120, ք.102-134:

<sup>62</sup> Տե՛ս Վրացյան Ա., Բանակցութիւններ Ազգային Պատվիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ, Պոսթըն, 1920:

<sup>63</sup> Տե՛ս Ованнисян Р. Международные отношения Республики Армения. 1918-1920гг. էջ 413:

<sup>64</sup> Տե՛ս Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (Մալիսյան ապստամբությունը), նյութեր և փաստաթղթեր, Եր., 1932, էջ 433-440: Hovannisian R. The Republic of Armenia, vol. III, Berkeley and Angeles, University of California Press, 1996, p. 251-252.

գտել Երևանի արտակարգ դատարանի 12 որոշում, 35 մարդու վերաբերյալ, նրանց թվում 34 (բ)4 Կենտկոմի ապագա քարտուղար Աղասի Խանջյանը, որը դատապարտվել էր 10 տարվա ազատազրկման:

Այնուհետև Աստ. Խաչատրյանի կարողություններն ու հնարավորությունները Հայաստանի Հանրապետության կառավարությունը փորձել է օգտագործել դիվանագիտության բնագավառում: Այդ նպատակով Սևրի պայմանագրի ստորագրման (1920թ. օգոստոսի 10) նախօրյակին, որպես գաղտնի որոշում, «Նախարարների խորհուրդը նշանակել է Հայաստանի եւ Տաճկաստանի մէջ գծելիք սահմաններն ուսումնասիրող մի յանձնախումբ: Յանձնախումբի անդամներն են Զօրավար Ղորղանեան՝ նախագահ, Վահան Փափազեան և պրոֆեսոր Աստվածատուր Խաչատուրեան»:<sup>65</sup>

Մեր կարծիքով սույն հանձնախմբի կազմակերպումը առնչություն ունի, կամ կարող էր առնչություն ունենալ ապագա Սևրի պայմանագրի 91-րդ հոդվածի որոշման հետ: Այդ հոդվածը սահմանում էր, որ եթե 89-րդ հոդվածի համաձայն՝ տարածքի մի մասը (հասկանալ էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի չորս վիլայեթներ.-Վ.Ղ.) հանձնվի Հայաստանին, ապա դրանից հետո, երեք ամսվա ընթացքում, ստեղծվելու էր Սահմանագծման հանձնախումբ, որը պետք է Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանագիծն անցկացներ տեղում:<sup>66</sup>

Նախարարների խորհուրդը առաջինի հետ մեկտեղ կայացրել էր նաև երկրորդ՝ հետևյալ որոշումը, որում ասված է, թե «նշանակուած է նաև մի ուրիշ հանձնախումբ Բաթումի եւ Տրապիզոնի խնդիրների լուծման համար: Բաղկացած է նոյն անձնավորութիւններից: Այս հանձնախումբի նախագահն է Վահան Փափազեանը: Պ. Վահան Փափազեանը նշանակվում է Փարիզի Պատուիրակութեան (հասկանալ Ավետիս Ահարոնյանի ղեկավարած պատվիրակությունը- Վ. Ղ.) անդամ եւ ամսոյս 13-ին Խաչատրեանի հետ մեկնում է Փարիզ»:

«Բաթումի և Տրապիզոնի խնդիրները», որոնց լուծման գործով զբաղվելու էր երկրորդ հանձնախումբը, նրա կազմում նաև Ա. Խաչատրյանը, կարող էին վերաբերվել այդ նավահանգիստներից Հայաստանի օգտվելու իրավունքին, որ սահմանված էր Սևրի պայմանագրի 351 և 352 հոդվածներով:

Անձամբ Ա. Խաչատրյանը ժխտել է այդ հանձնաժողովների գործունեության հնարավորությունը՝ ստեղծված իրադրության պատճառով: 1938թ. հարցաքննության ժամանակ, երբ նա ձերբակալվել էր, ասել է. «Ես

<sup>65</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.607, ք.14 հալ.:

<sup>66</sup> Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Զ. Կիրակոսյանի խմբ., Եր., 1972, էջ 676:

Փարիզ մեկնեցի որպես դաշնակցական կառավարության ներկայացուցիչ՝ մասնակցելու համար այն միջազգային կոմիտեի աշխատանքներին, որը Սևրի պայմանագրի համաձայն որոշելու էր Հայաստանի արևմտյան սահմանը: Սակայն Հայաստանի վրա թուրքական զորքերի հարձակման պատճառով Սևրի պայմանագիրը վերացավ, ուստի չգումարվեց և միջազգային կոմիտեն», ավելացնելով, որ Փարիզում մնացել է մինչև 1920թ. դեկտեմբերի սկիզբը, երբ մեկնել է Կոստանդնուպոլիս, ընտանիքի մոտ:

Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ Սևրի պայմանագրի ստորագրելուց հետո ևս և՛ Տրապիզոնի, և՛ Բաթումի կապակցությամբ հայ դիվանագետները աշխատանք տարել են, չնայած Ա. Խաչատրյանի մասնակցության մասին մեզ չի հաջողվել հետք գտնել: Ընդ որում, այդ աշխատանքը տարվել է ոչ միայն այն կապակցությամբ՝ ինչի մասին նշում էր Սևրի պայմանագիրը, այլև ուրիշ գծով:

Այսպես, Հայաստանի հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը 1920թ. օգոստոսի 11-ին, Սևրի պայմանագրի ստորագրման հաջորդ օրն իսկ, հանդիպելով Հունաստանի վարչապետ Է. Վենիզելոսի հետ, նրան հայտնել է, որոշ հանգամանքներից ելնելով, Տրապիզոնի նկատմամբ պահանջից հրաժարվելու մասին, բավարարվելով «Դաշնագրի հօգուտ մեզ եղած տրամադրությամբ՝ այդ նավահանգստի մասին»:<sup>67</sup> Սեպտեմբերի 8-ին Փարիզում զորավարներ Գ. Ղորղանյանի (Կորզանյանի) և Գ. Բագրատունու հետ Ա. Ահարոնյանը տեսակցել է ԱՄՆ-ի դեսպանի և դեսպանատան քարտուղար Ց. Գորդոնի հետ և խոսել Վանի վիլայեթում Հայաստանի գծվելիք սահմանի մասին, առարկայորեն նշելով, թե ինչ շրջաններ կարելի է դուրս թողնել: Իսկ ի պատասխան առաջադրված հարցի՝ գեներալ Գ. Ղորղանյանն ասել է, որ հայերը ստիպված են գոհանալ Ռիզե նավահանգստով՝ «հակառակ բազմաթիվ իր անհարմարություններին և կառուցանելու դժվարություններին՝ համեմատելով Տրապիզոնի հետ»:<sup>68</sup> Տրապիզոնից հրաժարվելու պատճառը հույների հետ չթշնամանալն էր, որը կարող էր աղետալի հետևանքներ ունենալ հայերի համար:

Ինչ վերաբերում է Ա. Խաչատրյանի հիշատակած Հայաստանի սահմանները որոշող միջազգային կոմիտեին (ավելի ճիշտ հանձնախմբին), ապա այդպիսին իրոք գոյություն է ունեցել: Այն ստեղծել էր խաղաղության կոնֆերանսի Գերագույն խորհուրդը՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչների մասնակցությամբ, որը գործել է Լոնդոնում 1920թ. փետրվար-մարտ ամիսների ընթացքում: Հանձնախմբի գործունեությանը օգնել են հայ դիվանագետները՝ Պողոս Նուբար փաշան, Ավետիս Ահարոնյանը, գեներալ Գ. Ղորղանյանը և ուրիշներ:

<sup>67</sup> Տե՛ս Ահարոնյան Ավետիս, Սարդարապատից մինչև Սեվր եվ Լոզան: Քաղաքական օրագիր 1919-1927, Եր., 2001, էջ 119:

<sup>68</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 121-122:

Հանձնաժողովը զբաղվել է միայն հայ-թուրքական սահմանների որոշման հարցերով.<sup>69</sup>

Ըստ կառավարական որոշման՝ Ա. Խաչատրյանը, Վահան Փափազյանի հետ Եվրոպա էր մեկնելու օգոստոսի 13-ին: Այլ տվյալներով՝ Ա. Խաչատրյանը այդ ժամանակից հետո ևս գտնվել է Երևանում: Գրքի համար հեղինակի գրած «Ծանօթութիւնը» կրում է այսպիսի ստորագրություն. «Ա. Խաչատրեան 1920.09.10 Երևան»: Եթե ամսվա և օրվա թվերը կարդանք երկու հնարավոր տարբերակով, ապա Ա. Խաչատրյանը մինչև 1920թ. սեպտեմբերի 10-ը կամ հոկտեմբերի 9-ը գտնվել է Երևանում: Մենք հակված ենք թվերը կարդալ՝ 9-ը հոկտեմբերի տարբերակով: Ինչևէ, երկու դեպքում էլ նրա մեկնումը տեղի է ունեցել որոշված ժամանակից (օգոստոսի 13) ավելի ուշ: Եվ, այնուամենայնիվ, կան օգոստոսի 13-ի օգտին վկայող այլ տվյալներ ևս, ինչպիսին 1938թ. հարցաքննության N 7958 գործն է: 1919թ. ժամանելով Հայաստանի Հանրապետություն, «ես այնտեղ մնացի մինչև 1920թ. օգոստոսի սկիզբը, երբ մեկնեցի Փարիզ»:

Ա. Խաչատրյանը Եվրոպայից վերադարձել է Կ. Պոլիս, որտեղ զբաղեցրել է Կեդրոնական, ապա Բերբերյան վարժարանների տնօրենի պաշտոնը՝ մինչև 1922թ. վերջը: Այդ ժամանակ խիստ անապահով վիճակում էր գտնվում Թուրքիայի հայկական համայնքը: Անդրկովկասյան Դաշնային Միությունը նույնիսկ Մուստաֆա Քեմալ փաշային ուղղված դիմումի նախագիծ պատրաստեց՝ «Կոստանդնուպոլսում գտնվող աշխատավոր հայերի մասին», որը 1922թ. նոյեմբերի 3-ին հաստատվեց ՌԿԲԿ Լեդկերկրկոմի նախագահության կողմից:<sup>70</sup> Այդ դիմումի ընդունումը հաջողվել էր ՀԿԲԿ կենտկոմի նախագահության 1922թ. հոկտեմբերի 10-ի որոշմանը: Քննարկելով «Կոստանդնուպոլսում հնարավոր ազգային կոտորածների դեմ միջոցառումներ ձեռնարկելու մասին» հարցը, Կենտկոմը որոշել էր հավանություն տալ ժողկոմխորհի քաղաքականությանը և հեռագրել Կենտրոն:<sup>71</sup> Նման պայմաններում 1923թ. Ա. Խաչատրյանը հայտնվեց Խորհրդային Հայաստանում, որտեղ, չնայած քաղաքական հետապնդումներին, այնուամենայնիվ, նրա համար հարաբերական իմաստով նպաստավոր պայմաններ կային մանկավարժական-գիտական գործունեությամբ զբաղվելու համար:

Ա. Խաչատրյանն աշխատում էր Երևանի հանրային գրադարանում, որպես վարիչի տեղակալ: Սակայն շուտով հանրապետության Արտակարգ հանձնաժողովը աննպատակահարմար գտավ նախկին դաշնակցականի աշխատանքը տվյալ բնագավառում, այդ մասին համապատասխան գրությամբ հայտնելով հանրապետության լուսժողկոմին:<sup>72</sup> Հանրային գրա-

դարանում Ա. Խաչատրյանն աշխատեց մինչև 1926թ.: 1924 թվականից նա աշխատում էր նաև Երևանի պետական համալսարանում՝ որպես հայոց լեզվի դասախոս: Եվ, այնուամենայնիվ, Ա. Խաչատրյանը 1927թ. հայտնվեց նրանց ցուցակներում, ովքեր, որպես քաղաքականապես անբարեհույս տարրեր (նախկին դաշնակցականներ, մենշևիկներ ու էսեռներ), չէին կարող գտնվել մանկավարժական աշխատանքում: Նրանց թվում էին Ցոլակ Խանզադյանը, Մուշեղ Խաչվանքյանը, Հովհաննես Քաջագունցին և ուրիշներ:<sup>73</sup>

1925թ. պրոֆ. Ա. Խաչատրյանն ընտրվել էր ՀՍԽՅ գիտության և արվեստի ինստիտուտի իսկական անդամ: Այս բնագավառում նա ծավալում է լայն գործունեություն և հրապարակ հանում մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ:<sup>74</sup> Գիտական աշխատանքով զբաղվել է տակավին 20-րդ դարի սկզբից: Առաջին նշանավոր գործը կատարել է ֆրանսիացի պատմաբան Ն. Դոլենսի հետ համատեղ: Այն նվիրված է հին հայերի պատմությանը, որի ֆրանսերեն տարբերակը տպագրվել է 1907թ., իսկ հայերենը՝ 1910թ.:<sup>75</sup>

Այս գիրքն ընդգրկում է Հայաստանի ուրարտական ժամանակաշրջանի պատմությունը, ներառելով «Հայերի վերջնական հայրենիքը» և «Հայ ազգի կազմակերպությունը» երկու գլուխները: Հեղինակները, սակայն, տուրք են տվել հետազայում մերժված հայերի եկվոր լինելու մասին տեսությանը: Բոլոր դեպքերում այն իր ժամանակի պատմագրության մեջ ունեցել է իր տեղը և ճանաչումը:

Մյուս առավել հայտնի գիրքը Ա. Խաչատրյանի հեղինակած աշխատությունն է, որը նվիրված է նախաուրարտական ժամանակաշրջանի պատմությանը և իրենից ներկայացնում է լուրջ ուսումնասիրություն: Գրքի «Առաջաբանի» հեղինակ Հակոբ Ջորյանը, գնահատելով այն, գրել է. «Ինչպես հայտնի է, մինչև այժմ տիրապետող կարծիքը եղել է այն, որ խալդ-ուրարտական շրջանից սկսում է Արմենիա-Հայաստանի գրավոր պատմությունը: Պրոֆ. Ա. Խաչատրյանի ներկա ընդարձակ ուսումնասիրությունը նպատակ է դրել ապացուցել, որ այդ գրավոր շրջանը սկսում է դարեր առաջ և փորձում է, ձեռքի տակ եղած նյութերի սահմաններում, տալ այդ նախնազույն շրջանի պատմությունը»: «Բոլորովին խոպան հո-

<sup>73</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.7, գ.36, ք.12,17-27:

<sup>74</sup> Տե՛ս Հովհաննիսյան Պ., Աստվածատուր Խաչատրյան (1860-1938)- Նշանավոր ճեմարանականներ, պր. Բ. Էջմիածին, 2009, էջ 151-155: Գ.Գ., Պրոֆ. Աստվածատուր Խաչատրեան.-Ակոս, ամսագիր, Բեյրութ, 1946, գիրք Ժբ, էջ 119-124: Պարիքչանյան Ստեփան, Բռնադատված մտավորականները. Աստվածատուր Խաչատրյան.-Հայոց աշխարհ, 13 հունվար 1998թ.:

<sup>75</sup> Տե՛ս N.Dolens et A. Khatch, Histoire des anciens Armeniens, Geneve, 1907., Ն. Դոլենս և Ա. Խաչ, Պատմութիւն հին հայերի: Պրակ երկրորդ. Հայերի վերջնական հայրենիքը և Հայ ազգի կազմակերպութիւնը: Ֆրանս. բնագր. թարգմ. Ռ. Քաջբերունի: Թիֆլիս, 1910, 156 էջ:

<sup>69</sup> Տե՛ս Սիարոնյան Ավետիս, Սարդարապատից մինչև Սեփր եվ Լոզան, էջ 59-70:

<sup>70</sup> Տե՛ս ՀԱԱ, Հավաքածու, N1, ց.2, գ.1, ք.52:

<sup>71</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ.1, ց.2, գ.5, ք.69:

<sup>72</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ.122, ց.3, գ.1, ք.44:



ղում ակոսելը,- ամփոփել է Հակոբ Ջորյանը,- որքան դժվարին գործ է, նույնքան և շնորհակալ աշխատանք»:

«Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն» խորագրով այդ հետազոտությունը, որը հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով հարուստ գրականության և աղբյուրների հիման վրա է գրված, տպագրվել է Երևանում, 1933թ. Մելքոնյան ֆոնդի հրատարակությամբ:

Աշխատության մի մասը հեղինակը գեկուցել է ՀՍԽՖ Գիտությունների և արվեստի ինստիտուտի անդրանիկ և հաջորդ նիստերում, 1925թ. դեկտեմբերին և որի մի հատվածը տպագրվել է ինստիտուտի «Տեղեկագրի» N1-ում, 1926թ., մեկ այլ հատված՝ N 4-ում, 1929թ.:

Ինքնին լինելով մեկ ամբողջական գործ, գրել է հեղինակը, այն չի լրացնում վերնագրի պահանջը: «Հայաստանի սեպագրական շրջանի պատմության նյութի ամբողջության համար մնում է դեռ Ուրարտուների (այսինքը՝ ուրարտացիների.-Վ.Ղ.) պատմությունը, որը լինելու է այս պատմությանս երրորդ մասը: Իսկ թե հեղինակին պիտի հաջողվի գրել և այս մասը, դժվար է ասել»: Եվ դա հեղինակին, իհարկե, չէր հաջողվելու:<sup>76</sup>

Հայտնի է, որ Ա. Խաչատրյանը ունեցել է նաև այլ գիտական աշխատանքներ, որոնք պետք է կորած համարել: Դրանցից են Փառլ Պարթի «Դաստիարակության սկզբունքները» երկի թարգմանությունը և Զիթունու գավառաբարձառին նվիրված ստվար ուսումնասիրության առաջաբանը, որոնք բռնագրավվել են թուրքական ոստիկանության կողմից՝ 1915թ. խուզարկությունների ժամանակ:<sup>77</sup> Նույն աղբյուրի հեղինակ բժիշկ Պ. Միսաքյանը գրել է 1945թ. «Տասնեակ մը տարիներ առաջ ան ինձ կը գրեր. «Սիրելի դոքտոր. մի բան պիտի առաջարկեմ. ես պատրաստել եմ և մի ընդարձակ քերականութիւն արդի հայերէնի՝ բարձրագոյն դասընթացքի համար: Որքան որ ինձ ծանօթ է, արեւմտահայ կեանքի մէջ նման մի գործ դեռ չէ հրատարակուած, արդ, կարելի՞ է այդտեղ գտնել մի հրատարակիչ՝ գրավաճառ կամ անհատ, որ զնէ իմ հեղինակի իրավունքը և ինքը հրատարակէ, հարկաւ փոխելով ուղղագրութիւնն ու լեզուն՝ եթէ պետք է: Գործը կարող է օգտակար լինել և ափսոս է՝ եթէ կորչի»: Այնուհետև Միսաքյանն ավելացնում է, որ այդ գիրքը հրատարակել չհաջողվեց և, իսկապես, ափսոս է, որ այն կորչի:<sup>78</sup>

Ա. Խաչատրյանը 1932թ. հանդես է եկել առանձին գրքույկով՝ այն գրքի առիթով, որի հեղինակն է Ի. Մեշչանինովը: Հարցը վերաբերում էր

Նաիրի-Ուրարտուի պատմությանը:<sup>79</sup> Վերը ներկայացված ուսումնասիրությունից հայտնի է, որ Նաիրի-Ուրարտուի պատմությունը Ա. Խաչատրյանը ներառնում էր Հայաստանի և հայ ժողովրդի պատմության մեջ, ինչի դեմ մեղանչել էր Ի. Մեշչանինովը:

Խորհրդային Հայաստանում Ա. Խաչատրյանը տպագրել է հոդված Հայաստանի ոսկու հանքերի վերաբերյալ:<sup>80</sup>

1938թ. մարտի 18-ին տեղի ունեցավ նախկին դաշնակցական Ա. Խաչատրյանի ձերբակալությունը: Այդ թվականի համար Հայաստանի Մոսկվայից առաջադրանք էր իջեցվել՝ առաջին կատեգորիայի համար (գնդակահարություն)՝ 1000 մարդ և երկրորդ կատեգորիայի համար (բանտարկություն և աքսոր)՝ ևս 1000 մարդ: Պարզ է, որ այդ պլանը, ինչպես և նախորդները, պետք էր կատարել:<sup>81</sup>

Հազար գնդակահարվողներից մեկը պետք է լիներ նախկին դաշնակցական Ա. Խաչատրյանը, չէ որ նրան մեղադրում էին որպես գերմանական ու անգլիական լրտեսի, ով մինչև ձերբակալության օրը ղեկավարել էր «հակահեղափոխական կենտրոն», նրանում հավաքագրելով քուրդ և եզդի «ապստամբական կադրեր», նրանց նախապատրաստելով «խորհրդային իշխանության դեմ զինված ապստամբության համար» (Բ.Օ., հոդվածներ 63, 67 և 68): Գնդակահարության որոշումը կայացրել էր ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմատին կից Հատուկ եռյակը:

Հանձնի Ա. Խաչատրյանի՝ հայագիտությունը զրկվեց մեկ երախտավոր մշակից ևս:

\*\*\*

Աստվածատուր Խաչատրյանի հետ միաժամանակ նույն հիմնախնդրի գիտական ուսումնասիրությունը կարելի է տեսնել մեկ այլ պատմաբանի ձեռագիր աշխատության մեջ: Խոսքը Հովհաննես Տեր-Մարտիրոսյանցի (հայագիտությանը հայտնի է Ա-դո անունով) «Հայոց երկունքը» աշխատության մասին է: Այս ձեռագրի բովանդակությունը մեզ հայտնի դարձավ շատ տարիներ առաջ՝ արխիվային աշխատանքների ընթացքում: Գրքի կառուցվածքը ենթահարցերի երկար ցանկ է, 61 հարցից բաղկացած, իսկ ծավալը՝ 526 էջ, առանց վեջին 4 հարցերի: Գրքի հարցերի զգալի մասը կրկնում է 1918թ. նույն իրադարձությունները, ինչ որ Աստ. Խաչատրյանի մոտ է, ուստի այն գրավեց մեր ուշադրությունը և

<sup>76</sup> Տե՛ս Պրոֆ. Աստ. Խաչատրյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, հիմնված արձանագրական տվյալների վրա, շուրջ 3000-600 նախքան մեր թ., հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, Երևան, 1933, 555 էջ:

<sup>77</sup> Տե՛ս Հուսաբեր, 3 հուլիսի 1945թ., N79 (բժիշկ Պ. Միսաքյանի հոդվածը՝ Յուշերե և տպարկութիւններ պրոֆ. Ա. Խաչատրյանի կեանքէն):

<sup>78</sup> Տե՛ս նույն տեղում, 10 հուլիսի:

<sup>79</sup> Տե՛ս *Хачатрян А. Пересмотр древнейшего периода Наири-Урартской истории. По поводу книги И.И. Мещанинова «Халдоведение», изд. в 1927г., Ереван, Армгиз., 1932.*

<sup>80</sup> Տե՛ս Խաչատրյան Ա., Հույն պատմիչների վկայությունը հին Հայաստանի ոսկեհանքերի և նրանց տեղի մասին: Տեղագրական ուսումնասիրություն, Եր., 1925: Արտատպված ՀՍԽՖ պետ. համալսարանի գիտական տեղեկագրի N1-ից:

<sup>81</sup> Տե՛ս Գրիգոր Հարությունյան. Կյանքը և գործունեությունը: Եր., 2000, էջ 41:

ստիպեց նորից հետաքրքրվել նրանով՝ այս դեպքում Ա. Խաչատրյանի առիթով:

Բանը այն է, որ ազգային արխիվում «Բովանդակություն» փաստաթուղթը միայնակ է, առանց բուն աշխատության և հեղինակի անվան հիշատակման: Հեղինակի ով լինելը պարզվում է «Բովանդակությամբ» հաջորդող երկրորդ փաստաթղթից: Վերջինս Հայաստանի Հանրապետության զինվորական շտաբի պետի գրասենյակի 1920թ. ապրիլի 24-ի N 6410 գրությունն է ներքին գործերի նախարարին: Բերում ենք այդ ամբողջ գրությունը՝ ռուսերենից թարգմանաբար:<sup>82</sup>

«Պարոն Հովհաննես Տեր-Մարտիրոսյանցը տպագրության է ներկայացրել իր՝ համաշխարհային պատերազմի և նրանում հայերի մասնակցության պատմության մասին հայերեն աշխատությունը ըստ սույն գրությանը կից բերվող բովանդակության: Ընդ որում՝ հիշյալ աշխատությունը նա ներկայացնում է կառավարության տրամադրությանը անհատույց:

Զինվորական մինիստրի հրահանգով, դիմելով Ձեզ, խնդրում եմ չմերժել՝ նշանակել Ձեր մինիստրության ենթակայության ծառայողներից մեկին՝ մասնակցելու այն հանձնաժողովին, որն ընթերցելու է պ. Տեր-Մարտիրոսյանցի ձեռագիր աշխատությունը:

Թե ում Դուք կնշանակեք՝ բարեհաճեք տեղեկացնել Ձինվորական մինիստրին:

Հավելված. Բովանդակությունը»:<sup>83</sup>

Գրությունը ստորագրել են շտաբի պետ գնդապետ Բոզդան Բադրասարովը և գրասենյակի պետ, փոխգնդապետ Արեշևը: Գրության վրա կա մակագրություն այն մասին, թե ով է նշանակվել հանձնաժողովում աշխատելու, այսինքն ընթերցելու համար:

Մեզ հայտնի չէ, թե ինչ ընթացք և արդյունք է ունեցել աշխատության քննարկումը կամ ընթերցումը, սակայն պարզ է, որ հեղինակը այդպիսի տպագիր գիրք չունի, ուստի հարկավոր էր որոնել ձեռագիրը: Եվ որոնումները մեզ տարան Հայաստանի պատմության թանգարան, որտեղ պահվում է Ա-դոյի անձնական ֆոնդը և նրանում մեզ հետաքրքրող «Հայության երկունքը» մեքենագիր աշխատությունը, և որի տպագրությունը ևս ցանկալի կլիներ իրականացնել:

Այսպիսով, գրությունը պարզում է աշխատության հեղինակի ով լինելը և նրա պատրաստման ժամանակի հարցը՝ դարձյալ 1920թ., ինչպես Ա. Խաչատրյանի դեպքում:

\*\*\*

Առաջին հանրապետության անկումից հետո նրա պատմության, մասնավորապես անկախության հռչակման հիմնահարցի գիտական ուսումնասիրությունը շարունակվեց հայկական սփյուռքում: Բազմաթիվ

<sup>82</sup> ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.29, ք.14:

<sup>83</sup> «Բովանդակությունը» տե՛ս նույն տեղում, ք.15 և հալ.:

գրքերի շարքում ուշադրության արժանի և հիշատակելի են Ալ. Խատիսյանի և Ս. Վրացյանի ուսումնասիրությունները:<sup>84</sup> Ալ. Խատիսյանի՝ որպես հեղինակի, առավելությունն է, որ նա եղել է, հիրավի, այն առաջին հայ դիվանագետը, որ գտնվել է հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների կիզակետում, հեղինակած գրքին տալով նաև հուշագրության բնույթ, բարձրացնելով հաղորդած փաստերի ու տվյալների հավաստիությունն ու արժեքը: Մենք նկատի ունենք նաև նույն հեղինակին պատկանող «Օրագրությունը», որը բերված է սույն տպագրվող գրքի հավելվածում: Մեծ է նաև Ս. Վրացյանի գրքի նշանակությունը: Հեղինակը իրադարձությունների ժամանակակիցն է և դրանց գործուն մասնակիցը, Հայաստանի Հանրապետության չորս վարչապետներից մեկը:

Խորհրդային պատմագրությունը, հասկանալի պատճառներով, չի հետաքրքրվել առաջին հանրապետության պատմությամբ, եթե նկատի չունենանք նրա կողմից հանրապետության գոյությունը քննադատության թիրախում պահելը:

Հետխորհրդային ժամանակաշրջանում միանգամայն նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ազատ գիտական ստեղծագործության համար: Հայաստանի առաջին հանրապետության պատմության ուսումնասիրությունը դրվեց պատմագրության առաջնահերթ հիմնախնդիրների շարքում: Գովեցին բազմաթիվ նոր ուսումնասիրություններ, պաշտպանվեցին ատենախոսություններ: Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից ամենաուշագրավ ուսումնասիրությունը կատարել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանը: Նկատի ունենք նրա «Հայկական հարցը 1918 թվականին», ինչպես նաև նրա 1918թ. Մայիսյան հերոսամարտերին նվիրված աշխատությունները:<sup>85</sup> Ի տարբերություն Ա. Խաչատրյանի՝ Հր. Ավետիսյանը հիմնահարցի ուսումնասիրությունը կատարել է ավելի նպաստավոր պայմաններում՝ բազմազան ու մեծաքանակ արխիվային փաստաթղթերի, ինչպես նաև անցած տասնամյակներում հրապարակված գրականության հիման վրա, ուսումնասիրությունը դարձնելով բազմապլան:

Հիշատակել է պետք Արարատ Հակոբյանի և Վահան Մելիքյանի գրքերը:<sup>86</sup> Առաջինը հատկապես կենտրոնացել է Հայաստանի Հանրապետության խորհրդարանի և կուսակցությունների գործունեության, իսկ երկրորդը՝ անկախ պետականության հաստատման նախադրյալների վրա:

<sup>84</sup> Տե՛ս Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը: Բ. տպագ., 1968: Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928:

<sup>85</sup> Տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997: Նույնի՝ Հայոց ազգային միասնության հարթաճակը. -1918 թվականի մայիս, Եր., 1998:

<sup>86</sup> Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920թթ), Եր., 2005: Մելիքյան Վ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917թ. մարտ-հոկտեմբեր), Եր., 1997: Նույնի, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917թ. նոյեմբեր-1918թ. փետրվար), Եր., 2010:

Արժեքավոր է Գայանե Մախմուրյանի կատարած աշխատանքը, որը լուսաբանել է Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ:<sup>87</sup> Հատկապես մի շարք ատենախոսություններում քննարկվել են Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կապերի ու հարաբերությունների հարցեր: Սամսոն Քառյանի գրքում տեղ են գտել նաև այն հեղինակների գործերը, որոնք առնչվում են Ա. հաչատրյանի լուսաբանած հիմնահարցին:<sup>88</sup> Ամփոփելով հիմնախնդրին նվիրված ուսումնասիրությունների վերլուծությունը, Ս. Քառյանը գրել է. «Մայիսյան հաղթական հերոսամարտերն ունեցան ճակատագրական նշանակություն: Ապահովվեց հայության ֆիզիկական անվտանգությունը և միանգամայն իրական հիմքեր ստեղծվեցին հայկական պետականության ստեղծման համար»: Աղբյուրագիտական նշանակություն ունեցող գրքերից է Վ. Դալլաքյանի և Ա. Մարուքյանի կազմած ժողովածուն:<sup>89</sup>

Եվ, այնուամենայնիվ, Ա. հաչատրյանին է պատկանում առաջնությունը՝ ով իրադարձությունների ամենաթարմ հետքերով ներկայացրել է Հայաստանի առաջին հանրապետության ծնունդը՝ հայ-թուրք հարաբերությունների ֆոնի վրա, հիմնավոր քննարկելով հայկական պետականության վերականգնման պատճառներն ու պայմանները, առաջին պլան մղելով 1918թ. Մայիսյան հերոսամարտերի դերն ու նշանակությունը, որ ընդունել են նաև թուրք դիվանագետները և պետական գործիչները:

Բոլոր փաստաթղթերը՝ և՛ Ա. հաչատրյանի ուսումնասիրությունը, և՛ հավելվածում ներառածները հրապարկվում են առաջին անգամ: Ա. հաչատրյանի մոտ շատ են կրճատ բառերը, ուղղումները, սակայն հնարավորինս պահպանվել է բնագրի ուղղագրությունը: Գրքում կրճատումները լրացվել են միայն մասամբ՝ ըստ անհրաժեշտության:

Հավելվածում որևէ միջամտություն չի կատարվել, բացառությամբ կետադրական շտկումների: Խմբագրության անհրաժեշտ միջամտությունները տեղ են գտել էջային ծանոթագրություններում: Բոլոր բազմակետերը պատկանում են բնագրին: Ֆրանսերենից թարգմանությունները կատարել է պատմական գիտությունների դոկտոր Վարուժան Պողոսյանը, որի համար խմբագրությունը հայտնում է իր շնորհակալությունը:

Վլադիմիր Ղազախեցյան  
20 օգոստոսի 2009թ.  
Երևան - գ. Չորավան

<sup>87</sup> Տե՛ս Махмурия Г. Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920гг. Время Белого человека, Ер. 2002.

<sup>88</sup> Տե՛ս Քառյան Ս., Հայաստանի առաջին հանրապետության պատմության պատմագրություն, Եր., 2003.:

<sup>89</sup> Տե՛ս Դարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստ. և նյութերի ժող., կազմողներ՝ Դալլաքյան Վ., Մարուքյան Ա., խմբ.՝ Վ. Ղազախեցյան, Եր., 2008:

Պրոֆ. Ա. հաչատրեանը ներկայ աշխատութիւնը գրելիս ուշադրութեամբ կարդացել է Հայոց Ազգային Խորհրդի արձանագրութիւնները և իր պատմութիւնը կազմել է միայն Ազգային Խորհրդի տուեալների վրա, որից և բխում են աշխատութեան թերի կողմերը:

Չպետք է մոռանալ, որ Հայոց Ազգային Խորհուրդը չէր հայ ժողովրդի քաղաքական կեանքի ղեկավարը, այլ Հ.Յ. Դաշնակցութիւնը՝ յանձին երկու բիւրոների և Սէյմի ֆրակցիայի: Հայոց Ազգային Խորհուրդը ավելի շուտ մի խօսարան էր. խոշոր ազդեցութիւն նա չուներ: Տւեալ շրջանի պատմութիւնը գրելը Ազգային Խորհրդի արձանագրութիւններով՝ սխալ է: Դրա համար պետք է առնել Դաշնակցութեան մարմինների արձանագրութիւններն ու արխիվները, Սէյմի յեղափոխական կենտրոնների գործունեութիւնը: Եւ որովհետև պրոֆ. հաչատրեանը այս բոլորը ձեռքի տակ չի ունեցել, նրա պատմութիւնը դուրս է եկել թերի, նա շարել է միայն փաստերի արտաքին կողմը, իրար յետևից ժամանակագրական կերպով շարել է դեպքերը-այս մասն, անշուշտ, կարևոր է, բայց նրա բացատրական մասը, վերլուծութիւնն ու դատողութիւններից շատերը անիրական են:

Այսպես, օրինակ, մեծ սխալ է «մտավախութեամբ» բացատրել հայ գործիչների այն հոգեկան վիճակը, որ ստեղծուեց Բաթումի դաշնագրից յետոյ. Հայաստանի անկախութեան յայտարարութեան առթիւ: Այդ վիճակը արդիւնք էր հայ ժողովրդի համար ստեղծուած խիստ անպաստ դրութեան, որի ժամանակ անկախութիւնը կարող էր աւելի ևս ծանրացնել կացութիւնը: Չի կարելի ասել, որ «մտավախ» էին հայ քաղաքական կեանքի լաւագոյն ներկայացուցիչները, որոնք մասնակցել են Ազգային Խորհրդի նիստերին:

Սխալ է նոյնպէս միայն յետին մտքերով բացատրել և այն վախը, որ շատերն ունէին Ազգային Խորհուրդը և Կառավարութիւնը անմիջապէս Երևան փոխադրելուց: Այո, շատերը իսկապէս վախենում էին Երևան գնալ. բայց շատերն էլ, իրոք, վախենում էին այդ քայլով վտանգել համազգային դատը: Եվ դրանցից մեկն էլ պ. Ս. Մամիկոնեանը, որին, համենայն դէպս, չի կարելի վերագրել «դիտումնաւորութեան» յատկութիւն:

Կառավարութեան կազմութեան դանդաղութեան մեջ ահագին դեր խաղաց Հայ ժողովրդական կուսակցութեան սկսած պայքարը, որ պրոֆ. հաչատրեանը բնաւ ի նկատի չի առած:

Ի նկատի չի առնուած բոլորովին Արևմտահայ խորհրդի գործունեութիւնը, որն, անշուշտ, խոշոր կապ ուներ ռուսահայոց հետ: Առանց արևմտահայ խորհրդի մասին խօսելու շատ հանգամանքներ՝ Երզրումի անկման, խմբերի դերի և այլն մասին կմնան անհասկանալի:

Բնաւ չի շօշափուած Երևանի Ազգային Խորհրդի գործունեութիւնը, որ ահագին նշանակութիւն ունի և առանց դրան անհասկանալի է լինում շատ բան (Սարդարապատ, հայ-թաթարական կռիվներ):

Բազլի ազատամարտը մոռացած է:

Եւ նման խիստ կարևոր մօմենտներ չկան աշխատութեան մէջ:

Պրօֆ. Խաչատրեանի աշխատութիւնը մի տեսակ ժամանակագրութիւն է Հայոց Ազգային Խորհրդի գործունեութեան և նրա հետ կապւած մի քանի հանգամանքների: Իհարկէ, այս տեսակետից էլ գործն իր արժեքը ունի, բայց դա «ռուսահայերի պատմութիւնը» չէ, այլ այդ պատմութեան մի փոքրիկ բեկորը:

Աշխատութիւնը կազմւած է շտապ և պետք ունի սրբագրութեան և մշակման: Պատահում են և փաստական սխալներ, օրինակ, Օզակոմը միայն կովկասցիներից չէր. նրա նախագահ Խարլամովը Դօնի պատգամաւոր էր և ծագումով կազակ:

Օզակոմի բոլոր անդամների մօտ ազգային յանձնախմբեր չկային: Ադրբեջանի անկախութիւնը մայիսի 26-ին չէր, այլ 28-ին և այլն:

Իբրև մասնաւոր հրատարակութիւն արժէք կունենայ, բայց իբրև կառավարական հրատարակութիւն, իմ կարծիքով, անընդունելի է:

ՀԱԱ, Ֆ.200, ց. 1, գ. 644, ք. 1 և հակ.: Ինքնագիր:

Հայ ազատագրութիւնը և երոպական դիւանագիտութիւնը

Բ մաս

Արևելահայ և թուրք դիւանագիտական յարաբերութիւնները  
1917 նոյեմբեր 30 – 30 հոկտեմբեր 1918

Երզնկայի զինադադարէն մինչև Անգլօ-թուրք զինադադարը

Պաշտօնական վաւերագրերու հիման վրայ

Գրեց Ա. Խաչատրեան  
1920 Երևան

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1919 ղեկտեմբերին ՀՀ վարչապետ պ. Ա. Խատիսեան ինծի պաշտօն յանձնեց ընտրել ու կարգի դնել Տրապիզոնի և Բաթումի հայ-թրքական դիւանագիտութեան վերաբերեալ բոլոր պաշտօնական գրութիւնները հրատարակութեան համար և գրել նախաբանը:

Ամիսներ պէտք եղան թուղթերու այն դեզէն, որ ինծի յանձնուեցաւ, գատել մէկ-մէկ օրինակ բոլոր գրութիւններէն՝ շատերէն տասնեակ օրինակներ կային խառնիխումն, և կարգի դնել: Ասկէ յետոյ սկսայ գրել առաջադրուած նախաբանը, որ դարձաւ այս պատմութիւնը:

Ինչպէս վերնագիրն ալ կը վկայէ՝ այս գործն ամբողջական պատմութիւնը չէ Կովկասի հայութեանը, այլ միայն հայ-թրքական դիւանագիտական յարաբերութիւններու պատմութիւնը՝ ուրեմն նոյնիսկ այդ շրջանի քաղաքական պատմութեան մէկ ճիւղը: Իբր այս՝ գրողն աշխատեր է ամփոփ կերպով ներկայացնել նիւթն, իր էական գործերովը: Գործի լիութեան համար հարկ տեսնուեցաւ սկսել Կովկասի հայոց միջկուսակցական ժողովներու գործերէն:

Սակայն պէտք է կանխեմ ըսել, որ առաջի աղբիւրներէ՝ փաստաթուղթերէ քաղուած պատմութիւն մը՝ չի կրնար լիակատար լինելու մեծ առաւելութիւնները պարծիլ, որովհետև դեռ կը պակսին այս հաւաքածուին մէջ կարևոր վաւերագրեր, որոնք կրնային նիւթն ունէ կերպով լուսաբանել կամ, կրնայ պատահել, գրողի աչքէն վրիպած լինեն կարևոր թուղթեր և կէտեր՝ ասով հանդերձ այս գործը կը մնայ իբր առաջինը այս նիւթի համար:

Յիշատակելու արժանի ուրիշ պարագայ մըն է և այն, որ փաստաթուղթերէն ընդարձակ հատուածներ մէջ բերուած են: Քանի որ մեր վաւերագրերուն հաւաքածուն հրատարակուած չէ, պէտք էր դիւրութիւն տալ ընթերցողներուն՝ անմիջականօրէն ծանօթանալ բուն աղբիւրներու հետ: Գերմաներէնէ մէջ բերուած են ամբողջ գրութիւններու թարգմանութիւններ, ասոր ալ նպատակն է եղեր մէկ գործի մէջ ամփոփել այս նիւթին վերաբերեալ բոլոր վաւերագրերը:

Յուսամ, թէ անկախ Հայաստանի մանուկ հանրապետութեան պատմութեան համար այս աշխատութիւնը բոլորովին ալ աւելորդ լինելու չէ:

Ա. Խաչատրեան  
1920. 09. 10 Երևան

Նիւթերու ցանկ

	Էջ <sup>1</sup>
Ծանօթութիւն.....	1
Աղբիւրներ. ....	1-2
Ա. Կովկասահայերու միջկուսակցական ժողովները.....	3
Բ. Հայոց Ազգային համախորհուրդը .....	4
Գ. Հայոց Ազգային Խորհուրդը .....	5-10
Դ. Թէ ինչպէս զինադադարի պայմանագրութիւնը ոտնակոխ կընեն օսմանները .....	10-13
Ե. Տրապիզոնի բանակցութիւնները .....	13-20
Զ. Բաթումի հաշտութեան բանակցութիւնները .....	21-23
Է. Նախագծէն յետոյ ստեղծուած կացութիւնը .....	23-24
Ը. Կովկասեան Հանրապետութեան լուծուելը .....	24-26
Թ. Հայաստանի և հայերու դրութիւնը Կովկասեան Հանրապետութեան լուծուելէն յետոյ .....	26-27
Ժ. Գերմանիայի դիրքը հայերու հանդէպ .....	27-39
ԺԱ. Հայ-թրքական յարաբերութիւնները .....	39-42
ԺԲ. Բաթումի հայ-թրքական դաշնագրութիւնը .....	43-45
ԺԳ. Ալէքսանդրապոլի խառն յանձնախումբի աշխատանքը .....	46-47
ԺԴ. Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհուրդի Երևան տեղափոխուելու խնդիրը .....	47-53
ԺԵ. Կ. Պոլսի և Բեռլինի հայ պատկերակութիւններու գործունէութիւնը .....	53-70
ԺԶ. Վերջին խօսք.....	71-72

## Աղբիւրներ

1. Կովկասեան հայոց միջկուսակցական ժողովներու արձանագրութիւնը. սկսուած 1917 մարտ 7 – 6 սեպտեմբեր, Թիֆլիս, հայերէն և ձեռագիր:

2. Բնագիր հայոց ազգային համախորհուրդի արձանագրութեան. սկսուած 1917 սեպտեմբեր 29-13 հոկտեմբեր, Թիֆլիս, հայերէն և ձեռագիր<sup>2</sup>:

3. Հայոց Ազգային խորհուրդի արձանագրութիւնը. սկսուած 1917 հոկտեմբեր 15-17 յուլիս 1918, հայերէն և ձեռագիր:

4. Տրապիզոնի՝ Թուրքիայի և Կովկասեան հանրապետութեան պատւիրակներու բանակցութիւններու հաւաքածուն.

ա) Կովկասեան սեյմի մէկ քանի նիստերու արձանագրութիւնը,

բ) Կովկասեան պատւիրակութեան նիստերու արձանագրութիւնը,

գ) Կովկասեան և Օսմանեան պատւիրակութեան խառն նիստերու արձանագրութիւնը,

դ) Կովկասեան հանրապետութեան պատւիրակութեան տեղեկագիրը, սկսուած 1918 մարտ 14 – 15 ապրիլ, ռուսերէն և ձեռքի մեքենայով տպուած:

5. Բաթումի հաշտութեան բանակցութիւններու հաւաքածուն.

ա) Օսմանեան կառավարութեան և Կովկասեան հանրապետութեան միջև փոխանակուած թղթակցութիւնները և առաջարկուած նախագիծը,

բ) Օսմանեան կառավարութեան և Հայաստանի Հանրապետութեան միջև փոխանակուած թղթակցութիւնները և ստորագրուած դաշնագիրը,

գ) Հաւելուածական և լրացուցիչ դաշնագրերը, սկսուած 1918 մայիս 6<sup>3</sup>– 5 յունիս, ֆրանսերէն և ռուսերէն, ձեռքի մեքենայով տպուած:

6. Ալէքսանդրապոլի հայ և Օսմանեան խառն յանձնախումբի նիստերու արձանագրութիւնը և յարակից թուղթերու հաւաքածուն, 1918 յունիս:

7. Բրեստի դաշնագրութիւնը՝ 1918, գերմաներէն և ռուսերէն տպուած:

8. Բեռլինի հայ պատւիրակութեան պաշտօնական թղթակցութեան և տեղեկագրերու հաւաքածուն, 1918 յունիսէն՝ հոկտեմբեր, հայերէն, գերմաներէն, ռուսերէն, տպուած և ձեռագիր:

9. Կ. Պոլսի հայ պատւիրակութեան բանակցութեան և թղթակցութեան հաւաքածուն, սկսուած 1918 յունիս 19 – 31 հոկտեմբեր, հայերէն, ֆրանսերէն, ձեռագիր:

10. Ալէք. Խատիսեանի օրագրութիւնը, սկսուած 1918 փետրուար 23 – 31 հոկտեմբեր, ռուսերէն և ձեռքի մեքենայով տպուած:<sup>4</sup>

11. Ալէք. Խատիսեանի երկու տեղեկագիր-նամակները՝ 1918 սեպտեմբեր 1 և 4, Կ. Պոլիս, ռուսերէն և ձեռքի մեքենայով տպուած:

12. Անդրկովկասի և Վրաստանի դիւանագիտական յարաբերութիւնները: Տպուած Թիֆլիս, 1919, ռուսերէն:<sup>5</sup>

13. Թուրք մամուլէն յօդուածներու հաւաքածուն, ֆրանսերէն, ձեռքի մեքենայով տպուած:

14. Material der Kaukasisch – armenischen Frage 1918 Juni, Berlin – Schoneberg.

15. Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischen Aktenstücke, Dr. J. Lepsius, 1919, Potsdam.

16. Materialien der aesteurafaischen Politik., 1918. 15 Juni. N 3.

17. Über das Vokstum der Komanen, Prof. Jos. Marquart. 1914. Leipzig.

**Ա.**  
**Կովկասահայերու միջկուսակցական ժողովը**

Ռուսական մեծ յեղափոխութեամբ կը քայքայուէր ցարական բռնակալութիւնը և հսկայական կայսրութիւնը բաղկացնող բազմաթիւ ազգեր կը գտնուէին մեծ անակնկալի մը առջև: Ամենքը մտահոգ կսպասեն, թէ ինչ պիտի լինի մեծ յեղափոխութեան վերջնական ուղղութիւնը և իրենց ճակատագիրը:

Կովկասում, որ ցարական իշխանութեան ժամանակն իսկ քաղաքական մտահոգութիւն կը պատճառէր, յաճախ մեծ կայսրութիւնը՝ իր մէջ ամփոփած շատ ազգերու հակամարտ շահերովը, այժմ ալ աւելի կը շեշտուէր այս կէտը, իսկ Կովկասի երեք մեծ ազգերը՝ հայեր, վրացիներ և թաթարներ, այնպէս կը խորհէին իրենց ներկայ կացութեան և ապագայի մասին:

Մեծ յեղափոխութեամբ տապալուած վարչական կազմի փոխանակ հաստատուէր էին նահանգային կոմիսարիատներ (գործակալութիւններ), որոնք, տեղական ժողովուրդէն ընտրուած յանձնաժողովի մը հետ, կը կառավարէին իրենց իրաւասութեան ենթակայ շրջանը: Կովկասն ալ ունեցաւ իր գործակալութիւնը՝ կազմուած պետական դումայի (խորհրդարանի) անդամներէն,<sup>3\*</sup> իբր խորհրդակից ուներ մէկ յանձնախումբը:

Պետական խորհրդարանի Կովկասի հայերու ներկայացուցիչ պ. Միքայել Պապաջանեան անդամ էր նոյնպէս Կովկասի գործակալութեան, իրեն խորհրդակից ունենալով յանձնախումբ մը:

Սակայն յեղափոխութեան յառաջ բերած ամէնօրեայ անակնկալները չէին կարող անուշադիր մնալ Կովկասի հայերու կողմէն: Անբաւարար համարելով այդ մարմինը՝ իբր տէր ու տնօրէն կովկասահայ ճակատագրին, 1917 մարտի 7/20-ին<sup>4\*</sup> Թիֆլիսի հայերու առաջնորդարանում կը գումարուէր ժողով մը՝ մոտ 50 անձերէ՝ խորհելու ռուսական մեծ յեղափոխութեան պատճառով ստեղծուած կացութեան մասին:<sup>2\*</sup>

Ժողովը, գումարուած լինելով հայ բոլոր հոսանքներուն պատկանող անձերէ, առաջին միտքին մէջ կ'որոշուէր կազմել «Միջկուսակցական ժողով» մը, որ իբր այդ կը շարունակէր իր գոյութիւնը մինչ կովկասահայ համախորհուրդի գումարումը:

Մարտ 23-ի (Ե նիստ) նիստում կճշտուէր Միջկուսակցականի ապագան. այսպէս. «Երկար վիճաբանութիւններից յետոյ որոշուում է համարել այս ժողովը հայկական հոսանքների խորհրդակցութիւն, որի նպատակը պէտք է լինի, բացի Տաճկահայոց խնդրից, որի մասին մտածելը թողնուած է Ազգային բիւրոյին, ձգտել երբեմն և փոխադարձ կոմպրոմիսներով

(զիջումներով) համաձայնութեան գալ այս կամ այն քաղաքական խնդիրների հանդէպ (մասին), որ կը վերաբերի Ռուսահայութեանը»:<sup>3\*</sup>

Այս ժողովը, որ հրաւիրուած էր հայ համագումարի մասին հոգալու, առաջին իսկ քայլէն որոշում կը կայացնէր. «Վաղաժամ և նոյն իսկ վնասակար է ներկայանում ազգային համագումար հրաւիրելը»:<sup>4\*</sup>

Այս որոշումի մէջ ուշագրաւ է նաև այն, որ ժողովը «մեծամասնութեան որոշումը պարտադիր չէ համարելու փոքրամասնութեան համար»:<sup>5\*</sup>

Մեր նպատակէն դուրս լինելով խօսել Միջկուսակցականի գործունէութեան մասին, այսքանը միայն նկատենք, որ ոչ միայն այս ժողովը չի յաջողէր գոհացում տալ հայի պէտքերուն, այլև միւս երկու՝ արդէն գոյութիւն ունեցող «Ազգային բիւրոն և կոմիսարիատին կից կազմուած խորհրդակցական մարմնի հայկական մասն» ալ միասին առած չեն համապատասխանէր յառաջ եկած պէտքերուն և ակնկալուած դէպքերուն:<sup>6\*</sup>

Մեզ հետաքրքրող կէտն այն պարագան է, որ Միջկուսակցականը «անժամանակ և նոյն իսկ վնասակար կը համարի համագումար հրաւիրելը»: Ինչո՞ւ:

Ասոր պատասխանը կը գտնուի այն վիճակի մէջ, որ յառաջ եկած էր Կովկասում նախկին օրինակարգի (ռժժմի) տապալումովը: Կովկասի թաթարները, Պոլսէն եկած «երիտասարդ թուրքերու» գործիչներու աշխատանքով, արդէն յաջողէր էին համիլայնական և համաթրքութեան գաղափարներով զրգռել ու զինել Կովկասի իսլամները, մասնաւորաբար հայերու դէմ, նախ՝ որովհետև իրենց մեծ ծրագրի իրագործման միակ արգելքը հայերը կը համարէին և երկրորդ՝ արդէն տարիներէ հետո՛ թշնամութիւն մը կար հայ և թուրք տարրերու միջև, որն ա'լ աւելի սնունդ կստանար այս քարոզներէն ու կը բորբոքէր: Չայերը գիտակից էին այս հոգեկան կացութեանը և գիտէին նաև, որ ռուս պետական իշխանութեան անկումով սանձարձակ պիտի դառնային այդ կիրքերը և իրենք ամէն կողմէ ենթակայ յարձակումի:

Այս կացութեան վրայ պէտք է աւելացնել ուրիշ երկու կարևոր պարագաներ ալ:

Նախ՝ կրնար պատահել, և ինչպէս որ յետոյ եղաւ, որ ռուս բանակը քայքայուէր և հայերը պիտի մնային ահաւոր թշնամիի դէմ միայնակ, երկրորդ՝ հայ ամբողջ կրող ուժերը ճակատներ գտնուելով՝ ժողովուրդն անպաշտպան էր իր ներքին թշնամիներու կամ դրացիներու հանդէպ:

Այս է պատճառը, որ Միջկուսակցական իր գործունէութեան մէջ շատ զգոյշ էր և մինչև իսկ երկչոտ՝ չզրգռելու իր դրացիները և ուէ առիթ

<sup>1\*</sup> Խարլամով:

<sup>2\*</sup> 1917 մարտ 7, արձանագրութիւն:

<sup>3\*</sup> 1917 մարտ 23, Ե նիստ:

<sup>4\*</sup> 1917 մարտ 7, Ա նիստ և մարտ 23:

<sup>5\*</sup> Ե նիստ:

<sup>6\*</sup> Մարտ 26, Զ նիստ:

չտալ դժգոհութեան: Այս բանը շատ պարզ կը տեսնուի Միջկուսակցականի նիստերու արծանագրութիւններէն:

1917 իուլիս 11-ի նիստին Կովկասի գործակալութեան հայ անդամը՝ պ. Մ. Պապաջանեան Միջկուսակցական ժողովում կը հաղորդէ. «Ես կուզէի ձեզի ծանօթացնել հայոց և թուրքերու յարաբերութիւնը: Լազիստանից կամ (և) Հայաստանից հեռագրեր են ստացուում, թէ հայերն այսքան գիւղ փճացուցին, ի հարկէ սուտ, բայց դրութիւնը պղտորուում է: Վլադիկավկազից հարցնում են, թէ ինչո՞ւ հայերն հարձակուում են թուրքերու վրայ, «վայրենի դիվիզիայից՝ Վլադիկավկազից» (զորաբաժին) հեռագիր է ստացուում, որ զան օգնութեան, թուրքերի դելեգացիան (պատուիրակ), Բերկրիի դէպքերը, Քեֆիքիքոյի, Սուրմալուի դրութիւնը և այլն: Ալէքսանդրապոլում հայ զինուորներն են անհանգիստ՝ իրենց ընտանիքների անպահով դրութեան պատճառով: Մի ձեռք կա, որ գիւղն էլ զրգում է»:

Պ[արոն] Մ. Պապաջանեան կը շարունակէ. «Ներսում մեր յարաբերութիւնները թուրքերու հետ չի բարուղուել, միւս կողմից կայ բլոկ (միութիւն) թուրքերի և վրացիների - առաջ՝ ազնուականների (վրաց) և թուրքերի և այժմ՝ սոցիալ դեմոկրատների և թուրքերի: Պէտք է թուրքերի հետ համաձայնութեան գալ թէ Կովկասի, և թէ Տաճկաստանի մասին»:

Այս նիստի նախագահը (Խոնդքարեան), ամփոփելով վիճաբանութիւնները, ալ ասելի բացայայտ կերպով կ'արտայայտէ իր երկիւղը. «Թուում է, թէ իշխանութեան նպատակը պէտք է լինի, ինչպէս Ռուսաստանում, ապահովել Կովկասի ազգերի ֆիզիկական գոյութիւնը, և քաղաքական խնդիրները պիտի մնան մի կողմ»:

Ծանր անակնկալներով յղի անյայտ ապագան և Կովկասի մեր դրացիներու հայերու դէմ «կազմած բլոկը» կը ճնշէր անկազմակերպ հայ ժողովուրդը: Յուլիս 13-ի նիստում անդամներէն մէկը կը արտայայտուի. «Վաղը միւս օրը կարող ենք վտանգի առաջ կանգնած լինել, ճակատի գօրքը կարող է ետ քաշուել մի քանի շաբաթից յետոյ, Կովկասին կարող է սով սպառնալ, մի մարմին պիտի լինի, որ մտածի և հոգայ այդ մասին»: (Տ. Բեկզատեան):

Իսկ Մ. Պապաջանեան կ'աւելացնէ. «Եւ մենք եթէ չենք կարող ճակատի ճեղքելու առաջն առնել, զոնէ պատահական յարձակումների դէմ կարող կը լինենք առնել»:

Հակառակ այս գուշակած վտանգներուն և պատասխանատու մարմնի մը գոյութեան անհրաժեշտութիւնը խոստովանելուն՝ Միջկուսակցականը չի կրնար որոշում տալ հայ համագումար հրաւիրելուն: Արծանագրութիւններու մէջ որոշ գծուած կը տեսնուի այն խուլ և երբեմն բացայայտ պայքարը, որ կայ համագումար հրաւիրելուն դէմ, որ Ղաշնակցութեան պաշտպանած առաջարկն է:

Մարտ 7-ին տրուած այս առաջարկը ամէն անգամ կարծարծուէր, բայց և միշտ կը ձգձգուէր: Սեպտեմբերի 4-ի նիստում Ս. Տիգրանեան հրաւումը կուճեմայ ըսելու. «Մի թիրիմացութիւն չէ և ոչ էլ պատահա-

կանութիւն, որ հայերս այս 3 տարում չկարողացանք մի ազգային մարմին կազմել»:

Նոյն այս ժողովում դարձեալ փոխանակ համագումար հրաւիրելու՝ կ'որոշուէր հրաւիրել սեպտեմբեր 27-ին «Համազգային խորհրդակցութիւն», Բաբայեանի կողմէն առաջարկուած հետևեալ օրակարգով.

«Ինքնապաշտպանութիւն, սահմանորոշում (непоздел)ը, ինքնավարութիւն (զէնստվո), դպրոցներու ազգայնացում, պարենաւորում, ազգամիջեան յարաբերութիւններ, վերաբերմունք դէպի Անդրկովկասեան կոմիտէն, տեղական իշխանութիւններու կազմակերպութիւն, ճակատի պահպանութիւն, գաղթականական հարց և մնայուն մարմնի ընտրութիւն»:

Համազգային խորհրդակցութիւնը այս 7 օրակարգն գործադրելու համար.

1. «Իրավունք ունի որոշումներ անելու և ժամանակաւոր մարմիններ ընտրելու. 2. որոշելու են. ա) մոմենտի հետ կապ ունեցող, բ) անյետաձգելի և հրատապ խնդիրներ: Ընտրուած մարմինները և որոշումները պարտաւորիչ՝ մինչև ընդհանուր համագումարը»: (Տ. Բեկզատեան):

Սպասելով «Համազգային խորհրդակցութեան» գումարումին, որու համար նախատեսուած է 100-120 անդամ, ընդհանուր ակնարկ մը նետենք Կովկասի քաղաքական կացութեան վրայ:

Կենտրոնական իշխանութիւնը բոլորովին կորցրել է այլևս իր հեղինակութիւնը և հետզհետէ ասելի ու ասելի կը շէտուէին զանազան ժողովուրդներու ազգային յաւակնութիւնները և կը լարուէին իրարու դէմ: Սկզբէն ի վեր արդէն շատ պարզ էր, որ վրացիներն ու թաթարները, իրենց ուրույն ազգային տեսակետներն ունենալով հանդերձ, միացած էին, ինչպէս արդէն տեսանք, հայերու դէմ:

Դեռ Մայիս 30-ի նիստում Լեօ կըսէ. «Կովկասեան այժմեան կառավարութեան թուլութեան պատճառն ազգայնական ընդհարումներն են, կամիսարութեան մէջ կենտրոնացել են ազգային պրետենզիաներ (յաւակնութիւններ), փոխանակ ընդհանուր պետական խնդիրների»: Այս յաւակնութիւնները ստեղծեր են Կովկասի համար շփոթ կացութիւն մը:

Յունիս 7-ի նիստին Ս. Յարութիւնեան կը յայտարարէ. «Մինչև չպարզուի Կովկասի ապագայ կազմակերպութեան հարցը, Միջազգային խորհրդակցութեան զանազան ազգերի ներկայացուցիչները իրար չեն հասկնայ և խոչընդոտ կը հանդիսանան: Հայերս խուսափում ենք մանաւանդ որ մենք որոշ համազգային ծրագիր չունենք»: Այս ծանր կացութեան մէջ վերջապէս, կորոշուի Համազգային խորհրդակցութիւն հրաւիրել, որ պիտի գումարէր Ազգային համագումար:



**Բ.  
Ազգային համախորհուրդ**

Հայոց ազգային համախորհուրդը կը գումարուէր թիֆլիզ 1917 սեպտեմբեր 29-13 հոկտեմբեր: Այս համախորհուրդը կընտրէ. «Հայոց Ազգային խորհուրդ», 15 անդամներէ բաղկացած:

Ուշադրութեամբ հետեւելով համախորհուրդի արծանագրութիւններուն, ընթերցողն այն եզրակացութեան կուգայ, որ համախորհուրդի անդամներն իրենք են աւելի իրենց կուսակցական պայքարը շարունակելու՝ քան լրջագոյն վայրկեանի պահանջած խնդիրները լուծելու: Մասնաւորաբար խստօրէն քննադատութեան կը ենթարկուի «Ազգային բիւրոյի» գործունէութիւնը: Հոս մեր ծրագրէն դուրս լինելով քննութեան ենթարկել իրենք արտայայտուած գաղափարները, թրևս աւելորդ չլինի, սակայն, ըսել, թէ թուրքիայի քաղաքականութեան և հայերու կոտորածի վերաբերեալ արտայայտութիւնները՝ իբր թէ կովկասահայերու կամաւորական շարժումն է պատճառ այս ահաւոր կոտորածին և այլն, միանգամայն զուրկ են պատմական հիմքէ և կը հաստատեն այսպէս մտածողներու տգիտութիւնը թուրք ծրագրի և դիւանագիտութեան նկատմամբ:<sup>1\*</sup>

Ազգային համախորհուրդի տուած որոշումներու մէջ ուշագրաւ է հետեւեալը.- «Ընդունելով ազգերու ինքնորոշման իրաւունքը՝ հայ ժողովուրդը պիտի ձգտի իրականացնել իր այդ իրաւունքը պետականութեան հիմքերով և սկզբունքներով՝ Անդրկովկասեան ժողովուրդների դեմոկրատիայի փոխադարձ համաձայնութեամբ»:

Հոս ուրեմն կընդունուէր ինքնորոշումը «պետականութեան հիմքերով և սկզբունքներով» և «Ազգային խորհուրդի» ուղեգիծն ասով կը ճշտուէր:

**Գ.  
Հայոց Ազգային խորհուրդը**

1917 հոկտեմբեր 16-ին կը գումարուէր Ազգային խորհուրդը: Անոր գործունէութեան մէջ գլխաւորաբար նկատի պիտի առնենք Կովկասի երեք ազգերու՝ վրացիներու, թուրքերու և հայերու դիրքը նախ՝ իրենց համար և երկրորդ՝ իրարու նկատմամբ:

**1. Վրացիները**

Վրաց ժողովուրդը Կովկասում, որ միւսներէն աւելի փայփայտած ազգն է եղեր ռուսներու կողմէն, և ընդհանուր ռուսական կեանքի մէջ միշտ

<sup>1\*</sup> Ծնթ. Այսպէս մտածողներու համար այնքան մեծ հեղինակութիւն ունեցող անձնաւորութիւն մը՝ որպիսին էր Մ. Օրմանեան եպիսկոպոսը, 1918-ին Պոլսի հայ պատուիրակ Ա. Ահարոնեանին և Խատիսեանին կըսէր. «Սխալ է կարծել, թէ կամաւորական շարժումն է այս կոտորածի պատճառը, այս կոտորածն անխուսափելի էր, թուրքերը պիտի կոտորէին հայերը»:

աւելի շեշտուած կերպով դուրս եկեր էր իբր ընդհանուր ընկերվարական սկզբունքներ դաւանող, շուտով կը դառնայ ազգայնական և իր ընկերվարական բոլոր կազմակերպութիւնները կը գործէին Վրաստանի ազատութեան համար: Սկիզբները դեռ անորոշ ու տարտամ դիրքը տակաւ կը ճշտուէր խառնակ կացութեան հետզհետէ պարզուելուն համեմատ: Իրենց դեկավարները խորագետ ու զգոյշ դիւանագիտութեամբ միշտ կաշխատէին դեռ թաքցնել իրենց բուն ազգայնական նպատակը և, որ արդէն վաղուց ճշտուած էր, կը գործակցէին հայերուն՝ թէպէտ միշտ վերապահութեամբ:

1917 նոյեմբեր 2-ի նիստում Հայոց Ազգային խորհուրդի (Ը նիստ) անդամներէն մէկը կ'ըսէ. «Բալչևիկներու շարժումը ընկճել է սոցիալիստներին (վրաց) և թև տուել ազգայնականներին, որոնք ուրախ են Ռուսաստանի թուլացման համար»:

Ընդհանրապէս նկատելով՝ վրացիներու դիրքը հայերու վերաբերմամբ երկդիմի էր: Չանազան ժամանակներ տարբեր կերպով արտայայտութիւններ կը տեսնենք արծանագրութիւններու մէջ: Սակայն տողընդմէջ շատ որոշ կը հասկցուի, թէ վճռական թուրքերը հայերու հետ պիտի չլինին: Նոյեմբեր 15-ի նիստում կը զեկուցուէր հայ-վրացական խորհրդակցութեան մասին, ուր ժողովանիստ ըսեր էր.- «Ռուսաստանի տիրապետութիւնից ի վեր աւելի ծանր վիճակ չէ եղած մեր գոյութեան համար՝ քան այժմ, և մանր վէճերը ոչինչ են դրա հետ համեմատած»: Դարձեալ նոյն մարդը կը յայտնէր.- «Վրացիներն ամենքի հետ կը լինեն, բացի թուրքերը(րու)»: Իսկ Վիշապելին նոյն ժողովում կը խոստովանի.- «Քրիստոնեաներս մահմեդական ծովի մէջ ենք»: Հակառակ այս բացայայտ յայտարարութիւններուն՝ նոյեմբեր 29-ի նիստում Հայոց Ազգային խորհուրդի ժողովականները կը յայտարարեն.- «Վրացիները հակուած են դէպի թուրքերը»: Այս հակամիտութիւնը կը շեշտուի նաև անով, որ հայ-վրացական բանակցութեան մէջ Վիշապելին կառաջարկէ.- «Լաւ կը լինի, եթէ ունէ կերպով կապուենք գերմանացիներու հետ, որ ապահովեն թուրքիայի մուտքը դէպի Կովկաս»:<sup>7</sup>

Իսկ 1918 Յունուար 8-ի նիստում կը յայտնեն, թէ վրացիք թերանում բանակցում են գերմաններու հետ: Եւ Ռամիշվելին իր ճառի մէջ արդէն ըսեր էր. «Փաստօրէն Անդրկովկասն անջատուած է և ստիպուած է ու պէտք է օգտուել թուրքիայի առաջարկից» (անջատ հաշտութիւն կ'ընելը):

Դեկտեմբեր 1 վրաց զօրամասեր ճակատ կերթան այն պայմանով, որ պարզուի, թէ ինչ նպատակի համար են կուում, իսկ ուրիշ տեղ մը դեռ Դեկտեմբեր 23-ին Զիսենկելին Վրաց ազգային խորհուրդի կողմից յայտարարում է. «Վրացիներն անկարող են մի մարդ անգամ տրամադրել Ֆրոնտի պաշտպանութեան համար»: Իսկ երկրի մէջ ըլլալիք կացութեան համար Փետրուար 8 նիստում հայերը կիմանան Գոտուայի խօսքերը.- «Երբ թուրքերը գան, բոլորս քսու եթէք կանենք (ծեռքերը վեր)»:

Ժամանակի ընթացքում՝ դեպքերու բարեպատեհ փոփոխութեան հետ զուգընթաց, կը պարզուի վրացիներու ազգային դիմագիծը և 1918 Մայիս 26-ին կը յայտարարեն Վրաստանի անկախութիւնը: Թէ որքան խորագիտութեամբ վարեցին վրաց ղեկավարներն իրենց ազգային քաղաքականութիւնը, պարզ կերևի անկէ, որ դեռ Փետրուար 27-ի նիստում Չայոց Ազգային Խորհուրդի նախագահը կըսէ. «Ես չեմ կասկածեր վրաց գործակցութեան վրայ, թեպէտ բոլորովին անտեղեակ եմք, թէ ինչ է կատարուում Վրաստանում: Իսկ երբ Մայիս 26-ի անկախութեան յայտարարութեամբ Չայոց Ազգային Խորհուրդն հանկարծակիի կուգայ, ժողովանիան հանգիստ կերպով կը յայտարարէ. «Վրաստանի անկախութիւնն ընդունած է եղեր քառեակ պետութիւններու կողմիէ 1917-ին և այժմ կաշխատեն դիպլոմատիկական ճանապարհով իրագործելու այդ»: Մինչդեռ Պոլսի գերման դեսպան Բերնսդորֆ<sup>8</sup> 1918 Օգոստոս 27-ին կը յայտնէ հայ պատկերակներուն, թէ «վրացիներու և գերմաններու միջև դեռ 3-4 տարի առաջ դաշնադրութիւն եղեր է համաձայնութեան մասին և Գերմանիան պարտաւորուել է ընդունել Վրաստանի անկախութիւնը»:<sup>7\*</sup>

## 2. Թաթարները

Կովկասի թաթարների վերաբերմունքը Կովկասի գործերում սկզբէն սկսած շատ որոշ է, և մարդիկ վրացիներու պէս չեն թաքցնել իրենց մտադրութիւններն ու ձգտումները, որ է. նախ՝ միանգամ ընդմիշտ անջատուել Ռուսաստանէն և երկրորդ՝ յառաջապահին դառնալ օսմաններուն՝ Կովկասին տիրելու համար: Այս երկրորդ կէտի իրագործման համար անհրաժեշտ էր մէջ տեղէն վերցնել հայերու յարուցած արգելքը, որ կրնայ կատարուել հայերու ջախջախումով և բնաջնջումով, որ և օսմաններուն ալ բուն նպատակակէտն էր և անոնց կողմէն թելադրուած թաթարներուն: Չոս ուրեմն Կովկասի թաթարներն ու օսմանեան թուրքերը կը միանան իրարու ընդհանուր համաթուրք իղեալին շուրջ:

Այս ընդհանուր բնորոշումն դուրս գտնուած անհատ խօսակցութիւններն ու փոքրիկ ձեռնարկութիւնները բնաւ չեն հակասել ընդհանուր նպատակին, այլ կը մնան իբրև դիւանագիտական կեղծիքներ և կամ սոսկ անհատական մտածումներ, որոնք ոչինչ կը փոխեն ընդհանուր ծրագրի մէջ:

Չեւեւեմք ժամանակագրական կարգով երևան եկած երևոյթներուն: - 1917 Նոյեմբեր 1-ին Ազգային Խորհուրդի անդամ Լ. Աթաբեգեան կըսէ. «Թուրքերն հիմա այլ լեզուով են խօսում. անջատական մտքեր են յայտնում»: Իսկ Նոյեմբեր 26 նիստում Բէկզատեան կը հաղորդէ. «Լուֆտուվի բեգ

<sup>7\*</sup> Ծնթ. (Խատիսեան, Օրագրութիւն). Մեր կողմէն աւելցնենք, որ դեսպանի յիշած 4 տարին է ճիշտ: Այս դաշնադրութիւնը կապուած էր 1914 մարտին:

պարզապէս ինձ ըսաւ. «Ռուսաստանից յոյս չկայ այլևս: Մենք կողմնակից ենք, որ թուրքերը գան Կովկաս, միայն դուք էք դէմ: Երաշխաւորում ենք ձեր ֆիզիկական գոյութիւնը, բացէք ճակատը... Սահմանազատման խնդիրը արիւնով կը վճռուի. մեր ժողովուրդը չի հանդուրժի, վերջ տուէք սահմանազատման կոմիտէին»: Այնքան սրտէ բղխած անվերապահ բացայայտ են այս արտայայտութիւնները, որ հայերը շատ կանուխեն պիտի ճշտէին իրենց դիրքը իրենց դրացի թաթարներուն դէմ և անոր համեմատ միջոցներ ձեռք առնէին, բան մը, որ չի կատարել Ազգային Խորհուրդը:

Նոյնիսկ թաթար Չաճի Նուրին (սոցեալ դեմօկրատ) դեռ Չոկտեմբեր ըսեր է Երզնկեանցին. «Կովկասը կը կտրուի Ռուսաստանից. հայ-թրքական ընդհարումներ կատեղծուին, որից կը տուժեն և իրանք»:

Չայերու համար ալ իբր հայկական շրջան կը ճանչնան «միմիայն երևանի նահանգը»: (Նիստ Ը, 2 Նոյեմբեր):<sup>8\*</sup>

Չայերն իրենք իսկ կը խոստովանին «թէ նրանք (թաթարները) մեզցնից (աւելի) հեռատես եղան, ուստի գիտուեցին օր առաջ» (Ս. Յարութիւնեան):

Չայոց Ազգային Խորհրդի նոյն անդամն այսուամենայնիւ հարկ կը համարի առաջարկել. «Պէտք է տեսնուինք թուրքերու (թաթարներու) հետ, գուցէ մեղմենք անոնց ագրեսիվ (յարձակողական) ընթացքը: Վերջերս թուրքերը տեսնոյին աշխատանքի մէջ են, կարծէք պատերազմի նախօրեակին լինեն. գուցէ լուրջ մտադրութիւններ ունին»:

Այս «տեսնոյին աշխատանքին արդէն կը զուգընթացան նաև գործեր - Դեկտեմբեր 22 կը հաղորդուի «հայ-թրքական ընդհարում Ձաքաթաւում»:

1918 Յունուար 28-ին թուրքերը (թաթարները) կը տիրեն Շահթախտի ճամբան մինչև Բաշնորաշէն»:

«Գանձակ-Բազու ճամբու վրայ թուրքերը վազօճներն դուրս կը հանեն հայերը և կսպանեն»:

Փետրուար 5-ին Չայոց Ազգային Խորհուրդը կը խոստովանի. թուրքերը մեզ ձեռնոց են նետել, մեր էշըլունները զինաթափ են անում, հայեր են որսում և կոտորում»:

Ուրեմն հայերը Կովկասում կը գտնուէին այսպիսի դրութեան մը մէջ: Վրացիներու վրայ վստահել չէր կարելի, թաթարներու թշնամութիւնը բացայայտ էր, միւս ահաւոր թշնամին՝ օսմանները, կը յառաջանային երկրի ներսը, ոչնչացնելով ամէն բան: Այսպիսի պայմաններու մէջ տեսնենք, թէ ինչ կընէին հայերը:

Չեւեւեմք Ազգային Խորհուրդի գործունեութեանը:<sup>9\*</sup>

<sup>8\*</sup> Возрождение թերթի խոսքերը. -Կովկասը պետք է երկու բաժին անել՝ վրացական և թաթարական, իսկ հայերը պիտի միայն կուլտուրական ինքնավարութիւն ունենան: Դեկտեմբեր 16:

Հայոց Ազգային Խորհուրդը՝ ինչպես և Միջկուսակցականը, կազմուած լինելով հայ զանազան կուսակցութիւններու ընտրուած անձերէ, իր գոյութեան սկզբէն դեռ ամիսներ յետոյ չէ կրցեր գտնել այն լեզուն, որով կարողանային իրար հասկնալ. և չեն յաջողեր, «որոշ ազգային ծրագիր մը ունենալ» (ինչպես կըսէ Ս.Յարութիւնեան.), որու շուրջ կարենային խմբուել և անոր պահանջին համապատասխան գործունէութիւն մը ունենալ: Ահաբեկուած իրենց ծանր կացութեան մէջ չէն տեսներ իրենց փրկութեան ճամբան, ուէ կուսակցական, ազգային կազմակերպութիւն մը, որ, ուժ առած բովանդակ ազգէն, վճռականօրէն դիմէր ինքնապաշտպանութեան: Ամենքը կը տեսնին, որ թուրքերը կը կազմակերպուին, կը զինուին, վրացիներն արդէն կազմակերպուած են ազգային սկզբունքներով. բայց իրենք կը վախճան կազմակերպուիլ, միշտ իրենք իրենց հարց տալով. ի՞նչ պիտի ըսին ռուսները, ինչպէ՞ս պիտի վարվեն թուրքերը կամ ի՞նչ տպաւորութիւն պիտի ընէ վրացիներու վրայ:

Այս տարտամ և անվճռական մտայնութիւնը կը շարունակուի նոյնիսկ և այն ժամանակ, երբ Կովկասի երկու միւս ազգերն արդէն իրենց անկախութիւնը յայտարարեն: Բայց աւելի յստակ պատկեր մը տալու համար ընդհանուր կացութեանը վրայ, մէջ կը բերենք 1918 Փետրուար 8 նիստի արձանագրութենէն նախագահի ճառը նոր կացութեան հանդէպ. - «Մեր արտակարգ վիճակի համար մի արտակարգ վճիռ կայացնելու նպատակով հրաւիրուած է այս արտակարգ նիստը: Երկու երևոյթ մեր դրութիւնը դարձնում է չափազանց ծանր, ուստի անյետաձգելի է որոշում տալը: Զփտենք պաշտպանուենք, թէ ոչ: Ի՞նչ է մեր ուզածը, պէտք է ասենք: Թուում է, որ բոլորս վարանում ենք: Երբ վարիչը վարանում է՝ գործը տանուլ է տրուած վատթար կերպով... Թուրքերը շարժում են, սա անկասկած է: Թուրք հրամանատար գալիս է միջև ռուս զօրքի պատահի: Ուրեմն մենք պիտի ընտրենք կռիւ կամ խաղաղութիւն: Անկասկած վտանգը հասնելու է նաև մեր սահմաններին: Կամ Ազգային Խորհուրդը պէտք է գործի գլուխ անցնի այս պահուն կամ կուսակցութիւնները: Մենք պիտի վճռական լինենք թէ թիկունքում, և թէ ճակատում: Աննշան ուժերը կարողանում են առաջ շարժուել միմիայն նրա համար, որ հայ զօրքերը կուել չեն ուզում: Մենք զօրք չունենք ճակատում: Եթէ մենք դիմադրէինք, խուճապ չէր լինի... Եթէ ռազմունակ մասեր հասնեն, կարելի է պաշտպանուել: Մեր մօքիլիզացիան մեռցրին, յայտարարուած է, բայց չենք հուսալքում: Մի պարալիզի է մեր վիճակը: Պէտք է վճռական լինենք:... Այս անվճռականութիւնն անտանելի է, անհանդուրժելի: Վրացիք չեն ուզում բաժնել մեր ճակատագիրը: Գոտուան ասում էր. «Երբ թուրքերը գան, քыս ԵԵԵԻ կանենք»: Բացուած է մի ծրագիր, որով Մակուն, Ատրպատականը, Բազի թուրքութիւնը կազմում են մի

\* Սխալ է հայերի վիճակի մասին դատել Ազգային Խորհուրդով, որ մինչև 1918թ մայիս քիչ ազդեցութիւն ունէր և հայ կեանքի ղեկավարը Պաշտպանութիւնն էր (Բիւրօ, Սեյմի ֆրակցիա...) - Ա. Վրացեան:

թաթարական տերութիւն Թուրքիայի հովանու տակ՝ հայերին նկատելով փոքրամասնութիւն: Պէտք է արտակարգ վճիռ անենք և մէկ վճիռ, կամ այո՛, կամ ո՛չ»:

Այս է ընդհանուր պատկերը և այս տարտամ վիճակի մէջ օսմաններու կողմէն հաշտութեան առաջարկ կը լինէր: Այժմ ետ դառնանք ընդհանուր կերպով ծանօթանալու օսմանեան ձևի այս զինադադարի հետ՝ հետևելով անոր ժամանակագրական ընթացքին:

Բայց հոս իսկ նկատենք, որ Հայոց Ազգային Խորհուրդի մէջ եղեր են մարդիկ, որոնք սկզբէն իսկ հասկցեր են այս զինադադարի բուն նպատակը: Այսպէս, Ռուբէն<sup>9</sup> Նոյեմբեր 24-ի (հին տոմար) նիստում կը յայտարարէ. «Զինադադարը միջոց է, որով աշխատում են Կովկասի թուրքերին ոտքի հանել»: Եւ ժամանակի պահանջին համապատասխան պահանջներ կը դնէ, որոնք դժբախտաբար նկատի չեն առնուեր: Բայց մենք դառնանք զինադադարին:

1917 Նոյեմբերի 27-ին<sup>10</sup> կը կազմուէր Կովկասի շրջանի կառավարութիւնը, ինքնավար կերպով վարելու միայն տեղական գործերը՝ միջև Ահմեմադարի ժողովի որոշումը:

Նոյեմբերի 28-ին կը կազմուէր Կովկասի կոմիսարիատ, որուն կանդամակցէին հայերէն՝ Խ. Կարճիկեան, Ղ. Տէր Ղազարեան և Համ. Օհանջանեան: Ինչպէս արդէն տեսանք, այս կառավարութիւնը ունենալով տեղական ինքնավարութիւն՝ որոշում կը կայացնէր կենտրոնական Ռուսաստանի հետ աշխատել ձեռք-ձեռքի տուած՝ հաստատուն պահելու ընդհանուր բարեկարգութիւնը, կարգադրելու Կովկասի ժողովուրդներու ազգայնական խնդիրները և աշխատիլ հաշտութիւն կնքել:

Նոյեմբեր 30-ին Կովկասի ճակատի թուրք բանակի ընդհանուր հրամանատար Վեհիբ փաշան գրութեամբ մը կը դիմէր ռուս բանակի ընդհանուր հրամանատար զօրավար Պրոժեվալսկիին, առաջարկելով զինադադար կնքել նոյն ճակատի վրայ: Խնդիրը Սէյմի քննութեան դրուելով, կ'որոշուի ընդհանրապէս երթալ այս առաջարկին և ասոր համապատասխան հրահանգներ կը տրուի ճակատի զօրավար Վիշինսկիին՝ սկսելու զինադադարի բանակցութիւններուն՝ իրեն տրուած հրահանգներուն համեմատ:

Դեկտեմբեր 18-ին ժամը 5-ին Երզնկայում կը կնքուի զինադադարի առաջին պայմանագրութիւնը, որու գլխաւոր կէտերն են.

1. Կովկասի ամբողջ ճակատի վրայ կը դադրի կռիւը, Սև ծովէն մինչև Պարսկաստանի ճակատը:
2. Իւրաքանչիւր կողմի բանակը կը պահէ իր ներկայ դիրքը՝ միջոցը չեզոք գոտի մը թողնելով:
3. Զինուորական ոչ մէկ համախմբում Միջագետքի և Ասորիքի ճակատներու վրայ:
4. Օսմանեան կառավարութիւնն ամեն միջոց գործ պիտի դնէ զսպելու քուրդերը, հակառակ պարագային ռուս բանակն իրաւունք պիտի

ունենայ իր գրաւած սահմաններում անոնց հետ վարուել՝ ինչպէս պետք է վարուել աւազակներու հետ:<sup>1\*</sup>

Ռուս յոգնած և բարոյալքուած բանակը փոխանակ պահելու իր դիրքերը, սպասելով վերջնական հաշտութեան, կը լքէ իր դիրքը և «դէպի տուն» նշանաբանով կը դիմէ դէպի Ռուսաստան: Այս քայքայումն ինքնին արդէն մեծ վտանգ մըն էր Հայաստանին ու հայ ժողովուրդին: Վերադարձող զօրքը ոչ միայն կ'ոչնչացներ շատ բան, այլ, որ անելի վատթարն է, իրենց մթերքը կուտային թուրքերուն և զենքը՝ քիւրտերուն:

Այսպէս, ճակատը կը պարպուէր ռուս զինուորներէն և երկրի պաշտպանութիւնը կը յանձնուէր հայերուն:

Չինադադարը կնքելէն քանի մը օր յետոյ Վեհիբ փաշան նոր դիմում մը կը կընէ Կովկասի բանակի հրամանատար Օդիշելիժէին, հաղորդելով, որ Էնվեր փաշան կը փափագի զիտնալ, թէ ինչ ճամբով կարելի է վերանորոգել յարաբերութիւնները անկախ Կովկասի հետ: Թէ ինչ առաջարկներ ունի անկախ Կովկասի կառավարութիւնը խաղաղութեան բանակցութիւնները սկսելու երկու երկիրների միջև: Կառաջարկէ նաև պատւիրակներ դրկել անկախ Կովկասի մայրաքաղաք՝ ըստ կարելոյն շուտով վերահաստատելու (1918 Յունուար 14):

Էնվերի այնքան խորամանկութեամբ մեջտեղ նետած «անկախ Կովկաս» խայծին բանւորական, զինւորական և զիւղացիական [պատգամավորների] խորհուրդը կը պատասխանէ.- Սենք մասն ենք Ռուսական հանրապետութեան. խաղաղութեան համար ձեզի հետ կրնանք բանակցել Սահմանադիր ժողովի տալիք որոշումներէն յետոյ միայն, որու մասին իր ժամանակին պիտի հաղորդուի ձեզի (Յունուար 17):

Իսկ Կովկասի կոմիսարիատը կը գրէ Վեհիբ փաշային՝ հաղորդելու Էնվերին, թէ կոմիսարիատը վերջնական խաղաղութիւն հաստատելու համար պետք ունի ռուս հանրապետութեան միւս մասերու հետ խորհրդակցելու, երեք շաբաթ պիտի կարենայ պատասխանել իր մարդասիրական առաջարկներուն(Յունուար 28):

Այնուհետև Կովկասի կոմիսարիատը կը հեռագրէ հարաւարելեան դաշնակցութեան Ուկրայնայի կենտրոնական խորհրդին՝ հրաւիրել մասնակցել օսմաններու կողմէն առաջարկուած խաղաղութեան մասին խորհրդակցել:

Օսմաններու հետ վարած ամբողջ բանակցութիւնը տեղեկագրով մը կը հաղորդուի կոմիսարիատի կողմէն համաձայնական պետութիւններու թիֆլիսի հիւպատոսներուն:

<sup>1\*</sup> ԾՃԹ. Այս զինադադարի և հոն դրուած պայմաններու մասին կը հեռագրուի նաև Միջագետքի Անգլիական բանակի հրամանատարին (1917 դեկտեմբեր 5):

## Դ. Թէ ինչպէս զինադադարի պայմանագրութիւնն ոտնակոխ կընին օսմանները

Օսմանեան բանակի ղեկավարները շատ մօտէն տեղեակ էին ռուս զինուորի հոգեկան վիճակին: Քայքայուեցաւ իրենց դէմ կեցող ահաւոր բանակը և կը մնան միայն հայ կամաւորական զունըը, որոնք անտարակոյս պիտի չկարողանային դիմագրաւել կազմակերպուած բանակի մը, ինչպէս էր նոյն միջոցին իրենցը: Չինադադարի պայմանագրութեան վրայէն ցատկել ոչ ոք այնքան ճարպիկութեամբ կրնայ կատարել, որքան թուրք դիւանագետները, և ահա Յունուար 22-ին Վեհիբ փաշան ընդարձակ գրութեամբ մը կը դիմէ ռուս հրամանատար Օդիշելիժէին, թուելով այն բոլոր սպանութիւններն ու բռնութիւնները իսլամներու վրայ, որ իբր թէ հայերը կը կատարեն Երզնկայի մէջ և իր շրջանում: Հակառակ զօրավար Օդիշելիժէի հերքումին, թէ հայերու գործած բռնութիւններու մասին իր ստացած բոլոր տեղեկութիւնները խիստ չափազանցուած են և բնաւ չեն համապատասխանէր իրականութեանը (Փետրուար 12), Վեհիբ փաշան կը հեռագրէ, թէ իր բանակը յառաջ կը քալէ օգնութեան հասնելու նահատակուող իսլամներուն և այլն:

Զօրավար Լեբեդիսկին, բողոքելով հանդերձ Վեհիբ փաշայի զինադադարի պայմանագիրը խախտելու ապօրինութեան դէմ, միւս կողմէն զօրավար Օդիշելիժէն կը հրամայէ գնդապետ Սամարցկին՝ նահանջել, այրելով այն ամէնն, ինչ-որ կարելի չէ փոխադրել: Այս թշնամական գործողութիւնները կատարուած միջոցին Վեհիբ միշտ կը պահէ իր բարեկամական յարաբերութիւնը Կովկասի կառավարութեան հետ, իբր թէ ոչինչ պատահած լինէր և զինադադարն ալ պահած լինէր իր գոյութիւնը:

Եւ ահա Յունուար 16-ին կը հաղորդէ Կովկասի կառավարութեան, թէ Բրեստում պատրաստ են ամէն կերպ օժանդակելու, որպէս զի ընդունուի Կովկասի անկախութիւնը, ուստի կը հրաւիրէ պատւիրակներ դրկել հոն՝ հաշտութեան բանակցութիւններին մասնակցելու: Այս գրութիւնը կստացուի թիֆլիսում Փետրուար 14-ին միայն:

Կոմիսարիատը նոյն օրն իսկ ժողով գումարելով, կ'որոշէ հաշտութեան բանակցութիւն սկսել ոչ միայն Թուրքիայի հետ, այլ իրեն դաշնակից Գերմանիայի, Աւստրիայի և Բուլգարիայի հետ միաժամանակ: Այս նպատակով մասնաժողով մը կը կազմուի՝ մշակելու հաշտութեան գլխաւոր սկզբունքները: Նոյն ժամանակ կը հեռագրուի Վեհիբ փաշային, թէ իրենք կուզեն հաշտութեան բանակցութիւն սկսել Թուրքիայի և իր դաշնակիցներու հետ, ուստի կը խնդրեն պատւիրակներ նշանակուին:

Սակայն Վեհիբի բանակը կը շարունակէ իր յառաջ խաղացումը դէպի Կարին, և թուրք ու քիւրդ հրոսախումբերով արին ու անէր սփռելով իր արշաւանքի երկու կողմերը: Զօրավար Լեբեդիսկին հարկ կը տեսնէ դիմում ընել Վեհիբ փաշային՝ խնդրելով, որ դադարեցնէ իր յառաջ խա-

դացուճը, որովհետև նոյն շրջանի թե բանակի զինւորները և թե քրիստոնեայ ազգաբնակութիւնը խուճապի մատնուած է և ահաւոր աղէտներ յառաջ կուգան: Այս դիմումին իբր պատասխան Փետրուար 22-ին զօրավար Օդիշելիձէն կը հաղորդէ Լեբեդիսկուն, թէ Վեհիբ վճռական կերպով յայտնէր է, որ պէտք է յառաջ խաղայ՝ մինչև որ հանդիպի ռուս զօրքի:

Եւ Օդիշելիձէն զօրք կը խնդրէ՝ զոնէ Կարին պաշտպանել կարողանալու համար:

Վեհիբի այս վճռական արտայայտութեամբ այլևս ոչ մէկ տարակոյս տեղիք կը մնար կարծելու, թէ թուրքերին պէտք է արգելուեն իրենց ծրագիրը գործադրելէ, այսինքն ամբողջ Կովկասը գրաւելէ, քանի որ ինչպէս ամենուն, նոյնպէս և Վեհիբին շատ լաւ յայտնի էր, որ Կովկասում ռուս զօրք չկայ, ուրեմն հիւսիսային Կովկասը պիտի լինէր իրենց ապագայ սահմանը: Բայց թուրք դիւանագէտներին ու ռազմավարներին ոգևորողն այս պարագային միայն երկրակալական անյազ ձգտումը չէր, այլ նոյնպէս ամենուն յայտնի համիսլամական ու համաթրքական շողշողուն հեռապատկերի իրականացման հնարաւորութիւնը:

Կոմիսարիատի յանձնաժողովը կը մշակէ հաշտութեան գլխաւոր սկզբունքները, որ և կը վաւերանայ Սէյմի կողմէն: Այս սկզբունքներն են.-

1. Անդրկովկասեան Սէյմը ներկայ ստեղծուած պայմաններով զինք իրաւասու կը համարէ հաշտութիւն կնքելու թուրքիայի հետ:

2. Անդրկովկասեան Սէյմը խաղաղութեան բանակցութիւններու մտնելով՝ իրեն նպատակ դրած է վերջնական խաղաղութիւն կնքել թուրքիայի հետ:

3. Խաղաղութեան դաշնագրի հիմնը պիտի գտնուի 1914-ին պատերազմ յայտարարուած ըռպէին Ռուս-թրքական սահմաններու վերահաստատումը:

4. Պատուիրակութիւնը իրաւասու կը լինի ղեկելու Արևելեան Անատոլիայի ինքնորոշումը՝ մասնաւորաբար թրքահայաստանի ինքնավարութիւնը թուրք պետութեան շրջանակում: (Մարտ 1):

Փետրուար 19-ին Սէյմի նախագահ Գեգէչկորին կը հաղորդէ Վեհիբ փաշային, թէ իրենք արդէն պատրաստ են բանակցութեան մտնելու թուրքիայի հետ և կը խնդրեն նշանակել իրենց պատուիրակներն ու որոշել տեղը, որուն Վեհիբ փաշան կը պատասխանէ (փետրուար 23), թէ իրենց պատուիրակները հաշտութեան հիմնական սկզբունքները մշակելէ յետոյ պիտի մեկնին Պոլսէն թիֆլիս, ուր և պիտի գումարուի հաշտութեան ժողովը: Բայց Սէյմի առաջարկով հաշտութեան բանակցութեան համար կընտրեն Տրապիզոն իբր չեզոք տեղ և Փետրուար 25-ին հեռագրով կը հաղորդեն Վեհիբ փաշային:<sup>10\*</sup>

<sup>10\*</sup> Ծնթ. Մինչ Կովկասի Սէյմի այս հիմնական կետերը կ'որոշէ հաշտութեան բանակցութեան իբր ղեկավար սկզբունքներ, միւս կողմէն Հայոց Ազգային Խոր-

Կովկասի Սէյմը կ'ընտրէ հաշտութեան պատուիրակներ բացառապէս իր անդամներից, որոնց կը մասնակցեն հայ անդամներէն Ալ. Խատիսեան և Ռ. Քաջագունի<sup>11</sup>: Երբ այսպէս պատուիրակութիւնն արդէն պատրաստ էր մեկնելու՝ Մարտ 2-ին թիֆլիսում կատարուի Կարախանի<sup>12</sup> հեռագիրը.- «Փետրուար 21-ի ամենէն գէշ պայմանն է Ռուսիայէն Արտահանի, Կարսի և Բաթումի շրջաններու խլուելն ինքնորոշումի անունով»:

Թէ Կովկասի կառավարութիւնը համաձայն Սէյմի որոշումին՝ Կովկասի և անոր սահմաններուն վերաբերեալ ամեն դաշնագրութիւն, որ կազմուած է առանց անոր գիտութեան ու հաւանութեան, զուրկ կը համարէ միջազգային կարևորութիւն ունենալէ և պարտաւորիչ չէ իրեն համար, ասոր հետ կը յայտարարուի ամենուն, թէ Կովկասի Սէյմն արդէն պատուիրակներ կը դրկէ Տրապիզոն՝ թուրքերու հետ անջատ հաշտութիւն կնքելու: (Մարտ 2):

Բրեստի դաշնագրութեան Կարսի, Արդահանի և Բաթումի վերաբերեալ կէտը նոր փաստ մը կուտար Վեհիբին իր ապօրէն յառաջխաղացումը օրինականացնել, ուստի Մարտ 10-ին փաշան կը հեռագրէ Կովկասի կառավարութեան՝ շատ կարճ ժամանակում պարպել յիշուած երեք քաղաքները: Նոյն թուականի ուրիշ հեռագրով մալ կը հաղորդէ Վեհիբ փաշան իր յառաջ խաղացումը դէպի Կարին:

Բրեստի դաշնագրութեան Կովկասին վերաբերեալ կէտը զօրաւոր կերպով կ'ազդէ նաև Կովկասի թաթարներու մտայնութիւնը փոխելուն համար: Անոնք մինչև այժմ Կովկասի միւս երկու ազգերու՝ հայերու և վրացիներու հետ հաշտ մնալու և համերաշխ գործելու պատրաստ կը ցուցնէին իրենց, բայց այժմ արդէն դիմակը մեկ դի նետած՝ համարձակ դուրս կուգան իբր կուսակից թուրք տիրապետութեան, միանգամայն պահանջելով Կովկասի թաթարներու անկախութիւն և իրենց կանոնաւոր բանակի կազմակերպութիւնը: (Գաջինսկի, մարտ 2, Սէյմի նիստ):

---

հուրդը իր՝ Փետրուար 12-ին գումարած նիստում հայերու առաւելագոյն պահանջները այսպէս կը բանաձևէ:

1. Գրաւած վայրերը պէտք է այն սահմաններու ճանաչուին, ինչպէս որ էին սկզբում (երզնկա, Բաբերտ):

2. Այդ սահմանները թուրք զօրք չպէտք է մտնի և հայ զօրքերը պէտք է մնան:

3. Դաշնագիրը պէտք է ստորագրուի և՛ թուրքիայի դաշնակիցների կողմից:

4. Գրաւած վայրերու սահմաններում տեղացիներից պէտք է իշխանութիւն ստեղծուի:

Այս որոշումներու քուարկութեան չեն մասնակցում Արևմտահայութեան ներկայացուցիչները:

**Ե.  
Տրապիզոնի բանակցութիւնները**

Կարախանի հեռագիրը տատանումի կը մատնէր Սէյմի պատուիրակութեանը: Արդեօք թուրքերն ասկէ յետոյ պիտի ուզենան հաշտութեան բանակցութիւնները շարունակել, թէ՞ ոչ, ուստի կը հեռագրուի դեռևս Տրապիզոն մնացած բերդապահ ռուս զօրավար Կոլոտսկսկիին՝ իմանալու թուրք պատուիրակութեան մեկնումի մասին: Դրական պատասխան ստանալէ յետոյ Մարտ 8-ին Կովկասի պատուիրակութիւնը կը մէկնէր Բաթում:

Ընդհանրապէս կը թուի, թէ պատուիրակութիւնը ճնշուած տրամադրութիւն ունի, բայց և այնպէս գնացքի մէջ ժողով գումարելով՝ կը ճշտեն իրենց առաջին հանդիպումի նախագիծը: Բաթումէն «Կարօլ Կարլ» ռուս զրահաւորով ճամբայ կելլեն Տրապիզոն և Մարտ 9-ին<sup>13</sup> արդէն Տրապիզոնի առջև են:

Առաջին իսկ հանդիպումին Կովկասի պատուիրակութիւնը մեծ յուսախաբութիւն կունենայ: Պատուիրակութիւն Տրապիզոն ընտրած էր բանակցութեան վարժ համարելով իբր չեզոք հող, այն ինչ այժմ թուրքերը կը տիրէին և կը վարուէին իբր իրենց երկիրը և պատուիրակութեան պատրանքը փարատելու համար ծովափին «Կարօլ Կարլ» զրահաւորի դիմաց մեծ զօրանցք կը կատարուէր և գունդեր կը մեկնէին դէպի Ռիզէ: Ցամաք ելլելու համար տեղի կուսակալը կը պահանջէ, որ պատուիրակութեան ընկերացող յիսնեակ մը պահակազօրքը կամ ցամաք չիջնէ, կամ գինաթափ ըլլայ՝ առարկելով թէ դուք մեր հիւրեր էք և մեզ է անկ հոգալ ձեր ապահովութեան մասին և ձեզի պահակներ տալ: Թուրք պատուիրակութիւնը դեռ չէ եկեր և յայտնի ալ չէ, թէ երբ պիտի գայ: Այս բոլորին հետ վրայ կը հասնի պատուիրակութեան նաև Վեհիբ փաշայի Մարտ 10 հեռագիրը, որով կը պահանջէ կարճ ժամանակում պարպել Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները:

Այս պայմաններում Կովկասի պատուիրակութիւնը այժմ երկու խնդիր ունէր լուծելիք: Առաջին՝ Վեհիբ փաշայի պահանջէն յետոյ արդեօ՞ք Թուրքիան դեռ պիտի շարունակէ բանակցել Կովկասի հետ:

Երկրորդ՝ եթէ պիտի բանակցե, ե՞րբ պիտի գայ թուրք պատուիրակութիւնը: Այս անորոշ կացութեան մէջ Կովկասեան պատուիրակութիւնը որոշում կը կայացնէ վերադառնալ Բաթում և հոն սպասել, բայց վերջին ռուս պիտի Տրապիզոնի կուսակալը կը հաղորդէ, թէ Օսմանեան պատուիրակութիւնն արդէն մեկնէր և Պոլսէն և վաղը կը հասնի: Առժամապէս մեկնումի որոշումի գործադրութիւնը կը յետաձգուէր: Վերջապէս, Մարտ 12-ին կը հասնին օսմանեան պատուիրակութիւնը, Ռէուֆ պէյի նախագահութեամբ:

Առաջին իսկ այցելութիւնները փոխանակելէ յետոյ Կովկասեան պատուիրակութեան նախագահ Չիսենկելիւն գրաւոր կը հարցնէ Ռէուֆ պէյին. «Վեհիբ փաշայի պահանջը կը նշանակէ՞ արդեօք մերժում հաշտութեան բանակցութեան»: Ռէուֆ բերանացի կը պատասխանէր. իրեն յայտնի չէ Վե-

հիբի պահանջը: Ինքը Բ. Դոնէն հրահանգ ունի բանակցութիւն վարել Կովկասի հետ: Իսկ երբ Չիսենկելիւն կը հարցնէ. «Դուք լիազօրուած էք վարելու խաղաղութեան բանակցութիւնը», Ռէուֆ կ'ըսէ. «Մենք լիազօրուած ենք քննութեան ենթարկել այն բոլոր առաջարկները, որ կընէ Կովկասի կառավարութիւնը: Յետին մտքեր մենք չունինք: Ռիչինչ կայ, որ մեզ իրարմէ բաժնէ: Բայց պէտք չէ, որ մեր մերձեցումը տարածայնուի, որպէս զի այն ազգերն, որոնց շահը կը պահանջէ արգելքներ յարուցանել՝ մեզ չխանգարեն: Գիտակցենք, որ մեր երկու կառավարութիւնները մտադիր են շուտով հաշտութիւն կնքելու Արևելքի ընդհանուր բարօրութեան համար»:

Կովկասեան պատուիրակութիւնը հետզհետէ կը գիտակցէ, թէ թուրքերը բնաւ մտադրութիւն չունեն իրենց հետ լրջօրէն մշակելու հաշտութեան հիմունքներն ու պայմանները: Բացման ճառի մէջ Ռէուֆ պէյը՝ ժողովի նախագահը, այնքան որոշ կարտայայտէ իր մտքերն, որ եթէ անդրադառնայինք, պէտք է անմիջապէս վերահասու ըլլայինք իրենց դրած դիրքին և վերադառնայինք թիֆլիս: Բայց լսենք Ռէուֆ պէյին.<sup>11\*</sup> - «Մեզ Կովկասեան ժողովուրդներուն կապող կապերը ոչ միայն պատմական ու աշխարհագրական են, այլև աւելի՛ ցեղային կապեր յառաջ եկած մեր ընդհանուր անցեալէն: Ե՛հիշտ այս պատճառով Կովկասի ժողովուրդներն ու Թուրքիան ներկայիս կազմուած են նոյն կրօնէն և նոյն ազգութիւնէն և համարեայ նոյն պատմութիւնն ունին»: Ռէուֆ պէյ այս դէպքում շատ բիրտ կերպով կը վիրաւորէր Կովկասի պատուիրակութեան 2/3-ի՝ իրենց ոչ կրօնակից և ոչ ցեղակիցներու՝ հայերու և վրացիներու ազգային արժանապատուութիւնը՝ հակառակ թուրք դիւանագիտութեան միշտ շողոմալի քաղաքավարութեանը: Ռ. Քաջազնունի, երբ Սէյմի առջև զեկուցում կուտայ Տրապիզոնի ժողովի մասին, կ'ըսէ.<sup>12\*</sup> - «Ռէուֆ պէյ կը վերաբերուէր Կովկասի պատուիրակութեան ոչ իբրև պետութեան մը ներկայացուցիչներու, այլ իբրև Թուրք պետութեան գիրկը վերադարձող ժողովուրդներու ներկայացուցիչներու»: Միև կողմէն, գործավար Ս. Թումանեան կ'ըսէ Ալ. Խատիսեանին.<sup>13\*</sup> - «Թուրքերը բնաւ չեն ուզեր մեր ժողովն անուանել «հաշտութեան կոնֆերանս», այնպէս որ մեզի համար հաշտութիւն՝ անոնց համար կռիւ է, այս պատճառով ալ անոնք միշտ կաշխատեն անուանել պարզաբար «Տրապիզոնի կոնֆերանս»:

Եւ, իրաւ, պատմական կատակերգութիւն մըն էր եղածը: Կովկասի կառավարութիւնը կը հեռագրէ իր պատուիրակութեան.<sup>14\*</sup> - «Թուրք զօրքերը մտան Կովկասի սահմանները, հաշտութեան բանակցութիւն չի կարելի այսպիսի պայմաններում. երկդիմի դրութիւն մը կստեղծուի, պէտք է կեցնել

<sup>11\*</sup> Մարտ 14:

<sup>12\*</sup> Մարտ 15:

<sup>13\*</sup> Մարտ 21, Խատիսեան, Օրագրութիւն: - Դա նոր տոմարով է: Օրագրութեան մեջ մարտի 8-ին է (հին տոմարով):-Ծանոթ. կազմողները:

<sup>14\*</sup> Ապրիլ 8:

զօրքի առաջ խաղացումը»։ Ասոր Տրապիզոնի պատւիրակութիւնը կը պատասխանէ.- «Պոլսէն հրամայուած է յառաջ խաղալ՝ մինչև որ չտանք բոլոր դիրքերը...»<sup>15\*</sup>

Նախ Ռէուֆ պէյ Կովկասի պատւիրակութիւնը կզբաղցնէր Կովկասի կառավարութեան վերաբերեալ ընդհանուր հարցումներ ընելով՝ միշտ առարկելով, թէ կուզէ ծանօթանալ կացութեան հետ։ Այսպէս, Չխենկելիի հետ իւր մասնաւոր տեսակցութեան միջոցին կըսէ՝<sup>16\*</sup>

«Վեհիբ փաշան արդէն հեռագրով հաղորդեր է զօրավար Օդի-շելիձէին, թէ Պոլսէն Թիֆլիս կ'ուղևորի պատւիրակութիւն մը՝ ծանօթանալու համար Կովկասի հետ։ Թեպէտ մեր հեռագրում խօսքը «ծանօթանալու» մասին է, բայց մենք պատրաստ ենք աւելի հեռուն երթալ և ընդունել Կովկասի անկախութիւնը։ Միայն ընդհանուր սկզբունքներ մշակելու համար լիազօրուած ենք»։ Իսկ Մարտ 19-ին Նոյն պէյը կը հաղորդէ Չխենկելիին.- «Չաշտութեան դաշնագրութիւնն արդէն կնքուած է Բրեստում, իրենք եկեր են մանրամասնութեան մասին խօսելու, ինչպէս են՝ հիւսապատուներու, առևտրական և այլն»։ Նոյն միտքը կը կրկնէ նաև ուրիշ անգամ։

Այս բոլորով հանդերձ՝ Կովկասի պատւիրակութիւնը դեռ կը շարունակէր իր բանակցութիւնները։ Նախ՝ որովհետև Չխենկելին և իր ընկերները գիտէին, որ «ճակատի դրութիւնը շատ գէշ է։ Մեր զօրքն ու հրամանատարներն իրենց պարտականութեան բարձրութեան վրայ չեն։ Երկիրն անիշխանութեան մատնուած է, կռուել չենք կարող»<sup>17\*</sup>։ Երկրորդ՝ Չխենկելի կը խոստովանէ.- «Չոս եկանք շատ անպատրաստ կերպով։ Մեր տկարութիւնը մեր մեջէն միութեան բացակայութիւնն է»<sup>18\*</sup>։

Եւ, իրաւ է, ինչ կը ներկայացնէր Կովկասի պատւիրակութիւնը՝ կովկասեան ցեղերու խառնուրդ մը, որոնք ոչ միայն ցեղային ատելութիւն ունէին իրարու դէմ միայն իբր պատմական փաստ յիշելով, այլև իրենց ազգային ձգտումներով ու շահերով տրամագծօրէն իրարու հակառակ էին։ Եւ թուրքերը շատ մօտէն գիտէին այս բանը, ուստի առանց կարևորութիւն տալու զանազան դիմումներուն՝ յառաջ խաղացումը կասեցնելու՝ Կովկասի սահմաններում բուռն ուժով յառաջ կը տանէին իրենց նուաճումը, միև կողմէն, անուշ և երկդիմի խօսքերով կ'զբաղցնէին պատւիրակութիւն, աշխատելով միշտ աւելի խորացնել անոնց միջև եղած արդէն բացած ճեղքը։

Վերջապէս, Կովկասի պատւիրակութեան համբերութիւնը հատած կ'որոշեն իրենց բերած 4 թէգիսները ներկայացնել թուրք պատուիրակութեանը։

<sup>15\*</sup> Ապրիլ 8։

<sup>16\*</sup> Մարտ 15։

<sup>17\*</sup> Ապրիլ 8։

<sup>18\*</sup> Մարտ 22։

Սէյմի դրած այս չորս խնդիրներէն երրորդը՝ պահել 1914-ի Կովկասի<sup>19\*</sup> սահմանները, իսկ չորրորդը՝ թրքահայերու ինքնավարութեան կը վերաբերէր։ Ռէուֆ պէյ ժողովի մէջ լսելով այս կետերը կ'ըսէ.- «Կը բողոքենք այս բառի բովանդակ իմաստովն այն կետի դէմ, որ տրամադրութիւն կը ցուցնէ միջամուխ լինելու մեր ներքին գործերուն։ Անտեղի կը համարենք այս յայտարարութիւնը»։ Կովկասի պատւիրակութեան չորրորդ կետը կը շօշափէր թուրքիայի ամենէն ցաւոտ կողմերէն մէկը, որու համար լսել անգամ չէին ուզեր, որովհետև կոտորուած ժողովուրդի հետ թաղուած կը համարէին նաև հայկական խնդիրը։ Այս առթիւ շատ ուշագրաւ են քանի մը թուրք պաշտօնատարներու արտայայտութիւնները։ Թուրք պատւիրակներ բերող զրահատրոյի վրացի բժիշկն ըսեր է Գամբաշիձէին. «Ձեր բոլոր առաջարկները ապարդիւն են և այժմ աւելորդ է խօսել թրքահայերու ինքնավարութեան մասին – հոն հայ չկայ և լինելու ալ չէ, որովհետև ուր որ երթայ թուրք զինուորը, հոն այլևս հայ չի մնար։ Թուրքերը կըսեն՝ կառավարութիւնը վճռեր է անոնց՝ իբր դաւաճան տարր, բնաւ չթողնել թուրքիայում և ապահովել իր սահմանները կասկածելի և անհաւատարիմ այս տարրի դէմ»<sup>20\*</sup>։

Պատւիրակութեան անդամ Լասիսիշվիլի Սէյմին ըրած իր զեկույցին մէջ կը յայտնէ<sup>21\*</sup> «Ռէուֆ պէյն ըսաւ.- «Թուրք պատմութեան վերջին դարերուն մեծ պետութիւնները խեղդեցին թուրքիան այս խնդրով»։

«Կը տեսնուէր, որ մեր վերաբերումն իսկ արդէն վիրաւորական էր թուրքերու համար», կ'աւելցնէ Լասիսիշվիլին։

Այսպէս, Կովկասի պատւիրակութիւնն պէտք է հրաժարէր Սէյմի դրած չորրորդ կետի պահանջէն։

Սակայն կացութիւնն աւելի նպաստաւոր չէր նաև երրորդ կետի վերաբերմամբ։ Ռէուֆ պէյն արդէն ըսեր էր, թէ հաշտութիւն արդէն կնքուած է Բրեստում, և իրենք անոր գործադրութիւնը կը պահանջեն։ Իրապէս ալ արդէն կը գործադրեն։ Կովկասի պատւիրակութիւն, տեսնելով այս ամենը, հարկ տեսաւ զիջումներ ընել, բացի Բաթումէն միև բոլոր պահանջները ընդունել։ Բայց թուրք պատուիրակութիւնը անուշ խոսքերով սիրաշահելու պէտք չունէր. Կովկասի պատւիրակութիւնը թանձրացած առաջարկներ ըրեր էր. այժմ կարգն իրեն էր և Ապրիլ 6-ին կուտայ վերջնագիր Բրեստի դաշնագիրն ընդունելու և 48 ժամ ժամանակ կուտայ։

Կովկասի պատւիրակութիւնը կը գնտուէր երկընտրանքի մը առջև. կամ ընդունել, կամ խզել բանակցութիւնն ու վերադառնալ Թիֆլիս։ Երկար վիճաբանութիւններէ յետոյ՝ Կովկասի պատւիրակութիւնն իր մէջ կորոշէ ընդունել Բրեստի պայմանները և Ապրիլ 8-ին Չխենկելի կը հեռագրէ Սէյ-

<sup>19\*</sup> Մարտ 21։

<sup>20\*</sup> Խատիսեան, Օրագրութիւն, Մարտ 24։ Օրագրութեան մէջ մարտի 11 (հին տոմար).-Ծանոթ. կազմողների։

<sup>21\*</sup> Մարտ 25։

մին. «Լիազորութիւն կ'ուզեն ընդունելու Բրեստի դաշնագրութիւնը»: Կովկասի պատերազմութեան հայ անդամներն ալ կը հեռագրեն Սէյմի «Դաշնակցութեան» հատուածին. «Բրեստի դաշնագրութիւնը ընդունելը փոքրագոյն չարիքն է»:

Նշանակուած ժամանակը կը լրանայ և պատերազմութիւնը դեռ պատասխան չէր ստացեր Սէյմէն, ուստի Ապրիլ 10-ին կը հաղորդէր Չիսենկելի թուրք պատերազմութեան, թէ կ'ընդունի Բրեստի դաշնագրութիւնը և պատրաստ է շարունակելու բանակցութիւնը, հիմնուելով անոր վրայ:

Իսկ Ապրիլ 13-էն Ռեուֆ պէյը կը հաղորդէր Կովկասի պատերազմութեան, թէ պատրաստ է վերսկսելու բանակցութիւնը: Սակայն՝ ասոր համար անհրաժեշտ է, որ Կովկասն յայտարարէ իր անկախութիւնը:

Մինչ մէկ կողմէն Տրապիզոնում գործը, կարծեք, այսպէս իր վախճանին կը հասնէր, միւս կողմէն՝ Թուրք պատերազմութեան վերջնագիրն ուրիշ վիճակ կ'ստեղծէր Թիֆլիս՝ Սէյմի մէջ:

Նախ կառավարութիւնը, տարբեր կուսակցութիւններու ներկայացուցիչները ժողով կը գումարէին և Կովկասի վիճակը բացատրելէն յետոյ՝ ժողովանիայի առաջարկով կը տրուէին հետևեալ որոշումները.<sup>1\*</sup>

1. Պատերազմ յայտարարել Թուրքիայի դէմ՝ պաշտպանելու Կովկասի սահմանները.
2. Ետ կանչել Տրապիզոնի պատերազմութիւնը.
3. Ձեռքի տակ առնել երկրի բոլոր զէնքի կարող մարդիկ.
4. Երկրի ծանր կացութիւնը կոչով մը հաղորդել ժողովրդին և զէնքի հրաւիրել.

5. Սէյմի հաստատութեան ներկայացնել այս որոշումները:

Նոյն օրում կը գումարուէր նաև Սէյմը՝ քննութեան առնելու կառավարութեան գործունէութիւնն, ասելու իր վերջին խօսքը: Կարտայայտուին բոլոր կուսակցութիւնները և Կովկասի «դեմոկրատիայի» անունով կը խօսէին բուռն ռազմաշունչ ճառեր և այն տպաւորութիւնը կը ստացուէր, որ ամբողջ Կովկասի ժողովուրդը մէկ մարդու պէս պիտի ծառանայ նենգաւոր թշնամիի դէմ և դուրս նետէ իր սահմաններէն: Բայց ոչ... Կովկասի վտանգն իր մէջ էր և ասոր շատ մօտէն տեղեակ էր թշնամին:

Սակայն, լսենք վարչապետ Գեգեկորիի բացատրութիւններ, որոնք պիտի լուսաբանեն կացութիւնը: «Թուրքերը առաջարկեցին մեզի պատերազմներ դրկել մշակելու հաշտութեան պայմանը և եթէ նոյն միջոցին գիտնայինք, թէ այս կը լինի այն նպատակով, որ մենք նուիրագործենք այն անօթալի դաշնագրութիւն, որ կանուանուի Բրեստ-Լիտովսկիի դաշնագրութիւն, այն ատեն, կը կարծեմ, Սէյմը պիտի չստորաճար այն աստիճան խաղալու այն կատակերգութիւնը, որուն վերջի վերջոյ վերածուեցաւ հաշտութեան այն կոնֆերանսը, որ գումարուեցաւ Տրապիզոնում: Դուք գիտէք, որ նոյն միջոցին, երբ տեղի կունենային հաշտութեան բանակցու-

<sup>1\*</sup> Ապրիլ 13:

թիւնները, մեր սահմաններու վրայ կը շարունակուէր արիւնհեղութիւնը և օսմանեան բանակը կը շարունակէր իր յառաջ խաղացումը: Այս բացատրութիւնէն յետոյ կ'առաջարկէր Սէյմին վաւերացնել կառավարութեան որոշումները:

Կ'արտայայտուին նաև Դ. Յ. Դաշնակցութիւնը և Յարութիւնեան՝ նախ իբր հայ և երկրորդ՝ իբր դաշնակցական<sup>14</sup>, շատ աւելի մօտէն կը ճանչնայ թուրքն և իր մերձաւոր ու հեռաւոր նպատակակետներն և Յարութիւնեան որոշ կերպով կը յայտնէ, որ Թուրքիան պիտի չբաւականանայ նոյն իսկ Բրեստի գծած սահմաններովը, այլ պիտի յառաջանայ մինչև Բագու. այս է իր վաղեմի ծրագիրը: Սա պիտի անցնի Դաշնակցութեան՝ ոչնչացնելու մնացորդ հայութիւնը, ուստի հայութեան ուրիշ բան չի մնար, բայց եթէ զէնքը ձեռքին մնանէ:

Սիւս բեմ կը բարձրանայ Մուսաֆաթի ներկայացուցիչ Ռուստամբեգով և Կովկասի համայն իսլամներու կողմէն կը յայտարարէ. «Մենք գործոն դեր չենք կարող ունենալ այս պատերազմում և գործոն պատասխանատուութիւն ալ չենք ստանձնել»: Մենք թուրքերու դէմ չենք կռուիր:

Թեպէտ Սէյմին անծանօթ չէր իսլամներու այս մտայնութիւնը, բայց և այնպէս ռազմաշունչ ժողովի մը մէջ այս յայտարարութիւնը սառ ջուր մը կը լեցնէր ոգևորուած տրամադրութեան վրայ:

Սէյմը կը վաւերացնէր կառավարութեան որոշումները և ուրեմն պատերազմ կը յայտարարէր Թուրքիային, որ իրականութեան մէջ դեռ բնաւ դադրած ալ չէր:

Սակայն տեսնենք, թէ Կովկասն իսկապէս կրնար պատերազմել:

Մենք արդէն տեսանք, որ Չիսենկելին Տրապիզոնէն կը հեռագրէր, թէ ճակատի դրութիւնը վատթար է, հրամանատուներն ու զօրքը իրենց կոչման բարձրութեան վրայ կեցած են: Չենք կրնար կռուիլ: Ասով հանդերձ Կովկասի Սէյմը պատերազմ յայտարարեց և ինչ եղաւ արդիւնքը.- Ապրիլ 13-ին Բաթումի բերդապահ հրամանատուն 24 ժամուան վերջնագիր մը կ'ստանայ թուրք զօրքի հրամանատուէն՝ պարպել ամրոցներն ու քաղաքը, և հակառակ բերդապահի խնդրանքին՝ պայմանաժամը երկարցնելու 24 ժամ, յարձակումը կսկսի և 48 ժամ յետոյ քաղաքն արդէն թուրքերու ձեռքն էր: Միւս կողմէն՝ Կարսի առջև դիմադրութիւնը դեռ կը շարունակուէր մինչև 10 օր, փոփոխակի յաջողութեամբ ու ձախողութեամբ: Այս տասնօրեայ ժամանակը բաւական էր հանդգնելու Կովկասի Սէյմն, որ պատերազմ շարունակէր չի կրնար: Ապրիլ 22-ին կը հասնէր Վեհիբ փաշայի հեռագիրը՝ իբր պատասխան Չիսենկելիի Գամբաշիձէի ձեռքով դրկած նամակին, որով նամակագիրն խնդրէր էր դադրեցնել թուրք զօրքի յառաջ խաղացումը: Վեհիբ կը պատասխանէր. զօրքի յառաջ խաղացումը անհրաժեշտ հետևանքն է Տրապիզոնի կոչուած բանակցութեանը, ուստի խորհուրդ կուտար բանակցութիւնները վերսկսել:

Ապրիլ 22-ին Սէյմը հանդիսաւոր կերպով կը յայտարարէր Կովկասն անկախ ռամկավար դաշնակցային հանրապետութիւն: Անկախ Կովկասի



Այնը կորոշել յանձնարարել նոր կառավարության՝ հաշտության կոչուած բանակցութիւնները վերսկսել և նոր կառավարութեան նախագահ՝ Չխենկելի Ապրիլ 23-ին կը հեռագրէր Վեհիբ փաշային.- «Մենք կընդունենք Բրեստի դաշնագրութիւնը և պատրաստ ենք պատիւրակներ դրկել, բանակցութիւնները վերսկսել նոյն հիման վրայ: Բանակցութեան վայր նշանակել Բաթում: Կովկասն յայտարարէր է իր անկախութիւնը, որ և կատարուած է ձեր Ապրիլ 13-ի պահանջը: Կարսը պարպելու համար կը խնդրեմ տալ պէտք եղած պայմանաժամը: Դադրել կռիւը բոլոր ճակատներու վրայ: Վրաստանի կողմէն Բրեստի գծած սահմանէն անդին անցած զօրքը ետ քաշել»:

Այս պայմաններով Չխենկելին կը հեռագրէր նաև Կարսի ճակատի հրամանատար զօրավար Նազարբեկեանին և կը յանձնարարէր բանագնացներ դրկել թրքական բանակը և ճշտել չեզոք գօտին՝ մինչև որ Կարս պարպուի:

Ապրիլ 24-ին Վեհիբ փաշան կը պատասխանէր Չխենկելիին.- «1. Այսօր իսկ հրամայեցի դադրեցնել պատերազմական գործողութիւնները, որոնք տեղի ունեն 1877-ի սահմանէն անդին, անոնք կը կենան ուր որ են, միայն եթէ ենթակայ չըլլան յարձակումի: 2. Յիշեալ սահմանէն աստիճան կատարուած գործողութիւնը պիտի դադրի դարձեալ նոյն սահմանի վրայ: Միայն Կարսի դէմ ուղղուած գործողութիւնը պիտի շարունակուի, պիտի դադրի ամրոցներու դիմաց 2 կիլոմէթր հեռաւորութեան վրայ: Թուրք հրամատարին պատուիրուած է բանակցել Կարսը պարպելու համար: 3. Տրապիզոն լաւագոյն տեղն է բանակցութեան համար: Բաւական ժամանակի պէտք կայ, մինչև որ Պոլսէն լիազօր պատուիրակներ նշանակուին: Ժամանակի համար պիտի հաղորդեմ ձեզի»:

Այսպէս, ուրեմն, Կովկասի Զանրապետութեան այնքան մեծ աղմուկով յայտարարած պատերազմը կը վերջանար խայտառակ պարտութեամբ մը: Վրաց ճակատի վրայ դիմադրութիւնն այնքան թոյլ եղաւ, որ 48 ժամէն Բաթումի պէս ուժեղ բերդաքաղաք մը իր բոլոր ռազմական հարստութեամբ աւար կը դառնար օսմանեան չնչին ուժով յարձակող զօրքի ձեռքը և քանի մը օրուան մէջ օսմանեան զինուորներն արդէն Վրաստանի սիրտ՝ Քութայիսի նահանգումն էին:

Ուրիշ պատկեր կը ներկայացնէր Զայաստանի ճակատը: Զաշտութեան բանակցութիւններն սկսուած ատեն Կոնստանտնուպոլսէն կը գտնուէին Բեզլի-Ահմետ-Սարիզամիշ-Կարս կէս ճամբին և հայ բանակը քայլ առ քայլ նահանջով տեղի կուտար իրմէ երեք անգամ աւելի թուրք ուժի առջև և հայ հրամանատար Նազարբեկեան կը խորհէր գոնէ Կարսի առջև կեցնել թուրք բանակի յառաջ խաղացումը: Բայց Չխենկելի խնդրած զինադադարը և Վեհիբի դրած պայմաններով Կարսը կը դնէին անպաշտպանելի դիրքի մէջ: Նախ, Վեհիբ կ'ըսէր՝ ամեն կողմէ թուրք զօրքը յառաջ պիտի խաղայ մինչև 1877-ի սահմանը, որով Կարսն արդէն ամեն կողմէ պիտի պաշարուէր, երկրորդ՝ թուրք զօրքը պիտի կենար Կարսի բերդերու

առջև 2 կիլոմէթր հեռաւորութեան վրայ, ուստի միանգամայն պիտի զրկուէր ինքնապաշտպանութեան գործողութիւնէն:

Ապրիլ 24-ին զօրավար Վիշինսկի կը հեռագրէր Թիֆլիս զօրավար Օդիշելիձիին.- «Այս առտուն ժամը 8-ին եկաւ թուրք բանագնաց, բերելով կնքուած նամակ մը՝ բայց անստորագիր, որու բովանդակութիւնն է. «Կովկասի կառավարութեան առաջարկը ընդունել է Օսմանեան կառավարութիւնը: Մեր կողմէն արդէն պատուիրակները նշանակուած են և պէտք է զան: Կովկասի կառավարութեան պատուիրակները բանագնացութիւնը պիտի կատարեն Կարսի առջև: Դուք պէտք է քաշուիք դէպի Կարս և կենաք ամրոցներէն 2 վերստ հեռաւորութեան վրայ: Ձեր զօրքը մեկնած ատեն մեր զօրքը պիտի կրակ չբանայ: Այսօր (Ապրիլ 24-ին) պիտի գրաւէ այն գիծը, որ վերը նշանակուած է: Կսպասենք ձեր պատուիրակներուն՝ անոնց հետ բանակցելու համար»:

Ապրիլ 24-ին Բեզլի-Ահմետ կայարանէն.- «Այժմ ճակատի զօրքն կը հաղորդեն, որ թուրքերը յարձակման սկսան: Ձօրապետն բանագնացներ դրկեց ըսելու, թէ զինադադար է և պէտք է սպասել պատուիրակներուն»:

Սակայն թուրք հրամանատարներու գործելակերպը շատ որոշ է, թղթի վրայ անուշ ու մարդասէր պայմաններ, իսկ գործողութեան մէջ բոլորովին տարբեր կը վարուին և Ապրիլ 25-ի երեկոեան ժամը 5-ին թուրքերն արդէն Կարսի տէրն են: Ահա շրջանի կոմիսար Չամոյեվի հեռագիրը<sup>1\*</sup>.- «Թիֆլիսէն եղած կարգադրութեան համեմատ Կարսի ամրոցներու յանձնումը այնքան անակնկալ և չափազանց շուտ տեղի ունեցաւ, որ Կովկասի ամրութիւնն ամեն կերպով պաշտպանելու պատրաստուած ազգաբնակութիւնը ստիպուած եղաւ թողնել բառացի ամեն ինչ և լքել Կարս 25 Ապրիլ երեկոեան ժամը 5-ին մեկնելու միջոցին Կարսը շրջապատուած էր բոցերով: Այրուեցան լաւագոյն շէնքերը: Գաղթող ժողովուրդի պատկերն աննկարագրելի է: Շրջանի կոմիսար Չամոյեվ»:

Նոյն օրը,<sup>2\*</sup> երբ թուրքերը կը մտնէին Կարս, Չխենկելին կը հեռագրէր Վեհիբ փաշային, զանազան պայմաններ առաջարկելով Կարսը պարպելու և պետական ամբողջ գոյքը դուրս բերելու համար մէկ ամիս ժամանակ կը խնդրէր:

Սակայն Թուրքիան շատ ազնիւ պիտի լինէր յարգելու համար միջազգային կարգերը՝ ժամանակ տալու, որ Կարսը պարպեն: Կարին, Տրապիզոն գրաւելով, ինչպէս ռուս զօրաւարը կ'ըսէ, անոնք 2 միլիարդէն աւելի արժողութեամբ մթերք ձեռք անցուցին: Նոյն մեթոդով գրաւեցին Բաթում և այժմ Կարսը: Թուրքերու գործելու կերպը շատ պարզ էր, այնքան ժամանակ կուտային, երբ ոչինչ կարելի էր դուրս հանել և շատ անգամ ժամանակը չլրացած, պատրուակ մը բռնելով, կը ներխուժէին և ամեն բան կը գրաւէին: Այսպէս, օրինակ. Բաթումին տուին 24 ժամը, Ալեքսանդրա-

<sup>1\*</sup> Ապրիլ 27:

<sup>2\*</sup> Ապրիլ 25:

պոլին 3 ժամ, իսկ Կարս մտնելու համար նոյն օրը պատրուակ բռնելով ներխուժեցին և տիրացան քաղաքին: Կարին, Տրապիզոն, Բաթում և Կարս բերդաքաղաքներում անոնք գրաւեցին աւելի քան չորս միլիարդ ռուբլի միայն պետական հարստութիւն:

## 2. Բաթումի հաշտութեան բանակցութիւնները

Կովկասի անկախ հանրապետութիւնը շուտով համոզուեցաւ, որ իր ներքին պառակտումներով չի կարող պատերազմ շարունակել, ուստի Ապրիլ 23-ին նոր վարչապետ Զիւենկելին կը հաղորդէր Վեհիք փաշային, թէ Կովկասեան Զանրապետութիւն կը նդունէ Բրեստի դաշնագրութիւնը և պատւիրակներ կը նտրէ Տրապիզոնում ընդհատուած բանակցութիւնը շարունակելու Բաթում: Ապրիլ 28-ին փաշան կը պատասխանէ, թէ Օսմանեան կառավարութիւնը կը նդունէ Կովկասի անկախութիւնը և թէ Պոլսէն պատւիրակներ պիտի գան բանակցելու:

Կովկասեան հանրապետութիւնը Մայիսի մէկէն սկսած զբաղած էր իր բանակցութեան ծրագիրը կազմելով: Անոնք չէին կասկածեր, թէ Բրեստի դաշնագիրն ամբողջովին ընդունելով, թուրքերը անտարակոյս վերջնական հաշտութիւն կը քելու են Կովկասի հետ, ուստի կը նդունէին Կովկասի հանրապետութեան անկախութիւնը և Բրեստի դաշնագրութիւնը, այսինքն հաշտութիւն:

Նոր պատւիրակութիւնն, իր նախկին նախագահի՝ Զիւենկելիի նախագահութեամբ, Մայիս 6-ին կը մտնէին Բաթում, որ արդէն թրքական քաղաք մըն էր: Նոյն երեկոյ Վեհիք փաշան մեծ ընթրիք կուտայ և շատ սիրալիր խոսակցութիւն տեղի կունենայ: Բայց պաշտօնական բանակցութիւնները կսկսէն Մայիս 11-ին միայն և Զիւենկելի պատմականը կընէ խզուած բանակցութեան և փոխանակուած պաշտօնական գրութիւններու հաստատ կամենալով, թէ Բրեստի դաշնագրութիւնը հիմն պիտի կազմէ Բաթումի բանակցութիւններուն: Երկար վիճաբանութեան ընթացքին կը պարզուի այն, որ իսալիլ պէյ Օսմանեան համար պարտաւոր չի գտներ Բրեստի դաշնագրութիւնը, թէ այժմ ոչ թէ Տրապիզոնում ընդհատուած բանակցութիւնն է, որ կը շարունակուի, այլ Կովկասի անկախ հանրապետութիւնն իր նոր սկսած պատերազմի մը պարտուելով՝ նոր բանակցութիւն կը վարէ ու այժմ պայմանները բոլորովին փոխուած են: Եվ կը աւելցնէ, թէ ինքն արդէն պատրաստ էր դաշնագրի նախագիծ մը և կառաջարկէ Կովկասի Զանրապետութեան պատւիրակութեան քննութեան:

Կարդալով դաշնագրի նախագիծը՝ Կովկասի պատւիրակութիւնը վերահասու կըլլայ այն ծանր պայմաններուն, որ կառաջարկէր իսալիլ պէյը: Այս նախագիծը կը բաղկանար 12 յօդուած:

1. յօդ. Տեւական և բարեկամութեան հաշտութիւն:

2. Օսմանեան կառավարութիւնը կը խօստանայ զէնքով միջատել, ապահովութիւնը վերահաստատել Կովկասում, երբ իրեն կառաջարկուի:

3. Կովկասի Զանրապետութիւնը կը պարտաւորէր ազդու կերպով արգելել իր շրջանում կազմուած կամ կազմելիք աւազակախումբերը ճնշելու և պէտք եղած դէպքում զօրեղ օգնութիւն տալ Օսմանեան կառավարութեանը՝ ապագիւնելու և ցրելու անոնք:

4. յօդ. Երկաթուղային հաղորդակցութեան դիւրութիւն՝ փոխադարձաբար: Կովկասում գտնուած երթուղիին վերաբերել մթերքը բաժնել դաշնակցող կողմերու միջև գրաւած գծերու երկարութեան համեմատութեամբ:

5. յօդ. Այս յօդուածը կընդգծէ Օսմանեան պետութեան և Կովկասի Զանրապետութեան նոր սահմանները:

6. յօդ. Կովկասեան Զանրապետութիւնը կը պարտաւորի ժողովել ռուս բոլոր նաւերն իր նաւահանգներում, զինաթափ ընել և պահել մինչև ընդհանուր հաշտութիւնը: Նոյնն կատարել նաև Օսմաններու թշնամի նաւերու վերաբերմամբ:

7. յօդ. Տնտեսական, առևտրական, հիւպատոսական դաշնագրեր կազմել, իսկ մինչև 1919 Դեկտեմբեր 31 հանրապետութեան համար պարտաւորիչ պիտի ըլլայ Օսմաններու Ա. յաւելուածով առաջարկած պայմանները:

8. յօդ. Դաշնակցող պետութիւններու բնակիչներուն թոյլ կը տրուէր շահագործել կամ ծախել իրենց կալուածները: Ազատ երթևեկութիւն երկու կողմերու միջև:

9. յօդ. Երկու կողմերու միջև հաստատել սուրհանդակային և հեռագրական հաղորդակցութիւն:

10. յօդ. Բրեստի դաշնագրի այն կէտերը, որ հակառակ չեն ներկայ դաշնագրին, ընդունելի էին երկու կողմերու համար:

11. յօդ. Կովկասում բնակող իսլամները պիտի վայելէին կրօնական ազատութիւն: Իսլամները պիտի յիշատակէին Սուլթանի անունը հասարակաց աղօթքներու մէջ: Ուսումն իրենց լեզուով նոյն քաղաքացիական իրաւունքն էր: Կրնան ընկերութիւններ կազմել հիմնելու ամէն տեսակի կրօնական ու բարեգործական հաստատութիւններ:

12. յօդ. Ներկայ դաշնագրութիւնը պիտի վաւերացուէր ու փոխանակուէր Պոլիս մէկ ամսուայ ընթացքում:

Այս բուն դաշնագրին յարակից էին 3 բացատրական և մէկ յաւելուածական դաշնագիր, որով կը պահանջուէր Կովկասեան Զանրապետութեան բանակի զինաթափութիւնը: Արգելք չըլլալ կամաւորներուն, որոնք կուգէն մտնել Կովկասեան գործող թուրք բանակ: Կովկասի սահմաններէն հեռացնել Օսմանեան թշնամի ազգերու գիւնուորական և քաղաքական պաշտօնեաները: Կովկասեան Զանրապետութեան երկաթուղային գծերով փոխադրել Օսմանեան բանակը և անոր վերաբերող ամէն բան: Նոյն

արտօնութիւնը կը տրուի և օսմանեան դաշնակից պետութիւններուն: Կովկասեան Հանրապետութիւնը կը պարտաւորուէր տրամադրել օսմաններուն փոխադրական բոլոր միջոցները՝ բնակարանները նոյնպէս Բագուի մէջ, բոլոր նաւերը, որոնք կան Կասպից ծովում, ոչ մէկ քաղաքական յարաբերութիւն օսմաններուն՝ թշնամի պետութիւններու հետ և այլն, և այլն:<sup>1\*</sup>

է.

### Նախագծէն յետոյ ստեղծուած կացութիւնը

Մայիս 11-ի հաշտութեան առաջին նիստում օսմանեան պատւիրակութեան նախագահ Խալիլ պէյի առաջարկած դաշնագրի նախագիծն իր յարակից յաւելումներով ու լրացուցիչով այնպիսի անակնկալ մըն էր Կովկասեան Հանրապետութեան պատւիրակութեան, որ կրնար սարսփեցնել բոլորը, ինչպէս և իրապէս ալ եղաւ: Այժմ դեռ մասամբ միայն կ'անդրադառնային թէ օսմաններու յատուկ քաղցր խօսքերու տակ ինչ ահաւոր ծրագիրներ կային ծածկուած, և թէ իրենց հակառակորդը ինչ մահացու հարուած կը պատրաստէր իւր՝ անկախ ճանջցած Կովկասեան Հանրապետութեան համար: Պէտք է աւելցնել, որ օսմանեան ինչպէս Տրապիզոնի բանակցութեան ընթացքին, զինադադար յայտարարելով հանդերձ, երբէք չկասեցուցին իրենց զօրքի յառաջ խաղացումը, նոյնպէս և՛ Բաթումի, այսպէս անուանուած, հաշտութեան բանակցութեան ժամանակ թուրք բանակը կը յառաջանար Կովկասի ներսերը, առանց նկատի առնելու զինադադարի պայմանները: Դաշնագրի նախագիծն Կովկասեան պատւիրակութեան յանձնելէն մինչև Մայիս 25 պատւիրակութիւններ կատարուեցան մէկ կողմէն՝ Հիւսիսկովկասի և Խալիլի միջև, միւս կողմէն պատւիրակութեան հայ անդամ Ալ. Խատիսեանի ու Քաջագունիի և Խալիլի ու Վեհիբի հետ՝ փոխելու առաջարկուած ծանր պայմանները և մեղմելու թուրք զօրքի խիստ վերաբերումը, բայց այս բոլորը իզուր: Թուրք պատւիրակութիւնը մնաց անդրդուելի իր պահանջներուն մէջ: Այս շրջանումն էր, որ յանկարծակիի բերելով, գրաւեցին Ալեքսանդրապոլ և այնուհետև, բանակն երկու ճիւղի բաժնելով, մէկը պիտի յառաջանար դէպի Երևան, իսկ միւսը կը բռնէր Ղարաբաղի խաչի ճամբան:

Այս պայմաններում ամենածանր հարուածը կը հասներ հայութեանը, նախ՝ անկէ կը խլուէր նոր պահանջով Ախալցխայի շրջանը և ամբողջ Սուրմալուի, երկրորդ՝ դիտերիմ թշնամին արդէն կը խորհէր վերջնական մահացու հարուածը տալ հայութեան և այսպիսով, ընդմիջտ վերջացնել հայութեան և Հայաստանի խնդիրը: Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհուրդի մայիս 26-ի նիստում նախագահ Ահարոնեան կը հաղորդէ. «Գերման ներկայացուցիչը ցոյց տուել է դոկումենտները, որ օսմանցիք ուզում են

առաջ գալ՝ ժողովուրդէն (հայ) կոտորելով: Այս առթիւ իրենք բողոքում են, խնդրում են զինուորներ»:<sup>22\*</sup>

Գերման պատւիրակ Ֆօն Լօսթ տեսնելով, որ երկու կողմերէն ոչ մէկը զիջում ընելու տրամադրութիւն կը ցուցնէ, գրով մը կը դիմէ Կովկասեան հանրապետութեան պատւիրակութեան առաջարկելով իր միջնորդութիւնը:<sup>23</sup> \* Հանրապետութեան պատւիրակութիւնը կընդունի: Բայց իզուր. թուրքերը կը մերժեն ունէ միջնորդութիւն և Լօսթ Մայիս 24-ին դարձեալ գրութեամբ մը կ'այտնէ իր մերժումը: Թուրքերու համար վաղուց արդէն շատ պարզ էր, որ Կովկասեան ազգերու միութիւնը լոկ արուեստական է ու ժամանակաւոր բան մըն է: Այս պառակտումի սերմերը, որ անոնք ցանք էին անոնց մէջ, պիտի արդիւնաւորուէր, բայց անոնք իրենց որոշ գործելակերպին համաձայն այս պառակտումը չփութացուցին, մինչև որ ամէն ինչ ծրագրածին համեմատ չհասունացաւ: Ուստի միշտ պիտի կեցած էին իրենց պահանջներու վրայ, միշտ սպառնալով վերջնագիր տալու և Մայիս 26-ին վերջապէս կուտային:

Վերջնագիրը տրուելէն օր մ'առաջ գերմանացի ներկայացուցիչ Ֆօն Լօսթ Կովկասեան հանրապետութեան նախագահին կը գրէր, թէ «ինքն ստացեր է հաւաստի տեղեկութիւն, որու համաձայն Կովկասեան հանրապետութիւնն ու Կովկասեան կառավարութիւնը կը գտնուին ներկայիս լուծուելու վարկեանի մէջ, որմէ յետոյ, ստեղծուելիք վիճակի մասին լիազօրութիւն չունենալով, վերջացած կը համարի իր գործը և կը մեկնի»:

Այն ինչ որ մինչև այժմ Կովկասեան թաթարներու և վրացիներու կողմէն քողի տակ կը պահուէր՝ իւրաքանչիւրի անջատ անկախութիւնը, այժմ արդէն պաշտօնապէս կը յայտարարուէր: Թաթարներու անկախութեան ձգտումի յայտարարութիւնն արդէն տեսանք: Տեսանք նոյնպէս ժողովարհայի յայտարարութիւնը, թէ դեռ 1917-ին Գերմանիան ընդուներ է Վրաստանի անկախութիւնը: Ալ. Խատիսեանի օրագրութեան մէջ կը կարդանք, որ իրենց պատւիրակութիւնը Բաթում ուղևորած միջոցին Մայիս 6-ին Գաջինսկի կը հաղորդէր իրեն, թէ ենվեր փաշան յանձնարարած էր իրեն ըսել վրացի իշխաններուն՝ կազմելու Վրաստանի կառավարութիւն: Նա կ'ուզէր անձամբ Քութայիս երթալ, որպէսզի իր յայտարարէր անկախ Վրաստանի պետութիւնը»: Իսկ Միք. Պապաջանեան Բաթումէն վերադարձին Ազգային Խորհուրդին տուած զեկոյցի մէջ կը հաղորդէ.<sup>24</sup> \* «Պարզուեց, որ Յունուարին Սոտկուածէի միջոցով վրացիները ստացեր էին գրաւոր համաձայնութիւն (թուրքերէն)՝ Վրաստանի անկախութեան մասին»:

<sup>22</sup> \* Հայոց Ազգային Խորհուրդի արձանագրութիւն, էջ 617: Տե՛ս ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141: - Ծան. կազմ.:

<sup>23</sup> \* Մայիս 19:

<sup>24</sup> \* Մայիս 27 նիստ:

<sup>1</sup>\* Material dur Kaukasisch-Armenischen Frage 1918 Juni, Berlin-Schoneberg:

Այսպես, ուրեմն, Կովկասի Զանրապետութիւնը կազմող երեք ազգերէն երկուքն արդէն նախապէս իրենց ազգային անկախութիւնն ապահովեր էին և թուրքերու հետ համերաշխ յարմար թոպէին կ'սպասէին պաշտօնապէս ալ յայտարարելու: Կը մնային միայն հայերը, որոնք պինդ փարած էին Կովկասեան Զանրապետութեան գաղափարին, և որոնք այժմ միայնակ կը մնային ռիսերիմ թշնամիի դէմ ճակատ ճակատի: Բայց այս մասին յետոյ:

## Ը.

### Կովկասեան Զանրապետութեան լուծուելը

Օսմանեան պատերազմութեան վերջնագրի խստութենէն խուսափելու համար Վրաստանն ու Ադրբեջանը կը յայտարարեն իրենց անկախութիւնը: Մայիսի 26-ին կը զուարուեր, վերջին անգամ լինելով, Կովկասեան Զանրապետութեան Սէյմը և Վրաստանի սոցիալ դեմոկրատ Օերթթելի իր ճառերով կը բացատրէ Կովկասեան Զանրապետութեան անկումը և Վրաստանի անջատ անկախութեան յայտարարութիւնը: Մենք նախապէս արդէն տեսանք, թէ Վրաստանի անկախութեան խնդիրը նոր չէր, որ կը վճռուէր, այլ ամիսներ, թերևս և տարի մը առաջ արդէն վերջացած խնդիր էր իրենց համար, բայց դիւանագետ վրացին կ'աշխատէր ցոյց տալ իբր հետևանք Կովկասի մէջ ստեղծուած կացութեանը: Արտաքնապէս դիտելով ճիշտ էր, որովհետև ներքնապէս պառակտուած հանրապետութիւն մը չէր կրնար գոյութիւն ունենալ, սակայն այս պառակտումն ալ արդիւնք չէր կանխորոշ ազգային անկախութեան ձգտումին: Խիստ ուշագրաւ են իր հետևեալ խօսքերը.- «Իրական միութիւն չկայ Կովկասում: <sup>15</sup> Թուրքիայի՝ մեզի մօտենալը և Կովկասի սահմաններէն ներխուժումը զօրացուցին ձգտումն դէպի Թուրքիան: Կովկասի անկախութիւնը յայտարարած ժամանակ հասկցանք, որ Կովկասի հանրապետութիւնը, մանաւանդ այսպիսի ճգնաժամում, չի կրնար գոյութիւն ունենալ, երբ անոր ազգաբնակչութեան կէտը կը հրաժարի զենքով պաշտպանելու իր պետութեանը: Թշնամին իր ներարշաւի մէջ ոչ միայն չի հանդիպեր Կովկասի ամբողջ ժողովուրդի միահանուր դիմադրութեանը, այլ, ընդհակառակն, կ'արժանանայ ստուար մասի մը սիրայոժար ընդունելութեանը: Փաստօրէն արևելեան Կովկասը չի պաշտպաներ Կովկասեան Զանրապետութեան ըրած պաշտօնական քայլերը: Կովկասի ահագին մէկ մասը՝ ուղղակի կամ անուղղակի կը հպատակէ անոր, որ Բաթումի մէջ կը բանակցի մեր պատերազմութեան հետ: Մենք խլեցին հայոց ազգը, մենք զատուեցաւ իսլամ ժողովուրդը, մենք միայնակ ենք թշնամու դէմ: Կովկասի բոլոր ժողովուրդներու ներկայութեան պէտք է ըսել Վրաստանին.- «Այս թոպէին դու միայնակ ես, դու թողուած ես քու ուժերուն, չունիս պետական կազմ, չունիս պատերազմութիւն Բաթումի մէջ, և՛ որքան ալ ծանր լինեն քու գոյութեան պայմանները, որքան ալ ծանր լինի դաշնակիցներուդ կորուստը՝ գիտցի՛ր, որ այժմ դու մնացեր ես ապաստան քու ուժերուն և քու վիճակն աւելի կը վատթարանայ նաև անով, որ

դու կապրես այն ցնորքով, իբր թէ կայ միացած Կովկաս, իբր թէ կայ միակ պետական կազմ և պատերազմութիւն Բաթումի մէջ: Սակայն գիտցի՛ր, եթէ կուզես պաշտպանել քու շահերը, փրկիր քեզ, ուստի դու պէտք է ստեղծես քու սեփական պետական կազմը և քու պաշտօնական ներկայացուցչութիւնը»:

Չետողրն երկրորդ ճառով մը ալ կը պատասխանէ իր հակառակորդներուն, փաստեր մէջ բերելով թուրքերու՝ օսմանեան պատերազմութեան կատարած դիմումներէն (Ախալցխայի և Ախալքալակի) և կեզրակացնէ, թէ Սէյմի միութեան, հետևաբար և Կովկասեան Զանրապետութիւն այլևս իրականի մէջ դադարած է գոյութիւն ունենալէ: Իր կուսակցութիւնն խորհրդարան կը մտցնէ այս բանաձևը.- «Նկատի ունենալով, որ պատերազմի և հաշտութեան խնդրի մասին յառաջ եկեր են արմատական տարբերութիւններ՝ Կովկասի անկախ Զանրապետութիւնը կազմող ազգերու միջև, այս պատճառով ալ անկարելի դարձեր է միակ հեղինակաւոր իշխանութեան յառաջ գալը, որ խօսի Կովկասի անունով. Կովկասի Սէյմը կը հաստատէ Կովկասի պառակտումը և կը հրաժարի իր լիազօրութիւնէն»:

Այս որոշումը Սէյմէն ընդունուելէն յետոյ անմիջապէս կը հաղորդուի բոլոր պետութիւններու մայրաքաղաքներուն:

Մայիս 26-ի օրը արևի առաջին ճառագայթները դեռ կ'ողջունէին Կովկասեան Զանրապետութեան դրօշակը, իսկ նոյն երեկոյեան արևը կերթար հաղորդելու արևմտեան ազգերուն մէկ նորաստեղծ հանրապետութեան՝ Վրաստանի ծնունդը, որուն պիտի հետևէին Ադրբեջանն ու Զայաստանը:

## Թ.

### Զայաստանի և հայերու դրութիւնը Կովկասի Զանրապետութեան լուծուելէն յետոյ

Մենք գիտենք, թէ հայերն անգիտակ չէին վրացիներու և թաթարներու ազգային անջատական ձգտումներուն, բայց ասով հանդերձ ամեն գոհողութեան յանձն կառնէին պահպանելու Կովկասի միացած հանրապետութիւնը, որովհետև այնպէս համոզուած էին, թէ իրենց փրկութիւնը այս միութեան մէջն է: Բայց դրացի ազգերէն իւրաքանչիւրն իր ապագան ապահովեր էր և պատեհ թոպէի կսպսէր գործադրելու իր ազգային ծրագիրը: Վերջնագրէն դեռ օր մը առաջ վրաց ներկայացուցիչ ժողդանիան ամենայն պաղարինութեամբ ահա թէ ինչ կ'ըսէր Խատիսեանին, երբ սա վրդովուած վրացիներու անջատման պատճառով կըսէր. «Լաւ բան մը չէ ընկերը լքել դժբախտութեան մէջ», <sup>25\*</sup> միւսը կը պատասխանէր. «Բարի է այն միայն, ինչ որ օգտակար է ազգին, և թէ՛ եթէ դուք կը տառապէք, մենք պարտաւոր չենք ձեզի հետ միասին տառապելու, թէ Վրաստան սովոր չէ կենալու թուրքի իշխանութեան տակ, մինչ դեռ հայերը վարժուած են, և եթէ

<sup>25\*</sup> Խատիսեանի օրագրութիւն:

իսլամները կանջատուին Կովկասէն, այն ատեն Վրաստանը կը հետևի անոնց»: Այս կապարի պէս ծանր խօսքերը մէկ անգամ ընդմիջտ կը բնորոշեն մեր դրացի միակ քրիստոնեայ ժողովուրդի նկարագիրը և անոր քաղաքականութիւնը:

Թաթարները նոյնպէս վրդոված ցոյց կուտան ինք զինքնին Վրաստանի անջատման համար և հատիսեանի հարցին. «Աղբբեջան կը խորիի՞՞ զատուել»: Ռասուլ-Չատէ կը պատասխանէ. «Մենք այսպիսի մտքեր չունինք»: Թէպէտ այս շրջանում թաթարներու դէպի հայերը ցոյց տուած բարի տրամադրութիւններու անկեղծութեանը հայ պատուիրակները կը հաւտան, բայց բոլոր պարագաները նկատի ունենալով, պարզ կէրպով կը տեսնուի, որ խորամանկ դիւանագիտութիւն մըն է, որովհետև դեռևս առկախ խնդիրներ ունին կարգադրելու իրենց մէջ, ինչպէս Բագուին է, հայերու դերը շատ մեծ չափով կրնայ գործ տեսնել:

Վրաստանի անկախութիւնն յայտարարուելէն յետոյ բնականօրէն կը լուծուէր և Կովկասի Դանրապետութեան պատուիրակութիւնը, ուստի հայ պատուիրակները կը վերադառնան Թիֆլիս՝ գեկուցում տալու:

Մայիս 20-էն սկսած՝ թուրքերու վերջնագրի սպառնալիքի տակ Վրաստանի անջատումն ու անկախութիւն յայտարարելն այլևս օրուայ խնդիր էր, ուստի Դայոց Ազգային Խորհուրդն ալ յուզուած միստեր կը գումարէր, որպէսզի լաւագոյն միջոցը գտնէր հայ ժողովուրդը ազատելու գոնէ քիչ վնասով այն ահաւոր աղէտներէն, որոնց ենթակայ էր կամ դեռ պիտի լինէր:

Խօսողներու մեծամասնութիւնն իրաւամբ չհաւատալով օսմաններուն, դեռ կը պահանջէր զէնքը ձեռքին մեռնել, քան զինաթափ լինել և անատունի պէս կոտորուել: Կառաջարկուին զանազան բանաձևեր<sup>26\*</sup> Դայաստանի կացութեան մասին և հետաքրքրական է տեսնել, որ «Դայաստանի անկախութեան առաջարկը ոչ ոք չի ցանկանում»:

Չայներու մեծամասնութեամբ կընդունուի. «Ի նկատի ունենալով, որ Վրաստանի և Աղբբեջանի անկախութեան հռչակումով լուծուած է Անդրկովկասեան անկախութիւնը, Դայոց Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս իր վրայ վերցնում է կառավարչական ֆունկցիաները հայկական գաւառների նկատմամբ» (Լևոն Թումանեան):<sup>16</sup> Սակայն ասով հանդերձ մտքերը հանգիստ չեն և կան ուրիշ առաջարկներ. նաև՝ «Ներկայ մոմէնտը շատ յարմար է և պէտք է օգտուիլ մի իշխանութիւն (թաթարներու հետ) կազմելու, քանի դեռ օսմանցիները չեն առաջացել»: (Սամսոն Յարութիւնեան):

Սակայն քանի որ հայ պատուիրակներն արդէն պիտի գան՝ սպասել անոնց զեկուցումին՝ նախքան ո՛ւրեք պաշտօնական յայտարարութիւն ընելը:

Բայց նախքան բուն պատուիրակներու՝ հատիսեանի և Քաջագունիի վերադարձը եկեր էին Ս. Պապաջանեան և իր ընկերները, որոնք

վերջէն գնացեր էին Բաթում՝ կացութեան հետ ծանօթանալու համար և վերադարձեր ու 26-ին զեկուցում կուտային խորհուրդին: Բաթում եղած միջոցին տեսնուէր էին նաև գերմանական ներկայացուցիչ զօրավար Ֆօն Լօսովի հետ և խորհուրդին կը հաղորդեն անոր առաջարկները հայերու գործելակերպի մասին: Անոր առաջարկներն են.-

1. Ուղարկել մի պատուիրակութիւն Բեռլին:
2. Պոլիս մարդ չուղարկել:
3. Անջատ պայման Տաճիկներու հետ չկապել:
4. Թուրքերի օկուպացիային չխանգարել:
5. Դայաստանի անկախութիւն յայտարարել:
6. Ո՛չ մի կապ հայերի, թուրքերի և վրացիների:»

ժ.

### Գերմանիայի դիրքը հայերու հանդէպ

Ֆօն Լօսովի այս առաջարկներու էութիւնն ըմբռնելու համար հարկաւոր է հասկանալ գերմաններու բռնած դիրքը և անոնց ընթրնած քաղաքականութիւնը. ուստի յետադարձ ակնարկով մը պարզենք այս պարագան:

Երբ Տրապիզոնի բանակցութեան անյաջողութիւնէն յետոյ կսկսուէր Բաթումինը, այն ատեն բանակցութիւններուն պիտի մասնակցէին թուրքերէն զատ՝ Քառեակ զինակցութեան նաև միւս անդամները, որոնցմէ սակայն միայն գերմանները դրկեցին ներկայացուցիչ՝ զօրավար Ֆօն Լօսով: Չօրավարին տրուած էր գերման քաղաքականութեան ուղեգիծը Կովկասում, որ իրատարակուած է դոկ. 3. Լեպսիուսի «Deutschland und Armenien» դիւանագիտական թուղթերու հաւաքածուի մէջ և որ թարգմանաբար մէջ կը բերենք: Միայն ցաւալի է, որ միայն հայերուն վերաբերեալ յօդուածները մէջ բերուած են, իսկ վրացիներուն և թուրքերուն վերաբերեալները զեղչուած:

«Արտաքին գործերու պաշտօնատուն  
Թիվ 387 Բեռլին, 30 Ապրիլ 18

Ուղեգիծ Գերման լիազօրներուն Կովկասի հանրապետութեան հետ բանակցելու համար Բաթումի մէջ:

Ա. Անդրկովկասցիներու հետ բանակցելու համար նկատի ունենալու է.-

27\*

3. Պէտք է ազդել, որպէսզի հայերու համար այն շրջաններում, ուր համախմբուած բնակութիւն ունեն, տեղական ինքնավարութիւն ապահովուի վրացիներու և թաթարներու հանդէպ, նոյնպէս և Անդրկովկասի

<sup>26\*</sup> Մայիս 26:

<sup>27\*</sup> Բնագրում բաց թողուած:

մնացած մասերու մէջ ալ անոնց կատարեալ զիջում լինի իրենց եկեղեցական և մշակոյթի գործերը կարգադրելու:

Բ. Թուրքերու վերաբերմամբ նկատի ունենալու է.-

2. Պէտք է յորդորել թուրք կառավարութիւնը, որ Բրեստի հաշտութեամբ և Անդրկովկասի հետ կնքուելիք դաշինքով իրենց (թուրքերուն) անցած շրջաններում հայերու համար, ուր որ անոնք համախմբուած բնակութիւն ունեն, ապահովուի տեղական ինքնավարութիւն, և երկրի մնացած մասերում կատարեալ ազատութեան տեղի տրուի իրենց եկեղեցական ու մշակոյթի գործառնութիւնները կարգադրելու»:

Ինչպէս կը տեսնուի այս հրահանգներէն՝ դեռ Ապրիլի 30-ին Գերման դիւանագիտութիւնը ոչ մէկ տարբերութիւն կը դնէ թուրքերէն գրաւուած շրջաններու և Կովկասի միւս մասերում մնացած հայերու քաղաքական կացութեան միջև: Մէկ տեղ «հայերու տեղական ինքնավարութիւնը» կ'ուզէ ապահովել վրացիներու և թաթարներու հանդէպ, միւս տեղը՝ թուրքերու: Երկու դէպքումն ալ «եկեղեցական և մշակոյթի (կուլտուրական) կատարեալ ազատութիւն» տրուի: Ուրեմն քաղաքական ազատութեան համար ոչ մէկ խօսք: Իսկ վերը մէջ բերած Ֆօն Լօսովի առաջարկներու մէջ կայ և Հայաստանի անկախութեան խնդիր:

Գերմանները խաբուած էին իրենց զինակից թուրքերու հետ ունեցած քաղաքականութեան մէջ Կովկասում և այժմ կը փորձեն ուղղել իրենց սխալը: Այս բանը ցայտուն կերպով կը պարզուի հետևեալ վաւերագրէն, որու թարգմանութիւնը մէջ կը բերենք դարձեալ Լեպսիուսի յիշուած գրքէն:

Թիվ 392, Կ. Պոլիս, Մայիսի 15, 1918

Դեսպանէն Արտաքին գործերու պաշտօնատուն

Զօրավար Ֆօն Լօսովի հեռագիրը.-

«Թրքական չափազանց պահանջները նոյնիսկ զուտ հայկական շրջաններու՝ Ախալքալակի, Ախալցխայի և Երևանի վրայ ունի շատ հեռաւոր դիտում, այն է՝ բացարձակ տնտեսական կողոպտումն Կովկասի և կատարեալ բնաջնջումը հայերու նաև Անդրկովկասում:

Ամսոյս 13-ի երեկոյ թուրքերը Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծի յանձնումը պահանջեցին վերջնագրի ձևով՝ առանց իմ համաձայնութիւնն ստանալու կամ նախապէս ինձի տեղեկութիւն տալու: Ես բողոքեցի այս վարմունքի դէմ: Իմ՝ միջնորդ հանդիսացող առաջարկը, որու հիման վրայ անենէն կարևոր և հրատապ հարցերու սկզբունքային կարգադրութիւն մը հնար ըլլայ ձեռք բերել, հետևեալն է.-

1. Թուրքերը պէտք է Բրեստի դաշնագրութիւնն ընդունեն իբր հիմք:

2. Որպէս զի թուրքերու նահանջը տկարացուի, Ախալցխայի մահմեդական շրջանը՝ սահմանն ուղղելու ձևով՝ փոխանակուի Բաթումի հիւսիս

վրացական շրջանի և Կարսի արևելք գտնուող զուտ հայկական մասի հետ, որով Կարս ամրութիւնը կը մնայ թուրքերուն:

Խալիլի դիրքը յայտնի չէ: Առաջարկն ընդունուելուն պէս կրնայ թուրքերու գունդերու փոխադրութիւնն սկսուիլ Կարս-Ջուլֆա գծի վրայ, սակայն միայն գերմաններու ղեկավարութեամբ և երաշխիքով: Ուստի կը խնդրեմ անմիջապէս դրկել փոքրիկ յանձնախումբ (կոմիսիոն) մը ինձի հետ Թիֆլիսում երկաթուղիին վերաբերեալ գործերը մշակել, նոյնպէս և գերման ջոկատ մը (բատալիօն)՝ ստանձնելու Ալեքսանդրապոլէն մինչև Ջուլֆա հսկողութեան և կարգապահութեան ծառայութիւնը կայարաններում: Այս բանն անպայման կերպով կը պահանջեն կովկասցիները, որովհետև անոնք խիստ մեծ անվստահութիւն ունեն դէպի թուրքերը: Բացարձակօրէն կը մերժեն Կովկասեան գծի վրայ թրքական ղեկավարութիւն կամ ազդեցութիւն:

3. Գ. Եթէ Կովկասում նոր արիւնալի կռիւ մը խոյս տալ կ'ուզուի, պէտք է դեսպանը Մեծ Եպարքոսին<sup>17</sup> անմիջապէս բացատրէ. գերման բանակի գերագոյն ղեկավարութիւնը երբէք չի կրնար նպաստել Էնվերի պահանջին (վերջնագիր տալ) և ամենագոյն բողոք բառնայ՝ զինակիցներու շահերն ամենածանր կերպով վնասող թրքական այս վարմունքի դէմ»:

Թուրքերը, սակայն, այս միջոցին մէկ կողմէն՝ դժուարացուցեր էին Ֆօն Լօսովի հեռագրական հաղորդակցութիւնը Պոլսի և Բեռլինի հետ այն աստիճանի, որ նա ստիպուած հայ պատուիրակներուն կը հարցնէ, թէ կրնա՞ն իր հեռագրերը Սևաստոպոլ հասցնել, իսկ միւս կողմէն, կը պնդեն իրենց պահանջներու վրայ՝ միշտ յառաջ քշելով իրենց բանակը դէպի երկրի խորքերը:

Զօրավար Ֆօն Լօսով թէ հայ պատուիրակներու հետ իր ունեցած յաճախակի խօսակցութեամբ և թէ իր սեփական միջոցներով ձեռք բերած տեղեկութիւններով շատ ճիշտ կերպով ըմբռներ է թուրքերու բռնած քաղաքականութեան բուն նպատակը, որ հետևեալ հեռագրով կը պարզէ Պոլսի դեսպանին և Արտաքին գործերու նախարարին օգնութիւն և հրահանգ խնդրելով.-

Թիվ 395

Պոլսէն հեռագրուած 23 Մայիսի

Բեռլին ստացուած 24 Մայիսի

Արտաքին գործոց պաշտօնատուն

Զօրավար Ֆօն Լօսով կը հեռագրէ.-

Հայ վստահելի մարդոց պատուիրակութիւն մը, ինչպէս և Անդրկովկասեան պատուիրակութեան մէջ հայերու ներկայացուցիչները, որոնք միևնոյն ժամանակ կառավարութեան նախարարութեան անդամներ են, շատ անգամ խօսեցան ինձի հետ: Հայերը գերմաններէն կ'ակնկալեն փրկութիւն և օգնութիւն իրենց յուսահատ կացութեան մէջ:

Թուրք քաղաքականութեան նպատակն է, ինչպէս միշտ կը կրկնեն, մշտապէս տիրապետել հայկական շրջաններուն և բնաջնջել հայերը: Թա-

լաթի և ենվերի ասոր հակադիր խօսքերն անարժեք են: Պոլսում կիշխտ ծայրայեղորեն թշնամական ուղղութիւն մը հայերու հանդէպ: Թրքական ծրագիրը յատկօրէն աչքիս առջևն է: Վստահաբար համոզուած են, թէ Ախալցխայի թրքական շրջանը պիտի ստանան, Ախալքալակի ամբողջովին հայկական շրջանը կը փորձեն՝ իբր Ախալցխայի գաւառին վերաբերող իրողութեան քողին տակ՝ իւրացնել: Ալեքսանդրապոլ քաղաքը գրաւեր են: Դէպի Տուլֆա երկաթուղին և ասոր յարակից արևելեան կողմէն 25 կիլոմէթր լայնքով շերտ մը կ'ուզեն գրաւել, այլևս բնաւ ետ չդարձնելու պայմանով:

Գանձակի և Բագուի նահանգներու գրաւումը թուրքերը կատարեն թաթար ազգաբնակութեան հետ համաձայնելով, միևնոյն ժամանակ կը յառաջանան դէպի Բագու՝ այն տեղի մեծամասնականները<sup>18</sup> դուրս քշելու և հոն հաստատուելու: Ասկէ զատ Ախալքալակի հարաւի ճակատի վրայ գտնուած թուրք զօրքը յառաջ կը խաղայ Թիֆլիսի և Երևանի վրայ: Բանակին ընկերացող քրդական և թաթարական կամաւորները կը կողոպտեն հայ գիւղերը և կ'սպաննեն հայերը: Բոլոր այդ մարդիկ հեռացուած են: Հայ զօրքը բաղխումներու տեղիք չտալու համար, կը քաշուի դէպի արևելք: Հայ ժողովուրդը կը փախչի նոյնպէս դէպի արևելք, ուր շուտով պիտի ընդհարի թաթարներուն, որ պէտք է առաջնորդէ կոտորածի: Թուրք քաղաքականութիւնը բացայայտօրէն նպատակ ունի՝ հողամասեր սեփականելուն վերաբերեալ վերջնագրէն խոյս տալու պատրուակով կատարուած իրողութեան առջև դնել: Հայ ժողովուրդի համար ապրելու ալ տեղ չի մնար: Ասի յառաջ պիտի բերէ անջատամարտ (guerillabakring), անկարելի դարձնելով փոխարդուութիւն և յառաջ խաղացում Ալեքսանդրապոլ-Տուլֆա գծի վրայ: Ինչպէս կը գուշակեն, այս է թուրքերու դիտաւորութիւնը: Հայ ազգի, Հայոց Ազգային խորհուրդի պատուիրակութեան լիազօրները կը փնտրեն Գերմանիայի պաշտպանութիւնը, կատարեալ ջնջումի դէմ և կը խնդրեն, որ հայկական երկրամասի մնացորդն ընդունուի գերման հովանաւորութեան տակ: Ասոր վերաբերեալ պաշտօնական գրութիւնը ձեռքիս տակն է: Եթէ պէտք է արգելուի հայերու ոչնչացումը, անհրաժեշտ է անմիջական անենագրու ճնշումը Թուրքիայի վրայ: Կը թախանձեն շուտափոյթ առաքումը գերման պատերազմական նաւի, որպէսզի օրկատ մը դէպի Փօթի դրկուի, ասկէ զատ հրահանգներ հայերու պաշտօնական առաջարկին հանդէպ բռնելիք դիրքիս համար: Կը պահանջուի անմիջական գործողութիւն»:

Ահա օտար դիւանագետի աչքով դիտուած նոյն միջոցին թուրք քաղաքականութիւնը և հայերու կացութիւնը զօրավար Ֆօն Լօսովի այս հեռագրերուն գերման արտաքին գործերու նախարար Կուիլման կը պատասխանէ ընդարձակ հեռագրով մը, որով հրահանգ կուտայ Պոլսի դեսպանին՝ Բ. Դուռը հաղորդելու իրենց տեսակէտը, միևս կողմէն, նոյն հեռագիրը կը դրկէ Վիեննայի Գերման դեսպանին, հաղորդելու Աւստրիայի վարչապետին և խնդրելու, որպէսզի իրենք ալ նոյն տեսակէտը պաշտ-

պանեն Թուրքիայի հանդէպ: Վիեննայի հեռագիրը նախ կ'ընէ պատմականը զօրավար Ֆօն Լօսովի վերը մէջ բերած հեռագրերուն և յետոյ կը շարունակէ.-

Թիվ 396.  
Դեսպանին, Վիեննա  
Բեռլին, Մայիս 26, 1918

Դրութիւն արտակարգօրէն ճգնաժամային ցոյց կը տրուի: Թուրքերու աւելի յառաջ քալելը յառաջ պիտի բերէ ընդհանուր պատերազմ մը Կովկասում: Ասկէ զատ՝ վախճալու է, որ Կովկասեան քրիստոնեաները՝ մասնաւորաբար հայերը զոհ երթան թաթար ժողովուրդի և անկանոն զունդերու կատաղութեանը՝ կողոպտուին, իրենց բնակավայրերէն վտարուին և, եթէ յաջողին իրենց կեանքը փրկել, ամէն կերպով պիտի բռնաբարուին: Մենք չենք կրնար ոչ մեր ազգի և ոչ ալ աշխարհի առջև պատասխանատու մնալ, եթէ թոյլ տանք, որ Բրեստի դաշնագրի որոշումները, որոնք մեր օժանդակութեամբ գործադրուած են, ի չարը գործադրուին՝ Կովկասի քրիստոնեաները հալածելու, իբր արտօնագիր: Բաց աստի՛ թուրքերու՝ Կովկասի գրաւումի համար մեծ ուժեր խլուած կը լինեն, որոնք յատկացուած էին Թուրքիայի ամենակարևոր զինուորական ձեռնարկութիւնները՝ Միջագետք և Պաղեստին, պաշտպանելու գործողութիւնը և կորցրած շրջաններ վերագրաւելու համար:

Այս պայմաններում Բերայի (Պոլիս) կայսերական դեսպանին հաղորդուած է հետևեալ հրահանգը.-

«Թուրքերու յառաջխաղալը, որ մեր ճշմարիտ բարեկամութենէն բխող տրուած յորդորներն և զգուշացումները զլեց անցաւ Կովկասի հետ բարեկամութիւն մը հաստատելու յոյսն ոչնչացուց և Կովկասեան դաշնակցութիւնը լուծեց: Այս նոր, ծանր և ցաւալի դրութեան հանդէպ կը խնդրեն ձեր գերազանցութեանը Բ. Դրան բարեկամաբար, բայց և վճռաբար հաղորդէք բերանացի հետևեալը.-

1. Կայսերական կառավարութիւնը Կովկասում կատարուած բոլոր դէպքերու հանդէպ իրեն կը վերապահէ գործելու ազատութիւնը և մանաւանդ կը պահէ իր դիրքը Արտահանի, Կարսի և Բաթումի ներքը կամ դուրսը կատարուած այնպիսի վարմունքի վերաբերմամբ, որոնք համաձայն չեն Բրեստի դաշնագրին:

2. Կայսերական կառավարութիւնը չի կրնար թոյլատրել և ոչ ալ նպաստել թուրք զօրքի յառաջ խաղալուն և թրքական պրօպագանդին արտաքոյ յիշուած զաւառներու:

3. Կայսերական կառավարութիւնը կը ճանչնայ վրաց կառավարութիւնը փաստօրէն (de facto) կառավարութիւն և պատրաստակամութիւն կը յայտարարէ իրեն վերապահելու՝ ստանալու համար Ռուսական խորհրդային կառավարութեան հաւանութիւնը՝ սկզբունքով ճանչնալու Վրաս-

տանի անկախութիւնը: Նա կը հրաւիրտ օսմաննեան կայսերական կառավարութեան նոյնպէս վարուել և յարգել Վրաստանի սահմանները:

4. Կայսերական կառավարութիւնը կը խնդրէ օսմաննեան կայսերական կառավարութեանը յարմար վարուելակերպ մը հաստատել թուրքերու գրաւած շրջաններում՝ հայերու համար: Իրեն կը վերապահէ ասոր վերաբերեալ մանրամասն առաջարկներ ընելը:

5. Կայսերական կառավարութիւնն ուշադրութիւնը կը հրաւիրտ օսմն. կայսերական կառավարութեան այն բանի վրայ, որ Թուրքիայի և Գերմանիայի միջև գոյութիւն ունեցող քաղաքական դաշնագրի զօրութեամբ ոչ մէկ պահանջ կրնայ դնել՝ պաշտպանելու կամ այնպիսի զինուորական կամ դիւանագիտական գործողութիւններու համար, որոնք, առանց մեր համաձայնութեան կամ մինչև իսկ հակառակ մեր խորհուրդին, կը կատարէ: Կայսերական կառավարութիւնը կը մերժէ ամէն պատասխանատուութիւն այս տեսակ իր բռունցքի ուժով գործ դրուած ամէն ձեռնարկութեան համար և պէտք է իրեն՝ Թուրքիային վերաբերեն անոր հետևանքները: Եթէ ուժերու կամայական վատնումով Թուրքիայի ամբողջական դրութիւնն աւելի վատթարանայ և դաշնագրութեան համապատասխան նպատակին հասնելը վտանգի ենթարկուի, այն ատեն Թուրքիան եղածովն ալ պիտի գոհանայ, որովհետև մենք անոր հանդէպ մեր քաղաքական հաշուի (kontos) վրայ աւելի ծանրաբեռնում չենք կրնար թոյլ տալ: Նոյնքան և նուազ կերպով կրնանք Թուրքիան պաշտպանել, իբր Կովկասի քրիստոնեայ ազգաբնակչութեան դէմ Թուրքիայի կողմէն ծայրայեղութիւններ գործադրուին»:

Մեր զինուորական գերագոյն մարմինն ալ սկսեր է համապատասխան քայլեր առնել թրքական բանակի ղեկավար մարմնի մօտ:

Արդ քանի որ յապաղումը վնասակար է, կարելի չեղաւ, որ մենք նախապէս Աւստրո-Յունգարական կառավարութեան հետ համաձայնութեան գայինք: Գրաֆ Բուրիանիին, սակայն, մասնաւորաբար շնորհակալ պիտի ըլլայի, եթէ կոմիսար Մարկ գրաֆ Պալլավիչիին ամենաարագ կերպով պատուիրել նոյն բացատրութիւնը տալու, ինչ որ պէտք է կատարէ գրաֆ Բերնսդորֆ, որպէս զի Թուրք կառավարութիւնն ինքզինք տեսնէ երկու դաշնակից մեծ պետութիւններու միասնական ձեռնարկութեան հանդէպ և չփորձէ մէկը միւսի դէմ շահագործել:

Գրաֆ Բուրիանիի հեռագրական շուտափոյժ պատասխանին կ'սպասեն:

Kuhlmann.

Գերման դիւանագիտութեան այս խորհրդատու և միանգամայն սպառնական ընթացքին համապատասխան է նաև զինուորական գերագոյն մարմինը և նոյն ժամուն Գերման երկու հերոս զօրավարներ՝ Լյուդեմիլորֆ և Յինդենբուրգ զատ զատ հեռագրերով դիմեր են Էնվեր փա-

շային: Վաւերաթղթերու ամբողջութեան և դրութեան լուսաբանութեան համար մէջ բերենք և այս հեռագրերու թարգմանութիւնը.-

Թիվ 399  
Յունիս 8, 1918

Թուրքիան, առանց ո՛ր և է կերպով նկատի ունենալու իր զինակիցները՝ Բրեստում կնքուած դաշնագրութեան Անդրկովկասին վերաբերեալ մասը, ոտնակոխ ընելով անցաւ: Գերման կառավարութիւնը արդէն բողոքեր է ասոր դէմ, և այսպիսի բողոքի մը հետևանքներու վրայ մատնանշեր է: Ես կը փափաքէի զանց չընել ձեր գերագանցութիւնը վստահացնելու, թէ ես կատարելապէս համաձայն եմ Գերման կառավարութեան հետ:

Չօրավար Ֆօն Լօսոֆ Փօթի-Թիֆլիս-Ալէքսանդրապոլ երկաթուղիի գծի պաշտպանութիւնը կազմեր է Գերման ջոկատէ՝ ոչ միայն լոկ Գերման շահուն համար, այլև Ջուլֆայի ուղղութեամբ թրքական գործողութեան օգտին: Այս երկաթուղիի պահակները Գերման զինուոր են, և ես կը բողոքեմ, որ անոնք Գ. բանակի հրամանատարի կողմէն համապատասխան կերպով յարգուած չեն եղեր:

Անգամ մ'ալ կը խնդրեմ ձեր գերագանցութեանը, յարգելու Բրեստի դաշնագրութեան սահմանները, հակառակ պարագային ինձի պէտք է վերապահեմ նոր որոշումները տալու ազատութիւնը:

Այն դաշնագրերը, որոնք կնքուեր են՝ զանց ընելով Գերմանիան, Աւստրո-Յունգարիան և Բուլգարիան՝ Թուրքիայի և Անդրկովկասի պետութիւններու միջև, այժմէն իսկ չեն կրնար ընդունիլ:

Ինչպէս ծանօթ է ձեր գերագանցութեան, ես միշտ ձեր շահերն ու փափաքները ջերմօրէն պաշտպաներ եմ: Պէտք է ձեր գերագանցութեան առջև պարզ ու որոշ արտայայտուեմ, որ ոչ միայն առաջիկայի համար չեմ կրնար, այլ այժմ իսկ Թուրքիայի՝ դաշնագրութեան հակառակ ընթացքը բացարձակօրէն անհնար պիտի դարձնէր ձեր գերագանցութեան հետ ո՛ր և է միասնական քայլ կատարելը:

Ludendorff 0  
Յունիս 9, 1918

(Էնվեր փաշային)

Բանակի գերագոյն հրամանատարի անունով կը խնդրեմ ձեր գերագանցութեան՝ կարգադրել.-

որ թրքական բոլոր զինուորները ետ քաշին բացի Կարսի, Արտահանի և Բաթումի գաւառներէն՝ Կովկասի շրջաններէն:

Hindenburg

Գերման դիւանագիտութեան այս փաստաթղթերը նոր լոյս մը կը սփռեն Կովկասի վիճակի և հոն բնակող ժողովուրդներու փոխադարձ յարաբերութիւններու վրայ և այն մշուշը, որով Կովկասի նոյն ատենուն գործերը պատուած էին, կը փարատի և դէմքերն ու դէպքերը պայծառ կը տեսնուին: Այսպէս, նախ կը պարզուի, որ Գերման դիւանագիտութիւնը



հայերու անկախութեան մասին նախապէս բնաւ ալ մտածած չէ և ամէնէն շատը, որ պաշտօնապէս հաղորդուած է իրենց ներկայացուցիչներուն, Վրաստանի, թաթարներու, նոյնպէս և թուրքերէն նոր գրաւուած շրջաններու մէջ ապահովուի անոնց ներքին ինքնավարութիւնը: Իսկ հոս ու հոն գտնուածներուն ազատութիւն տրուի իրենց եկեղեցական գործերու և մշակոյթի զարգացման, ուրեմն երկրային ոչ մէկ որոշում կամ պետական կազմակերպութիւն: Ասկէ կը հետևի, որ զօրավար Ֆօն Լօսովի հայերին ըրած վերը յիշուած առաջարկները, որոնց մէջն էին Յայաստանի անկախութեան և Բեռլին պատուիրակութիւն ղրկելը նոր քաղաքականութեան մը սկզբնաւորութիւնն է և որու հեղինակը կը թուի, թէ նոյն ինքն Ֆօն Լօսովն է: Բայց զօրավարն, գիտնալով իր կառավարութեան տրամադրութիւնը մեր պատուիրակներու հետ խօսած միջոցին, քանիցս կը կրկնէ, թէ ուղղակի կայսեր պիտի դիմեն՝ յուսալով, թէ պիտի յաջողի Վիլհելմի՝ յայտնի հայատեաց տրամադրութիւնը փոխել տալ և իր ծրագիրը յաջողցնել: Այս տրամադրութիւնն ունի ուրեմն Գերման դիւանագիտութիւնը՝ թուրքերէն նոր գրաւուած գաւառներու և Կովկասի ընդհանուր հայութեան նկատմամբ, իսկ ի՞նչ կը խորհի նա բուն թրքահայութեան մասին: Այս կէտն պարզօր պաշտօնագիր մ'ալ ունինք նոյն հաւաքածուի մէջ հրատարակուած.-

Թիվ 372

«Արտաքին գործերու պաշտօնատուն  
Բեռլին, մարտ 2, 1918

Գերման դեսպանին, Բերա

Ապագային արևմտեան պետութիւններու հետ հաշտութեան դաշն կնքած միջոցին, անոնք անտարակոյս խօսքի միւթ պիտի դարձնեն և պիտի աշխատեն ըստ կարելոյն լայն ինքնավարութիւն ընդունել տալ Արևելեան Անատօլիի կուսակալութիւններու մէջ: Այսպիսի փորձի մը հանդէպ Թուրքիայի դրութիւնը արելի նպաստաւոր պիտի լինի, եթէ նախքան բանակցութեան մտնելը նա տայ շօշափելի ապացոյցներ, թէ ինքը վճռեր է այս նահանգներու քրիստոնեայ, ինչպէս և իսլամ ազգաբնակչութեան հետ համաչափ, մեղմ և արդար վարմունք մը հաստատել և պատերազմի դէպքերու պատճառով արուածները վերաշինելու համար անոնց օգնել:

Նուաճուած շրջաններու վերագրաւումը անսպասելի կերպով արագ կը կատարուի: Վերջին տեղեկութիւններու համեմատ շուտով պիտի գրաւուի նաև Էրզրում: Այս կատարուելուն պէս՝ արդէն ժամանակն եկած պէտք է համարել յորդորելու դեռևս զինուած հայերը, որպէս զի հպատակուին և այս դէպքում անոնց համար ապահովուի անպատիժ մնալը և ազատօրէն իրենց բնակավայրեր վերադարձը: Բացի անկէ, որ այս կերպով նոր և թերևս արելի դժուար կոչուներ խոյս կը տրուի, այսպիսով կրնայ սկիզբ մը դրուած լինել, որ այն տեղի հայերը, որոնք այս նահանգներու անհրաժեշտ թանկագին ազգաբնակչութեան տարրը կը կազմեն, վերստին Թուրքիայի խաղաղ հպատակները կը դառնան: Ասկէ զատ՝ նախագծուած

տնտեսական նպաստները գիւղերը վերաշինելու և նոյն կուսակալութիւններու տնտեսական վերականգնումը պէտք է միաժամանակ օգտակար լինի քրիստոնեաներուն և իսլամներուն: Դարձեալ պիտի յանձնարարուի պետութեան ներսերն աքսորուած հայերու վերադարձն ալ նկատի ունենալ»:

Յեռագիրն յետոյ կ'առաջարկէ թոյլութիւն ստանալ գերման միսիոնարներու համար Թուրքիայ երթալ և տեղին վրայ օգնել խեղճերուն՝ «առանց կրօնի խտրութեան»:

Կը յանձնարարէ նաև Սև ծովի իզմիրաբնակ աքսորուած յոյներն ալ իրենց տեղերը վերադարձուիլ: Եւ վերջը կ'աւելցնէ.-

Կը խնդրեն ձեր գերազանցութեանը Մեծ Եպարքոսի, արտաքին գործերու նախարարի, նոյնպէս և էնվեր փաշայի հետ խօսակցութեան ընթացքին այս գաղափարներն զարգացնել, աշխատէք և ձեր ստացած տպաւորութիւնները հաղորդէք:

V. I. Bussche

Ահա այն բոլորը ինչ-որ գերման դիւանագիտութիւնը մինչև 1918 Մայիս 25 (Ֆօն Լօսովի առաջարկը) կը խօսիէր Կովկասի և Թուրքիայի հայութեան մասին: Ոչ մէկ ակնարկութիւն անգամ «Յայաստանի» մը և «անկախութեան» մասին: Մէկի համար «ներքին ինքնավարութիւն», իսկ միւսին «խաղաղ հպատակներ Թուրքիայի»:

Երկրորդ՝ այս փաստաթուղթերէն կը տեսնուի, որ վրաց և գերմաներու միջև վաղուց արդէն հաստատուած դաշինք մը կայ Վրաստանի անկախութեան համար, ինչպէս արդէն տեսանք: Եւ եթէ վերը մէջ բերած Թիվ 387 վաւերաթուղթի Վրաստանին վերաբերեալ մասն ալ հրատարակուած լինէր, չէն տարակուսեր, թէ հոն իրենց քաղաքական «ուղեգծի» մէջ պարզուած պիտի լինէր և այս մասը: Արտաքին գործերու նախարարը կը յայտարարէ, թէ փաստօրէն կը ճանչնայ Վրաստանի անկախութիւնը, կը խոստանայ նաև խորհրդային Ռուսաստանին ալ ընդունել տալ նոյն անկախութիւնը և կը յանձնարարէ նոյնն ընել, այսինքն ինքն ալ ճանչնալ Վրաստանի անկախութիւնը և յարգել անոր սահմանները, որը պաշտպանելու համար Գերման զինուորներէ պահակ ջոկատներ կը նշանակէ: Ուրեմն վրացիներու Կովկասի Յանրապետութեան մէջ մնալը լոկ առ ժամեայ երևոյթ մըն էր և յարմար թուի կ'սպասէին արդէն ճշտուած ծրագրի համեմատ վարուելու: Դիւանագիտօրէն խորհելով չէին փափաքեր, որ հանրապետութեան լուծողը իրենք լինէին:

Երրորդն է թուրք-թաթար յարաբերութեան խնդիրը, որ առանց գերման պաշտօնական այս թուղթերու շատ որոշ չէր: Այս ալ կը պարզուի այն տեսակէտէ, որ անոնք ալ նախապէս ամէն բան նախագծեր և իրենց ընդհանուր նպատակի վրայ կատարեալ համաձայնութիւն կնքեր են: Այս նպատակն էր ամբողջ Կովկասի և հիւսիսային Պարսկաստանի նուաճումն: Ուր Վրաստան՝ Գերման պաշտպանութեամբ թերևս պահէր իր անկախութիւնը,

իսկ հայերու համար նախատեսուած էր միայն մեռնելու իրաւունք: Թաթարներու բարեկամական վերաբերումը դէպի հայերը և անոնց իբր թուրքերու քով հայերու օգտին կատարած միջնորդութիւնը լոկ դիւանագիտական խաղեր էին ալ արեւի սքողելու իրենց բուն նպատակը և քննադատելու այնքան դիւրահաւան հայ դիւանագետները: Ասոր արդիւնք են Ալ. Խատիսեանի օրագրի այն խօսքերը վրացիներու զատուելէն յետոյ, իբր թէ թաթարներն արեւի մօտիկ են մեզի, քան վրացիները: Թուրք ցեղին յատուկ խորամանկութիւն է՝ արեւի սիրալիր և շողջորթ լինել ճիշտ այն ատեն, երբ թոյնի բաժակը ձեզ կը ներկայացնէ կամ դաւաճանի դաշոյնը ձեր կտործը պիտի խրէ:

Չորրորդն է Գերման-թուրք յարաբերութիւնը: Եթէ դեռ Մարտ 2-ի պաշտօնական գրութեան արտայայտութեան մեղմ ու խնդրական ոճը համեմատենք միւս գրութիւններու արտայայտութեան հետ, մէկ անգամէն կը պարզուի, թէ յարաբերութիւնը փոխուած է: Գերմանիան իր կայսրով, որ ամէն ազատութիւն տուեր էր Թուրքիային իբր թէ իր ներքին գործերը կարգադրելու, դեռ միշտ կը յուսար իր թևի տակ պահել այս անպաշտպանելի պաշտպանեալը: Բայց մեծ եղաւ Գերմաններու զարմանքը, երբ Բրեստի դաշնագրով Թուրքերն Կովկաս մտան: Այժմ վերահասու եղան գերմանները, թէ խաբուած են իրենց ակնկալութիւններու մէջ և թէ թուրքերն իրենց սեփական ազգային մեծ ծրագիրն ունեն և այն իրագործելու համար, երբ արդէն ժամանակն եկած կը համարէին, ոչ ոքի կարևորութիւն կուտային: Այժմ այլևս զուր էին Կուիլմանի, հօգօր Լյուդեմոլդօրֆի և մինչև իսկ հերոս Յինդենբուրգի բարեկամական յորդորներն ու խորհուրդները և ոչ իսկ նոյն ատեն ահեղ Գերմանիայի սպառնալիքները: Թուրքը խելայեղ իր ձեռք բերած յաջողութիւններէն խօսարշաւ կը յառաջանար Բագու և Թաւրիզ: Կասպից ծովու ափին արդէն կը ծածանէր կիսալուսինը և Նոր Ալեքսանդր-Էնվեր կ'երագեր նոյն դրօշը բարձրացնել շուտով նաև իր նախատիպ Լենկեփնուրի քաղաքներուն՝ Թաշքենդ ու Սամարղանդ և իր զէնքերը լուալ սրբազան Գանգեսի ջրերով: Բայց... ապագան՝ պատմութեան արդար դատաստանն ուրիշ վճիռ վերապահած էր ամէն չափ ու սահման անցնող անպարտաւան Թուրքիայէն... այսինքն այն, ինչ որ կը կատարուի այժմ մեր աչքերուն առջև:

Բայց մենք վերադառնանք մեր բուն նիւթին:

Հայոց Ազգային Խորհուրդի 26-ի նիստում «Հայաստանի անկախութեան» գաղափարը մերժելէն յետոյ 28-ին կը մերժուի նաև Թուրքիայի առաջարկած վերջնագիրն ալ և [կառաջարկուի] սպասել հայ պատուիրակներ Ալ. Խատիսեանի և Քաջագունիի գալու: 29-ին կը հասնին և անոնք, որոնք կուտան իրենց գեկուցումը և փոքրագոյն չարիքը կը համարեն վերջնագիրն ընդունելը<sup>19</sup>:

Մայիս 29-ին Հայոց Ազգային Խորհուրդը կորոշէ ստորագրել վերջնագիրը և նոր պատուիրակութիւն ընտրել Բաթում երթալու՝ այս անգամ Հայոց Ազգային Խորհուրդի կողմէն: Երկու նախկին պատուիրակներուն

կընկերանայ նաև Մ. Պապաջանեան, որոնք նոյն երեկոյ կը մեկնէին Բաթում: Իսկ Հայոց Ազգային Խորհուրդը «Կոչ» մը կը հրատարակէր հայ ժողովուրդին հաղորդելու քաղաքական կացութիւնը: Հոն ըսուած է.- «Անդրկովկասեան քաղաքական ամբողջութեան լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ Հայոց Ազգային Խորհուրդը իրան յայտարարում է հայկական գաւառների գերագոյն և միակ իշխանութիւնը, որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերում կազմել հայոց ազգային կառավարութիւն: Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարութեան բոլոր ֆունկցիաները հայկական գաւառների քաղաքական վարչական ղեկը վարելու համար»:

Այս բանաձևը թէպէտ մեծամասնութեամբ կընդունուէր, բայց դեռ թերահաւատներ շատ կային մինչև իսկ մտածողներ, «որ մենք անկախութիւն չենք ուզում, այլ մտնում ենք Ադրբեջանի հայատակութեան մէջ»: Այսքան թոյլ ու յուսահատական եղեր է ազատ Հայաստան ունենալու և անկախ ապրելու ոգին ու ձգտումը:

Բաթում զնացող մեր պատուիրակները սակայն ուրիշ իրակացութեան առջև կը գտնուէին:

Հոն հասնելով՝ հայ պատուիրակութիւնը նոյն օրը՝ Մայիս 30 թուակիր նամակով մը կը դիմէր Օսմանեան պատուիրակութեան նախագահ Խալիլ պէյին, որով կառաջարկէր անջատ բանակցութիւն վերսկսել Հայոց Ազգային Խորհուրդի անունով, որ ինքզինք յայտարարէր էր գերագոյն իշխանութիւն:<sup>1\* 20</sup>

Օսմանեան պատուիրակութեան նախագահը դեռ Մայիս 27-ին Խատիսեանի և Քաջագունիի հետ ունեցած տեսակցութեան մէջ յայտարարէր էր. «Ազգային Խորհուրդին ինքը չի դիմեր և չի ալ կրնար դիմել, քանի որ չի ճանչնար այսպիսի մարմին մը (օրգան)»: Եւ յետոյ արեւցուցեր «Թուրքիան բնաւ դէմ չէ առանձին հայկական պետութեան մը կազմուելուն Կովկասի սահմաններում՝ օսմանեան գրաւուած գաւառներէն դուրս մնացած մասերում»: Ուստի պարզ էր, որ հայ պատուիրակները կրնային միայն անկախ պետութեան մը անունով ստորագրել Թուրքիայի վերջնագրի պահանջները:<sup>29</sup> \* Եւ հայ պատուիրակութեան նախագահ Խատիսեան Հայոց Ազգային Խորհուրդի նախագահ Ահարոնեանին Յունիս 2-ին գրած նամակում կը հաղորդէր. «Մենք ստորագրեցինք դաշնագիրը Հայաստանի անկախ հանրապետութեան անունովը: Այլապէս անիմաստ բան է: Ըստ այսմ մենք բոլորս կընդունենք, թէ այս գործողութիւնը (ակտ) պէտք է կատարել: Կարելի չէ խօսել ինչ որ «հայկական գաւառներու» մասին. կարծէք մենք ինչ որ ձևագուրկ բեկոր մըն ենք անտէր և անանուն»:

<sup>1\*</sup> La Delegation de l'Arménie, munie des pleins – pouvoirs du Conseil National Arme'nien, le quel s'est de'clare' l'organ du pouvoir supr'e'me.<sup>19</sup>

<sup>29\*</sup> Հայկական պատուիրակութեան տեղեկագիրը, 27:

Այս նախնական համաձայնությունն յետոյ Յունիս 4-ին կատորագրուի հաշտության դաշնագրութիւնը, իսկ հետեւեալ օրը պաշտօնական փոխանակութիւն և գործողութեան տեղեկագրի ստորագրութիւնը: Այս հանդիսաւոր արարողութեան ատեն ներկայ էին օսմանեան պատւիրակութեան ամբողջ կազմը և Կովկասի ճակատի օսմ. բանակի ընդհանուր հրամանատար Վեհիբ փաշան, իսկ հայերու կողմէն՝ նախագահ Ալ. Խատիսեան, Ռ. Քաջազունի և Մ. Պապաջանեան: Այս պատմական վաւերաթուղթը (ֆրանսերէն) կսկսի այսպէս. «Անդրկովկասի Հանրապետութեան լուծուելու հետևանքով՝ օսմանեան կայսերական պատւիրակութիւնը, որ Կովկաս դրկուած էր բանակցելու հաշտութեան մասին յիշուած հանրապետութեան հետ, և Հայաստանի Ազգային Խորհուրդի պատւիրակութիւնը սկսան բանակցութիւններ Բաթումի մէջ՝ նպատակ ունենալով հաշտութեան և բարեկամութեան դաշն կնքելու օսմանեան կայսրութեան և Հայաստանի հանրապետութեան միջև:

Լիակատար նիստը տեղի ունեցաւ cercle-ի սրահում Յունիս 4-ին 1918 թ-ին Խալիլ պէյի նախագահութեամբ:

Խալիլի ճառը.- Պարոն պատւիրակներ: Այսօր մենք մեր ստորագրութիւնը կը դնենք սկզբնական (initial) գործի մը տակ, որ միջազգային ընկերութեան մէջ կ'որոշէ տեղ մը հայկական հանրապետութեան համար, որ կը ճանչնայ Հայաստանի գոյութիւնն ու անկախութիւնը՝ Կովկասում նոր կազմուած պետութիւններու մէջ...:

Չեմ ուզեր բնաւ կանգ առնել վերոյիշելու պայքարի այն ողբալի փուլերը, որոնք կատարուեցան մեր և հայերու միջև:

Կը փափաքեմ միայն հոս նկատել, որ վերջին ռուպէին օսմանեան կայսերական կառավարութիւնը մեծ վճռականութեամբ տիրեց իր զգացումներուն և ինծի յանձնարարեց ստորագրել վաւերագիր մը, որ կը ճանչնայ հայ կառավարութեան մը գոյութիւնը:

Կը սիրեմ հաւատալ, որ հայ ազգը կըմբռնէ Օսմանեան կայսերական կառավարութեան այս որոշումի ամբողջ կարևորութիւնը և յուսալի է, որ այս օրը նոր համաձայնութեան դարագլուխ մը կը բանայ ձեր և մեր ժողովուրդներու համար»:

Այս ճառին կը պատասխանէ հայ պատւիրակութեան նախագահը.-

«Հայաստան, որու անունով խօսելու պատիւն ունե՛մ, երկար տարիներէ հետէ շատ զոհողութիւններ յանձն առեր է ազգային գոյութեան իրաւունքը ձեռք բերելու համար: Այսօր նա ստացաւ պաշտօնապէս և անկախ պետութիւններու ընտանիքի մէջ մտաւ: Այս մեծ օրը հանդիսաւոր թւական մըն է հայերու պատմութեան մէջ: Թեպէտ նոր պետութեան երկիրը մեծ ալ չի՛նի, հայ ազգի սէրը դէպի ազատութիւն և դէպի մշակոյթը, աշխատելու ընդունակութիւնն անոր համար պիտի ապահովեն, կը յուսամ, արժանաւոր տեղ մը դրացի պետութիւններու շարքում»...:

Նախագահի առաջարկութեամբ կ'սկսեն ստորագրել բանակցութեան արդիւնք եղած գրութիւնները:

Սէկ դաշնագիր հաշտութեան և բարեկամութեան, յարակից երեք լրացուցիչներով:

Սէկ յաւելուածական դաշնագրութիւն, լրացուցիչ վաւերաթղթով մը:

Սէկ պայմանագիր՝ Անդրկովկասի երկաթուղիներուն վերաբերեալ նիւթերը բաշխելու շահակից պետութիւններու միջև:

Կրկին օրինակներ պատրաստուած և փոխանակուած:

Նիստը փակուեցաւ ժ. 6-ին:

Ձօրավար Ֆօն Լօսովէն յետոյ օսմանեան պատւիրակութեան նախագահ Խալիլ պէյը և Վեհիբ փաշան առաջին անգամ կը խօսէին Հայաստանի անկախութեան մասին և կը յայտարարէին, թէ օսմանեան կառավարութիւնը հակառակ չէ, եթէ Կովկասում Հայաստանի մնացած հողամասի վրայ կազմուի հայ պետութիւն մը: Մեր պատմութեան ուշադրութեամբ հետևող մը իսկոյն վերահասու կրնայ լինել, թէ այս սովորական երևոյթ մը չէ: Սէկ ծայրայեղութիւնէն միւսին անցնել ըսել է, ուստի պատմութեան պարտականութիւնն է պարզել այս փոփոխութեան պատճառը:<sup>30\*</sup>

ԺԱ.

Հայ-թրքական յարաբերութիւնները

Մեր գործի ծաւալէն դուրս լինելով ընդհանրապէս խօսել հայ-թրքական յարաբերութիւններու մասին, որ ինքնին արդէն ընդարձակ ու կարևոր նիւթ մըն է, մենք մասնաւորեմք խնդիրը միայն 1918-ի սկիզբնու ամիսներու վրայ:

Մեր ձեռքի տակ ունեցած փաստաթուղթերէն տեսանք, թէ Տրապիզոնի օսմանեան պատւիրակութիւնը լսել անգամ չէր ուզեր հայերու մասին և պատւիրակութեան նախագահին իր բացման ճառի մէջ հայ անունն անգամ չի տար և կը յայտարարէին՝ ուր հասնի թուրք զինուորը, հոն ալ

<sup>30\*</sup> Ծթ. Ազգային Խորհուրդի արձանագրութեամբ, ինչպէս և պատւիրակներու զեկոյցներով ու նամակներով և այս բոլոր վաւերաթղթերով կը հաստատուի, թէ «Անկախ Հայաստանի և Հայաստանի Հանրապետութեան» մասին պաշտօնական ոչ մէկ յայտարարութիւն և գործողութիւն կատարուած է Յունիսի 1-էն առաջ: Ընդհակառակն, Ազգային Խորհուրդի արձանագրութիւնները կը հաստատեն, որ մինչև Յունիս 1 բոլոր ժողովականներու կողմէն միաձայն մերժուած է Հայաստանի անկախութիւնը և մինչև իսկ զնտուեր են նախընտրողներ Ադրբեջանեան հպատակ դառնալ: Ինչպէս տեսանք Ալ. Խատիսեան առաջին անգամ Յունիս 2-ին կը խօսի «Անկախ Հայաստանի հանրապետութեան» անունով, իսկ Յունիս 4-ին կատորագրուի «Հայաստանի անկախ հանրապետութեան» դաշնագիրը: Ուստի միանգամայն ոչ պատմական է Մայիսի 28 ընդունել իբր Հայաստանի անկախութեան թուականը:

հայ չի կրնար գոյութիւն ունենալ: Թիֆլիսի Գերման ներկայացուցիչ ցոյց տուէր էր Հայոց Ազգային հորհուրդի նախագահին փաստաթղթեր, որոնք կը հաստատեն, թէ թուրքերը վճռէր են հայերը ջնջել նաև Կովկասում: Մենք տեսանք նոյնպէս, որ զօրավար Ֆօն Լօսով պաշտօնապէս կը հաղորդէ իր կառավարութեան, թէ թուրքերու ծրագիրն է ոչնչացնել հայերը: Ես դեռ չեմ խօսեր հայերու վկայութիւններու մասին: Բայց անգամ մը նկատի ունենանք նոյն ինքն հալիլ պէլի դէպի հայեր տածած տրամադրութիւնը Մայիս սկզբին և Մայիս 27-ին, երբ արդէն կը խօսի հայ պետութեան մը վրայ:

Մայիս 13-ին Խատիսեան և Քաջագունի մասնաւոր տեսակցութիւն կուսնեան հալիլ պէլի և Վեհիբ փաշայի հետ, ուր հալիլ կըսէ. «Անշուշտ այս պահանջները (հայ հողամասերու գրաւումը) սոսկալի են: Բայց հայերու վարմունքը երևանի և Բագուի օսահանգներում կ'ստիպէ մեզ հաշուէյարդարութեան (լիկուիտացիայի) ենթարկել հայերու պոզեցութիւնը և անոնց ունեցած մասնակցութիւնը Անդրկովկասեան կառավարութեան ճակատագրի մէջ և երիտասարդ թուրքերի կոմիտէի վերջին որոշումն է այս և զլխաւորը հայ ազգի զեղծման<sup>21</sup> է և այն գիտակցութիւնը, թէ այս պատերազմում հայերն ալ ռուսներու հետ միասին ջարդուած են:

Մայիս 19-ին Թիֆլիսէն եկած նոր հայ ներկայացուցիչներ՝ Մ. Պապաջանեան և իր ընկերները ունկնդրութեան կ'ընդունուին հալիլ պէլի մօտ և Խատիսեան իր յուշագրութեան մէջ կը գրէ. «Անոնք շատ դժգոհ էին անոր ընդունելութիւնէն: Նա ուղղակի ցուցադիր է [եղել], թէ հայերը պարտուած են և պէտք է հպատակուեն: Անոնք այն տպաւորութիւնը բերին, թէ հայերու գործը շատ վատ է»<sup>22</sup>: Պատուիրակութեան մէկ ուրիշ անդամը կը հաղորդէր, թէ ընդունելութիւնը ուղղակի զգուելի էր: Նոյն գէշ ունկնդրութեան և սպառնական խօսակցութեան մասին կը խօսի նաև Մ. Պապաջանեան Հայոց Ազգային հորհուրդին իր տուած զեկոյցի մէջ:

Այսպէս, ուրեմն, թուրքերու տրամադրութիւնը սոսկալի թշնամական էր հայերու հանդէպ մինչև Մայիսի վերջին օրերը և յանկարծ նոր յեղաշրջում [մը] կը կատարուի անոնց տրամադրութեան մէջ: Մայիսի 27-ին հալիլն ու Վեհիբ կը հրաւիրեն Խատիսեանն ու Քաջագունին իրենց մօտ և շատ բարեկամաբար կը խօսեն անոնց հետ: Վեհիբ մանրամասն տեղեկութիւն կուտայ Ալէքսանդրապոլի վիճակի մասին, թէ «ինքը հալիլ շատ լաւ կը հասկնայ հայերու և Հայաստանի վիճակը, բայց այս դաշնագիրը ստորագրելէն յետոյ կը յուսամ, թէ հայերն ու թուրքերը պիտի համաձայնեն հողային հարցի վրայ, թէ թուրքերու մէջն ալ կան հայերու բարեկամներ, որոնք պիտի նպաստեն հայերու գործերուն»: Խատիսեանին կը խնդրէ հաղորդել Հայոց Ազգային հորհուրդին, թէ թուրքերը դէմ չեն Հայաստանի մը կազմուելուն Կովկասի սահմաններում<sup>23</sup>: Յետոյ Վեհիբ կ'ըսէ. «Հայ զօրքը հիանալի է կռուել. մօտ ապագայում կարող էք եւրոպական լաւ զօրք ունենալ: Ըստ Շէֆթէ փաշայի տեղեկութեան՝ նա նման կռիւ չէ տեսել տաճկական ոչ մէկ զօրաճակատում, չնայած մեր ուժերին (10000 կանոնաւոր զօրք բացի հրոսաբերը.<sup>24</sup> հայերը՝ 7000) ու տեխնի-

քական առաւելութիւններին՝ չորս օր տեւեց: Այդ կռիւը զանազան խորհրդակցութիւնների միւթ է դառնում, որ Կովկասում դուք բռնելու էք Բուլ-գարիայի տեղը»: Եւ մէկէ աւելի անգամներ կառաջարկէ հայերու հետ զինուորական պայմանագրութիւն կնքել: Վեհիբ բնաւ չի խօսեր Սարդարապատի կռիւի մասին, ուր թուրք զօրքը ջարդուած կորագլուխ փախած էր: Այս այն փաշան է, որ Մայիսի 13-ի տեսակցութեան միջոցին Ալէքսանդրապոլ-Ձուլֆա զիծը գրաւելու համար կառաջարկէ բարեկամաբար թոյլ տալ և դիմադրութիւն չընել. որովհետև անօգուտ է, դուք ուժ չունիք և հպարտութեամբ կը յայտարարէր. «Եթէ ես նպատակ ունենայի գրաւել զօրքով երևանի նահանգը, բնաւ պէտք չունէի դիմել խաբէութեան, քանի որ կրնայի յայտնապէս նոյնը կատարել ուզած րոպէին, չվախնալով, թէ պիտի հանդիպէի ուէ լուրջ դիմադրութեան... Ձեր մերժումը կը բարդէ ու կը դժուարացնէ միայն խնդիրը, բայց չի կանգնեցնէր իմ որոշումը, որովհետև եթէ դուք չհամաձայնէք յօժարական թոյլ տալ մեր զօրքի փոխադրութիւնը, այն ատեն պիտի կատարեմ ուժով, եթէ չտաք երկաթուղին, մենք կ'անցնենք հանդիսաւոր զօրանցքով»:

Ալ. Խատիսեան՝ Յունիս 2-ին Ահարոնեանին գրած նամակով կը հաղորդէ Վեհիբի հետ ունեցած տեսակցութիւնէն հետեւեալը. «Ես այսօր եղայ Վեհիբի մօտ, իսկապէս նա կը վճռէ խնդիրները և ոչ թէ հալիլ և մենք շատ լուրջ խօսակցութիւն ունեցանք Թուրքիայի և Հայաստանի ապագայ յարաբերութեան մասին, ինչպէս որ թուրքերը կ'երևակայեն: Նա վճռաբար յայտարարեց, թէ հայ պետութեան (թէպէտ և փոքր) կազմութեան համար համաձայնութիւն տալը Թուրքիայի կողմէն դարձակէտ մըն է Թուրքիայի պատմութեան մէջ, թէ այս առաջին քայլն է հաշտուելու հայերու հետ և թէ ասկէ յետոյ շատ դիւրին պիտի լինի լուծել կարգ մը հայկական հարցեր: Անոնց այս (բարի) տրամադրութեանը նպաստէր է. ա) հայերու քաղաքականութեան յստակութիւնը նախապէս թշնամական, այժմ հաշտարար, բ) համաձայնելը (իրենց պայմաններուն) և խաղաղ համաձայնութիւն Ադրբեջանի հետ, գ) որոշ պատասխան վերջնագրի ժամանակ, դ) հայերու հերոսութիւնը հայրենիքը պաշտպանելու, Ղարաքիլիսէ՝ յարգանք կը ներշնչեն իրեն: ... հայերը Ղարաքիլիսէի կռուում ցոյց տուին, թէ անոնք «աշխարհում լաւագոյն զինուորները պիտի լինեն»: Եւ դարձեալ կ'աւելցնէ Ղարաքիլիսէի կռիւի համար «հազուադէպ կռիւ մը այս պատերազմի պատմութեան մէջ»:

Մեքերուած հատուածներէն յայտնապէս կ'երևի թուրք քաղաքականութեան փոփոխութիւնը, և ինչպէս ինքը՝ Վեհիբ փաշան կ'անուանէ, «դարձակէտ մըն է այս օսմանեան պատմութեան մէջ», և ինքը այս փոփոխութեան իբր պատճառ կ'ըբուէ չորս պարագայ, ինչպէս տեսանք, բայց խորը, քննելով առաջին երեքը, բնաւ չունին այն կարևորութիւնը, որ կարողանային յառաջ բերել այս կամ նման փոփոխութիւն մը: Իրական ու կարևորը չորրորդն է՝ հայ զօրքի հերոսական դիմադրութիւնն է, որուն չէին սպասէր և այժմ խորհել կը թելադրէ թուրք դիւանագետներուն: Թուրք

բանակը Երզնկայէն մինչև Ալեքսանդրապոլ գրավեր էր և Կարինի ու Կարսի նման բերդաքաղաքներուն տիրեր էր առանց մեծ ծիգ մը ընելու, և Վեհիբ, արդէն արհամարհելով, կըսէր՝ «Ուզած թուպին կընայ հանդիսական զօրանցքով անցնել մինչև Տուլֆա»։ Բայց Սարդարապատի թրջական ջախջախիչ պարտութիւնը և «Ղարաքիլիսի հերոսական դիմադրութիւնը յարգանք» ներշնչեր էին ռազմագետ թուրքին և անմիջապէս ըմբռներ էր, թէ ինչ ժողովուրդի հետ զործ ունի։ Անտարակոյս, օսմանեան գերազանց ուժի առջև վերջիվերջոյ տեղի պիտ տար հայ բանակը, և անոնք կընային գրաւել նաև Երևան, բայց ասով պատերազմը պիտի չվերջանար և պիտի սկսուեր անջատամարտ, որ մեծ դժուարութիւններ պիտի յարուցաներ և շատ դանդաղեցներ իրենց արշաւանքը դէպի Թաւրիզ ու Բագու, այն ինչ իրենց մեծ ծրագրի յաջողութեան համար անհրաժեշտ էր որքան կարելի է շուտով Կասպից ծովն հասնել, անկէ Թուրքեստանի հետ յարաբերութիւն հաստատելու։ Հակառակ Վեհիբի շողոքորթ ու անուշ լեզուին՝ կարելի չէ հաւատալ, թէ Թուրքիան ասով կը հրաժարէր իր հայաջինջ քաղաքականութենէն, այլ միայն կը յետաձգեր։ Դեռ թողնելով այն պարագան, թէ ինչպէս խաղաղ ճամբով ու լռին կը շարունակէ իր հայաջինջ քաղաքականութիւնը իր նոր գրաւած գաւառներուն՝ նոյնիսկ հաշտութեան դաշնագիրը կնքելէ յետոյ ալ նա իր կնքած դաշնագրով, ինչպէս պիտի տեսնենք, և գծած Հայաստանի սահմանով այնպիսի օղակի մը մէջ սեղմեր էր, որ «իր մեռելները թաղելու համար հազիւ հող ունեն» և կամ ինչպէս գերման մը կըսէր. «Թուրքերը հայերուն տուեր են խոշոր լիճ մը, ուր անոնք կընան լողանալ և իրենց լաթերը լուանալ, բայց չունին իրենց լաթերը չորցնելու չափ տեղ»։ Անոնք շատ լաւ գիտէին, որ այս տարածութեան վրայ և այս պայմաններուն պետութիւն մը չի կրնար ապրիլ, իսկ եթէ հայերու երեսն այնքան պինդ լինի, որ, այնուամենայնիւ, ապրին, Բագուի խնդիրն վերջացնելէ յետոյ անելի դիւրին պիտի ըլլար այս ալ խեղդել։ Պատրուակներ չէին պակսեր։

Սակայն ասոր հետ կարելի չէ մերժել և երկրորդ պատճառ մը։ Մենք տեսանք, թէ Գերման արտաքին գործերու նախարար Կուրլման դեռ մարտի 2-ին կը գրէր Պոլսի դեսպանին՝ Բ. Դռան ուշադրութիւնն հրաւիրել այն պարագայի վրայ, որ դաշնակիցները հաշտութեան ժողովին անպատճառ լայն ինքնավարութիւն պիտի պահանջեն արևելեան Անատոլիայի կուսակալութիւններու համար, ուստի Բ. Դուռը այժմէն իսկ պէտք է փոխէ իր քաղաքականութիւնը հայերու վերաբերմամբ։ Թուրքիան միշտ ունեցեր է ճկուն դիւանագիտութիւն և միշտ պատեհապաշտ է եղեր, ուստի Կովկասի սահմանի մէջ հաստատուած հայ պետութիւն մը, կընային խորհել, Արևելեան Անատոլիայի վտանգը կընար հեռացնել։<sup>1\*</sup> Եւ միշտ թրջահա-

յերու համար, որոնց մասին կըսէին, թէ հազիւ 300.000 մնացեր են, կընային իբրև բնակավայր մատնանշել հայ պետութեան սահմանը։ Արդէն նոյն միջոցին իրենց թերթերը երկար յօդուածներ հրատարակեցին, թէ Թուրքիայի մէջ այլևս հայ չկայ, այլ «հայադաւան օսմանցի», իսկ անոնք, որ դժգոհ են այս վիճակէն, թող երթան իրենց հանրապետութեան լեռներու վրայ քաղաքականութեամբ զբաղին»։

Ահա այն իրական պատճառները, մեր կարծիքով, որոնք ազդեցին Վուսիորի դիւանագետներու մտքի վրայ և ճիշտ ասոր համար հալիլ պէն իր փակման ճառի մէջ մասնաւորապէս կը շեշտէ, «թէ վերջին թուպին օսմանեան կառավարութիւնը մեծ վճռականութեամբ տիրեր է իր զգացումներուն», որոնք միշտ թշնամական էին, հասկանալի է, դէպի հայերը և «իրեն յանձնարարէր ստորագրել փաստաթուղթ մը, որ կը ճանչնայ հայ կառավարութեան մը գոյութիւնը»։

ԺԲ.

### Բաթումի հայ-թրջական դաշնագրութիւնը

Օսմանեան պետութեան և հայ հանրապետութեան միջև Բաթումի մէջ կնքուած դաշնագրութիւնը նոյն դաշնագիրն է, ինչ որ նախապէս առաջարկուած էր Կովկասի հանրապետութեան՝ ինչ ինչ կըճատումներով և յաւելումներով։ Առաջինի բովանդակութիւնն արդէն մեզի ծանօթ է։ Երկրորդի մէջ եղած յաւելումներն են - նախ II յօդուածը. Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանագիծը ճշտելու դաշնագիրը պէտք է հաղորդուի և օսմանեան պետութեան, երկրորդ՝ Բագուէն հայերը պիտի հեռացնեն հայ զօրքը։ Երրորդ՝ ճշտուած սահմանագծէն ներս գտնուած զօրքը դուրս պէտք է հանել փոխադարձաբար։

Ա. լրացուցիչը բոլորովին նոյնն է։

Բ. լրացուցիչը առևտրական մաքսային յարաբերութեան սահմանակից շրջանում - դարձեալ նոյնն է, միայն Հայաստանի դաշնագրի մէջ նշանակուած է սահմանի երկու կողմէն 15 կիլոմետր մինչդեռ առաջինում 10-ն է։

Գ. լրացուցիչ բոլորովին նոր է և միայն Հայաստանին կը վերաբերի։ Ութ ընդարձակ յօդուածներ բաղկացած այս դաշնագիրը ամբողջապէս կը վերաբերի թուրք կրօնապետի - Սիւքիի դիրքին, ընտրութեան եղանակին, իրաւասութիւններուն և այլն։ Կարճ ըսած, կրօնական սահմանադրութիւն մը, որ պետութեան մէջ կրօնական պետութեան մը հաստատումը կը նշանակէ։

Կայ նաև յաւելուած դաշնագրութիւն մը, որ նոյն է դարձեալ Կովկասի հանրապետութեան առաջարկածին հետ։ Ե յօդուածով կորոշէ գերիներու փոխանակութեան դաշնագիրը, որ տրուած էր Կովկասի հանրա-

<sup>1\*</sup> Այս պարագան կը հաստատուի նաև խափսեանի Պոլսի յուշագրութենէն, ուր Յուլիս 3-ի թուով կը գրէ. «Թուրքերը մեզի ոչինչ կուտան որոշակի և մամուլի մէջ կը

գրեն «հայկական խնդրի վերջնական լուծումի» մասին։ Յաճախ կարտայայտեն, թէ իրենք ստեղծեցին Հայաստան, ուստի և խնդիրը վերջացած կը համարեն»։

պետութեանը նոյնութեամբ կը փոխադրուի հանրապետութեան դաշնագրերու շարքը:<sup>31\*</sup>

Այս դաշնագրերու ինչ ինչ կէտերու փոփոխութեան համար Խատիսեան Չայոց Ազգային Խորհուրդին դրկած նամակով (Յունիս 2) կուտայ հետևեալ լրացուցիչ տեղեկութիւնները:- «Նախ սահմանն ընդարձակելու համար զիջեցին մեզի՝ և Արագածի կողերէն և Աբարան 900 քառ. վերստ և Երևանի գաւառէն մաս մը (400 քառ. վերստ), դուրս հանուած են ա) մեր ներքին գործերուն միջամտելու կէտը, բ) նոր գրառուած գաւառներէն հայերէն զինուոր առնելու իրաւունքը, գ) Բագուն մեծամասնականներէն ազատելու պարտականութիւնը, դ) մեր երկաթուղին իրենց սեփական ուժերով վարելու իրաւունքը և այլն և կարգ մը ուրիշ նման կէտեր, որոնք կը մեղաւորեն մեր անկախութեան դէմ»: Յունիս 3-ի նամակով կը հաղորդէ. «Վրաց պայմանները մերինի հետ համարյա նոյնն են, անոնք չունին սահմանափակում՝ յարաբերութիւն չհաստատելու թուրքերուն թշնամի պետութիւններու հետ՝ պատերազմի ընթացքին: Իսկ մենք ունինք այս կէտը նամակի փոխանակութեամբ, բայց մենք պիտի բողոքենք: Ուրիշ բաներու սահմանափակումը և թուրքերու իրաւունքը նոյնն են»: Այս բողոքը կը կատարեն և Խալիլ պէյ կը բացատրէ հայ-թրքական յարաբերութիւններու

<sup>31\*</sup> ԾԹ. Դաշնագրի Բ. յօդուածի փոփոխութիւնը.- Սահմանը կսկսի Ազիի մէջ Լենջին (Ալիջին) գիւղէն: Չուլֆայէն 17 կիլոմէթր դէպի արևելք, կուղղուի դէպի հիւսիս՝ Չուլֆա կայարանը թողնելով օսմներուն և կը հետևէ Գելեան գետին մինչև Կարանլիք լեռը, և անցնելով Կարանլիք, Արածին, Դարաղուռն, Ակ-Տաբան լեռներու բարձունքներէն կը հասնի Կայէտ գետը և անոր հետևելով կը հասնի Կայալի գիւղը Արփաշայի վրայ և կը նոյնանայ այս գետին հետ մինչև Արփա գիւղը: Այս գիւղէն սկսած ան կուղղուի հիւսիս-արևմուտք և անցնելով Ջանջուրդարա լեռան վրայէն կը հասնի Խոսրով լեռը, և շարունակելով հետևել բարձունքի գծին, կը հասնի Ախբաշ գիւղը, ուրկէ կը շարունակէ հետևել Ալէքսանդրապոլ-Չուլֆա գծին զուգահեռաբար շուրջ 5 կիլոմէթր հիւսիսային կողմէն կը հասնի Օխագ գիւղը: Ասոր և Սիրակ գիւղի միջև գիծը կը հետևի Ապարան գետին (Քասախ) և ասկէ կը դառնայ դէպի հիւսիս-արևմուտք կանցնի Խանվալի, և շարունակելով ջրաբաշխի գծով կը հասնի Ալէքսանդրապոլ-Թիֆլիս երկաթգիծը մինչև Աղբուլաղէն դէպի արևմուտք 5 կիլոմէթր հեռու կէտ մը: Ասկէ կը դառնայ հիւսիս և անցնելով Նուրախմատ և Աղբէր լեռնաշղթայի գծով և ասկէ կը նոյնանայ Ախալցխայի և Ախալքալակի գաւառներու սահմանագծերուն մինչև հոն, որ դէռ չի հասնէր Շաւաքատ լեռը՝ Ախալցխայի հիւսիս-արևմտեան կողմը՝ 1877-ի սահմանը:

Իսկ Յունիս 1 Նօթանքիւն ուղիղ հեռագրային խօսակցութեամբ Խատիսեան կը հաղորդէ Ազգային Խորհուրդին. «Սահմանագծի վերաբերմամբ յաջողեցանք ինչ ինչ փոփոխութիւններ ներմուծել մեր օգտին, այն է՝ շուրջ 400 քառ. վերստ Երևանի գաւառի հարաւը և շուրջ 900 քառ. վերստ Էջմիածնի և Ալէքսանդրապոլի գաւառներուն: Սահմանագիծը կանցնի Շարուրի Արփա գիւղէն դէպի Էջմիածին, կը կտրէ Էջմիածին-Սարդարաբատ խճուղին՝ 7 վերստ հեռու Էջմիածնի հարաւ-արևմտեան կողմը, ասկէ կ'երթայ Արագածի գագաթը՝ յետոյ դէպի Աղբուլաղ-Ախալքալակի գաւառի սահմանը:

պարագաները<sup>32\*</sup> և կեզրակացնէ, թէ հայ-թրքական և թուրք-վրացական յարաբերութիւններն անցեալում նոյն չեն եղեր, ուստի և պէտք է այս կէտը մնայ իբր պայման:

Չայերու համար այս խիստ աննպաստ դաշնագիր կնքող պատկերակութեան նախագահին իր տեղեկագիրը կը վերջացնէ հետևեալ խօսքերով, որով և մենք կ'ուզենք վերջացնել այս հատուածը.-

«Մեծ է հայ երկրի ոգին: Մենք կը բերենք գէշ դաշնագիր մը հաշտութեան,- սակայն կը բերենք և՛ անկախ Չայաստան,- տուն, բոյն, ուր պիտի կռանուի ազգային միտքը: Այս ամենը կը կապէ, կը միացնէ, կը բարձրացնէ ոգին,- իսկ այս կարևոր է: Ես հաւատք ունեմ դէպի մեր պետութիւնը»:<sup>33\*</sup>

Չայոց պատկերակութիւնը Յունիս 3-5 օրերուն քանի մը գրաւոր առաջարկներ կ'ընէ ինչ ինչ խնդիրներու մասին՝ ինչպէս են փոխադարձաբար պարպել դաշնագրով գծուած սահմաններէ ներս գտնուած զօրքերը. Կովկասի երկաթուղիին վերաբերեալ բոլոր իրերը բաժնել օսմանեան, հայ, վրացի և Ադրբեջանի պետութիւններու միջև, հայերը յանձն կ'առնեն յարաբերութեան չմտնել համաձայնական պետութիւններու հետ, գրաւուած գաւառներու հայերէն զինուոր չառնել և զաղթականներուն թոյլ տալ իրենց տեղերն երթալ, զերիներ փոխանակել, հայ պատկերակութիւնը դրկել նոր գրաւուած հայ գաւառները: Բագուի հայերը զինաթափ ընելու համար հայ պատկերակութիւնը դրկել. Պոլիս և Երևան փոխադարձօրէն ներկայացուցիչներ դրկել և այլն: Եւ շատերու պատասխանն ստանալով՝ հայ պատկերակութիւնը կը վերադառնայ Թիֆլիս Յունիս 6-ին:

Ընդհանուր պատմութիւնն թերևս արժանագրած չէ պետութեան մը պատմութիւնը, որ այնքան շատ դաշնադրուած եղած լինի, որքան Թուրքիան: Այս պետութեան ամբողջ պատմութիւն լեցուն է վաւերաթղթերով, որոնց տակ ստորագրեր են իր լիազօրները, նախարարները և նոյնիսկ սուլթանները և որոնք, սակայն, մնացեր են անկատար և յաճախ մինչև իսկ ոտնակոխ եղած: Այս դասական դաշնադրութիւնն անտարակոյս պիտի շարունակուէր և հիմա: Ոչ մէկ յանձնառութիւն կը կատարուէր և Չայոց Ազգային Խորհուրդը նոր պատկերակութիւն մը կը դրկէր Բաթում Սամ. Յարութիւնեանի նախագահութեամբ, որպէս զի Թուրքիայի նոր լիազօր Եսադ փաշայի հետ շարունակէ բանակցութիւնը՝ իրագործելու դաշնագրութեան տրամադրութիւնները:

Չայկական պատկերակութիւնը Յունիս 29-ին կը մեկնի Բաթում և Յունիս 2-ին կը ներկայացնէ յուշագրութիւն մը Եսադ փաշային: Այս գրութիւնը կը յիշէ դաշնագրի չկատարուած տրամադրութիւնները և կը պահանջէ պարպել Փամբակ, Ալէքսանդրապոլի գաւառի՝ հանրապետութեան մնացած մասը, Լօռիի մէկ մասը, Կալազիրանի կայարանը և Երևանի նահանգի

<sup>32\*</sup> Խատիսեան, նամակ, հունիս 4:

<sup>33\*</sup> Խատիսեան, նամակ, հունիս 2:

ուրիշ կետերը: Երկաթուղին, որ գոցուած էր հայերու համար, բանալ: Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները չեն կրնար վերադառնալ իրենց տեղերը որչափ թուրք զօրքերը գրաւած կը պահեն այդ կետերը: Ախալքալակի և Ախալցխայի փախստական հայութիւնը դուրսը կը կոտորուի և այլն:

Օր մը վերջ պատկերակութիւնը կուտայ լրացուցիչ յուշագիրը, ուր, վերոյիշած կետերը ընդլայնելով, կ'աւելացնէ, թէ թուրք զինուորներն կոտորած են Ղարաքիլիսի հայերը, կողոպուտ, բռնաբարութիւն և այլն և կրկին կը պահանջէին գաղթականներու վերադարձ, բարեգործական օգնութեան թոյլտուութիւն՝ օգնելու գաղթականներուն վերադարձի ճամբուն վրայ: Հայաստանի երկաթուղիներու յանձնում և այլն:

Բայց թուրքերը շատ վարժուած են յուշագիրներ ընդունել և պատեպատ պատասխաններ տալ կամ լռութեան դատապարտել: Այսպէս ալ կը լինի և այժմ:

Հակառակ այս բոլորին՝ Հայկական պատկերակութեան նախագահ Սամ. Յարութեանեան իր հրաժեշտի նամակում խորին շնորհակալութիւն կը յայտնէ իրենց թողած սիրալիր և հիւրասէր ընդունելութեան համար... Տանելով իր հետ ամենախորին հաւաստիքը, թէ էսսադի ներկայութիւնը Կովկասում պիտի ամրապնդէ Կովկասի երիտասարդ պետութիւնները...

Թուրք դիւանագետներու «սիրալիր» վերաբերումը և «հիւրասիրութիւնը» հանրածանօթ իրողութիւն մըն է և զարմանալի չէ, որ հայ պատկերակութիւնը, իր առաջարկներու և պահանջներուն ոչ մէկի համար բաւարարութիւն չստանալով հանդերձ, այսպիսի ջերմ ու սրտաբուխ խօսքերով կը բաժնուի էսսադ փաշայէն՝ հմայուած անոնց շողջորթ լեզուէն և հիւրասիրութիւնէն:

ԺԳ.

### Ալէքսանդրապոլի խառն յանձնախումբի աշխատանքը

Բաթումի դաշնագիրը կնքելու միջոցին արդէն նախատեսուած էր խառն յանձնախումբի մը գոյութիւնը երկրի մէջ, որպէս զի տեղին վրայ գործադրէ դաշնագրի ինչ ինչ տրամադրութիւնները և ճշտէ շատ մանրամասնութիւններ: Այս նպատակով ալ օսմանեան կառավարութիւնը կը գրէ զօրավար Նազարբեկեանին՝ մարդիկ նշանակել խառն յանձնախումբի համար: Հայ զինուորականութեան կողմէն կը նշանակուի զօրավար [Վաղարշակ] Տէր Յակոբեան, զնդապետ [Իոսիվ] Քիշմիշեան և փոխզնդապետ [Ալէքսանդր] Վեքիլով, իսկ Երևանի Ազգային Խորհուրդի կողմէն՝ [Սկրտիշ] Մուսիսեան, [Կոնստանտին] Տամաշեան, տ[ոկտոբր 3]. Մելիքեան, որոնք 17-ին կը հասնեն Ալէքսանդրապոլ, ուր կը միանան թուրք յանձնախումբի անդամներուն, որոնց նախագահն էր զորաբաժնի հրամանատու Քեազիմ Կարաբեքիր պէյն:

1\* Հունիս 12:

Խառն յանձնախումբը իր ծրագրի մէջ ունէր հետևեալ խնդիրները.-

- 1) Երկու կողմն ալ փոխադարձաբար ետ պէտք է քաշեն իրենց լինուորները դաշնագրով գծուած սահմաններէն ներս:
- 2) Կարգաւորել թուրք զօրքի մեր երկրէն կատարելիք անցքը:
- 3) Փախստականներու վերադարձն իրենց տեղերը:
- 4) Ձինուորական գերիներու փոխանակութիւնը:

Խառն յանձնախումբը Յունիս 17-13 Յուլիս նիստերը գումարելով և բազմաթիւ թղթեր փոխանակելով, բնական է, որ դարձեալ որոշ եզրակացութեան և գործնական արդիւնքի պիտի չհասնէր, եթէ մինչև իսկ այս պարագային թուրքերը կամենային ալ, այն պարզ պատճառով, որ թուրքերու դիրքն ալ ճշտուած չէր Կովկասում: Իրենց բուն նպատակը շատ պարզ էր՝ տիրել Կովկասին և ձեռք կարկառել արիւնակից Թուրքեստանին, սակայն իր մեծ դաշնակիցը՝ Գերմանիան վերահասու լինելով այս ծրագրին, իր շահերը վտանգած կը համարէր և սկզբէն իսկ կը պնդէր Բրեստի սահմաններու վրայ և մեզի արդէն ծանօթ են Լյուդեմիցորֆի և Հինդենբուրգի սպառնական հեռագրերը Ենվերին՝ զօրքը Կովկասէն ետ քաշելու համար: Ուստի օսմանները այս անորոշ կացութեան մէջ վճռական ու վերջնական ոչինչ կուզէին կամ աւելի ճիշտ՝ կրնային ընել: Այս պատճառով ալ իրենց աւանդական ձգձգելու քաղաքականութիւնը հոս ալ իր դերը կատարեց և յանձնախումբը վերը յիշուած չորս կետերէն ոչ մէկը վերջնականօրէն լուծեց և երբ Յուլիս 13-ի նիստում կը կազմուէր իրենց գործունէութեան տեղեկագիրը, երկու կողմէն համաձայն էին արձանագրելու.- «Հայ յանձնախումբը իր Յուլիս 11 և Թիվ 71 գրութեամբ կառաջարկէր տեղեկագրի»<sup>1\*</sup> մէջ ներմուծել հետևեալը՝ քանի որ Բաթումի հաշտութեան պատկերակութեան և Պոլսի ժողովի (Կօնֆերանսի) որոշումներն ու համաձայնութիւնները պէտք է վճռական նշանակութիւն ունենան, այս պատճառով պէտք է չեղեալ համարել Ալէքսանդրապոլում օսմանեան և հայ յանձնախումբի հինգ տեղեկագրերում գտնուած որոշումներէն ու համաձայնութիւններէն այն կետերը, որոնք ամբողջութեամբ կամ մասնակի պիտի չհամապատասխանեն կամ հակառակ են Բաթումի պատկերակութեան կամ Պոլսի ժողովի որոշումներուն կամ համաձայնութեանը: Օսմանեան յանձնախումբը կը յայտնէ իր համաձայնութիւնը»:

Այսպէս կը վերջանայ նաև Ալէքսանդրապոլի խառն յանձնախումբի աշխատանքը:

ԺԴ.

### Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհուրդի Երևան տեղափոխուելու խնդիրը

Մենք նախապէս արդէն տեսանք, որ «հայոց անկախութիւնը» ոչ ոք չէր ցանկանում Ազգային Խորհուրդի մէջ, բայց Բաթումի պատկերակներն

1\* 5. Տեղեզր.:

ալ ուրիշ կերպ չէին կարող ստորագրել, բայց եթե «անկախ հանրապետութեան» անունով, այս պատճառով ալ Ազգային հորհուրդի անդամները այն կարծիքի են, թէ «մեր պատկերակութիւնը, թերևս ստիպուած, ընդունել է մեր անկախութիւնը»: Այս շարուն դրութեան մէջ խորհուրդը, որոշում մը կայացնել չկարողանալով, կառաջարկուի սպասել հայ պատկերակներու վերադարձին: Թափառ միւս կողմէն կ'որոշուի (Յուլիս 1)<sup>25</sup> «կազմել մի մասնաժողով անկախութեան ակտը մշակելու բազմակողմանիօրէն, յայտարարման ձևն ու տեղը որոշելու»:

Վերջապէս կը հասնի և հայ պատկերակութիւնը<sup>34\*</sup> և Ալ. Խատիսեան կուտայ իր զեկուցումը, ուր կ'ըսէ. «Մենք մեզ յայտարարեցինք անկախութիւն, թերևս լայնացնելով և խլելով ձեր իրաւունքները, բայց այլ կերպ անհնար էր. պէտք էր հիմնաւորել մեր գոյութիւնը իբրև մի սուվերէն մարմին»: Ուրեմն կամայ թէ ակամայ Ազգային հորհուրդն պէտք է իւրացնէր իր լիազօրներու քայլը, սակայն ասով համոզե՞ր՞ծ Ազգային հորհուրդի անդամներէն շատերը դեռ երկար ատեն չէին կրնար հաշտուել անկախութեան և Ռուսաստանէն բաժնուելու գաղափարի հետ: Այս դեռ չի բաւեր: Վրաստանն, առանց տատանուելու, յայտարարել էր անկախութիւնը, Հայ Ազգային հորհուրդը պէտք է ճշտել իր դիրքը անոր հանդէպ և երկար վիճաբանութիւն տեղի կունենայ, արդեօ՞ք պէտք է ողջունել դրացի ազգի անկախութիւնը, թե՞ ոչ և ահա Համ. Առաքելեան կ'ըսէ. «Զպէտք է անկախութեան դէմ գնալ, բայց և չողջունել: Զքննենք թէ ինչ դրութիւն է ստեղծուած մեզ համար, մանաւանդ որ դա<sup>35\*</sup> (անկախութիւն ողջունելը) կարող է դաւաճանական քայլ համարուել Ռուսաստանի դէմ»: Ահա թէ մինչև ուր կը հասնի հայ մտավայրութիւնը:

Բայց եղածն եղած է և պէտք էր ընդունել անկախութիւնը, թափառ «այս անկախութիւնը մենք ընդունում ենք իբր մի բռնի քայլ, որ մեր ժողովրդի ստրկութիւնն է, այն էլ տաճկական»: (Ղ. Տ[եր] Ղազարյան):<sup>36\*</sup>

Այժմ պէտք էր իբրև անկախ պետութիւն կազմակերպուել և ամենէն առաջ ունենալ իր կառավարութիւնը և նոյն Յունիս 7-ի<sup>26</sup> նիստում կը տրուէին հետևեալ որոշումները.-

1. «Ազգային խորհուրդը ժամանակաւորապէս դառնում է Հայկական պետութեան օրէնսդրական մարմին»:
2. «Ազգային խորհուրդ օրէնսդրական մարմինը գնում է Երևան»:
3. «Ազգային խորհուրդի անունը դնել Հայաստանի Պետական խորհուրդ (ժողով)»:
4. «Քաջագունուն յանձնել կառավարութիւն կազմել կոալիցիօն (դաշնագրային) սկզբունքով»:

<sup>34\*</sup> Հունիս 6 (էջ 659): Տե՛ս ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141: - Ծան. կազմ:

<sup>35\*</sup> Մայիս 26:

<sup>36\*</sup> Հունիս 7:

Ուրեմն՝ առաջին գործը պէտք է լինել կազմել՝ կառավարութիւն մը, և Քաջագունին բոլոր շաբաթներով կաշխատել դաշնակցային, այսինքն հայ բոլոր հոսանքներու ներկայացուցիչներէ կազմել կառավարութիւն մը և Յունիս 25-ին նա ստիպուած կը լինէր յայտարարել Ազգային խորհուրդի նիստում. «Անցել է աւելի քան 14 օր, բայց իմ բոլոր ջանքերը յաջողութեամբ չպսակուեցին: Այս դրութիւնն այլևս չի կարող շարունակուիլ և պէտք է անպատճառ կառավարութիւն կազմուի»: Կոալիցիօն սկզբունքը չյաջողուեց՝ շնորհիւ ժողովրդական կուսակցութեան յաւակնութիւններուն: Այս կացութեան վերջ մը տալու համար կ'որոշուէր «վերցնել կոալիցիօն սկզբունքը և յանձնել մէկին՝ կառավարութիւն կազմելու պերսոնալ (անձեր ընտրելով) ձևով»: Սակայն երկար ժամանակ այս ալ ապարդիւն կը մնայ և Քաջագունին հագիւ կը յաջողի գտնել արտաքին գործոց նախարար Ալ. Խատիսեան, որ 12-ի որոշումի համաձայն պիտի մեկնէր Պոլիս իբրև պատուիրակութեան անդամ և զօրական նախարար զօրավար Հախվերդեան:

Պարզ կերպով կը տեսնուի, որ կուսակցական կիրքերն այնքան բռնկուած են, որ ոչ ոք զիջում կընէ համաձայնութեան գալու և երկրորդ Երևան տեղափոխուելու խնդիրը, ինչպէս պիտի տեսնենք, կը սարսափեցնէր շատերը այս վտանգաւոր պայմաններու մէջ իր կեանքը մեծ պատասխանատուութեան ու վտանգի ենթարկելու: Ամենքը կը նախընտրէին Թիֆլիս մնալ Հայաստանի հանրապետութեան նախարարի անունով և անկէ կառավարել նոր հաստատուած «Արարատեան Հանրապետութիւնը»:

Երկրորդ մեծ խնդիրն էր ուրեմն Ազգային խորհուրդի և կառավարութեան Երևան տեղափոխուելը: Պէտք է յիշել, որ նոյն միջոցին Սանահինէն սկսած մինչև Ալէքսանդրապոլ և Երևան երկաթուղին կը գտնուէր Թուրքերու ձեռքը: Ասկէ զատ կազմուած թուրք աւազակախումբեր միանգամայն կտրել էին ճամբան և Թիֆլիսն ու Երևան ամիսներով իրարմէ լուր չէին առնէր: Այս պարագաները և վերն արդէն յիշած նեղ կացութիւնը Երևանի կը ծանրացնէր այս խնդրի լուծումը: Սակայն և այնպէս անհրաժեշտութիւն մը կար՝ որ է կառավարութիւնը իր ժողովրդի և իր երկրի մէջ և պէտք էր իր լուծումն ստանար և այն ալ որքան կարելի էր շուտ: Հայաստանի անկախութեան համար ստեղծուած էր անբնական վիճակ մը: Երկիր մը նոր անկախութիւն կստանայ, պետութիւն կը կազմուէր, բայց ոչ լրիւ կառավարութիւն ունէր և ոչ ալ նոյն իսկ այս թերատ կառավարութիւնը կը գտնուէր այն երկրի մէջ, որու անունով պետութիւն կը յայտարարուի: Հայոց պատմութեան մէջ ինձի յայտնի չէ ուրիշ ժամանակ մը, երբ այսքան կարևոր պատմական թոպէի մէջ այսքան տարտամութիւն, թուլութիւն, երկիւղ, և որ աւելի վատթարն է, անձնական նկատումներ Երևան գալը և հայրենիքի ու ժողովրդի հրատապ պահանջի առջև շաբաթներով վիճաբանելն և վճռական քայլով մը ընդառաջ չերթալ: Այո, ես չեմ գիտեր հայ պատմութեան մէջ այսպիսի ամօթալի մտայնութիւն մը: Դեռ աւելին՝ կայ վրաց կառավարութիւնը Մայիս 26-ին իր անկախութիւնը յայտա-



րարելով, Յունիս 1-ին պաշտօնապես կը հաղորդէր Հայոց Ազգային Խորհուրդին, թէ «Կրաստանի մէջ այլևս անթոյլատրելի է ունէ ուրիշ մարմնի գոյութիւն, որ ունենայ օրէնստուի և կառավարութեան իրաւունք, քանի որ այս պիտի նշանակէր վրաց ժողովուրդի գերիշխանութեան իրաւունքի խախտումն»։ Սակայն հակառակ նոյնիսկ այս պաշտօնական վտարումին, Հայոց Ազգային Խորհուրդը սուտ խուլ կը ձևանայ և մինչև ամիս ու կէս կը շարունակէր վիճել Երևան տեղափոխուելուն համար։ Բայց հետևենք արձանագրութեանը և տեսնենք իրենց առարկութիւնները։

Այսպէս, Ստ. Մամիկոնեան կ'առաջարկէր. «Երևան փոքր է և չի կարող նպատակակէտ լինել, չի կարելի Ազգային Խորհուրդը տեղափոխել Երևան և նրանով սահմանափակուել. նա պետք է մնայ Թիֆլիսում իբրև մի բարոյական շաղկապ ընդհանուր հայութեան: Իսկ Երևանի համար պարլամենտի գոյութիւնն աւելորդ է»։<sup>37</sup> \* Ուրիշ անգամ նոյն Ս. Մամիկոնեան կըսէ. - «Չեմ կարող հասկանալ, որ մի կառավարութիւն գնում է հրացանի և քնդանօթի բերան»։<sup>38\*</sup>

Իսկ երբ Քաջազնունին կ'առաջարկէ ծիով՝ լեռնային ճամբով անցնել Երևան, Սամ. Յարութիւնեան «տարօրինակ է գտնում, որ Հայաստանի կառավարութիւնը այժմի ճանապարհով գնայ»։<sup>39\*</sup>

Բայց կան և ուրիշներ ալ, որոնք կ'առաջարկեն «չդնել կառավարութիւնը ծուղակի մէջ, քանի անապահով է, քանի դեռ բանակցութիւնները (Պուլսի) չեն վերջացած, ռիսկ է գնալն էլ, կազմելն էլ» (Կարծիկեան)։

Ազգային Խորհուրդի մէկ ուրիշ անդամ՝ Ն. Աղբալեան, կ'առաջարկէր. «Հայաստանի կառավարութիւնը հարկադրական մի բան է, մի կատարեալ բանտ, սպասենք մինչև կորոշուի բանակցութեան ելքը»։<sup>40\*</sup>

Հայ ժողովրդական կուսակցութիւնը կը յայտնէր. «Այժմ կառավարութիւն չկազմել և թողնել այն տեղի ազգային Խորհուրդին (որ) շարունակի իր գործը այնպէս, ինչպէս մինչև այժմ կատարել է» (Սամ. Յարութիւնեան)։

Իսկ եթէ ինչպէս կը շարունակէր Երևանի Ազգային Խորհուրդն իր գործը և որքան պէտք կ'ազգային կառավարութեան ներկայութեանը, բացառապատրուէն կ'երևի Երևանէն նոր հասած բժկ. Սելիքեանի գեկոյցէն. - «Կտրուած լինելով ամբողջ աշխարհից, զուրկ հացից, իշխանութիւնից այնպիսի կրիտիքական դրութեան մէջ է Երևանը, որ հրամայական անհրաժեշտութիւն է ներկայացնում Ազգային Խորհուրդի տեղափոխութիւնը Երևան, որքան կարելի է շուտ, հակառակ դէպքում անիշխանութիւնը մեծ ծաւալ կ'ստանայ»։<sup>41\*</sup>

<sup>37</sup>\* Հունիս 27:

<sup>38</sup>\* Հունիս 12:

<sup>39</sup>\* Հունիս 6:

<sup>40</sup>\* Հունիս 24:

<sup>41</sup>\* Հունիս 21:

Բայց ալ աւելի պերճախօս է Արամ Մանուկեանի Երևանէն գրած նամակը (գրուած Յունիս 26, Թիֆլիս ստացուած Յունիս 5)։- «Ներքին անարխիան սոսկալի չափեր է ընդունել, հարկաւոր է շուտափոյթ իշխանութիւն կազմակերպել և գործի անցնել. մինչև հիմա այդ չենք արել, շարունակ սպասել ենք ձեզ, իսկ դուք չկաք ու չկաք... Եւ իբրև վերջին յուսահատական փորձ՝ որոշեցինք այս տեղից ձեզ մօտ ուղարկել մի պատգամաւոր, որը կը յայտնի ձեզ հետևեալ պայմանները: Որ, եթէ այս նամակը ձեր ձեռքը հասնելու օրից հաշուելով, երկու շաբաթուայ ընթացքում դուք Երևան չհասնէք, յայտարարել Թիֆլիսի և ուրիշ տեղերի թերթերում, որ դուք այս երկրի ներկայացուցիչները չէք: Որ ձեզմից յուսահատուած՝ անմիջապէս կազմակերպուելու է սահմանադիր ժողով, ժողովրդի կամքով որոշելու երկրի բախտը՝ ճակատագիրը... իմացք, որ յուսահատուածները կարող են աւելի սոսկալի միջոցների դիմել: Այս բոլորը յայտնում են ձեզ ի գիտութիւն և ի տնօրէնութիւն»։

Այս նամակի հետ ղրկուած էր նաև Երևանի Ազգային Խորհուրդի մէկ նամակը, որու առաջին թերթը կորսուած լինելով, մնացած մասէն մէջ կը բերեն հետևեալ տողերը. - «Կրկնում ենք, փոխանակ այս կեանքի և մահուան հարցերով զբաղելու, դուք զբաղուած էք կուսակցական վեճերով, կառավարութեան աթոռների բաժանման վեճերով» (ստորագ. ի նախագահի՝ Յով. Տէր Միքայելեան)։

Ահա Երևանի դրութիւնն ու պահանջը և Թիֆլիսի վերաբերումը, որ տեսանք։

Ճշմարտութիւնը կը պահանջէ, սակայն, մատնանշել և այն պարագան, որ Թիֆլիսի Ազգային Խորհուրդի մէջ կային նաև մարդիկ, որոնք պատրաստ էին իրենց կեանքի գնովը Երևան երթալ և տեղին վրայ իշխանութիւն հաստատել: Ատոնց մէջ սկզբէն ի վեր իր վճռականութեամբ կը փայլի նոր կառավարութեան ընտրուած նախագահ Ռ. Քաջազնունի: Այսպէս, Յունիս 24-ի միտումն նա կը յայտարարէ. - «14 օր է անցել, բայց կառավարութիւն չկայ, թէկուզ կառավարութիւնը մէկ օր միայն գոյութիւն ունենայ, պէտք է գնայ. նրա դիպլոմատիական (դիւանագիտական) ներկայացուցիչները կը մնան այստեղ»։

Նոյն պահանջը կը կրկնէ Կարծիկեան, որ ինչպէս տեսանք, «Երևան ծուղակ» կը համարէր կառավարութեան համար»։ Ներկայ դրութիւնը անհանդուրժելի է և անպայման պէտք է կառավարութիւն կազմուի, ինչ գնով էլ լինի»։<sup>42\*</sup>

Բայց խնդիրը դեռ կը ծեծուի առանց որոշումի մը յանգելու և Քաջազնունին է դարձեալ, որ կը խոսի. «Չի կարելի անվերջ խօսել և ոչ մի իրական քայլ չանել այնպիսի խնդիրների նկատմամբ, որոնք կեանքի ու մահուան նշանակութիւն ունին մեր ժողովուրդի համար»։<sup>43\*</sup>

<sup>42</sup>\* Հունիս 27:

<sup>43</sup>\* Հունիս 6:

Հայոց Ազգային խորհուրդն անտարբեր և անվճռական կը մնայ և այն ատեն իսկ, երբ Ֆօն Կրեսի՝ Գերման ներկայացուցիչը կը հաղորդէ. «Թուրքերը չեն ցանկանում, որ Հայաստանում կառավարութեան հսկող աչք լինի, որպէսզի անելի ազատ շարունակեն մթերքների, պարենի գրաւումները»:

Քաջազունիի մուրճի հարուածներու տակ և Արամի սպառնալիքներէ ազդուած՝ վերջապէս որոշում կը կայացուէր (Յուլիս 6) - «Հայոց Ազգային խորհուրդը տեղափոխուում է Երևան, յայտարարում է իրան Հայաստանի հանրապետութեան պաշտամենտ՝ Հայաստանի խորհուրդ անունով և կազմում է կառավարութիւն»<sup>27</sup>:

Հակառակ այս որոշումին՝ առարկութիւնները չեն վերջանար, և բումն ջանք մը կայ և այս որոշումը ջուրը ձգել՝ համարելով այս քայլը «խորհուրդի ինքնուշառումը»: Վերջապէս Յուլիս 12-ի նիստին Քաջազունին ճարահատ կը հրաժարի վարչապետի պաշտօնէն<sup>28</sup>: Ժողովը շփոթութեան կը մատնուի, որմէ յետոյ յաջորդ օրուան նիստում նոր որոշումով ամսու 17-ին պիտի մեկնեն Երևան<sup>29</sup>:

Սակայն խնդիրը դեռ ասով չէր վերջանար. Յուլիս 15-ի նիստին, որ և վերջին նիստն է Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդին, Ստ. Մամիկոնեան գրութեամբ մը վերջին փորձ մը կ'ընէր գործը խանգարելու համար նոր խնդիր մը մէջտեղ նետելով և կը դիմէր խորհուրդին յայտարարելով. «Ազգային խորհուրդը 13-ին Յուլիսի կայացրած նիստում, վերաքննելով իր նախընթաց որոշումը, վճռել է տեղափոխուել Երևան և այսպիսով դադարել գործելուց՝ իբրև ընդհանուր ազգային ներկայացուցչութիւն, համաձայն ազգային համախորհրդակցութիւնից ստացուած լիազօրութիւնների:

Անկանոն էր դնել այդ խնդիրը քննութեան Յուլիսի 13-ին, որովհետև յայտարարուած օրակարգում այդ խնդիրը մշանակուած չէր:

Խնդրում են ձեզ (յայտարարութիւնը գրուած է նախագահի անունով) օրակարգի դնել այս որոշումից բոլորով հետևեալ խնդիրը. Ազգային խորհուրդը, Երևան տեղափոխուելով, դառնում է Հայաստանի խորհուրդ. իբրև այսպիսին նա հնարաւորութիւն և յարմարութիւն ունենալու չէ՛ շատ փափուկ քաղաքական պատճառներով՝ միջամտել այն բոլոր խնդիրներին, որոնք ծագում են հայութեան զանազան հատուածների վերաբերմամբ թէ Վրաստան, թէ Ատրպատական, թէ Բագու, թէ Հիւս. Կովկաս: Մնում է բաց տեղ և այդ բացը պէտք է լրացնել: Ուստի առաջարկում են Ազգային խորհուրդին կրկնապատկել իր կազմը. 15 անձն կը մնան Թիֆլիս և կը կազմեն Համազգային խորհուրդ, իսկ 15-ը Երևանում կը կազմեն Հայ Հանրապետութեան խորհուրդ: Գուցէ հնարաւոր է ունէ ուրիշ լուծում»<sup>30</sup>:

Բարեբախտաբար խորհուրդն այս անգամ ընթացք չի տար այս նոր դիտումնաւոր<sup>31</sup> յայտարարութեանը և կորոշուեն Երևան մեկնող անձերը<sup>32</sup>:

1. Գ. Յ. Դաշնակցութիւնից՝ Ա. Սահակյան, Ռ. Տ[եր] Սինասեան, Խ. Կարծիկեան, բժ. Ար. Բաբալեան, Սրկ. Տիգրանեան և Յ. Քաջազունի:

2. Հայոց ժողովրդական կուսակցութիւնից՝ Արշ. Մխիթարեան և Ստ. Մալխասեան:

3. Սոցիալ Դեմոկրատներից՝ Հայկ Ազատեան և Մ. Ղա[րա]զեզեան:

4. Սոցիալիստ Յեղափոխականներից՝ Ա. Ստամբուլցեան:

ԺԵ.

Կ. Պոլսի և Բեռլինի հայ պատկրակներու գործունէութիւնը

Բաթումի դաշնագրութեան վերջին յօդուածը կը տրամադրէր, թէ այս դաշնագրութիւնը պիտի վաւերացուի Պոլսում մէկ ամսուան ընթացքին, ուստի պէտք էր պատկրակութիւն մը դրկել հոն՝ պաշտօնական այս վերջին գործողութիւնը կատարելու համար: Յունիս 13-ին Թիֆլիսէն հայ պատկրակութիւնը՝ Ատ. Ահարոնեան, Ալէք. Խատիսեան և Միք. Պապաջանեան իր մասնագէտ անդամներով և հետևորդներով՝ կը մեկնի Փօթի - Կոնստանցա գծով՝ Պոլիս:

Ասկէ առաջ, սակայն, Գերման զօրավար Ֆօն Լոսովի առաջարկութեամբ ուրիշ պատկրակութիւն մ'ալ՝ բժիշկ Համ. Օհանջանեան և Արշակ Զուրաբեան՝ Բեռլին դրկուած էր հայ դատը պաշտպանելու:

Հայ այս երկու պատկրակութիւններու գործունէութիւնն ու նպատակը, միանգամայն կախուած լինելով Քառեակ զինակցութեան անմիջական շահերէն բոլորով տրամադրութիւններէն՝ կարելի չէ հետել անոնց աշխատանքին և պայծառ գաղափար մը կազմել անոնց գործունէութեան վրայ՝ առանց լուսաբանելու ընդհանուր քաղաքական կացութիւնը:

1918-ի գարնան սկսած Գերման ահաւոր յարձակումներն Արևմտեան ճակատի վրայ, որ իր սկզբում ձեռք բերած յաջողութիւններով, ահաբեկեց համաձայնական պետութիւնները, Յունիսէն սկսած արդէն յայտնի էր իր ծախողանքովը. այլևս հասկնալի էր, թէ ան պիտի չկարողանայ տալ Գերման հրամանատարներուն իրենց ծրագրածն ու սպասածը, այն է՝ ջախջախել միանգամայն Ֆրանսան, գրաւել Փարիզ, միւս կողմէն՝ «ծովը թափել ատելի Բրիտները», կռիւր փոխադրել Բրիտանական կղզիներու վրայ ու պարտադրել իրենց պայմանները: Այս անյաջողութիւնէն յետոյ Գերմանիան արդէն մտահոգութեան մատնուած էր: Ներքին ընկերակրական խլրտումներու օրեցօր աճող արտայայտութիւնները կուզային կշռել իր կացութեան ծանրութեան վրայ:

Աւստրիան ալ անելի ուժասպառ՝ միջոցներ կորոնէր ո'ւնէ կերպով հաշտութիւն կնքել՝ փրկելու համար իր պետական շէնքը, որու մէջ արդէն խոշոր պատռուածքներ տեսանելի էին նոյն իսկ հեռուէն դիտողներուն:

Բուլզարիայի յաղթութեան դափնիներն արդէն թռռներ էին և իր փառքի՝ «Մեծ Բուլզարիայի» վերջին օրերը կապրէր և անձկութեամբ հաշտութեան աւետարէր ծիթնիհին կ'սպասէր:

Բրեստի դաշնագրութիւնէն յետոյ բախտը՝ թերևս վերջին անգամն լինելով, ժպտեցաւ Քառեակի չորրորդ զինակցին՝ օսմաններուն: Օսմանեան «փառապանծ բանակը» յաջողէր էր ետ մղել Ղարդանելի յարձակումները, գերի առեր 13.000 անգլիացի Քութ-է-Ամարայում, և Պալեստինի ճակատի վրայ պարտութեան մատնել Գազայի յարձակումները: Ռուսիայի քայքայումով և Կովկասի ժողովուրդներու ներքին պառակտումներու և ազգային հակամարտութիւններու պատճառով՝ բացուած էր Կովկասի ճակատը, և թուրք յաղթական բանակը, կոխտտելով ու արիւնի մէջ մկրտելով Չայաստան՝ մէկ կողմէն անցեր էր մինչև Թաւրիզ, իսկ, միւս կողմէն, գրաւելով Գանձակ՝ կը յառաջանար դէպի Բագու՝ այն յենակէտը, ուրկէ ծեռք պիտի կարկառէր Թուրքեստանին և ինչպէս «Աթի» թերթը կը պատկերացնէր՝ «Մահիկի և աստղի դրօշն այժմ կը ծածանի հին խաներէն իբր յուշարար թողուած բարձր աշտարակի վրայ, դրօշ՝ որու բարոյական լոյսը կը թափանցէ մինչև Խիվայի, Բուխարայի, Տաշքենդի և Դերբենդի խորքերը և կ'ողջունէ այս կողմերու իսլամները»:<sup>1\*</sup>

Օսմանեան ամբողջ դիւանագետները մեծ ոգևորութեան շրջան մը կ'ապրէին և իրենց փայլալայած համաթրքական հեռագաղափարն յանկարծ իրականացած կը թւար իրենց: Այս պատճառով ալ անոնք անողոք էին իրենց բանակցութիւններու մէջ և Տրապիզոնի ու Բաթումի պահանջները պիտի աւետեն պատմութեան՝ յաղթական թուրքի նկարագրի ամբարտաւան, ունայնամիտ ու յոխորտ գծերը: Թուրքիան, նոյնիսկ հակառակ զինակցութեան մէջ սովորաբար ընդունուած քաղաքավարութեան՝ առանց իր զինակիցներու մասնակցութեան, անջատ հաշտութեան բանակցութեան սկսեր էր Կովկասեան ժողովուրդներէ կազմուած հանրապետութեան հետ: Նախապէս, ինչպէս կ'ըսէր Պոլսի Բուլզար դեսպանը, խաբէր էր իր զինակիցներն, ըսելով՝ թէ Կովկաս յանձնախումբ կը դրկէ՝ տեղին վրայ ծանօթանալու Կովկասի գործերու հետ և ոչ թէ դաշնագրութիւն կնքելու: Վերջը, սակայն, հակառակ անոնց կամքին, ներքին դաւերով պառակտելով այս միութիւնը, իւրաքանչիւրի հետ կնքեց իր պահանջներուն միայն բաւարարութիւն տուող դաշնագրութիւն: Թուրքիան մինչև իսկ բրտօրէն չէզօքացուց Բաթումի բանակցութիւններուն մասնակցելու եկած Գերման ներկայացուցիչ գորավար Ֆօն Լօսով, որ Կովկասի հանրապետութիւնը լուծուելէն անմիջապէս յետոյ կը մեկնէր Գերմանիա: Ընթերցողին արդէն յայտնի են Գերման արտաքին գործերու նախարարի, Չինդենբուրգի և Լյուդեն-դորֆի խրատական ու սպառնալից դիմումներն ենվեր փաշային և թուրք կառավարութեան՝ չափաւորել իրենց երկրատիրական ախորժակները, խնայել քրիստոնէայ ազգաբնակչութեան և յարգել Բրեստի դաշնագրու-

թեան գծած սահմաններն ու պայմանները և Թուրքերու ցոյց տուած անուշադիր և երբեմն նոյնիսկ արհամարհական վերաբերումն անոնց հանդէպ:

Թուրքիան, ուրեմն, յափշտակուած իր յաջողութիւններով և անողոք իր պահանջներով՝ Բաթումի հայ-թրքական դաշնագրութիւնը պիտի վաւերացնէր Պոլսում: Սակայն որոշուած ամիսը և ուրիշ ամիսներ կըսահէին, իսկ վաւերացման գործողութիւնը չէր կատարուէր, որովհետև որքան ալ որ Թուրքիան չուզեց լսել ու հետևել իր «մեծ դաշնակցին», ինչպէս սովոր էին անուանել Գերմանիան, բայց և այնպէս պէտք է հաշի առնէր անոր համաձայնութիւնը Կովկասի խնդիրներուն և նոր կոնֆերանս մը գումարէր Պոլսում, որուն պիտի մասնակցէր Քառեակն իր ներկայացուցիչներով: Թուրքիան ոտնակոխ ըրեր էր Բրեստի դաշնագրութիւնը՝ Կովկասում անցնելով անոր գծած սահմանները և նպատակ դրեր անպատճառ գրաւել թաթարական Աղրբեջանը (Բագուն), Պարսիկ Աղրբեջանը ու Թուրքեստանը: Այսպէս գոնէ կը բնորոշէ իրենց պահանջը օսմանեան խորհրդարանի դեր նախագահը՝ մինչև իսկ Սեպտեմբեր 11-ին, երբ պատերազմի բախտի անիւր, հակառակը դարձած, գահաւիժօրէն իր վախճանին՝ այսինքն Քառեակի պարտութեան կը դիմէր: Պարոնը [Ջավիդ բեյ] կ'ըսէր Ալ. Խատիսեանին. «Մենք կը կորցնենք Արաբիան և ասոր համար անհրաժեշտ է ստանալ Թաթար Աղրբեջան, Պարսիկ Աղրբեջան և Թուրքեստան: Այս մեր իդեալն է, կրնայ լինել, որ ցնորք է, բայց իդեալ է»:<sup>1\*</sup> Այսպիսի երկրակալութեան մը՝ Կովկասում, Պարսկաստանում և Սիջին Ասիայում, Գերմանիան հանդուրժել չէր կրնար, որովհետև ասով ան ալ վտանգուած կը տեսնէր իր քաղաքական ու տնտեսական շահերը. ուստի այն օրէն իսկ, երբ թուրքերն անցան Բրեստի սահմանները, Գերմանիան յայտնեց իր դժկամութիւնը և պահանջեց պարպել գրաւած շրջանները»:<sup>2\*</sup>

<sup>1\*</sup> Ալ. Խատիսեան, Օրագրութիւն, Սեպտեմբեր 11:

<sup>2\*</sup> Օթ. «Materialen der jur osteurofaischen Politik» թերթը, որ Գերման գաղտնի հրահանգներու տեղեկատուն էր, իր 1918 Յունիս 15 N 3-ի մէջ Գերման շահերու համար կը գրէ. «Թրքական պահանջներու քաղաքական նշանակութիւնը.- եթէ Թուրքերու ծրագիրներն իրականանան, այն ատեն ոչ միայն ապագայ երկաթուղիի գիծը դէպի Աւրանիստան ու Չնդկաստան՝ անցնելով Սև Ծովէն Անդրկովկասի և Պարսկաստանի մէջէն, որ այժմ մինչև Թաւրիզ արդէն շինուած է, քանի մը հարիւր կիլոմէթր երկարուող տարածութեան վրայ թրքական տիրապետութեան ներքոյ պիտի գտնուի, և թրքական շրջանէ պիտի անցնի, այլ և թուրքերն մէկ ուրիշ կէտի վրայ՝ Բորժոմէն ոչ հեռու՝ այնքան մոտ պիտի կենան Անդրկովկասեան գծին, որ Բաթումէն Թիֆլիսի վրայով Բագու կը տանի, որ անմիջապէս կ'սպառնան, և Թիֆլիս առ այժմ երկու կողմէն սպառնալիքի տակ է՝ Բորժոմէն և Կարաքիլիսայէն Թիֆլիս-երևան գծով:

Այս կերպով Թուրքիան կը դառնայ Անդրկովկասում Առաջին ուժը՝ այսինքն՝ Սև և Կասպից ծովերու միջև գտնուած ամբողջ տարածութեան վրայ, մասնաւոր մերձաւոր ցեղակից թաթարներու հետ կապուելով, որոնք համարեա ամբողջ

<sup>1\*</sup> 1918 օգոստոս 15:

Ասկէ զատ Յուլիսին Գերմանիան և Բուլգարիան յայտներ էին Թուրքիային. 1. իրենք հաստատուն կը պահեն Բրեստի դաշնագրութիւնը, 2. կը պահանջեն Բաթումի և Կարսի ինքնորոշումը՝ բնակիչներու և պետութիւններու ներկայութեանը: Թուրքերն ասոր պատասխաններ էին մերժումով և ըսէր՝ եթէ «Գերմանիան ասոր համար կոնֆերանս կը հրաւիրէ՝ թուրքերու համար պէտք չէ»: Այսպէս, Թուրքիան նախապէս կարևորութիւն չտուաւ այս պահանջներուն, սակայն պատերազմի անողոք դարձուածքները եկան զինք բռնադատելու՝ համաձայնութեան մը զալ իր «մեծ դաշնակցի» հետ: Թուրքիայի տնտեսական դրութիւնը քայքայուած էր և իր ելնմտական վիճակը սնանկութեան հասած՝ պէտք ունէր նոր փոխառութեան և ճաւիտ բէյ՝ ելնմտական նախարարն ամիսներով Բեռլին մնաց՝ Գերմանիայի հետ խնդրուած փոխառութիւնը կնքելու նպատակով և յաջողեցաւ 45 միլիոն ոսկու փոխառութիւնը կնքել այն պայմանով,<sup>1\*</sup> որով Թուրքիան կը պարտաւորուէր ընդունել Գերման-Ռուս նոր յաւելուածական դաշնագրութիւնը և որու պահանջներէն մէկն էր նաև՝ քաշուել մինչև Բրեստի գծած սահմանները:

Ինչպէս տեսանք Կովկասին տիրապետելու համար Քառեակ զինակցութեան անդամներու շահերը կը բաղխէին իրարու: Նախ, Գերման-

արեւելեան Անդրկովկասը կը գրաւեն, այս ուղղութեամբ պիտի զօրացնէ և առաջնորդէ թրքական ուժը: Անդրկովկասէն անցնող համաշխարհային հաղորդակցութեան համար կարևորութիւն ունեցող երկու գծերը՝ մէկը Բաթումէն Թիֆլիս, Բագու, Կասպից Ծով և Անդրկասպեան՝ դէպի Թուրքեստան և Աւղանիստան, միւսը Պարսկաստանէն դէպի Աւղանիստան և Յնդկաստան՝ ապագային երկուքն ալ շատ աւելի մեծ կարևորութիւն պիտի ստանան, Գերման շահերու տեսակէ հազիւ ուրեմն փափաքելի թին, եթէ՝ Ռուսական իշխանութիւնը Կովկասեան անցքուղի շրջանի վրայ փոխարինուի թրքականովը: Գերմանիայի, ինչպէս և Կովկասցիներու համար լաւագոյնը պիտի լինէր, եթէ՝ Կովկասեան շրջանում անկախ ազգային պետութիւններ՝ առանց ո՛ր և է մեծ պետութեան տիրապետութեան ազդեցութեան ինչպիսին է Ռուսիան կամ Թուրքիան, կազմուէին: Կովկասեան երկրները տնտեսորէն շատ ընդունակ են զարգանալու: Եւ իր ներկայիս ու մանաւանդ ապագայի համաշխարհային հաղորդակցութեան համար իբր անցուղի շատ կարևոր է, իր հուն միւթ մատակարարելը և ներմուծական ընդունակութիւնը Գերման արտահանութեան համար կրնայ այնքան բարձրանալ, որ Գերմանիան պէտք է ուշադիր լինի անոր, որ այս անցուղին ուրիշ ուժերէ, ըստ կարելոյն, առանց ազդեցութեան մնայ: Արդէն Կարսի, Արդահանի և Բաթումի՝ թուրքերուն զիջելու առաւելութիւն մը չի ներկայացներ Գերման շահերու համար: Թուրքերու կողմէն գործ դրուած ջանքը իրենց դիրքն ընդլայնելու՝ ընդհակառակն այնքան քիչ է, որ մարդ կրնար փորձուիլ հարցնելու՝ արդե՞ք սկզբում թրքականէն զատ ուրիշ մտադրութիւն մը ծածկուած է հոն:

<sup>1\*</sup> Ալ. Խատիսեան, Օրագրութիւն, Սեպտեմբեր 5:

թրքական հակամարտութիւն մը յառաջ եկաւ, յետոյ Թուրք-Բուլգարական կնճիռ, որովհետև բուլգարները, որոնք նպաստեր էին Կարս, Բաթում, Արտահան թուրքերուն յանձնելու գործում, այժմ փոխարինութիւն կը պահանջէին Թրակիայի և Դոբրուչայի մէջ: Գերման-Աւստրիական շահերն ալ ազատ չէին բաղխումէ. Լեհական խնդիրը նոր տարածայնութիւն ստեղծէր էր երկու բարեկամ պետութիւններու միջև: Թուրքիան, որ իր ճակատագիրն վարելու համար *carte blanche*<sup>33</sup> ստացեր էր Գերմանիայէն, այժմ Կովկասի խնդիրներում Գերման արգելառիթ միջամտութեան վրայ կը զայրանար և կ'ըմբոստանար՝ համարելով այն իբր իր ներքին թուրքազգային գործ: Թուրքիան բացայայտօրէն կը գերազնահատէր իր պատերազմին մասնակցելու կարևորութիւնը և այն համոզումն ունէր, թէ Քառեակի պարտութեան բանալին իր ձեռքն է, ուստի շատ անգամ կը հասկցներ զինակիցներուն՝ եթէ իր փափաքներուն ու ձգտումներուն հակառակն են, ինքը պիտի դառնայ համաձայնական պետութիւններու կողմը: Գերմանիան գիտակցելով, թէ այս սպառնալիքն մեծ պատերազմի ընթացքին օր մը չէ, օր մը պիտի գործադրուի և համոզուած նաև, թէ այլևս յաղթելու մասին խորհելն աւելորդ է, կաշխատէր զոնէ իր արևելեան սահմանն ապահովել և ռուսներու եթէ ոչ զինակցութիւնը, զոնէ բարեկամութիւնը շահել: Այս իսկ նպատակով իր զինակիցներէն անջատ և համարեայ գաղտնի դաշնագրութիւն մը կնքեց ռուսներու հետ և ամէն ջանք գործ դրաւ Բրեստով վիրաւորուած Ռուսիան սիրաշահել նոր և կարևոր զիջումներ ընելով անոր Կովկասում՝ հակառակ իր զինակից Թուրքիայի շահերուն: Այս դաշնագրութեամբ Բագուն կը մնար ռուսներուն, որոնք կը խոստանային բաւարարել Գերման շահերը: Ադրբեջանի և Հայաստանի անկախութիւնը պահանջել կը հրաժարէին գերմանները, իսկ Կրաստանի համար կ'ընդունուէր այսպիսի բանաձև մը. «Կրաստանի անկախութեան դէմ չեն լինի, եթէ Գերմաններն ընդունեն»:

Քառեակ զինակցութեան այսպիսի փոխարարբերութիւններու շրջանում յայտնի է, թէ ինչ պիտի յաջողէին ընել հայ պատուիրակութիւնները: Բեռլինինը, որ սկզբում սիրալիր ու բարեկամական ընդունելութիւն գտաւ հոն՝ դիւանագիտական շրջանակներու կողմէն և խոստումներ կը լինէին օգնութեան հասնելու թուրքի ճիրաններում գալարուող ու մեռնող հայութեան, ոչ մէկ իրական քայլ առաւ այս ուղղութեամբ և հետզհետէ բոլորովին դադրեցան հետաքրքրուելու հայերով և մինչև իսկ հասկցուց, թէ պատուիրակութեան ներկայութիւնը աւելորդ է Բեռլինում: Ֆօն Լօսով, ինչպէս մեզի արդէն յայտնի է, առաջինն էր խորհուրդ տուողը, որ հայերը անկախութիւն յայտարարեն և պատուիրակ ղրկեն Բեռլին: Օգոստոս ու սեպտեմբերին կը յայտնէին, որ իրենք շատ կը ցաւին հայերու կացութեան վրայ, բայց ոչինչ կրնան ընել, որովհետև չեն կրնար թուրքին պատերազմ յայտարարել հայերու համար, իսկ բարեկամաբար ոչինչ կարելի է ընել: Ուստի խորհուրդ կուտային Աւստրիային դիմել, որ թերևս կարենայ հայերը պաշտպանել՝ հոն զօրք ղրկելով: Պոլսի Աւստրիական զինուորական

կցորդ՝ զօրավար Պամեանկովսկիի թելադրութեամբ հրահանգ տրուեցաւ Բեռլինի պատուիրակ Գ. Օհանջանեանին՝ Վիեննա փութալ՝ տեսնուելու համար Բուրիանի հետ, որ ուղղակի յայտարարեր էր, թէ իրենք կը պաշտպանեն հայն ու Հայաստանը և խնդրել այս մասին:<sup>44\*</sup> Աւստրիա դիւանագէտները սկզբում մեծ հետաքրքրութիւն ու բարեացակամութիւն կը ցուցնէին Հայաստանի և հայերու վերաբերմամբ, բայց որքան աւելի մօտէն շօշափեցին թուրքերու գաղափարները և վերահասու եղան անոնց տրամադրութեան՝ այնքան աւելի ետ քաշուեցան և վերջապէս յայտարարեցին, թէ թուրքիային հակառակ ոչինչ կրնան ընել:

Չօրավար Պամեանկովսկին այսպէս կ'արտայայտի հայ պատուիրակներուն.- «Մենք միջոց չունինք թուրքիայի վրայ ազդելու: Թուրքիան իբր դաշնակից պէտք է մեզի: Չենք ուզեր անոնց անհաճոյ բան մ'ընել: Ըսէք, ինչպէս կրնանք ազդել: Սիւս թէ ինչու պէտք է այնպիսի կերպով զօրք դրկել, որ անոնց դժգոհութիւն չպատճառենք: Ես արդէն այս ուղղութեամբ սկսեք եմ խօսել Էմվեր փաշայի հետ»: Սակայն զօրավար Պամեանկովսկին երբեք չկրցաւ գտնել այն միջոցը, որով յաջողէր զօրք դրկել Հայաստան, առանց զինակից թուրքիային տհաճութիւն պատճառելու:

Բուլզարիայի մասին աւելորդ է ըսել, թէ իրական օգնութիւն մը սպասել կարելի չէր, անոր միջամտութիւնը ոչ միայն պլատոնական սիրային խօսքերէն անդին չէր անցներ, այլև իր՝ թուրքիայի հետ ունեցած խնդիրներն իր շահերուն համապատասխան կերպով կարգադրելու համար՝ պատրաստ էր նպաստելու թուրք քաղաքականութեան Կովկասում:

Այսպէս, ուրեմն, 1918 օգոստոսի վերջերուն հայ պատուիրակուծիւնը յուսահատութեան մատնուած էր: Գերմանիան և Աւստրիան բացայայտօրէն ձեռնբափ էին հայերէն: Գերմանիան Վրաստանի անկախութիւնն ընդունելով և ռուսներուն ընդունել տալով, Կովկասը կը զիջէ ռուսներուն փոխարէն բարեկամութիւն ու հաց ստանալով անոնցմէ: Դեռ աւելին կայ. գերման-ռուս դաշնակցութեան մէջ ըսուած է. «Գերմանիան չի աջակցի թուրքիային նրա գործողութիւններուն՝ Հայաստանում և Ադրբեջանում և չի դիմադրի Ռուսաստանին, եթէ վերջինս իր ուժերով կարողանա դուրս քշել տաճիկներին գրաւած երկրներից մինչև Բրեստի սահմանները, նուրիսկ Գերմանիան ետ կը կանչի իր տեխնիկական մասերը տաճիկական զօրքերից և դիպլոմատիկական ճանապարհով կօզմի Ռուսաստանի երկիրները դատարկելու գործում»:<sup>45\*</sup>

Ուրեմն՝ հայ պատուիրակութեանը կը մնար թուրքերու հետ ուղղակի կարգադրել իրենց գործերը:

Թուրք դիւանագիտութեան ընթացքն արդէն ծանօթ է մեզի, անոնց շողոմ ու մեղրամուշ լեզուն ու համբաւ հանած հիւրասիրութիւնը խոր-

րնակ համեմատութեան մէջ եղեր է միշտ իրենց իրական գործունեութեան հետ: Թուրքիան միշտ խոստացեր է ամեն բան, բայց կատարեր է ոչինչ, ամենէն մտերիմ և անուշ լեզուով կը խոսի, բայց կը գործէ դիւստրիմ թշնամիի մը պէս: Այսպէս պիտի վարուէր և հայ պատուիրակութեան հետ. փառաւոր ընդունելութիւն, սիրալիւր վերաբերում և խոստումներ, բայց իրականի մէջ ինչ կը տեսնուի:

Հայ պատուիրակութիւնը Յունիս 19-ին կը հասնի Պոլիս, սակայն Ալ. Խատիսեան իր օրագրութեան մէջ դեռ սեպտեմբեր 7-ին կը գրէ. «Կովկասէն ոչ մէկ լուր կամ նամակ»: Ուրեմն թուրքերու առաջին գործն եղեր էր կղզիացնել պատուիրակութիւնը Մայր երկրէն, ուստի և ոչ մէկ լուր կամ հաղորդակցութիւն: Եւ այս շատ հասկնալի է. Հայաստանի մէջ կատարուածը հակադիր էր միանգամայն իրենց խոստումներուն և բնաւ չէր համապատասխանէր իրենց բարեկամական վերաբերումին, ուստի պէտք չէր, որ իմանային հայ պատուիրակները՝ Պոլսում աղմուկ չհանելու համար: Հայաստանի կացութեան մասին գաղափար մը կազմելու համար մէջ կը բերենք Կովկասի Գերման ներկայացուցիչ Ֆօն Կրեսի հեռագիրը Պոլսի դեսպան Բերնսդորֆին, որ նոյնութեամբ կը հեռագրէ Բեռլին.- 1918 Օգոստոս 26. «Թուրքերու առերևոյթ ըրած խոստումը՝ հայ փախստականներն իրենց տեղերն վերադարձնելու խնդրում՝ բոլորովին զուրկ է արժէքէ: Մինչդեռ թուրքերէն գրաւուած շրջաններում հունձքը, ուր որ իրենք չեն կրցեր ժողովել մարդու պակասութեան պատճառով, կը փսի, միւս կողմէն իրար վրայ կուտակուած հայերու զանգուածները՝ Էմվեր փաշայի նշանակած սահմանագծէն դէպի արևելք տարածուող անբերրի շրջանում՝ կը դիմեն իրենց կորստին: Դրութիւնը օրեցօր կը վատթարանայ: Եթէ հայ կառավարութեան և բարձրագոյն հոգևորականութեան աղիողորմ կոչն օգնութեան անլսելի պիտի արձագանքեն, այն ատեն այս հին քրիստոնէայ ժողովուրդի ոչնչացումի պատասխանատվութիւնն ընդմիշտ պիտի ծանրանայ Գերմանիայի և Աւստրիայի վրայ: Պատմութիւնը պիտի չկրնայ և չի ալ կարող ներել, որ Միջին Եւրոպայի երկու մեծագոյն քրիստոնէայ ազգերը չկրցան՝ առնուազն գոնէ հոս, ուր խնդիրը կը վերաբերի ամբողջ ազգի մը ոչնչացումին, իրենց կամքը պարտադրել իրենց ասիական դաշնակցին»:<sup>46\*</sup>

Օտար անաչառ դիտողի մը վկայութեամբ այս էր հայրենիքի և ազգի դրութիւնն այն պատուիրակութեան, որոնց կը շռայլուէր Պոլսում ամեն պատիւ, և ինչպէս Ալ. Խատիսեան կը գրէ. «արտակարգ սիրալիւր» վերաբերում:

Թուրք դիւանագիտութիւնը, որ հայ պատուիրակութիւնը հրաւիրած էր Պոլիս՝ վավերացնելու Բաթումի դաշնագրութիւնը մէկ ամսուան ընթացքում, կը ձգձգուէր Պոլսի կոնֆերանսի գումարումը: Նախ, իրենք թուրքերն էին բուն պատճառը, երկրորդ՝ իր զինակիցները, որոնք նոյնպէս պիտի

<sup>44\*</sup> Ալ. Խատիսեան, Օրագրութիւն, 11 օգոստոս:

<sup>45\*</sup> Գ. Օհանջանեան, նամակը Բեռլին, 19 օգոստոս:

<sup>46\*</sup> Deutschland und Armenien, N 434 (էջ 431):

մասնակցին: Վերջիններս դեռ իրարու մեջ և թուրքիայի հետ գլխաւոր զօժերով համաձայնութեան չէին եկեր Կովկասի վերաբերմամբ, ուստի և չէին կամենար ժողով զումարել: Թուրքիան Կովկասի վերաբերմամբ ունէր երեք աստիճանի ծրագիր: Մեծագոյն ծրագիրն էր տիրել ամբողջ Կովկասին և Պարսից Ադրբեջանին ու թուրքեստանին և ինչպէս «Իգտամ»-ի Լուցեռնի թղթակիցը կը գրէր հեզմելով.- «Մեր թուրքիստները առասպելական թռչունի մը թևերուն թռած կերթան մինչև Չինաստան, կիրկիզներու երկիրը, մոնգոլներու և սարդերու աշխարհը»<sup>47\*</sup>: Երկրորդն էր հրաժարել Անդրկասպեան երկրներուն և պարսիկ Ադրբեջանին տիրելու ցնորքէն և ստեղծել թաթար Ադրբեջանեան անկախ պետութիւն և նոր թուրք թագաւորութիւն մը Կասպից ծովու ափին, Բագու մայրաքաղաքով և Յայաստանը խեղդել իր անծուկ օղակին մեջ: «Յիլալ-ի-Ահմէր» թերթը (Յուլիս. 24) կը գրէ. «Կուզեմ քանի մը խօսք ըսել այն երկրի մասին, որու դրօշը չի տարբերէր թուրքիայի դրօշէն, բայց եթէ աստղի ճաճանչներու թւովը (8՝ փոխանակ 5-ի), այս Կովկասի Ադրբեջանն է, «Ադրբեջանի Հանրապետութիւնն» է, կամ, աւելի ճիշտն ըսելու համար թուրք թագաւորութիւնը Կովկասում»:

Երրորդն էր նուազագոյն ծրագիրը, որուն պիտի դիմէին նեղն ինկած դէպքում, այն է՝ կազմել Կովկասի մեջ չորս անկախ հանրապետութիւն՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան և Հիւսիսային Կովկաս, իրենք քաշուին մինչև Բրեստի սահմանը, դաշնակցական կապերով միացնել ասոնք, ապահովելու համար թուրքիայի սահմանը ռուսներու կողմէն և նոյն ձևով կապել թուրքիայի հետ:

Յունիսէն մինչև հոկտեմբեր թուրք դիւանագիտութիւնը պիտի անցնէր այս աստիճանումներէն: Թուրքիան շուտով սթափեցաւ իր մեծագոյն ծրագրէն կամ «ցնորքէն», բայց երկար ատեն կասկած մնաց երկրորդին, մանաւանդ երբ յաջողեցաւ գրաւել Բագուն (Սեպտեմբեր 15-ին): «Իգտամ» թերթը Օգոստոս 7-ին կը գրէ. երբ նոյն միջոցին սխալ լուր մը տարածուեցաւ, իբր թէ Բագուն գրաւուէր է. Կովկաս բնաւ չի նմանէր Բալքանին, Կովկաս մեր կեանքն է, մեր հոգին: Բացարձակօրէն անհրաժեշտ է, որ այս երկրի ժողովուրդը սիրէ թուրքերը, նոյնպէս և թուրք կառավարութիւնը պիտի աշխատի իմաստուն քաղաքականութեամբ իրեն կապել ասոնք... Թուրք կառավարութիւնը չի կրնար և պէտք ալ չէ, որ անտարբեր մնայ, որ մէկ ուրիշ քաղաքական կամ տնտեսական ազդեցութիւն հաստատուի Կովկասում: Թուրք կառավարութիւնը պէտք է հսկէ, որ Կովկաս չը դառնայ թատրաբեմ՝ ազդեցութիւններու բաղխումին Կովկաս պէտք է անկախ ապրի և մեզի հետ ըլլայ մարմնով և հոգով: Միւս կողմէն՝ մենք ոչինչ ունինք ընելու Կովկասէն և Պարսկաստանէն անդին: Կովկասի վրայ այսպէս աչք ունենալով ոչինչ վճռական ու որոշ կ'ըսէին հայ

<sup>47\*</sup> Իգտամ, սեպտեմբեր 28:



Աստվածատուր Խաչատրյան



Հայկական պատվիրակությունը Կոնստանդնուպոլիսում  
Աջից ձախ նստած՝ Գ.Խատիսյան, Գ.Ղորղանյան, Ա.Ահարոնյան,  
Աջից ձախ կանգնած՝ թուրք պաշտոնյաներ, Դ. Շահբաղով



Աջից ձախ նստած՝ Մուխթար բեյ, Ա.Խատիսյան, Բ.Քոչարյան, Բ.Բունիաթյան  
Աջից ձախ կանգնած՝ Ա.Աղաբաբյան, Տ.Միրզոյան, Լ.Լիսիցյան



ՀՀԴ 9-րդ ընդհանուր ժողովը, 1919թ., Երևան  
Ա.Խաչատրյանը նստած 4-րդ շարքում՝ աջից 4-րդ



Ավետիս Ահարոնյան




Ալեքսանդր Խատիսյան



Հանո Օհանջանյան



Արտաշես Բաբայան



Հովհաննես Քաջազնունի



Սիքայել Պապաջանյան



Արշակ Ջանայան



Արմեն-Գարո  
Գ. Փաստրնաճյան





Թովմաս Նազարբեկյան



Մովսես Սիլիկյան



Գևորգ Խատիսյան



Գաբրիել Ղորղանյան



Արամ Մանուկյան



Խաչատուր Կարճիկյան



Արշակ Զուրաբյան



Մաղաքիա Օրմանյան



Իսիդոր Ռամիշվելի



Իրակլի Ծերեթելի



Մեհմեդ 5-րդ Սուլթան



Մեհմեդ 6-րդ Սուլթան



Եվգենի Գեգեչյոնի



Աղակի Չիտենյեցի



Էնվեր փաշա



Թալեաթ փաշա



Ջեմալ փաշա



Ահմեդ Իզզեթ փաշա



Նուրի փաշա



Ռաուֆ բեյ



Հալիլ բեյ



Շեֆքեթ փաշա



Ջափիդ բեյ



Ահմեդ բեկ Աղաև



Դոկտոր Նազըմ



Բեհադդին Շաքիր



Վերներ ֆոն Շուլցենբուրգ



Հանս ֆոն Սեկտ

պատվիրակութեան և կը շարունակէին խօսքերով յորդորել հայերը, իսկ «թուրք մամուլը շարունակ կը խօսէր հայկական խնդրի հաշուեյարդարութեան»<sup>48\*</sup> մասին և կը հիմնուէին այն բանի վրայ, որ իրենք Հայաստան ստեղծեցին, ուստի և խնդիրը լուծուած էր: Բայց եղաւ և ժամանակ, երբ թուրքերն այլևս իրենց արտայայտութիւններու մէջ իսկ դադրեցան հաշի առնել հայերը և էնվերը ուղղակի ըսեր էր. «եղէք մեզի հետ կամ մենք կը լինենք ձեր դէմ»:<sup>49\*</sup>

Հայ պատվիրակութիւնը, որ միշտ Գերմանիայի, Աւստրիայի և ուրիշներու դիմումներ կ'ընէր երկիրը ճգնաժամային դրութենէն փրկելու և զինք խեղդող օղակը՝ երկրի սահմանն ընդլայնելու, ստիպուած էր վերապահութեամբ վարուել թուրքերու հետ, այս պատճառով յաճախ նկատողութեան կենթարկուել թուրքերու կողմէն, թէ ուղիղ քաղաքականութեան չեն հետևեր և անգամ մը խալիլ բէյն կ'ըսէր<sup>50\*</sup>. «Դուք չորս ճակատի վրայ (համաձայնականներ, Գերմանիա, Թուրքիա, մեծամասնական) դիւանագիտութիւն կըխաղաք»:

Եւրոպական պետութիւնները լքուած՝ հայ պատվիրակութիւնը հիմն բռնելով էնվեր փաշայի նախապէս քանիցս ըրած զինակցութեան առաջարկը՝ կորոշէր այլևս ուղղակի թուրքերու հետ համաձայնութեան գալ և կը բանաձևէր հետևեալ առաջարկները՝ խորհելով, թէ այս սկզբունքներու վրայ շուտով իրենց փոխադարձ դիրքը պիտի ճշտուի և հայ-թրքական համաձայնութիւնը պիտի կատարուի: Ուստի պատվիրակութիւնը հետևեալ չորս յայտարարութիւններն ըրաւ արտաքին գործերու միստին.-

1. Ռուս-Գերման լրացուցիչ դաշնագրութիւնը, որով ընդունուած է միայն Վրաստանի անկախութիւնը, պատվիրակութիւնը կ'ըսէ. «Մեզի անհասկանալի է, ինչու Հայաստանն ու Ադրբեջանը նոյնպէս չեն ճանչցուած»<sup>51\*</sup>:

2. Մենք էնվեր փաշայի առաջարկութեան համեմատ համաձայնենք «entente»<sup>35</sup> կազմել Թուրքիայի հետ՝ առանց գործածելու մեր զօրքը անոնց թշնամիներու դէմ, ինչպէս ըսաւ, որպէսզի Թուրքիան կատարեալ վստահութեամբ ապահովուած ունենայ թիկունք և երկաթուղին:

3. Կը խնդրենք վստահացնել, որ Թալաթ փաշան Բեռլինում պիտի պաշտպանէ մեր անկախութիւնը:

4. Այս բոլորով հանդերձ մենք կը պնդենք մեր երկրի ընդարձակման վրայ, որ մենք ցոյց տուեր ենք մեր պահանջներում:

<sup>48\*</sup> Ալ. Խատիսեան, Օրագրութիւն, Յունիս 23:

<sup>49\*</sup> Ալ. Խատիսեան, Օրագրութիւն, Օգոստոս 31:

<sup>50\*</sup> Ալ. Խատիսեան, Օրագրութիւն, Օգոստոս 27:

<sup>51\*</sup> Ալ. Խատիսեան, Օրագրութիւն, Սեպտեմբեր 1:

Թէև թուրք նախարար՝ Նեսիմ բէյ դիւանագիտական անորոշ պատասխաններ միայն կուտայ այս յայտարարութիւններուն, բայց ընդհանուր կացութիւնն այնքան փոխուած էր, որ թուրք մտայնութիւնն ալ յեղաշրջման ենթարկուեր էր: Գերման-Ռուս նոր դաշնագրի<sup>36</sup> յայտնութիւնը ռումբի մը պէս պայթեցաւ Պոլսում և թուրք մամուլը շշմած կը հարցնէր. «Արդեօք մենք ունենք արտաքին գործերու նախարարութիւն»: Թուրքիան ինքզինք ծախուած կը համարէր ռուսներուն իր «մեծ դաշնակցի» կողմէն, ուստի ասոր դարման մը կը փնտրէին:

«Իթթիհաթի» կուսակցական պաշտօնաթերթը՝ «Թանին» (օգոստոս 14-ին) կը յայտարարէր.- «Նուաճելու (Կովկաս) և գրաւելու գաղափարն ոչինչ արժէ, որովհետև Թուրքիան չի հետևեր և պիտի չը հետևի ուրիշ երկրակազմական քաղաքականութեան, բայց եթէ անձեռնմխելի պահել իր ամբողջութիւնը և պաշտպանել իր սահմանները»:

Այս յայտարարութեամբ, ըստ երևոյթին, Թուրքիան պաշտօնապէս կը հրաժարէր նաև իր երկրորդ՝ միջին ծրագրէն:

«Ըստ երևոյթին» կ'ըսենք, որովհետև Կովկասում դէպի Բագու յառաջխաղացումը դեռ կը շարունակուէր և Սեպտեմբեր 15-ին թուրք բանակը կը մտնէր Բագու բիւրաւոր ուրիշ իսլամ խումբերով շրջապատուած և երեք օր (Սեպտեմբեր 15, 16, 17) ահռելի կոտորածը կը շարունակուէր և 20000 հայ զոհ կերթար այս դժոխսային ծրագրին:

Խիստ շահեկան է Թուրք բանակի Կովկասի ճակատի սպայակոյտի պետ Գերման գնդապետ Paraguir-ի<sup>37</sup> մէկ տեղեկագիրը, որով կը ներկայացնէ թուրք փաշաներու դիրքը Բագուի կոտորածի միջոցին: Ստորև կը դնենք անոր կարևոր կտորները:

«Նուրի փաշան, որ Բագուի մէջ գերագոյն հրամանատարն էր, անփոյթ գտնուեցաւ բուն ժամանակին և բաւարար չափով միջոցներ ձեռք առնել՝ քրիստոնեաներու և Երոպացիներու կեանքն ու ստացուածքը պաշտպանելու սպառնացող վտանգի դէմ: Կը խնդրեն իբր ապացոյց իմ ըսածին հետևեալ կէտերը վկայութեան կոչել»-

1. Օգոստոս 23-ին Միւրտել փաշան կ'ըսէր ինծի, որ թաթարները բացայայտօրէն կ'արտայայտուին, թէ իրենք պիտի կոտորեն հայերը, հենց որ թուրքերը գրաւեն Բագուն: Այս յայտարարութիւնը հաղորդեցի Նուրի փաշային և շատ անգամ խնդրեցի բուն ժամանակին կանխող միջոցներ ձեռք առնել:

2. Թէ Միւրտել, և թէ Նուրի փաշաներուն ներկայացուցի Բագու քաղաքի յատակագիծը և ցուցուցի, թէ ինչպէս մեծ քաղաքի մը գրաւումը պէտք է կատարել նախ իրենց ապահովութեան և յետոյ՝ օտարու կեանքի և գոյքի ապահովութեան համար:

3. Թաթարներու մեծագոյն մասը կը բնակէր քաղաքի պարսպապատ մէկ մասում 2 կիլոմէթր շրջապատով: Շատ դիւրին պիտի լինէր պահակներով գոցել անոնց անցքերը, և այսպիսով, կղզիացնել արիւնար-

բու մարդասպաններու մէկ մեծ մասը: Մինչև վերջ ալ այս միջոցը չգործադրուեցաւ:

4. Նախապէս արդէն Գանձակում կամ Թիֆլիսում պէտք էր յայտարարութիւններ պատրաստել տալ, որոնք զինուորական դատաստան յայտարարէին և իւրաքանչիւր կողոպուտ մահապատժով դատել սպառնային: Երբ կոտորած դեռ երրորդ օրը նոյն կատաղութեամբ կը շարունակուէր, այն ատեն միայն վերջապէս որոշուեցաւ այս բանն ընել:

5. Սեպտեմբեր 15-ին թշնամին փախչելէն յետոյ 1000 զինուոր միայն դրկուեցաւ ահագին ընդարձակութեամբ քաղաքի միլիիօներու թաղի պաշտպանութեան: Աւելորդ է ըսել, որ այսքանը շատ անբաւարար էր:

6. Միւս գունդերը չգործադրուեցան քաղաքի պաշտպանութեան համար: Չօրքը հանգիստ կերպով բանակած էր բարձունքներու վրայ, կը լսէր վարը՝ քաղաքում կատարուած հրացանածոութիւնը տներու մէջ և 16-ին կէսօրէն առաջ զօրահանդէս կատարուեցաւ փաշայի առջև՝ ի պատիւ մահմեդականներու դուրբան բայրամի տօնին կամ ստիպողաբար ըրած դիմումին Դալիլ փաշայի մօտ՝ իբր մարդ և իբր բարեկամ, Նուրին հրամայեց, որ երկրորդ գունդ մըն ալ պէտք է քաղաք մտնէ: Ես պարտք համարեցի յայտարարել անմիջապէս, որ այս միջոցը բաւարար չէ: Նուրին պատասխանեց՝ ինքը բաւարար կը համարի:

7. Երբ մենք «Մետրօպօլ հիւրանոցի» դահլիճում խմբուած էինք, ամեն կողմէ հեռախօսներով և անձնապէս օգնութեան կոչերու հեղեղ մը կը թափուէր մեր վրայ: Չեզօք երկիրներու հիւպատոսները, Դանիական իրենց զլուխ ունենալով, ներկայացան և կծու խօսքերով բողոքեցին թուրքերու անտարբեր մնալուն դէմ, որու շնորհիւ միայն կոտորածն ու կողոպուտը կը շարունակուէին:

Բնականաբար բոլոր գերմանները և գերման պաշտպանութեան ապաստանածները ինծի կը դիմէին, սակայն հիւպատոսներն և ուրիշ անձնաւորութիւնները ինձ իբր գերմանի խնդրեցին միջնորդութիւն և օգնութիւն: Ես այս բանը հաղորդեցի Նուրի փաշային: Նախ թախանձեցի, քանի որ գերման պաշտօնական ներկայացուցիչ չկար գերմաններու կեանքի և գոյքի պաշտպանութեան համար: Ես խնդրեցի անմիջապէս պաշտպան պահակներ կեցնել գերման բնակարաններու առջև:

8. Փոխանակ ամեն միջոցներով քաղաքի մէջ կարգը վերահաստատելուն ձեռնարկելու՝ փաշաները, քաղաքի պարտեղ, ամբողջ գլխաւոր սպայակոյտի պետերն անգործ կը շրջէին հիւրանոցի սրահներում: Երբ բողոքներ և խնդրանքներ կուղղուէին Նուրիին կամ քաղաքի պարտիին, անոնք այնպիսի անկարեկից վերաբերում կը ցուցնէին, որ անմիջապէս կը հասկցուէր, որ ամէն լուրջ եռանդ ու կամք կը պակսի: Տեղի ունեցաւ մեծ շքասեղան մը, որուն մասնակից էին բոլոր զօրավարներն և սպայակոյտը՝ քաղաքի պարտիի հետ միասին: Կը նուագուէր Կովկասի երգը: Անթագնամիտ<sup>38</sup> եղանակով բովանդակութիւնը թարգմանեցին ինծի, թէ այժմ միայն Թուրքիան իր հին սեփականութիւնը՝ Կովկաս վերստին պիտի

գրաւ: ճաշկերոյթի միջոցին և անկէ ետոյ կոտորածն ու կողոպուտը կը շարունակուէր քաղաքում: Թուրքերն ասոր պատճառով բնաւ չէին խանգարէր իրենց անգործութիւնը:

Ես չեմ կրնար առանց յիշելու թողնել շատ անգամ բացայայտօրէն արտայայտուած այն տեսակետը, թէ թուրքերու վարմունքը առիթ տուաւ թաթարներուն հայերէն վրեժխնդիր լինել:

Կէսօրէն վերջ 5-6 ժամերու միջև մեծ յուզումով «Մետրօպօլ հիւրանոցի» դահլիճը մտաւ Դանիայի հիւպատոսը, ուր անփոփոխ կը շարունակուէր խնջոյքը և հաղորդեց ինձի, թէ նորէն գերման տուներ կողոպտուած և բնակիչները գէնքի սպառնալիքի տակ կը գտնուին: Ես դիմեցի Նուրի փաշային և բարձր ու շեշտուած ձայնով ըսի անոր մօտաւորապէս հետևեալը. «Ձերդ Գերագանցութիւն, կը խնդրեմ ձեզ այժմ վերջապէս ազդու միջոցներ ձեռք առնել գերմաններու պաշտպանութեան համար: Այլապէս ստիպուած պիտի լինեմ տեղեկագրել Պոլսի գերման դեսպանին, թէ Դուք որքան սակաւ կը պաշտպանէք գերման կեանքն ու գոյքը»: Նուրին փոքր-ինչ շփոթուած պատասխանեց, թէ ինքն արդէն ամեն բան ըրեր է: Ես ըսի, թէ այս իրականութեան չի համապատասխանէր: Զօրահանդէս կատարուեցաւ, մինչդէռ ջարդն ու կողոպուտը կը թագաւորէին: Դեռևս կը շարունակէին քաղաքի առջև անգործ մնալ 5 զունդ զինուորներ, ասկէ զատ քաղաքի պարէտը դեռ կը նստի հանգիստ կերպով դահլիճում, ղեկավարներէն և սպայակոյտէն դեռ ոչ ոք մեկներ է հիւրանոցէն՝ անձամբ գործ մը կատարելու: Կրկին անգամ ստիպողաբար խնդրեցի, որ այժմ վերջապէս գերմաններու պաշտպանութեան համար պէտք եղածն ընել: Ես անձամբ 3 գերման սպաներու հետ դիմեցի քաղաք, որպէսզի ըստ կարելոյն օգնենք գերմաններուն, ասկէ յետոյ ես դարձուցի կռնակս ու մեկնեցայ դահլիճէն»:

Կոտորածէ շաբաթներ առաջ արդեն յայտարարուած էր և ոչ մէկ կապ չունի զինուորական գործելակերպի անհրաժեշտութեան հետ...

Սեպտեմբեր 18-ին կէսօրէն առաջ խալիլ փաշայի համհարզն ինձի բերաւ իմ պաշտօնանկութեան թուղթը.-

Votre tenue et vos parolés d'hier contre S.E. Noury Pacha le commandant en chef de l'armée Islam devant une foule amie et étrangère et par conséquence la plainte officielle.

S. E. a` moi m'obligent définitivement de mettre un terme a votre Mission de chef d'Etat-major chez moi.

Je Vous ai mis a` la disposition de grand quartier Général auquel je l'ai télégraphié.

Halil

En chef de groupe d'armées d'Est Lieutenant-Général et commandant.<sup>39</sup>

Մինչդէռ Նուրի և խալիլ փաշաները Բագուի «Մետրօպօլ» հիւրանոցում Կախթի գինիի կարմիր ուզխերով կը մըռչխնէին իրենց Սարդանա-

բալեան խնջոյքը և նուազախումբը Կովկասի թուրք ազգային երգը կը հնչեցնէր, անդին թափուած հայ արիւնի ճապաղիքէն դուրս կուգար արդարութեան աջը և կը գրէր. «Մանէ, թեկէր, փարես»<sup>1\*</sup> Պաղեստինի ճակատի վրայ զօրավար Ալեմբիի հրամանի տակ գունդ մը հայ կտրիճներ կը ճեղքէին թրջական ճակատը և կը գրաւէին Արարի անմատչելի բարձունքը, որ էնվէր «Երկրորդ Դարդանէլ» անուանէր էր: Արիւնագանգ և բարբարոս մեծ կայսրութեան կործանումի սկիզբն էր այս: Քանի մը օրէն կը գրաւուէր Դամասկոս՝ իսլամութեան երկրորդ նուիրական մեծ քաղաքը՝ Պալեստին ու Սիրիան, Արաբիայի և Միջագետքի հետ այլևս ընդ միշտ կորսուած էին օսմանեան կայսրութեան համար: Մինչև Չինաստան և Մոնգոլիա երթալ երազողները այժմ ստիպուած էին մտահոգել նոյն ինկ կայսրութեան մայրաքաղաքի մասին:

Այժմ պէտք էր խորհել զոնէ կայսրութեան մնացած մասը փրկել, բայց ինչպէս դուրս գալ այս ծանր կացութենէն: Թուրքիան այժմ ձեռք կ'առնէր իր նուազագոյն ծրագիրը, որու էական կէտերէն էին՝ պահել Բրեստի սահմանները, սահմանակից չմնալ Ռուսիային և կարգադրել հայկական խնդիրը, որը, այժմ արդէն համոզուած էին, անպատճառ ընդհանուր հաշտութեան ժողովին միւթ պէտք էր դառնար:

Թուրք մամուլը, որ միանգամայն կառավարութեան ներշնչումով կը կառավարուի, այս շրջանի մէջ շատ ուշագրաւ յօդուածներ կը նուիրէր հայ դատին և հայ-թրջական յարաբերութեանը, ուր բացորոշ կը տեսնուի ահագին յեղաշրջումը թուրք մտայնութեան մէջ:

«Ահաւասիկ ինչ որ պէտք է ընել,- կ'ըսէ «Աթի» թերթը դեռ Օգոստոս 10,- դրութիւնը փրկելու համար, բոլորովին մէկ կողմ դնել կրօնական խտրութիւնը, դառնալ անկեղծ բարեկամ մեր դաշնակիցներուն և եղբայրներ՝ մեր քրիստոնեաներու հետ՝ տալով միևնոյն ժամանակ բաւարարութիւն այս վերջիններու օրինական պահանջներուն, մտածել ապահովելու ոչ միայն մեր դաշնակիցներու շահերը և մեր քրիստոնեայ ժողովուրդներու շահերը, այլև մեր իսկ շահերը»: Երեք տարի շարունակ ամբողջ թուրք մտաւորականութիւնն, առանց բացառութեան, մէկ նշանաբան ունէին. «Թուրքիան թուրքերուն», իսկ քրիստոնեայ ժողովուրդները կ'որակուէին «մեր ներքին թշնամիները», որոնց հետ ամեն հաշիւ պէտք էր վերջացնել պատերազմի ընթացքին: Այժմ արդէն «քրիստոնեայ եղբայրներ» են, որոնց օրինական պահանջներուն պէտք էր բաւարարութիւն տալ»:

<sup>1\*</sup> Բառացիորեն՝ «Հաշված, կառուցված և տրված պարսիկներին»: Ըստ Աստվածաշնչի, 539թ., Ք.ա. Բաբելոնի թագավոր Բաղդասարը իր պալատում խնջույքի պահին տեսնում է մի ձեռք, որ դիմացի պատին կրակով գրում էր այդ բառերը: Նույն գիշերը պարսիկները գրավեցին Բաբելոնը և Բաղդասարը սպանվեց:

Սեպտեմբերի սկզբին թուրք դիւանագիտութիւնը միանգամայն կը փոխեր իր քաղաքականութիւնը, և կոմս Ամբրոջին իսկ կը զարմանայ այս հիմնական փոփոխութեան վրայ և կը տարակուսի անոր անկեղծութեանը: Բայց մենք չենք տարակուսեր, քանի որ գիտենք, թէ Թուրքիան այժմ ուրիշ ելք չունէր, բայց եթէ հայերու հետ հաշտուել և իբր բարեկամ ներկայանալ ընդհանուր հաշտութեան սեղանին: Հայերու վերաբերմամբ այնքան դաժան և անողոք քաղաքականութիւնը հիմայ մէկէն կը փոխուէր և կը դառնար ջերմ, սիրալիք բարեկամութեան և ամէն ջանք գործ կը դրուէր օր առաջ հայերու հետ խնդիրը կարգադրել և «թևանցուկ, ինչպէս իրենք կըսէին, մտնել ընդհանուր հաշտութեան ժողովասրահը»: Տարտամ ու անորոշ խօսքերէ յետոյ, վերջապէս, Թուրքիան երևան կուգայ իր որոշ քաղաքականութեամբ հայոց խնդրի հանդէպ և իրենց ծրագրի համեմատ անոնք այս խնդրի լուծումով պիտի լուծէին միաժամանակ երկու խնդիր. նախ՝ անկախ Հայաստան ընդունելով, պաշտպանած պետութիւն մը ստեղծած պիտի լինէին՝ Թուրքիայի և Ռուսիայի միջև, երկրորդ՝ թրքահայ խնդիրն ալ ասով վճռած կը լինէին հաշտութեան ժողովին ներկայացնելով անկախ Հայաստան մը, ուր կրնային ամփոփուիլ և թրքահայերը, ուրեմն այս ուղղութեամբ պէտք էր միջոցներու դիմել և թուրք հասարակական կարծիքը կը պահանջէ, որ Մեծ Եպարքոս Բեռլին երթայ և Գերմանիայի հետ ուղղակի կարգադրէ Կովկասի խնդիրները:

Թալաաթ փաշան, հակառակ իր բազմազբաղ վիճակին, ունկնդրութեան կընդունի հայ պատկերակութիւնը և արտակարգ ջերմ սիրալիքութիւն մը ցոյց կը տրուի: «Ինքը Բեռլին կերթայ՝ պաշտպանելու Թուրքիայի շահերը, և թէ ինքը կը հաւտայ Հայաստանի անկախութեան անհրաժեշտութեանը և պիտի ձեռք բերէ անոր անկախութիւնը»<sup>1\*</sup> և կը խնդրէ ուշադրութիւն դարձնել «Վաքըթ» թերթի յօդուածի (նոյն օրը լոյս տեսած) վրայ, ուր «ապացուցուած է անկախ Հայաստան ստեղծելու անհրաժեշտութիւնը»:<sup>2\*</sup>

<sup>1\*</sup> Ալ. Խատիսեան, Օրագրութիւն, Սեպտեմբեր 3:

<sup>2\*</sup> «Վաքըթ», Սեպտեմբեր 3, «Մեր քաղաքականութիւնը Կովկասում և հայերը»:

Երբեմն ինչպէս տարօրինակ են պատմութեան խաղերը: Եթէ ասկէ տասը տասնևհինգ տարի առաջ մէկն ըսեր հայերուն «պիտի գայ օր մը, երբ թուրք կառավարութիւնը պիտի դառնայ միակ անկեղծ կուսակիցը ձեր անկախութեան: Այն օրն Անգլիան, Ֆրանսան և Ռուսիան, որոնք, առաջնորդուած իրենց շահերով, միշտ կը խնդային ձեզի և կը յաւակնէին ձեզ պաշտպանել մարդասիրութեան անունով, երես պիտի դարձնեն ձեռն այնպիսի վարկեան մը, որ վտանգաւոր նոյնքան և վճռական ըլլայ ձեր ազգային գոյութեան մէջ», անոնք պիտի ստանային զարմացական դէմք մը՝ իբր թէ արտառոց խօսքեր մը ըսած լինէին և պիտի խնդային այսպիսի խօսքեր արտասանողի մը վրայ:

Ինչ որ ասկէ երկու տարի առաջ անհաւանական պիտի թուէր, այսօր իրականութիւն է: Ռուսիայի և իր դաշնակիցներու միջև կնքած գաղտնի դաշնագրութեան հրատարակութիւնը համոզեց հայերը, որ այս պետութիւնները վարկեան մանգամ չդանդաղեցան ցարիզմին զոհելու անկախ Հայաստանի մը գոյութիւնը, փոքր ինչ աւելի վերջ՝ երբ հայերն օգնութիւն խնդրէին այս միևնոյն պետութիւններէն, անոնք բնաւ պիտի չամչնային պատասխանելու. «Ի՞նչ կըրնանք ընել, մեր թնդանոթները չեն հասնէր մինչև Արարատ»:

Վերջապէս հասկցան, որ համաձայնական պետութիւնները միշտ կը զօհին փոքր ազգերն իրենց ապօրէն փափաքներուն: Այս զգացումը միացած Կովկասում ստեղծուած կացութեան հետ, պիտի բանայ ոչ-պահանջկոտ հայերու աչքերը, որոնք սկսէր են փնտռել մերձեցում մը Քառեակ զինակցութեան խումբին՝ պաշտպանելու համար հայերու շահերը: Այս իրողութիւնը, որ ռուս-գերման բանակցութեան միջոցին միայն Վրաստան հաշի առնուած է, ալ աւելի բացաւ հայերու և մեր կառավարութեան աչքերը, որ այժմ դարձաւ հայ պետութեան միակ բարեկամն ու պաշտպանը: Առաջին հայացքով այնքան տարօրինակ այս դրութիւնն այժմ ունի իր պարզ և իրաւացի հիմնը: Եթէ կուգենք պաշտպանել հայերը, բնաւ անոր համար չէ, որ կը սիրենք հայերը, այլ որովհետև շահ ունենք այսպէս վարուելու: Եւ այս պատճառով է, որ հայերը կրնան հաւտալ մեր տեսակէտի անկեղծութեանն այս խնդրում և ամէն վստահութիւն ունենալ այս տեսակէտի հաստատութեան վրայ, եթէ միայն իրենց սխալներով յառաջ եկած ցաւալի պատահարները չգան պղտորել դրութիւնը:

Աշխարհի մէջ չկայ ժողովուրդ մը, որ անտարբեր դիտողի դերումը մնա, երբ դուրսէն կամ ներսէն կը խլեն իր իրաւունքը: Անօգուտ է ըսել, թէ այսպիսի դէպքում իւրաքանչիւր ազգ ինքզինք կը պաշտպանէ ծայրայեղօրէն: Սխալաբան թէ ինչու մենք երբէք չկրցանք հաշտուել «անկախ Հայաստանի» մը գաղափարի հետ մեր երկրուն: Բայց դրութիւնը փոխուեցաւ, քանի որ այս անգամ խօսքը կը վերաբերի Հայաստան մասնեղծելու ռուսներուն վերաբերող երկրամասի վրայ: Այնպէս որ մեր կառավարութիւնը նոյն իսկ սկզբէն նախատեսեց, որ այս պայմաններու մէջ ստեղծուած Հայաստան մը մեզի օգտակար միայն կրնայ լինել: Մենք կը պարզենք այս Հայաստանին մեր ձեռքն անոր առաջարկելու բարեկամաբար մեր օգնութիւնը և պաշտպանութիւնը և մէկ հարուածով յաջող կերպով կը լուծենք մեծ խնդիր մը, որ երկար ատենէ ի վեր անլոյծ կը մնար: Բացատրենք մեր միտքը փոքր ինչ աւելի յստակօրէն. Կովկասում և Ամերիկայում և ուրիշ երկրներում ցրուած՝ աւելի կամ նուազ խիտ ապրող հայերը կը ձգտէին իրենց անկախութեանը: Այս նպատակով անոնք ամէն կողմ քաղաքական գրգռումն յառաջ կը բերին՝ առանց կանգ առնելու ո՛ր և է միջոցի առջև: Թուրքիան էր նպատակակէտն այս գործունեութեան:...

Այս գրգռիչ գործունեութեան վերջ մը տալու միակ միջոցն է տալ հայերուն տեղ մը: Երբ անոնք ունենան իրենց տեղը (երկիրը) պիտի դադրին գրգռիչ գործունեութենէն և պիտի սկսին պարապիլ իրենց գործերովը:

Կը բարեհաճի ըսել նաև. «Ես կը հաւտամ հայերուն, որովհետև զիտեմ, որ հայերը խօսքի ասպետներ են, եթէ անգամ մը «այո» ըսին, կը նշանակէ «այո»: Մեր երկիրը պէտք է ապահովել»: Նոյն երեկոյ երկաթուղիի կայարանում, ուր հայ պատուիրակութիւնն ալ ներկայ էր մեկնումին, մասնատրաբար կը մօտենայ հայերուն, սիրալիր կերպով կը խօսի և Ահարոնեանի ականջին կը փսփսայ. «Ես արտաքին գործոց նախարարին արդէն խօսեր եմ, դուք շարունակեցէք ձեր բանակցութիւնները» (զինակցութեան մասին):

Վենայում Աւստրիայի Արտաքին գործոց նախարարի օգնական կոմս. Ամբրոցին կը զարմանայ թալաթի արտակարգ «հայասիրութեանը» վրայ և հայ պատվիրակ Օհանջանեանին կըսէ. - Թալաթ փաշան այնքան հիմնովին փոխեր է իր դիրքը դէպի հայերը, որ այստեղ նոյնիսկ չեն հաւատում, որ Տաճկաստանի քաղաքականութիւնը այնքան ռատիկալ

Այս կերպով այլևս պիտի չունենանք մեր հիւսիս-արևելեան սահմանի վրայ ցեղ մը, այնքան տրամադիր խանգարելու կարգը և խաղաղութիւնը մեր երկրում իր անպատասխանատու գործունեութեամբ, միևնոյն ատեն կ'ազատուինք այնպիսի մարդոցմէ, որոնք շարունակ մեր դէմ գրգռիչ գործունեութիւն ունին արտասահմանում, և որ տեսակ մը հինոց դարձեր է մեր հայերը յեղափոխութեան գրգռելու:

Հայաստան պիտի ծառայէ մեզի իբր պաշտպանակ միջպետութիւն մը (Etat-tampon) այն դէպքում, երբ Ռուսիան մեր վրայ յարձակուելու միտք ունենայ: Ասկէ զատ Հայաստան տնտեսապէս ապրել կարենալու համար ստիպուած է օգտուելու մեր երկրէն և մեր բոլոր ճամբաներէն ու հաղորդակցութեան միջոցներէն ցամաքային, թէ ծովային: Ուրեմն քաղաքական տեսակէտ Հայաստան շատ առաւելութիւններ ներկայացնող միջնորդ մըն է մեր ձեռքում:

Այս միջնորդն օգտագործելու վայրկեանն եկեր է, պիտի ըսեն մինչև իսկ, թէ այս վայրկեանը կրնայ մենէ շուտով խոյս տալ: Սովորաբար մեր ներքին քաղաքականութիւնը միշտ հիմնուած է եղեր զգացումներու կամ պատահականութեան վրայ: Ժամանակ է, որ մեր քաղաքականութիւնը հիմնենք միմիայն հաշի վրայ: ... Մենէ միայն կախումն ունի գործն այնպէս կարգադրել, որ անկախ Հայաստանը կարողանայ իր ազդեցութիւնն աւելցնել դուրսի հայերու վրայ այս բանն ընելու համար պէտք է ամրապնդել այս Հայաստանի դիրքը և ապրելու պայմաններ տալ անոր պետութեանը:

... Պէտք է, որ Թալաթ փաշան պաշտպանէ (մեր դաշնակիցներու առջև), միևնոյն ժամանակ նոյն եռանդով և Հայաստանի խնդիրը՝ ցոյց տալով իբր խնդիր մը, որ շատ մօտէն մեզ կը հետաքրքրէ:

... Շատ մեծ կարևորութիւն ունի, որ մենք օգտուինք հանգամանքն պատերազմէն յետոյ մեզի համար սկստող նոր դարագլխէն առաջ՝ վճռել հայոց հարցը, և այս այնպիսի ձևով մը, որմէ մեր պատինն ու արժանիքն օգտուի արտասահմանում:

Ահմեդ էմին:

կերպով կարողանայ փոխուել և կարիք են զգում զգուշութեամբ վերաբերուի նրա խօսքերին: Նա ասել է՝ Տաճկաստանը պատրաստ է բաւականաճալ Բրեստի սահմաններով, միայն թէ իրենց ազատութիւն տրուի գործելու և իրենց ազդեցութիւնը տարածելու Ադրբեջանում»:<sup>53\*</sup>

Նոյն ամսու 6-ին ունկնդրութեան կընդունուի հայ պատուիրակութիւնը Սուլթանի մօտ, ուր նոյնպէս սիրալիր ընդունելութիւն կը լինի և նշանակալից խօսքեր կ'արտասանէ Նոր Սուլթանը: Ահարոնյան կը շնորհաւորէ անոր գահակալութիւնը և մաղթանքներ կ'ընէ կայսրութեան յաջողութեան համար և կը շեշտէ անկախ Հայաստան ստեղծելուն գործակցելուն համար: Այս անկախութիւնէն հայերը երբէք չեն հրաժարիր և որը պիտի պաշտպանեն՝ մնալով բարի դրացի թուրքերուն: Սուլթանը կը պատասխանէ,<sup>54\*</sup> «թէ ինքը ուրախ է տեսնել անկախ Հայաստանի ներկայացուցիչները, թէ երջանկութիւն կը փափաքի այս նոր պետութեանը և թէ ինք կատարելապէս հաւատացած է, որ երկու դրացի պետութիւնները՝ Թուրքիան և Հայաստան պիտի զարգանան իրենց ազգերու բարօրութեան համար և թէ անոնք միասնաբար պիտի կռուին ընդհանուր թշնամու դէմ. թէ ինքն ուրախ է, որ հայ ազգի մէջ երևան եկան ուժեր, որոնք կրցան կազմակերպել ինքնակաց պետութիւն և պատուիրակներ ղրկեցին Պոլիս: Սուլթանը մաղթեց հայ պետութեանը «լինել ոչ միայն երջանիկ, այլև զօրաւոր»:

Իսկ արտաքին գործերի նախարար Նեսիմ բէյ հայ պատուիրակներուն կ'ըսէ. «Թուրքիայի համար Հայաստանի անկախութեան հարցը վճռուած է անդառնալիօրէն և այս որոշումը շատ օգտակար պիտի լինի ապագայ Հայաստանի համար, ասոր պէտք է հաւատացած ըլլան հայերը»:<sup>55\*</sup>

Ուրիշ անգամ (Սեպտեմբեր 16) Նեսիմ բէյ դարձեալ համակրական խօսքեր կ'ընէ. «Հայաստանի անկախութեան գաղափարը մեծ ընդունելութիւն կը գտնէ հասարակաց մտքին մէջ և ինքը կը զարմանայ այսպիսի ջերմ արտայայտութեան նկատմամբ»: Ուրիշ յայտնի հայատեաց և դիւերիմ թշնամի հայ ազգին՝ Աղա օղլի Ահմեդ (Աղայէվ), որ օսմանեան բանակի Կովկասում յառաջ խաղալը և հայ ցեղի բնաջնջումը կը պահանջէր, կը խօսի Կովկաս-թրքական զինակցութեան մասին և շատ հիմնաւոր կերպով կը ցուցնէ հայկական խնդրի կարգադրումը՝ իբրև կենսական անհրաժեշտութիւն Թուրքիայի համար<sup>56\*</sup>: Նոյն Աղայէվը Սեպտեմբեր 20-ին դարձեալ խօսելով հայ պատուիրակներու հետ անվերապափորէն կ'արտայայտուի. «Նա այժմ շատ եռանդուն կերպով առաջ է մղում «Արևելեան դաշնակցութեան» գաղափարը: Նա ասում էր, եթէ մենք կարողանանք ջնջել բոլոր

<sup>53\*</sup> Համ. Օհանջանեան, Մամակ, Վեննա, Սեպտեմբեր 8:

<sup>54\*</sup> Ալ. Խատիսեան, Օրագրութիւն, Սեպտեմբեր 6:

<sup>55\*</sup> Ալ. Խատիսեան, Օրագրութիւն, Սեպտեմբեր 12:

<sup>56\*</sup> Ալ. Խատիսեան, Օրագրութիւն, Սեպտեմբեր 18:



հայերին, դա կը լինէր ամենալաւ գործը մեզի համար, բայց որովհետեւ այդ անկարող ենք անելու, պիտի բաւարարինք հայերի պահանջներին: Մինչև եւրոպական կոնֆերանսի սկսուելը պէտք է մեր հաշիւները վերջացնենք հայերի հետ և հայերը մեր կողմը ունենանք: Նրա կարծիքով պէտք է թրջահայ հարցը այժմ իսկ լուծել»<sup>57\*</sup>: Ես, ասում էր, ընդունում եմ Հայաստանը Սևանայ լճից մինչև Վանա լիճ, բացի այդ ձեզ պօրտ է հարկաւոր. Տրապիզոն կամ մեկ ուրիշ՝ ընտրեցէք: Իսկ դուք հայերդ պիտի պարտաւորուիք դիմագրաւել ռուսական ապագայ արշաւանքը և թոյլ տաք, որ ձեր հողով մենք կապուած լինենք Ադրբեջանի հետ»:

Թուրք խորհրդարանի փոխնախագահը կըսէ. «Հայաստան ստեղծելու գլխաւոր դժուարութիւնն անոր մէջն է, որ Հայաստան թուրքիայի և Ադրբեջանի ճամբուն վրայ կը գտնուի: Պէտք է ձեռք բերել երկու նպատակ՝ ստեղծել Հայաստան, որպէսզի լուծուի հայկական խնդիրը, և այնպէս կազմել Հայաստան, որպէսզի անցք ունենանք դէպի Ադրբեջան... Թալաթի վերադարձէն յետոյ մենք աւելի որոշ բան պէտք է կատարենք Կովկասում»:

Սակայն, մինչդեռ թուրքիան ամէն կերպով կաշխատէր սիրաշահել հայերը և բաւարարել անոնց պահանջները, որպէսզի գոնէ իրենց նուազագոյն պահանջները կարողանային իրագործել, միւս կողմէն՝ ճակատներու վրայ Քառեակ զինակցութեան պարտութիւնները գահավիժօրէն իրարու կը յաջորդէին: Գերման ճակատի վրայ նահանջն անվերջ կը շարունակուէր, հաւասարակշռութիւն պահելն իսկ այլևս անկարելի էր: Ներքին յեղափոխութիւնն արդէն պէկոծել էր Գերմանիան: Աւստրիան<sup>40</sup> արդէն քայքայուած էր և իւրաքանչիւր ժողովուրդ իր ինքնորոշումի և իր բախտն ինքը տնօրինելու վրայ կը խորհէր: Բուլգարիան ծունկի եկած համաձայնական յաղթողներու առջև շնորհ կը հայցէր: Թուրքիան այլևս ոչ Միջագետքի, ոչ Սիւրիայի վրա մտածելու ժամանակ ունէր: Գլուխը կորցրած կը խորհէր ամրացնել մայրաքաղաքը, որ Բուլգարիայի անջատուելով վտանգի ենթակայ էր: Այս էր Քառեակ զինակցութեան ընդհանուր կացութիւնը, երբ Թալաթ Վեննա և Բեռլին «արտակարգ հայասէր» կը ներկայանար և ջերմ պաշտպան Հայաստանի անկախութեան և կը համաձայնէր Գերման-Ռուս յաւելուածական դաշնագրութեան ու այսպէս կը փութար դէպի Պոլիս, նոյն իսկ վախճալով, թէ «բարեկամ» Բուլգարիայում կրնայ ձերբակալուի:

Բայց և այնպէս թուրք դիւանագետը չուզէր ցոյց տալ, թէ ներքին անհրաժեշտութիւնն է, որ կատիպէ զինք այս բոլոր զիջողութիւններն ընելու, այլ կաշխատէր ցուցնել, թէ տեղի կուտայ բարեկամ պետութիւններու առաջարկներուն և կը գոհացնէ հայերը: Համ. Օհանջանեան իր նամակովը կը հաղորդէ Ֆօն Լօսովի խօսքերը. «Այս երկու վերջին օրերը կարող ենք ասել. մենք հասնում ենք համարեա մեր նպատակին՝ վերահաստատել Բրեստի սահմանները: Թալաթին մենք համոզում ենք, որ,

միևնոյն է, հաշտութիւնը լինելու է առանց հողային գրաւումի (anexion)<sup>58\*</sup>, աւելի քան է, որ ինքը՝ Թուրքիան այժմէն իսկ բարենպաստ տրամադրութիւն ստեղծի իր վերաբերմամբ՝ ապագայ համաշխարհային կոնգրեսում ժողովուրդներ չունենալու համար իր դէմ. քանի որ, ինչ որ, միևնոյն է, մեզմից առնելու են և կոնգրեսին չհասցնել խնդիրը: Ինչպէս երևում է, այս ազդում է Թալաթի վրայ և նա համաձայնում է, միայն թէ ուզում է, որ դա կատարուի Թուրքիայի ազատ խօսքով և իբրև մի շնորհ վրացի և հայ ժողովուրդներին և կառավարութիւններին՝ Թուրքիայի կողմից և այդ բանը պաշտօնապէս ու հանդիսաւոր կերպով կատարուի Պոլսում իր վերադարձից յետոյ միւս դէլեգացիաների (պատւիրակներու) ներկայութեամբ:

Վերջապէս, այս ուղղութեամբ «համոզուած» կը վերադառնայ Թալաթ փաշան Պոլիս և ունկնդրութեան կընդունի հայ պատւիրակութիւնը Հոկտեմբեր 1-ին:<sup>59\*</sup> Թուրք դիւանագետը կը խօսի ընկճուած ու տխուր շեշտով մը: Նա վճռէր է լայն կերպով բաւարարել հայերը, որպէս զի թուրքերն ու հայերը բարեկամ ներկայանան կոնգրեսին փոխադարձօրէն գոհ: Ռուս դեսպան (Բեռլին) Եօֆէ վճռապէս մերժէր է ճանչնալ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի անկախութիւնը, որովհետև ժողովուրդը կուզէ ըլլալ Ռուսիայի հետ և մենք հակայեղափոխականներս դէմ կերթանք ռուսներուն: Գերմանիան պարտաւորութիւն ստանձնեց Թուրքիայի հանդէպ զաղտուկ հիւպատոսներ և ներկայացուցիչներ ղրկել Հայաստան և Ադրբեջան և չը ճանչնալ Վրաստանն աւելի կանուխ՝ քան երբ պիտի ընդունուի երեքի անկախութիւնը: Բագուի վերաբերմամբ դեռ ոչ մէկ համաձայնութիւն կայացաւ: Ինչ կը վերաբերի փախստականներուն՝ այս խնդիրն ալ գոյութիւն չունի, նոյնպէս և երկրի ընդարձակման խնդիրը լուծուած է: «Հոկտեմբեր 2-ին պիտի կայանայ նախարարական խորհուրդ, հոն պիտի ընտրուին կառավարութեան ներկայացուցիչներ ձեզի հետ բանակցելու համար՝ հաւանօրէն խալիլ բէյը պիտի լինի, և դուք կատարազրէ դաշնագիրը: Հաւանօրէն մենք կուտանք ընդհանուր գծերը, իսկ դուք կը մշակէք ձեր միջև (Հայաստան, Վրաստան և Ադրբեջան) երկրի սահմանները: Երբ չյաջողիք և մեզի դիմէք, մենք կը լինենք ձեր միջնորդները: Մենք կուզենք մինչև կոնֆերանսը կարգի դնել նաև հայոց հարցը Թուրքիայում: Մենք արդէն ձեր գալէն առաջ սկսեք ինք: Ես ֆատալիստ եմ և կը խորհիմ, թէ պատերազմը շուտով պիտի վերջանայ: Հայրենիքս ծանր կացութեան մէջ է: Երբ վերջացնէք սահմաններու խնդիրը, այն ատեն կրնանք խօսիլ զինակցութեան մասին»:

Ահա պատասխանն այն բոլոր հարցերուն, որոնք շուրջ չորս ամիսներէ հետո դրուած է հայ և թուրք դիւանագիտական բանակցութեան իբրև միւս, այս պատասխանները, սակայն խօսքով հայերու օգտին

<sup>57\*</sup> Արտաշես Բաբալեանի նամակը Պոլսէն:

<sup>58\*</sup> Համ. Օհանջանեան, Սեպտեմբեր 18:

<sup>59\*</sup> Ալ. Խատիսեան, Օրագրութիւն, Հոկտեմբեր 1:

վճռուած լինելու երևոյթն ունենալով հանդերձ, գործի վերածուելու համար թուրքերու կողմէն դեռ շատ աշխատանքի ու ժամանակի պէտք կար: Բայց դեռ ասոնք չգործադրուած՝ համաշխարհային ողբերգութիւնն իր վերջին գործողութիւնը կը խաղար: Թուրքիան պէտք է հետևէր իր զինակից Բուլ-գարիայի օրինակին և հաշտութիւն խնդրէր յաղթողէն: Թալաաթի ամենակարող նախարարութիւնը պէտք էր իյնար և կազմուէր նոր դահլիճ մը զինադադարի բանակցութիւնները շարունակելու:

Նախքան նոր նախարարութեան յարաբերութիւններու մասին խօսիլը՝ յիշենք նաև քանի մը բնորոշ դէպքեր հին նախարարութեան և թուրք մտայնութեան յեղաշրջումի մասին:

Հայ պատուիրակութիւնը կընդունուի Հոկտեմբեր 4-ին արտաքին գործերի նախարար Նեսիմ կողմէն, որը կը յայտարարէ.- «Կառավարութեան ներկայացուցիչ՝ բանակցութեան համար նշանակուած է Խալիլ բէլը. դուք գոհ պիտի ըլլաք, որովհետև աւելին ստացաք՝ քան կսպասէիք. իրենք այս բանը կընեն ոչ թէ անյաջողութիւններու ճնշումի տակ, այլ իրենց իսկ համոզումովը, այժմ զխաւովոր խնդիրն այն է, որ հայերն ու թուրքերը լաւ դրացիական յարաբերութեան մէջ գտնուին»:<sup>1\*</sup>

Մինչդեռ, մէկ կողմէն, Պոլսում սիրալիր ընդունելութիւնները կը շարունակուէին և բարի դրացիութեան խօսքեր ու խոստումները կը յաճախէին շռայլել, միև կողմէն Հայաստանում տարբեր գործունէութիւն տեղի ունէր. Կրաստանի հայ դիւանագիտութեան ներկայացուցիչ Ջամալեան կը հեռագրէր հայ պատուիրակութեան.- «Թուրքերը ոչ մէկ յանձնառութիւն կը կատարեն, թոյլ չեն տար սուրհանդակ դրկել, չեն վերադարձներ փախստականները, չեն ընդունէր մեր հեռագիրները և, որ զխաւորն է, արշաւանք կը պատրաստեն Ղարաբաղի վրայ»:<sup>2\*</sup>

Հայ պատուիրակութիւնն՝ այժմ աւելի համարձակ՝ անմիջապէս կը դիմէ Թալաաթին և մասնաւորաբար կը խօսի Ղարաբաղի մասին: Մեծ Եպարքոսը հայերու ներկայութեան ձեռք կ'առնէ հեռախօսը և կը հարցնէ Ենվերին, որը կը պատասխանէ. «Կանոնաւոր զօրքը չի մասնակցեր արշաւանքին, Ադրբեջանի զօրքն է»: Թալաաթ՝ խնդալով կը պատասխանէ. «Դուք կրնաք այդ բանն ըսել ուրիշներուն, իսկ ես, հայերու հետ, զիտենք, թէ բանն ինչունն է: Այժմ բարդութիւններու ժամանակը չէ, երկու օրէն հաշտութիւն է»: Յետոյ, հայերուն դառնալով, կ'ըսէ. ինքը քերմօրէն կողմնակից է հայերու բարեկամութեան»:<sup>3\*</sup> Թուրքիայի նոյն ատենուան ջախջախուած պատերազմական վիճակը և վերահաս հաշտութիւն, իր հաշի պահանջի հետանկարով, սարսափի մատնած էր Թուրքիան: Թուրք պետական մարդիկ, յենուած թուրք ժողովուրդի հակաքրիստոնէական և հայաջինջ մտայնութեան վրայ՝ անվերապահօրէն գործեցին ամբողջ չորս տարի՝

**25-ին յուլիսի, ուրբաթ:** Ա. Ահաբօնեան, Ալ. Խատիսեան և Պապաջանեան ժամը 2½-ին գնացին երիտ. թիւրքերի կենտրոն. կօմիտէի հետ առանձին տեսակցութեան: Տեսակցութիւնը տեւել է 2 ժամ և շօշափուել են շատ կարևոր խնդիրներ: Բովանդակութիւնը առանձին արձանագրուած է:

Երեկոյեան եկաւ մեզ մօտ Ռուֆի բէյը կառավարութեան կողմից և յայտնեց, որ վաղը Երևան է գնում արտակարգ լիազօր զինւորական իշխանութիւնեան կողմից Աբդուլ Գերիմ փաշան՝ կարգաւորելու համար Բաթումի դաշնագրից բղխող մի շարք խնդիրներ:

Մի ուրիշ զինւորական էլ, նրա ասելով, գնում է նման միսսիայով՝ իբր լիազօր վրաց կառավարութեան մօտ՝ Թիֆլիզ:

Երեկոյեան ժամի 10-ին մեզ մօտ եկաւ այցելութեան Բերնի թիւրքաց դեսպան Ֆուադ բէյը, որը երկար խօսակցութիւն ունեցաւ մեզ հետ: Իր, ըստ երևոյթին առաջադէմ հայեացքներով, նա լաւ տպաւորութիւն թողեց մեզ վրայ:

**26-ին յուլիսի, շաբաթ:** Երեկոյեան եկաւ Ալ. Խատիսեանի մօտ Ռուսի բէյը և, մօտ երկու ժամ մնալով՝ կարևոր խօսակցութիւն ունեցաւ նրա հետ:

Երեկոյեան արտակարգ վարչական նիստ:

**27-ին յուլիսի, կիրակի:** Յ. Քոչարեան այցելութեան գնաց ազգային հիւանդանոցը, որտեղ տեղաւորուած է և Ղարազեոզեան որբանոցի մի մասը:

Ստացանք նամակ Բերլինից, յաւելուածներով:

**28-ին յուլիսի, երկուշաբթի:** Ոչինչ առանձին:

**29-ին յուլիսի, երեքշաբթի:** Ալ. Խատիսեանը եղաւ Արտաք. գործերի մինիստր Նեսսիմի բէյի մօտ, մօտ մի ժամ խօսակցութիւն ունեցաւ հետը և ստացաւ նրանից պատասխան՝ մեր տրուած հարցերին: Այդ բոլորի մասին մանրամասն հեռագրեցինք Երևան կառավարութեանը: Տեսակցութեան մանրամասնութիւնները առանձին արձանագրուած են:

Ստացանք Թիֆլիզից՝ Ազգային Խորհրդից նամակներ:

Երեկոյեան պատուիրակութեան նիստ էր:

**30-ին յուլիսի, չորեքշաբթի:** Երեք պատուիրակները գնացին Էնիքեոյ՝ տեսակցութեան Աւստրո-Յունգարիոյ դեսպանի պաշտօնակատար կոմս Զիլագիի հետ, նոյն օրը տեսակցութիւն ունեցաւ Էնիքեոյում նաև բուլղարական դեսպանի հետ: Տեսակցութիւնների ընթացքում շօշափած նիւթի մասին արձանագրուած է առանձին: Երեկոյեան Բերլինից ստացանք նամակ և դրա հետ նիւթեր:

**31-ին յուլիսի, հինգշաբթի:** Երեկոյեան մեզ մօտ էր երիտասարդ թիւրքերի գլխաւոր կօմիտէի նախագահ տօկտոր Բահաեդդին Շաքիր բէյը: Նա առանձին խօսակցութիւն ունեցաւ Ա. Ահաբօնեանի հետ, դրա ամփոփումը առանձին:

**1-ին օգոստոսի, ուրբաթ:** Առաւօտեան մեզ մօտ եկաւ Բուլղարիոյ դեսպանը և մնաց 3 / 4 ժամ: Հաղորդեց, որ 10 օրից յետոյ սկսուելու է կօնֆերանսը: Մանրամասնութիւնները արձանագրուած է առանձին:

Ալ. Խատիսեան արձանագրեց արտաքին գործ. մինիստր Նեսսիմի բէյին: Խօսակցութիւնը արձանագրուած է առանձին:

Միք. Պապաջանեան, Գ. Խատիսեան և Յակ. Քոչարեան տեսակցութիւն ունեցան Դուրեան արքեպիսկոպոսի հետ, որը տևեց 1½ ժամ:

Կառավարութեան կողմից մեզ հրաւիրեցին ներկայ լինելու վաղը Սելամլիքի հանդէսին:

**2-ին օգոստոսի, շաբաթ:** Մեր պատուիրակները և գեներալ Կորգանովը ներկայ եղան Սելամլիքին: Այնտեղ ծանօթացան Մեհմետ Ալի փաշայի հետ, որը նշանակուած է և գնում է Երևան իբրև թիւրք կառավարութեան զինւորական և դիպլօմատիկական ներկայացուցիչ Հայաստանի կառավարութեան մօտ:

**3-ին օգոստոսի, կիրակի:** Ուղարկեցինք նամակներ Բերլին:

Երեկոյեան մեզ մօտ ճաշի էր հրաւիրուած Մեհմետ Ալի փաշան: Երևում է՝ զուտ զինւորական մարդ է, առանց վատ տրամադրութիւնների, զիտէ քիչ ռուսերէն, բաւական ֆրանսերէն և գերմաներէն: Չը կարողացանք իմանալ իր ստացած հրահանգները, ինչպէս և իր ծրագիրը:

Երեկոյեան ժամի 5-ին Ահաբօնեանը գնաց գերմանական դեսպանին այցելութեան: Խօսակցութիւնից պարզուեց, որ դրութիւնը շարունակում է մնալ անորոշ, դեռ ոչ մի համաձայնութեան չեն եկել մի կողմից Թիւրքայի հետ, և միւս կողմից Ռուսաստանի հետ:

Նոյնանման խօսքեր ասել էր նախընթաց օրը էնվեր փաշան գեներալ Կորգանովին, որը գնացել էր նրա մօտ հրաժեշտի այցելության:

**4-ին օգոստոսի, երկուշաբթի:** Մեզ մօտ էր եկել այցելության գրաֆ Շուլենբուրգը, որը 18-ին յուլիսի դուրս էր եկել Թիֆլիզից, գնում է Բերլին: Նա բերել էր մեզ համար մի համառոտ նամակ Ազգային խորհրդից, գրուած 13-ին օգոստոսի:

**5-ին օգոստոսի, երեքշաբթի:** Ստացանք Բերլինից հեռագիր: Ժամը 4-ին ճանապարհուեց «Գիւլ-Ջեմալ» շոգեմաւը, նրա հետ ուղևորուեցին մեր կազմից գեներալ Կորգանովը, Ա. Աղաբաբեանը և Յ. Բերբերեանը, տանելով մեր ընդարձակ նամակները և տեղեկագրերը՝ Երևան Ազգային խորհրդին և Թիֆլիզ՝ Ա. Ջամալեանին:

**6-ին օգոստոսի, չորեքշաբթի:** Նամակ գրեցինք Բերլին: Նոյնպես ուղարկեցինք հեռագիր Ջաւրեանին՝ իրեն ընկեր հրաւիրելու մասին:

Ճաշին Քեօփ-Քդերքից վերադարձաւ գեներալ Կորգանեանը: Շոգեմաւը ինչ-որ պատճառով մնացել էր այնտեղ, և յայտնի չէր, թէ երբ է շարունակելու իր ճանապարհը:

Մեր պատուիրակները գնացին և ներկայ էին Հաջջի փաշայի թաղման հանդէսին:

Ներքին գործ. մինիստրը (Ջանբուլատ բէյը) նամակ է գրել մեզ, որով նշանակուեմ է ընդունելութիւնը ամսոյս ութին, առաւօտեան:

**7-ին օգոստոսի, չորեքշաբթի:** Երեկոյեան ժամի 10-ին եղաւ պատուիրակութեան նիստ:

**8-ին օգոստոսի, հինգշաբթի:** Պատուիրակները երեքով գնացին տեսակցութեան Ջանբուլատ բէյի մօտ (ներքին մինիստր) երեկոյեան ժամի 5-ին:

**9-ին օգոստոսի, ուրբաթ:**

Առաւօտեան ժամի 10-ին գեներալ Կորգանովը, սպայ Աղաբաբեանը և Յովի. Բերբերեանը, մեր ընդարձակ թղթակցութիւններով, նստեցին գերմանական Nora Hugo Stenia շոգեմաւը՝ Փոթի գնալու համար:

(Ստացանք նամակներ Բերլինից):

**11-ին օգոստոսի, շաբաթ:** Ստացանք Բերլինից փոստը ու կուրիեր, որը պարունակում էր նամակներ՝ Հանօից, Արշ. Ջուրաբեանից և Աւետիք Իսահակեանից, որը նոր եկել է Բերլին Շվեյցարիայից յատուկ յանձնարարութեամբ:

Առաւօտեան ժամի 7½- ին մեր ուղևորները կրկին գնացին շոգեմաւը և այս անգամ վերջապես շոգեմաւը գնաց դէպի Բրայելա:

Ա. Խատիսեանը ժամը 4-ին տեսակցութիւն ունեցաւ Աւստրո-Յունգարիո զինուորական ներկայացուցիչ Leutnant - Feldmarshal գեներալ Pomeanikovski-ի հետ: Խօսակցութիւնը առանձին արձանագրուած է:

Նոյն օրը առաւօտեան Բերայի Մայր եկեղեցում պատարագ, որից յետոյ պատուիրակութիւնը հրաւիրուեց ճաշի հոգաբարձութեան կողմից: Ճաշին ներկայ էր նաև գերապատիւ Դուրեան արքեպիսկոպոսը:

Երեկոյեան ունեցանք պատուիրակութեան նիստ:

**12-ին օգոստոսի,<sup>185</sup> կիրակի:** Ա. Ահարօնեանը տեսակցութիւն ունեցաւ գերմանական դեսպանի հետ: Բովանդակութիւնը առանձին արձանագրուած է:

Ահա երրորդ օրը ինչ լուրեր են հասնում մեզ, թէ արտաքին գործ. նախարարութեան մէջ մի հեռագիր կայ, ուղղուած մեզ, որով յայտնում են, որ Երևանում բացուել է Հայաստանի պառլամենտը, ներկայութեամբ օտար պետութիւնների ներկայացուցիչների: Բայց այդ հեռագիրը դեռ մեզ չի հասցրած:

**13-ին օգոստոսի, երկուշաբթի:** Երեք պատուիրակները և գեներալի փոխարեն գնդապետ Շահբաղեանը գնացին աստրական լիագոր, գեներալ Պոմեանկովսկու մօտ: Խօսակցութիւնը արձանագրուած է առանձին:

**14-ին օգոստոսի, երեքշաբթի:** Առաւօտեան մեզ մօտ եկաւ այցելութեան Բուլղարական դեսպանը և մօտ 1½ ժամ մնաց մեզ մօտ: Խօսակցութեան նիսթը առանձին արձանագրուած է:

Երեկոյեան եղաւ նիստ, որի ընթացքում կարդացուեց և քննութեան ենթարկուեց Ս. Բունիաթեանի զեկուցումը:

**15-ին օգոստոսի, չորեքշաբթի:** Առաւօտեան Ա. Ահարօնեան և գնդապետ Շահբաղեանը գնացին Բուլղարիո դեսպանատունը շնորհաւորելու Բուլղարացւոց թագաւորի գահակալութեան տարեդարձը:

Ժամի 4-ին երեք պատուիրակները գնացին տեսակցութեան Խալիլ բէյի մօտ (արդարադատութեան մինիստր): Խօսակցութեան նիսթը արձանագրուած է առանձին: Ժամի 2-ին մեզ մօտ եկաւ փոխայցելութեան պատրիարքական փոխանորդը:

**16-ին օգոստոսի, հինգշաբթի:** Առաւօտեան մեզ մօտ եկաւ պատուիրակութեան հետ տեսակցելու համար Աւստրիական գեներալ Պոմեանկովսկին: Խօսակցութեան նիսթ էր՝ հերթական կարևոր խնդիրը: Բովանդակութիւնը արձանագրուած է առանձին:

**17-ին օգոստոսի, ուրբաթ:** Առաւօտեան Ահարօնեանը և գնդապետ Շահբաղեանը գնացին Աւստրական դեսպանատան հանդէսը՝ շնորհաւորելու համար Աւստրական կայսեր ծննդեան տարեդարձը: Նախապես ներկայ էին եկեղեցում ժամասացութեանը: Այդտեղ հանդիպեցին Թիւրքիաց գահաժառանգ իշխանին, որը ինքը առաջինը սիրալիք բարեւել էր Ահարօնեանին, երբ վերջինս առաջին անգամ տեսնելով նրան զինուորական զգեստով, չէր ճանաչել նրան սկզբից և յետոյ միայն պատասխանել էր նրա ողջոյնին:

Բերլին ուղարկեցինք նամակներ: Ստացանք Երևանից հեռագիր օգոստոսի 1-ին տրուած՝ Հայաստանի խորհրդարանի հանդիսաւոր բացման մասին:

Երեկոյեան կայացաւ պատուիրակութեան նիստ:

**18-ին օգոստոսի, կիրակի:** Ես գնացի Proti կղզին, որը գլխաւորապես հայ բնակչութիւն ունի, Հայոց եկեղեցում ներկայ եղաւ պատա-

րագի, որից յետոյ այնտեղ ներկայ գտնուող օսմանեան արքեպիսկոպոսը քարոզ խօսեց: Պատարագից յետոյ ինձ ծանօթացրին նրա հետ, և միասին հրաւիրուեցինք ճաշի մի տեղական ընտանիքում:

**19-ին օգոստոսի, երկուշաբթի:** Առանձին նորութիւն չը կայ:

Երեկոյեան ստացանք Բերլինի կուրիերը օգոստոսի 15-ից:

**20-ին օգոստոսի, երեքշաբթի:** Առաւօտեան Ահարոնեան, Ալ. Խատիսեան և Մ. Պապաջանեան գնացին տեսակցութեան Էնվեր փաշայի մօտ: Խօսակցութեան նիւթը գլխաւորապէս գաղթականութեանն էր վերաբերում և արձանագրուած է առանձին:

Ստացանք Բերլինից նամակներ օգոստոսի 9/11-ին:

**21-ին օգոստոսի, չորեքշաբթի:** Առանձին նորութիւն չը կայ:

Երեկոյեան պատուիրակութեան նիստ:

**22-ին օգոստոսի, հինգշաբթի:** Առանձին նորութիւն չը կայ:

Երեկոյեան նիստ պատուիրակութեան:

**23-ին օգոստոսի, ուրբաթ:** Երեկոյեան նիստ պատուիրակութեան:

**24-ին օգոստոսի, շաբաթ:** Ուղարկեցինք նամակներ Բերլին:

Երեկոյեան նիստ պատուիրակութեան:

**25-ին օգոստոսի, կիրակի:** Ոչ մի նորութիւն:

**26-ին օգոստոսի, երկուշաբթի:** Ամբողջ պատուիրակութիւնը, միակովասեան պատուիրակութիւնների հետ, հրաւիրուած էր կառավարութեան կողմից այցելելու Vieux Serail-ը (հին Սուլթանական պալատը):

Առաւօտեան երեք պատուիրակներն էլ գնացին տեսակցութեան Աւստրիական զինւորական լիազօր գեներալ Պօմեանկովսկու մօտ: Բովանդակութիւնը խօսակցութեան արձանագրուած է առանձին:

Ուղարկեցինք Բերլին բժ. Օհանջանեանին N 107 հեռագիրը:

**27-ին օգոստոսի, երեքշաբթի:** Բերլինից ստացանք նամակ 19-21-ից օգոստոսի գրուած:

Ալ. Խատիսեան տեսակցութիւն ունեցաւ գեներալ Պօմեանկովսկու հետ առաւօտեան ժամի 12-ին:

Երեկոյեան երեք պատուիրակները գնացին այցելութեան գերմանական դեսպան կոմս Բերնստորֆի մօտ:

Բերլին ուղարկեցինք N 109 հեռագիրը:

Երեկոյեան մեզ մօտ էին հրաւիրուած հրաժեշտի ճաշի Սուլտար բէյը, որը նշանակուած է Ուկրաինայի դեսպան և գնում է այս օրերս Կիև, և Ռուֆի բէյը, որը նշանակուած է ընդհանուր հիւպատոս Խարկովում: Նրանց ի յիշատակ մատուցեցինք մի մի ընծայ:

**28-ին օգոստոսի, չորեքշաբթի:** Ոչ մի նորութիւն:

**29-ին օգոստոսի, հինգշաբթի:** Ոչինչ առանձին նորութիւն:

**30-ին օգոստոսի, ուրբաթ:** Journal d'Orient-ի մէջ լոյս տեսաւ Ալ. Խատիսեանի տուած ինտերվիւն Նուպար Փաշայի Կլեմանսօին արած դիմումի առթիւ:

“Vakyt” թիւը թերթի խմբագիրը ցանկութիւն է յայտնել գալ ժամի 2-ին Ահարոնեանի մօտ կարևոր խօսակցութեան համար:

Ալ. Խատիսեանը ընդունեց Աւստրիական դեսպանատան ներկայացուցիչ և «Politische Correspondenz» թերթի թղթակից Moskhopoulo-ին և նրա հետ ունեցաւ կարևոր խօսակցութիւն:

Երեկոյեան տեղի ունեցաւ պատուիրակների խորհրդակցութիւն:

**31-ին օգոստոսի, շաբաթ:** Ամբողջ պատուիրակութիւնը՝ հրաւիրուած լինելով՝ ներկայ էր Սուլթանի թրակապութեան հանդեսին (համապատասխանում է մեր թագադրութեանը) առաւօտեան:

Ինչպէս երևում է այսօրուայ հեռագրերից, Ռուսաստանի և Գերմանիայի մէջ կապած լրացուցիչ համաձայնութեամբ՝ Վրաստանի անկախութիւնը ընդունվում է նրանց կողմից, իսկ Հայաստանի և Ադրբեջանի դրութիւնը մնում է անորոշ:

Այդ առթիւ պատուիրակութիւնը ունեցաւ խորհրդակցութիւն և որոշեց կտրուկ քայլերի դիմել դրութիւնը պարզելու համար:

Վաղը առաւօտեան ժամի 2-ին նշանակել տուեցինք տեսակցութիւն արտաքին գործերի մինիստր Նեսիմի բէյի հետ, որից յետոյ կը ձեռնարկուի նաև ուրիշ քայլերի:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.8, թ.1-31: Բնագիր, ձեռագիր:

**3.**  
**ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԱՂԱՐԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՈՒՆԵՑԱԾ**  
**ՏԵՍԱԿՑՈՒԹՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ԱՄՓՈՓՈՒՄ**

2-19 սեպտեմբերի 1918թ.  
Կ. Պօլիս

**Սեպտ. 2-ին Ալ. Խատիսեանը եղաւ գեմ. Պոմեանկովսկու մօտ:** Վերջինս յայտնեց, որ ինքը աշխատում է, որ Համօն ընդունուի Վիեննա արտաքին գործ. մինիստր Բուրեանի կողմից, այդ մասին իր կողմից հեռագիր է ուղարկել այնտեղ: Հեռագրում յայտնում է, որ հայերը անպատճառ խնդրում են ընդունել իրենց անկախութիւնը, որովհետև այլապէս իրենց դրութիւնը Ռուսաստանի և Թիւրքիոյ մէջ կը լինի միանգամայն ծանր, միևնոյն ժամանակ հայերը խնդրում են, որ Աւստրիան ներկայացուցիչ ուղարկի Հայաստան - Երևան: Նա կարծում է, որ Աւստրիան թոյլ չի տայ, որ Գերմանիայի և Թիւրքիայի յարաբերութիւնները խզուեն Ռուսաստանի պատճառով, այսինքն Բագուի և Ադրբեջանի պատճառով:

Նոյն օրը Ա. Ահարօնեանը եղաւ Բուլղար դեսպան Կօլուշի մօտ, բացի պատօճական համակրութիւնից՝ ոչինչ, ոչ մի օգնութիւն:

**3-ին Սեպտ. Ալ. Խատիսեան կրկին եղաւ գեմ. Պոմեանկովսկու մօտ,** հաղորդել է նրան Համօյի վերջին նամակի բովանդակութիւնը, որից երևում է, որ Գերմանիան ուզում է ամեն կերպ Ռուսաստանի հետ լինել և այդ պատճառով չի ճանաչում ոչ Ադրբեջանի և ոչ Հայաստանի անկախութիւնը: Գեոպետը (արտաքին գործ. մինիստրի օգնական) նոյն իսկ ասել է, որ առանձին մարդու (Համօյի) ներկայութիւնը Բերլինում անելորդ է՝ գոնէ այժմ: Այդ համագամանքներում հայերը մնում են Թիւրքիայի տրամադրութեան տակ: Լսելով այդ բոլորը, գեներալը խնդրել է Թալաթ փաշային այցելելուց յետոյ իրեն գալ և իրեն տեղեկացնել այդ մասին: Նա ասաց, որ թիւրքերը նրա համար անելի եռանդով կը պաշտպանեն Հայաստանի անկախութիւնը, որ իրենց համար անելի ձեռնտու է Ադրբեջանի անկախութիւնը և միևնոյն ժամանակ, եթէ, իհարկէ, նրանք վստահութիւն ունենան դէպի հայերը:

Նոյն օրը ժամի 12-ին երեք պատուիրակները գնացին տեսակցութեան Թալաթ փաշայի մօտ: Ընդունել է շատ սիրալիր կերպով և ասել է, [որ] գնում է Բերլին պաշտպանելու համար Թիւրքիայի շահերը: Նա հաւատացած է, որ Հայաստանի անկախութիւնը անհրաժեշտ է Թիւրքիայի համար և դրա համար նա աշխատելու է դրա օգտին: Նա հրաւիրում է պատուիրակներին ուշադրութիւնը «Վակիթ»-ի այդ օրուայ առաջնորդող վրայ, որտեղ ապացուցանում են Հայաստանի անկախութեան անհրաժեշտութիւնը: Նա ասաց, որ հայերը խօսքի տէր են և մի անգամ որ նրանք ասացին «այո», ուրեմն «այո»: Նա յայտնեց, որ Աւստրիան առաջարկել է Թիւրքիային իր միջնորդութիւնը՝ Գերմանիայի հետ խնդիրը հարթելու համար, բայց նա յոյս ունի անձամբ տեսակցել ում հետ հարկն է և հարթել

խնդիրները: Մերոնք յայտնել են, որ կը սպասեն նրա արած ճանապարհորդութեան հետևանքներին: Նա յայտնել է, որ ինքը տեղեկութիւն ունի Էնվեր փաշայի և Նեսսիմի բէյի հետ մեր ունեցած առանձին բանակցութիւնների մասին և դրանց մեծ կարևորութիւն է տալիս: Ինքը ցուցնուցներ կը տայ նրանց այդ մասին:

Ժամի 5-ին Ահարօնեան եղաւ կոմս Բերնսդորֆի մօտ, հարցրեց թէ ինչ է նա մտադիր անել մեր գործի համար և ինչ խորհուրդ է տալիս նա մեզ: Նա ոչ մի խորհուրդ չի կարող տալ, ինքը հարցնում է, թէ մենք ինչ ենք մտածում անել, արդեօք պէտք է մեզ մնալ այստեղ, թէ գնալ, նա չը գիտէ: Մի խօսքով, շատ անյուսալի այցելութիւն էր, թէև վերջը նա խօստացաւ անել ինչ որ կարող է մեր դատին օգնելու համար:

Երեկոյեան ժամի 7½ -ին պատուիրակները և գործերի կառավարիչը գնացին կայարան՝ Բալկանեան գնացքը ճանապարհ ձգելու, որով գնալու էին Մուխտար բէյը, նոյն գնացքով գնում էր Թալաթ փաշան և կոմս Բերնստորֆը: Երկուսն էլ առանձին-առանձին մօտեցան մեզ և մնաք բարև ասացին, Թալաթը Ահարօնեանի ականջին ասաց. «Ես խօսել եմ Նեսսիմի բէյի հետ, դուք կարող էք շարունակել բանակցութիւնները նրա հետ»: Բերնստորֆ ասաց. «խօսք եմ տալիս ձեզ անել ձեզ համար բոլորը, ինչ որ կարող եմ»:

Մոռացայ վերևն ասել, որ Թալաթ փաշային մերոնք հարցրել են՝ լաւ չէր լինի, արդեօք, որ մէկը մերոնցից գայ Բերլին աշխատելու, պատասխանել է, որ առայժմ սպասենք, այնտեղից նա իմաց կը տայ, եթէ հարկաւոր լինի:

**5-ին Սեպտ. Մեզ մօտ էր եկել (Ալ. Խատիսեանի մօտ) Աւստրիական մամուլի ներկայացուցիչ Moschopoulos,** որը շատ հետաքրքրական բաներ հաղորդեց: Նա ասաց, որ Թիւրքիայի և Գերմանիայի մէջ 45 միլիօն փոխառութեան առթիւ կայացրած պայմանագրի մէջ ասուած է, որ Թիւրքիան համաձայն է ընդունել վերջին ռուս-գերմանական համաձայնութիւնը, որտեղ յայտարարուած է, որ ընդունում է Վրաստանի անկախութիւնը ու Բագուն էլ մնում է Ռուսաստանին: Առանց այդ կէտի Գերմանիան չէր համաձայնում դրան տալ Թիւրքիային: Այդ մասին հաղորդել է կառավարութեանը ֆինանսների մինիստր Ջաւիդ բէյը, որը 2 ամսի չափ Բերլին էր գտնուում, իսկ հարցին, թէ ինչու է այժմ Թալաթը գնում, երբ ամեն ինչ նրան յայտնի էր, Մուկօպուլօն պատասխանեց, որ թէև միևնոյնիստրների խորհուրդը Ջաւիդ բէյի հեռագրին համաձայնութիւն է տուել, բայց այժմ նրանք ասում են, որ 1. Ջաւիդ բէյը չի յայտնել իրենց բոլորը և 2. հասարակական կարծիքը չի ընդունում այդ պայմանը: Եւ նրանք (Թալաթը) ցոյց են տալիս մամուլի արտայայտած կարծիքների վրայ, մինչև անգամ ստիպուած էին փակել մի լրագիր՝ «Թերջիման հեքիքաթ»: Թալաթը ասել է, որ դա կարող է առաջացնել կաթինետի անկում և Entente-ի կողմնակից կաթինետի գործի հրաւիրելը: Ինքը թղթակիցը կարծում է, որ կը լինի կօմպրօմիս, այսինքն կը ճանաչեն Ադրբեջանի և

Հայաստանի անկախութիւնը, իսկ Բագուն կը մնայ Ռուսաստանին և այդ դէպքում Թիւրքիային էլ, Ռուսաստանին էլ կասեն. «Թող վերցնի ձեզնից ով որ կարող է»: Բուլղարները ոչ մի ազդեցութիւն չունեն Թիւրքիայի վրայ, թիւրքերը նրանց բոլորովին չեն հաւատում, մինչև անգամ ներկայ պատերազմից յետոյ հաւանօրէն Թիւրքիան պատերազմ յայտնի Բուլղարիային, յենուելով յոյների վրա: Այսպիսի պարագաներում հայերը պէտք է համաձայնութեան գան Թիւրքիայի հետ:

**6-ին Սեպտեմբերի:** Երեք պատուիրակները հրաւիրուած էին ներկայ լինելու Սելամլիքին, որից յետոյ եղաւ հանդիսաւոր ընդունելութիւն բոլոր կովկասեան պատուիրակութիւնների՝ առանձին-առանձին: Ընդունելութեանը ներկայ էր ենվեր փաշան: Սենք արդէն հեռագրով, թիւրք կառավարութեան միջոցով, Բաթումի վրայով ձեզ հաղորդել ենք այդ ընդունելութեան միջոցին արտասանած ճառերի բովանդակութիւնը: Այժմ սրա հետ ուղարկուծ ենք աւելի մանրամասն կերպով :

**7-ին Սեպտեմբերի:** Ալ. Խատիսեանը եղաւ գեներալ Պօմեանկովսկու մօտ: Նա խնդրեց մանրամասն պատմել Սուլթանի մօտ եղած ունկնդրութեան մասին: Բոլորը գրի առաւ և ասաց, որ պիտի հեռագրի կոմս Բուրեանին: Նա յայտնեց, որ Վիեննա շտապ կերպով կանչուած է դեսպանի պաշտօնակատար կոմս Չելազին, որը և այս երեկոյ գնում է: Նա կը պաշտպանի մեր անկախութիւնը, ինչպէս և անհրաժեշտութիւնը՝ դեսպանատուն ունենալ Հայաստանում: Խորհուրդ տուեց տեսնել նրան գնալուց առաջ: Երեկոյեան մերոնք գնացին կայարանից նրան ճանապարհ ձգելու, բայց առանձին խօսակցութիւն չը կարողացան ունենալ:

Նոյն օրը առաւօտեան Ահարօնեանը տեսնուել է երկու ամենակարևոր անդամներին երիտասարդ թիւրքերի կօմիտէի, այն է Բահադդին Շաքիր քէյին և դօքտոր Նազիմին (որը այժմ միմիստր է և իրօք հեռացել է կօմիտէի գործերից) և երկար խօսակցութիւն է ունեցել նրանց յետ: Նրանք ասել են, որ այժմ նրանք հաւատում են հայերին և Հայաստանին և պատրաստ են նոյն իսկ դաշն կապել մեզ հետ, և այդ դէպքում, ի հարկէ, ամեն տեսակ զիջումներ կանեն մեզ տերիտօրիայի խնդրում:

**9-ին Սեպտ.:** Ստացանք Վիեննայից նամակ Համօից: Նա գնացել էր այնտեղ մեր առաջարկութեամբ՝ տեսակցելու համար արտաք. գ. միմիստր Բուրեանի և ուրիշ կարևոր անձանց հետ և ծանօթացնելու նրանց մեր խնդրի հետ:

Հայ պատուիրակութեան ընդունելութիւնը

**Սեպտ. 6-ին,** ուրբաթ, առաւօտեան ժամի 12-ին Հայկ. պատուիրակութիւնը, միւս պատուիրակութիւնների հետ միասին, հրաւիրուած էին Սելամլիքի հանդէսին:

Հանդէսից յետոյ Սուլթանին ներկայացան առանձին-առանձին պատուիրակութիւնները ըստ կարգի:

Աղբրեջանի պատուիրակութիւնից յետոյ ներկայացան Հայկ. պատուիրակութեան երեք անդամները՝ նախագահ Ահարօնեան, Ալ. Խատիսեան և Մ. Պապաջանեան: Սուլթանի մօտ ընդունելութեանը ներկայ էր ենվեր փաշան:

Ա. Ահարօնեանը դիմելով Սուլթանին՝ արտասանեց հետևեալ ողջոյնի ճառը. Ձերդ Սեծութիւն, ես ողջունում եմ յանուն հայկ. պատուիրակութեան և Հայկական Հանրապետութեան: Ձերդ Սեծութեան թագադրութիւնը (գահակալութիւնը) և ցանկանում եմ Օսմանեան պետութեան բարգաւաճումը և բարօրութիւնը: Հայ ժողովուրդը իր կողմից և Հայկական Հանրապետութիւնը երբէք չեն մոռանայ, որ իր անկախութեամբ նա պարտական է օսմանական կարսութեան բարեհաճ ցանկութեանը: Ես երջանիկ եմ, որ կարող եմ թարգման լինել Ձեր առաջ խորին երախտագիտութեան զգացմունքի հայ ժողովրդի կողմից, որը իր բոլոր ջանքերը գործ կը դնի ոչ միայն պաշտպանելու համար իր անկախութիւնը և առաջադրելու համար, այլ և աւելի ևս ամրապնդելու բարեկամական յարաբերութիւնները Թիւրքիայի հետ: Միևնոյն ժամանակ հայ ժողովուրդը այս կրկնակի նպատակին հասնելու համար ոչ մի միջոց չի խնայի, որ աւելի արժանանայ քաղաքակրթութեան և առաջադիմութեան, լիայոյս լինելով, որ ձերդ Սեծութիւնը և իր կառավարութիւնը միշտ նրան կաջակցեն դրանում և կը թեթևացնեն այդ վսեմ նպատակը:

Նախագահի ճառը թարգմանեց Ֆրանսերէնից ենվեր փաշան: Սուլթանը լսում էր մեծ ուշադրութեամբ: Ապա նա պատասխանեց տաճկերէն հետևեալը, որ Ֆրանսերէնի թարգմանիչ ենվեր փաշան ևս ուրախ է տեսնել ազատ և անկախ Հայկ. Հանրապետութեան ներկայացուցիչներին: Նա ցանկանում է բարօրութիւն այդ նորակազմ պետութեանը, և նա լիայոյս է, որ երկու հարևան պետութիւնները՝ Թիւրքիան և Հայաստանը կը բարգաւաճեն իրենց ազգերի երջանկութեան համար:

Ահարօնեանը պատասխանեց, որ նա ուրախ է լսել կայսրական այս խօսքերը, որոնք նա քաղցր պարտք կը համարի հաղորդել հարազատ կերպով հայ ժողովրդին, որին նա կանխաւ հաւատացած է, [որ] այդ ողորմած խօսքերը մեծ ուրախութիւն կը պատճառեն:

Սուլթանը կրկին պատասխանեց, որ նա ուրախ է, որ հայ ժողովրդի մէջ գտնուեցին ոյժեր, որոնք կարողացան կազմակերպել ինքնուրոյն պետութիւն և ուղարկեցին այստեղ իրենց պատուիրակներին: Նա կրկին բարեմաղթեց հայ ժողովրդին լինել ոչ միայն երջանիկ, այլ և ուժեղ պաշտպանելու համար իր անկախութիւնը: Մերոնք շնորհակալութիւն յայտնեցին այդ խօսքերի համար և հեռացան: Յետոյ իմացան, որ աղբրեջանցիք շեշտել են. որ նրանց վիճակը կապուած է Թիւրքիայի վիճակի հետ: Վրացիներին Սուլթանը խնդրել է յայտնել իրենց ժողովրդին, որ ցանկանում է բարեկամ. յարաբերութիւններ Վրաստանի հետ իսկ Հիւսիսային կովկասցիներին յայտնել է, որ ցանկանում է բարօրութիւն նրանց ժողովրդին:

**Սեպտ. 10-ին**, երեկոյեան Ալ. Խատիսեանի մօտ էր երիտասարդ հրապարակախօս Դամի բէյը: Նա որոշակի ասաց, որ Թիւրքիան շատ լաւ գիտէր ռուս-գերմանական համաձայնութեան մասին և չէր կարող բողոք յարուցանել նրա դէմ՝ Դայաստանի և Ադրբեջանի վերաբերմամբ, որովհետև մեր առաջը կային ուրիշ անլի կարևոր հարցեր, որոնք կախուած էին Գերմանիայից և Ռուսաստանից, այն է Մարիցայի խնդիրը, փոխառութեան խնդիրը, զինուորական օգնութիւն Ռուսաստանից և այլն, ուստի Թալաաթը, ասաց նա, իհարկէ, ոչինչ չի բերի իր հետ և ձեզ հայերիդ կը մնայ ձևականօրէն մնալով իբրև Ռուսաստանի մի մասը, պաշտպանուել նրա յաւակնութիւնների դէմ ձեր վերաբերմամբ և պաշտպանել ձեր անկախութիւնը: Եւ այդ դէպքում դուք պիտի համաձայնութեան գաք Թիւրքիայի հետ, միւս կողմից Թիւրքիայի հետ համաձայնութեանը գալով դուք կը պաշտպանէք ձեր անկախութիւնը մինչև միջազգային համաժողովը և այնտեղ արդէն ձեզ կը ճանաչեն, իսկ այսօր դուք պետք է բողոք ներկայացնէք պետութիւններին ձեր անկախութիւնը չը ճանաչելու դէմ և գրաւոր վաւերացում ստանալ Թիւրքիայից ձեր անկախութիւնը ընդունելու մասին, որովհետև դուք դեռ ձևականապէս ճանաչուած չէք, քանի այս Բաթումի դաշնագիրը վաւերացուած չէ:

**11-ին Սեպտ.:** Le Soir լրագրի աշխատակից Տ. Չաւենը ասաց, որ օսմանեան պալատական ցենզուրան թոյլ չէ տուել տպագրել Սուլթանի բառացի ճառը, որովհետև Դայաստանի և Ադրբեջանի անկախութիւնը չի ընդունուած և Թալաաթը դեռ բանակցում է դրանք ընդունելու մասին, ուստի անյարմար է նկատուած տպելը:

Առաւօտեան ժամի 10-ին երեք պատուիրակները գնացին այցելութեան Օսմ. պարլամենտի փոխնախագահ և մամուլի ընկերութեան նախագահ Դուսեյին Չահիդ բէյի մօտ: Նա յայտնեց, որ գլխաւոր դժուարութիւնը Դայաստանը ստեղծելու համար կայանում է նրանում, որ Դայաստանը գտնուում է Թիւրքիայի ճանապարհի վրայ դէպի Ադրբեջան: Մենք երկու նպատակների պիտի ձգտենք՝ մի կողմից ստեղծել Դայաստան, որպէս զի դրանով լուծել հայկական խնդիրը, բայց այնպէս ստեղծել Դայաստանը, որ ունենալ ճանապարհ դէպի Ադրբեջան: Մենք, ասաց նա, կորցնում ենք Արաբիան, բայց իբրև պանթիւրքական գործիչներ պետք է ստանանք Կովկասեան Ադրբեջանը, Պարսկական Ադրբեջանը և Թիւրքեստանը, դա է մեր իդեալը, ասաց նա, գուցէ և խիմերա լինի, բայց մեր իդեալն է: Ես յոյս չունեմ Թալաաթի միսսիայի յաջողութեան վրայ, բայց նրա վերադարձից յետոյ մենք պետք է այս կամ այն վճիռը ընդունենք, մենք պետք է Կովկասում մի որևէ որոշ բան անենք: Ես շատ լաւ հասկանում եմ, որ դուք էլ պետք է որոշէք ձեր քաղաքականութիւնը, և ես հասկանում եմ ձեր անորոշ վիճակը: Այժմ դեռ պետք է սպասել Թալաաթ փաշայի վերադարձին:

Ժամի 4-ին ճաշից յետոյ մեր պատուիրակները գնացին այցելութիւն տալու Ռկրաիմայի դեսպանատունը, որտեղ առայժմ գործերը վա-

րում է քարտուղարը, դեսպանը շուտով գալու է Պօլիս: Նա խնդրեց իրեն տալ գեկուցագիր Դայաստանի մասին, որը կուղարկի կառավարութեանը Կիև: Մերոնք խնդրեցին աշխատել Դայաստանի անկախութիւնը ճանաչել տալ Ռկրաիմային:

**12-ին Սեպտեմբերի:** Պատրաստեցինք բողոքագիր Ռուս-գերմ. լրացուցիչ դաշնագրի այն յօդուածի դէմ, որով Դայաստանի և Ադրբեջանի հինակցութիւնը չի ճանաչում և որոշեցինք տալ այդ բողոքագիրը Քառեակ գնակցութեան բոլոր պետութիւններին: Ժամի 11-ին Ալ. Խատիսեանը, իբրև արտաքին գործերի նախարար, տարաւ այդ բողոքագիրը Նեսսիմի բէյին: Նոյնանման գրութիւններ ուղարկեցինք Գերմ. դեսպանին, Աւստր.-Ռուսագարական և Բուլղարականին:

Նեսսիմի բէյը գտել է մեր բողոքը լաւ կազմած և ասել է, որ կը գեկուցանի մինիստրների խորհրդին և կը հաղորդի ուր հարկն է: Թալաաթ փաշայից տեղեկութիւն ունի, որ տեսնուել է ֆօճ Ռինցեի հետ, և դրանից յետոյ վերջինս գնացել է գլխաւոր կայանը և դեռ չէր վերադարձել: Անձամբ մինիստրը կարծում է և վստահ է, որ Թալաաթի միսսիան յաջող կը վերջանայ: Երբ տեղեկութիւն ստանայ, իսկոյն կը հաղորդի մեզ, իսկ առայժմ պետք է սպասել: Նա ասաց, որ Թալաաթը գնալուց առաջ իրեն յայտնել էր մեր տեսակցութեան մասին և խնդրել էր շարունակել բանակցութիւնները: Բայց քանի որ բանակցութիւնների հիմքը մեր իրաւական դրութիւնն է, իբրև անկախ պետութեան, ուստի խորհրդակցութեամբ Ենվեր փաշայի հետ նա վճռեց սպասել Թալաաթի վերադարձին և ապա միայն շարունակել: Բայց հենց այժմ նա կարող է ասել, որ մեր յայտարարութիւնը entente-ի մասին ունի «une grande Valeur»<sup>186</sup>, իսկ բանակցութիւնները «une importance colossale»<sup>187</sup>, բայց որ կօնկրետ ձևը կարելի է գտնել միմիայն անկախութեան հարցը պարզելուց յետոյ: Թիւրքիայի համար, ասաց նա, Դայաստանի անկախութեան հարցը վճռուած է անդառնալի կերպով, և այդ վճիռը շատ օգտակար կը լինի Դայաստանի համար ապագայում, դրանում կարող են հայերը հաւատացած լինել: Ինչ վերաբերում է մեր կապերին Երևանի կառավարութեան հետ, նա շատ զարմացաւ, որ մեր կառավարութիւնը չի ուղարկում կուրիերներ: Նա ասաց, որ մեր հեռագիրը՝ Սուլթանի տուած ունկնդրութեան մասին, կուղարկի Էսսադ փաշայի միջոցով. յատուկ կուրիերով, Երևան և կը յանձնարարի, որ մեր կառավարութեան պատասխանն էլ նոյն կուրիերը բերի Երևանից: Առաջարկեց վերցնել դրամ, եթէ մենք կարիք ունենք: Շատ զարմացած էր, որ հեռագրեր չեն ուղարկում Երևանից, թէև, ասաց նա, եթէ կուրիերներ չեն ուղարկում, գուցէ և հեռագրեր էլ չեն ուղարկում: Ես խօսել եմ փոստային և հեռագր. նախարարի և Ենվեր փաշայի հետ այդ մասին: Նրանք ասում են, որ կարգադրել են հեռագրական գիծ հաստատեն Երևանի հետ: Մեծնդ Ալի<sup>58</sup> փաշայից նրանք միայն մի հեռագիր ունէին, որ յաջողութեամբ հասել է Երևան:

**13-ին Սեպտ.** Եկել էր Ալ. Խատիսեանի մօտ յայտնի Մոսկոպոլցոն: Այսօրուայ հեռագրերուն յիշատակած «Kreuz Zeitung»-ի հաղորդած լուրի մասին, որի համաձայն Թիւրքիան Կովկասուն պիտի ստանայ սահման-ների ապահուութիւն՝ հաւանօրէն ամբողջ ատօնօմ Զայաստանը միաց-նելով Ֆեդերատիւ հիմքերի վրայ: Նա ասաց, որ այդ գաղափարը պատկա-նում է Գերմանիային և ծագել է այն դիտաւորութեամբ, որ բաւականութիւն տրուի թէ Զայաստանին և թէ Entente-ի պետութիւնների պահանջներին: Գերմանիան դրանով, ինչպէս և Լեհաստանի և այլ խնդիրների լուծումով կամենում է կանխել այն բոլոր հարցերի լուծումը, որոնք պիտի դրուեն ապագայ կօնգրեսուն: Այդ թերթը շատ մօտ է գերմանական կառավար-չութեան շրջաններին և օֆֆիցիալ է, ուրեմն նրա հաղորդած լուրը հիմք ունի: Այդ գաղափարը միևնոյն ժամանակ մասամբ բաւարարում է և թիւր-քերին, քանի որ նա ստեղծում է Ռուսաստանի և Թիւրքիայի սահմանի վրայ ինքնավար Զայաստան, իբրև կիսապատուար (demi-rempart: Այդ ծրագրով Ադրբեջանը մնում է Ռուսաստանին, կարող է պատահել, որ Թիւր-քիան չը համաձայնի դրան, որովհետև նրանք չեն կամենայ ինքնավարու-թիւն տալ Թիւրքաց Զայաստանին, որը արդեն ամբողջովին նրանց ձեռքին է: Այդ տեսակետից հայերի համար օգտակար է Նուպար փաշայի և առհա-սարակ այդ ուղղութեամբ գործունէութիւնը ու ազիտացիան, որովհետև դա արեւի զարկ կը տայ Գերմանիայի ցանկութեանը՝ Զայաստանը ստեղծելու իրեն միջոցներով (առանց Entente-ի): Միւս կողմից էլ պիտի ազդել Թիւրքիայի ազդեցիկ շրջանների վրայ, որ նրանք համաձայնեն այդ մտքի հետ, եթէ, իհարկէ, նա հաւանութիւն է գտնում հայերի մէջ:

Այժմեան կառավարութեան մէջ խիստ կենտրոնական (централь-ный) հակումներով այդ միտքը դժուար թէ համակրութիւն գտնի: Նրանք կարող են համաձայնուել՝ զուցէ միայն արտաքուստ և յետոյ արդէն ոչնչացնել հայերին իրենց սահմաններում: Ամեն ինչ կախուած է, թէ ինչ ձևի ատօնօմիա կը լինի այդ:

Թիւրքիայում կան տարրեր, որոնք զոհ են Արաբիայի բա-ժանուելով և Մեսօպատամիայի՝ նոյնպէս, որովհետև այդ մասերը Թիւր-քիայի թուլութեան աղբիւրն էին միայն և մեծ ծախքեր էին մտնում նրան թէ դրանով, թէ ոսկով, մարդկանցով և հուն նիւթով: Օրինակ, Զուսեյին Ջահիդ բէյը միշտ կողմնակից էր այդ նահանգների բաժանուելուն: Բուլղարները, երևում է, համաձայնել են տալ Թիւրքիային Դեմօրիկան՝ Մարիցայի փո-խարէն<sup>189</sup>, իսկ գերմանացիք չեն ուզում Լեհաստանին Սիլիզիան և Պոզ-նանը տալու, այդպիսով վճռել Լեհական հարցը, բայց Բուրբանը այդ պահանջում էր, տալով Գալիցիան: Թալաաթ փաշան, ասում են, սպառնում էր անջատ խաղաղութիւն և համաձայնութիւն կապել Անգլիայի հետ, որը առաջարկում է իբր թէ մինչև 80 միլ. դրամ:

Թալաաթը ասել է, որ իր միսսիայի անյաջողութեան դէպքում նա պիտի հրաժարուի, Նեսսիմի բէյը հայերին բաւարարելու կողմնակից է: Անցեալ տարի նա ուղարկել էր մի պատուիրակութիւն Եւրոպա, յանձնա-

րարելով յարձակուել հայերի վրա մամուլի մէջ, բայց չը հերքել ջարդերի փաստը, միայն արդարացնել նրանց զինուորական նկատումներով: Այժմ նրանք գտնում են, որ իրենց պրօպագանտը ոչ մի արդիւնք չը տուեց, ինչպէս և իրենց հրատարակած գիրքը<sup>190</sup>:

**Սեպտ. 14-ին** մեզ մօտ էր յայտնի թիւրք հրապարակախօս Աղայելը<sup>191</sup>: Նա ասում էր, որ Թիւրքիայում երիտ-թիւրքերի կօմիտէն ճնշում է և իր ձեռքի տակ է պահում հասարակական կարծիքը, այդ պատճառով նա երբեմն ստիպուած է իրեն պահել և ուժեղ լեզու չը գործածել: Նրա լրագիրը յաճախ փակում են: Աղայելը գտնում է, որ ժտօն<sup>192</sup> թիւրքերի կօմիտէն յեղափոխական գործելակերպի միջոցները մտցնում է նաև պետական աշխատանքների մէջ:

**16-ին Սեպտեմբերի:** Ալ. Խատիսեանը գնաց արտաք. գործ. մինիստրի մօտ, որպէս զի թէ գեկուցանի գործերի դրութեան մասին Զայաստանում և թէ մի շարք խնդիրներ դնի, որոնց լուծումը մենք սպասում ենք: Նա մանրամասն նկարագրել է իրերի այժմեան դրութիւնը, ինչպէս մենք տեղեկացանք բժ. Բաբալեանի գեկուցումից, յատկապէս ցոյց տալով գօրքերի ապահով տեղափոխութիւնը, Անդրանիկի խմբի լուծուելը: Յետոյ նա պարզել է պարենաւորման վիճակը Զայաստանում և խնդրել է, որ Օսմ. կառավարութիւնը Նուրի փաշայի միջոցով ազդի Ադրբեջանի կառավարու-թեան վրայ, որ մեր կառավարութեանը որոշ քանակութեամբ ալիւր տան: Վերջին խնդրի առթիւ Նեսսիմի բէյը ասել է, որ պետք է խօսել Էնվեր փաշայի հետ, թէ նա ինքն էլ առանձին ուշադրութեամբ լսում էր և գրում էր բոլոր յարուցած խնդիրները: Մինիստրը յետոյ ասել է, որ Զայաստանի անկախութեան գաղափարը արդէն անցնում է թիւրք հասարակական շրջանների մէջ և ոչ միայն կառավարչական շրջանների մէջ է: Նա այնպիսի թերթերի մէջ է կարդում Զայաստանի անկախութեան պաշտպանութիւնը, որ ինքն էլ զարմանում է և մենք, նրա կարծիքով, պետք է աշխատենք հէնց ազդել այդ ուղղութեամբ: Նա ասաց, որ Թալաաթը կը վերադառնայ 7-8 օրից յետոյ, որ նրա գործերը յաջող են գնում և որ միայն նրա վերադարձից յետոյ կարելի կը լինի շարունակել մեր բանակցութիւնները entente-ի մասին: Երևանը գրաւելու մասին տարածուած լուրերի առթիւ նա ասել է, որ ոչ մի այդպիսի միտք չի եղել իրենց մէջ և Թիւրքիան միշտ կը յարգի Զայաստանի անկախութիւնը:

**17-ին Սեպտեմբերի:** Կուրբան բայրամի պատճառով պատգա-մաւորները եղան պալատում շնորհաւորելու համար: Ապա այցելութեան գնացին թագաժառանգին, որը շատ սիրալիւր ընդունեց, երկար պահեց իր մօտ (ուրիշներին միայն ողջունում էր ու ճանապարհում), ցանկացաւ Զայաստանի բարգաւաճումը և բարեկամական յարաբերութիւններ Թիւր-քիայի հետ: Յետոյ այցելութիւններ են արել մինիստրներին և ուրիշ անձանց:

Աղայելը նրանց յետ խօսել է կօնֆեդերացիայի (Արևելեան կօնֆե-դերացիայի մասին այս երկու օրը նա մի յօդուած է գրել, որը թարգ-



մանօրեն ուղարկում ենք ձեզ) մասին և ասել է, որ այդ գաղափարը յաջողութիւն է գտնում, և այսօր արդէն պալատում մի քանի շատ ազդեցիկ անձինք իրեն շնորհաւորել են այդ գաղափարի համար:

**18-ին Սեպտեմբերի:** Ա. Խատիսեան գնաց պարլամենտի փոխ-նախագահ Գուստեյին Ջահիդի մօտ և տարաւ նրան մեր քարտեզը և ex-  
pose'-ն: Նա ասել է, որ 1. Գայաստանն ալ պէտք է լայնացնել և 2. ան-  
պայման պէտք է մի անցք (passage) թողնել Թիւրքիայից դէպի Ադրբեջան,  
որը կարելի է կամ Արաքսի հովիտով կամ Բորչալուի վրայով:

**19-ին Սեպտ.** Ա. Խատիսեանը տեսել է Պոմեանկովսկուն, որը  
լսելով իր պատմութիւնը Գամօի տեսակցութեան մասին Ամբրոցիի հետ  
Վիեննայում, ասել է, որ Բուրեանի խօսակցութիւնը իր հետ (Պոմեան-  
կովսկու) բոլորովին ուրիշ բնաւորութիւն ունէր, այսինքն հայերին պաշտ-  
պանելու՝ աստրիական զօրամաս մտցնելով: Բագուի մասին նա ասել էր,  
որ տաճիկները արագացրել են նրա առումը, որովհետև միայն երեկ է  
Աղստաֆից անցել 15-րդ դիվիզիան, որը պէտք է մասնակցէր Բագուի  
վերցնելուն: Իհարկէ, դա թուրքերի համար ահագին նշանակութիւն ունի և  
այդ խնդրում Գերմանիան, ըստ երևույթին, կրկնակի դեր է կատարել և  
օգնել է թիւրքերին, զօրքերը բաց թողնելով Վրաստանի վրայով և  
Ռուսաստանին էլ խոստացել է թիւրքերին քշել Շամախի-Քուռ գծից այն  
կողմ: Այժմ շատ հետաքրքիր է, թէ ինչպէս կը պահի իրեն Գերմանիան  
Բագուի վերաբերմամբ իր ստանձնած պարտականութիւնների հանդէպ:  
Աստրիական զօրքեր Կովկասում բնաւ չը կան: Վաղը նա խօսելու է Էնվեր  
փաշայի յետ Ախալքալաքի գաղթականների մասին և կը յայտնի նրան  
հայերի լոյեալ վերաբերումների մասին դէպի թիւրք զօրքերը: Նոյն օրը  
երեկոյեան մեզ մօտ էին Աղայեվ և Գուստեյին Ջաղէ (երկուսն էլ պարլամ.  
անդամներ): Աղայեվը կրկին խօսեց կօնֆեդերացիայի մասին: Նա  
հիմնաւոր կերպով պնդում էր, որ Թիւրքիայի համար դա կենսական  
պահանջ է՝ հայկական հարցը կարգաւորել և հէնց այդ ճանապարհով:

Ուղարկուեց Թիֆլիզ 21/ IX (գերմ[անացիների] միջլոցով):

ԳԱԱ, ֆ.200, ց.1, գ.8, թ.134-142: Թողոն, ձեռագիր:

4.  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՂԱՐԱՐ ՊԱՏՊԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ  
ՆԻՍՏԵՐԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

25 յունիսի -18 հոկտեմբերի 1918 թ.  
Կ. Պօլիս

Նիստ I

25-ին յունիսի 1918 թ.ի, երեկոյեան ժ. 9-ին:

Ներկայ էին պատուիրակներ Ա. Ահարօնեան, Ա. Խատիսեան, Ս.  
Պապաջանեան և գործերի կառավարիչ Յ. Քոչարեան:

1. Ա. Խատիսեանը քննութեան առաջարկեց Բաթումի դաշնագրի  
րատիֆիկացիայի խնդիրը: Յունիսի 4-ին լրանում է մի ամսուայ ժամա-  
նակամիջոցը, որի ընթացքում, ըստ պայմանի, պիտի տեղի ունենար Պօլ-  
սում՝ Բաթումում յունիսի 4-ին Տաճկաստանի հետ ստորագրած դաշնագրի  
վաւերացման փոխանակութիւնը: Ուստի այժմ և եթ մենք պիտի որոշենք  
մեր անելիքը այդ առթիւ: Տեղի է ունենում մտքերի երկար փոխա-  
նակութիւն, որի ընթացքում պարզում է, որ այդ խնդիրը ներկայումս  
քննութեան առարկայ է նաև Բերլինում, որտեղ ճանապարհուեց նախորդ  
օրը Գեգեչկորին, ուստի պէտք է նախ գրել կամ հեռագրել Բերլին՝ մեր  
ներկայացուցիչներին և իմանալ նրանց կարծիքը, խնդրելով բանակցել  
այդ մասին գերման. պաշտ. շրջանների հետ:

Միևնոյն ժամանակ անհրաժեշտ է գտնում հեռագրով դիմել Թիֆ-  
լիզ՝ Ազգ. Խորհրդին և խնդրել անմիջապէս ուղարկել պատգամաւորու-  
թեան անունով, յատուկ կուրիերով, երկու թուղթ, որոնցից մէկով Ազգ.  
Խորհուրդը հաստատում է Բաթումի դաշնագիրը, իսկ միւսով մերժում է:  
Պատուիրակութիւնը կունենայ այդ երկու գրութիւնները իր ձեռքի տակ, և  
ապա, ամբողջ յետագայ իրադարձութիւնը ի նկատի ունենալով կօգտուի  
դրանցից մէկից կամ միւսից:

Միաժամանակ աչքի առաջ ունենալով, որ հարցի գլխաւոր  
կենտրոնը ներկայումս Բերլինն է, որոշուեց հարցնել թէ՛ Բերլինի մեր  
ընկերներին, և թէ՛ այստեղ Գերմ. դեսպանին՝ արդեօ՞ք կարևոր չէ մեր  
պատուիրակութիւնից մեկի Բերլին գնալը:

Հեռագիրը Ազգային Խորհրդին որոշուեց ուղարկել շիֆրով՝  
Գերման. դեսպանատան միջոցով: Իսկ միևնոյն ժամանակ էլ մի ուրիշ հե-  
ռագիր ուղարկել Թիֆլիզ, Ազգ. Խորհրդին՝ Թիւրքական հեռագր. ճանա-  
պարհով՝ մի քանի ընթացիկ հարցերի մասին:

2. Նախագահը հարց դրեց, թէ ինչ հերթով մենք կուղարկենք  
Թիֆլիզ և երբ: Ցանկութիւն յայտնուեց, որպէս զի մենք յաճախ ուղարկենք  
կուրիերներ, խնդրելով Թիֆլիզից էլ մեզ շարունակ նոր կուրիերներով  
իրազէկ պահել անցուղարծին: Առաջին հերթին որոշուեց ուղարկել Լ.  
Լիսիցեանին, ապա Բերբերեանին, Աղաբաբեանին:

Նիստ II

Յունիսի 26-ին 1918-ի:

Ներկայ էին՝ Ա. Ահարոնեան, Ալ. Խատիսեան, Մ. Պապաջանեան և գործերի կառավարիչ Յ. Քոչարեան:

Զբաղմունքի առարկան էր՝ ընթացիկ վարչական խնդիրներ:

1. Նախ արձանագրուեց պատուիրակութեան կազմը այսպէս.

Պատուիրակներ՝ Ա. Ահարոնեան, Ա. Խատիսեան, Մ. Պապաջանեան:

Ձինւորական խորհրդական՝ գեներ. Գ. Կորգանեան:

Խորհրդականներ՝ - Գ. Խատիսեան և Մ. Բունիաթեան:

Գործերի կառավարիչ և Առաջին քարտուղար՝ Յակ. Քոչարեան, Քարտուղար և հաշւապահ, միաժամանակ և տպագրող՝ Տ. Սիրզոյեան, Քարտուղար և թարգման՝ Ֆերդ. Թախթաճեան, Լ. Լիսիցեան - դիպլոմ. կուրիեր և քարտուղարի օգնական, Ատիւտանտ I - գնդապետ Շահբաղեան, Ատիւտանտ II - պօրուչիկ Աղաբաբեան, Կուրիեր դիպլոմատիկ - Յովհ. Բերբերեան, Սպասաւորներ՝ Ա. Յարութիւնեան և Ջ. Սիմոնեան:

2. Ապա հարց տրուեց դիկտի, այսինքն պատուիրակութեան ռոճիկների և այլ ծախքերի մասին:

Ա. Խատիսեան բացատրեց, որ ծախքերը երեք տեսակի են՝

- 1. ներկայացուցչական ծախքեր,
- 2. միաժամանակ ծախքեր Թիֆլիսից ճանապարհուելու համար,
- 3. օրական ռոճիկ պաշտօնեաների:

Մտքերի փոխանակութիւնից յետոյ՝ յանձնարարուեց Ա. Խատիսեանին կազմել մի նախագիծ այդ ծախքերի՝ ի հաստատութիւն:

Ապա ժողովն անցաւ պատգամաւորութեան առաջիկայ անելիքների և որոշեց.

1. Յանձնարարել պ. Մ. Բունիաթեանին մանրամասն զեկուցում պատրաստել մեր բանակցութիւնների մասին Թիւրքիայի հետ սկսած Տրապիզոնի կոնֆերանսից:

2. Պատրաստել մանրամասն զեկուցում՝ դեսպաններին տալու համար մեր սահմանների մասին, վրացիների ու թուրքերի հետ, պարզելով մեր տեսակետները այդ խնդրի մասին:

Այդ առթիւ պէտք է թարգմանութիւն ներկայացնել դեսպաններին նաև Ազգային խորհրդի, ինչպէս և Հայրենակցական միութիւնների որոշումը «Հօրիզոնում» տպուած՝ Վրաստանի Ազգ. խորհրդի յայտարարուած սահմանների առթիւ:

Ժողովը այն տեսակետի վրայ էր, որ պէտք է աշխատել, որ մեր և մեր հարևանների մէջ եղած վեճերը սահմանների մասին քննութեան առնուին հենց այստեղի կօնֆերանսում:

27-ին յունիսի 1918 թ.ի, երեկ. ժ. 9-ին:

Ներկայ էին՝ Ահարոնեան, Ա. Խատիսեան, Մ. Պապաջանեան, խորհրդականներ՝ Գ. Կորգանեան, Մ. Բունիաթեան, Գ. Խատիսեան և գործերի կառավարիչ Յ. Քոչարեան:

Խորհրդակցութեան զխաւոր նիւթն էր՝ որոշել թէ ինչ աշխարհագրական սահմաններ մենք պէտք է վերջնականապէս ընդունենք՝ առաջարկելու համար առաջիկայ կօնֆերանսի մէջ, իբրև մեր պահանջ, գեներ. Կորգանեանը և Գ. Խատիսեանը մանրամասն զեկուցեցին իրենց տեսակետները, մի քանի վիճելի կետերի վերաբերմամբ մտքերի փոխանակութիւն եղաւ, որից յետոյ խորհրդակցութիւնը ցուցմունքներ տուեց գեներ. Կորգանեանին և Գ. Խատիսեանին, առաջարկելով նրանց՝ ղեկավարուելով եղած ցուցմունքներով պատրաստել մեր ծրագրած քարտեզը և դրա հետ միասին պատճառաբանուած բացատրական զեկուցումը:

Որոշուեց, որ այդ պատրաստուած ծրագիրը պատգամաւորութեանը ներկայացնելուց յետոյ՝ կը տրուի նախ գերմանական դեսպանին, և միւս դաշնակից պետութիւնների դեսպաններին, և ապա, նաև նրանց հետ խօսելուց յետոյ, Թիւրքիոյ կառավարութեանը:

Արտակարգ նիստ յունիսի 29-ին:

Ներկայ էին Ահարոնեան, Խատիսեան և Պապաջանեան ու գործերի կառավարիչ Յ. Քոչարեան:

Ժողովը զբաղուեց պատուիրակութեան կազմի վարձատրութեան խնդրով: Պ. Ա. Խատիսեանի առաջարկութեամբ որոշուեց ընդունել հետևեալ նորմաները.

1. Տալ բոլորին անխտիր 500-ական ռուբլի միանուագ, իբրև ճանապարհորդական ծախքեր, իսկ Բերբերեանին, Արշակին և Ջինաւերին 300-ական:

2. Տալ ներկայացուցչական ծախք՝ նախագահին՝ 400 ոսկի, Ա. Խատիսեանին, Մ. Պապաջանեանին, գեներ. Կորգանեանին ու Յ. Քոչարեանին՝ 100-ական ոսկի, Գ. Խատիսեանին և Բունիաթեանին՝ 50-ական, իսկ մնացածների համար նախագահի տրամադրութեան տակ դնել 100 ոսկի այդ նպատակով տալու համար:

3. Տալ օրական ամեն մէկին, սկսած նախագահից՝ 3-ական ոսկի, միայն Սիրզոյեանին և Թախթաճեանին՝ 4-ական, ի նկատի առնելով, որ նրանք աւելի շատ աշխատանք են կատարում, իսկ Բերբերեանին, Արշակին և Ջինաւերին մի ոսկի օրական:

## Նիստ IV

30-ին՝ յունիսի, երեկ. ժամի 8 ½ :

Ներկայ էին պատուիրակները, խորհրդակալները և գործերի կառավարիչը:

1. Գ. Խատիսեանը, ի տեղեկութիւն ժողովականների, կարդաց այն գրաւոր ինտերվիւն, որ նա պատրաստել է «Հաֆթալի» թւրքերի շաբաթթերթի խմբագրի՝ Յամի բէյի հրաւերով՝ հայկական տերրիտորիայի մասին: Ժողովը հաւանութիւն տուեց:

2. Գեմ. Կորգանեանը և Գ. Խատիսեանը տուեցին այն զեկուցումը, որ նրանք պատրաստել էին նախորդ նիստում ստացուած ցուցմունքների համաձայն հայկական տերրիտորիայի սահմանների մասին, ի նկատի ունենալով նաև Բրեստ-Լիտովսկի դաշնագրի պայմանները: Ձեկուցումը ստացաւ ժողովի հաւանութիւնը: Յանձնարարուեց նրանց գրի առնել այդ և պատրաստել տպագրութեան համար:

3. Ապա ժողովը անցաւ մեր ծրագրած exposé-ի<sup>193</sup> համար պատրաստուած միւս տեսութիւնների քննութեանը:

Լ. Լիսիցեանը ներկայացրեց համառօտ պատմական տեսութիւն մեր ընդունած աշխարհագրական սահմանների վերաբերեալ: Յանձնարարուեց մի քանի լրացումներ մտցնել, օգտուելով նոր աղբիւրներից:

## Նիստ V

1-ին յուլիսի, երեկոյեան ժամի 9-ին:

Ներկայ էին պատուիրակները, խորհրդակալները և գործերի կառավարիչը:

1. Մ. Բունիաթեանը կարդաց համառօտ զեկուցում մեր ընդգրկած տերրիտորիայի տնտեսական և ֆինանսական առաւելութիւնների մասին: Ժողովը հաւանութիւն տուեց զեկուցմանը և յանձնարարեց մի քանի փոփոխութիւններ անելուց յետոյ տալ տպագրութեան համար:

2. Գ. Խատիսեանը դարձեալ մի քանի լրացուցիչ կէտեր շոշափեց իր պատրաստելիք տեսութեան մասին:

Ապա ժողովը որոշեց, որ մեր յուշագիրը ունենալու է հետևեալ պարունակութիւնը.

1. Յամառօտ առաջաբան,
2. Գ. Խատիսեանի և զեմ. Կորգանեանի ներկայացրած ծրագիրը, սահմանների մանրամասն նկարագրութիւնը և ապա քարտեզը,
3. պատմական և տնտեսական զեկուցումները,
4. դիպլոմատիկական յարաբերութիւնների համառօտ տեսութիւն և խնդրի այժմեան դրութիւնը:

## Նիստ VI

7-ին յուլիսի 1918, առաւօտեան:

Ներկայ էին պատուիրակներ Ահարօնեան, Խատիսեան, Պապաջանեան, Խորիդր. զեմ. Կորգանեան, Գ. Խատիսեան, Մ. Բունիաթեան և գործերի կառավարիչ Յ. Քոչարեան:

1. Նորից հարց տրուեց մեր ներկայացնելիք սահմանների ծրագրի մասին: Մտքերի երկար փոխանակութիւն եղաւ, ըստ որում մի քանիսը պաշտպանում էին, որ մենք պէտք է մտցնենք նաև Նախիջևանի գաւառի մի մասը (երկաթուղու գիծը), միւսները պնդում էին շարունակել նախկին մեր ծրագիրը: Որոշուեց է շարունակել պատրաստել ծրագիրը, ինչպէս ընդունուած է, և ապա ներկայացնել դեսպաններին:

Ա. Խատիսեանը առաջարկում է, որպէսզի պատրաստելով մեր ընդունած ծրագիրը, նրա վերջում (վերջաբանի մէջ) մենք յիշատակինք և մեր ցանկացած սահմանների մասին, որպէս զի յետոյ, երբ յարմար առիթ ներկայանայ, մենք իրաւունք ունենանք առաջարկ անելու այդ մտքով:

Մ. Պապաջանեանը պնդում էր, որ մենք չը պէտք է հեռանանք արդի ընդունուած էտնիկ տեսակէտից և մնանք հին ծրագրի վրայ:

## Նիստ VII

8-ին յուլիսի: Ներկայ էին բոլոր պատուիրակները և խորհրդակալները, նաև գործերի կառավարիչը:

Մ. Բունիաթեանը կարդաց իր պատրաստած ընդհանուր զեկուցումը խաղաղութեան բանակցութիւնների մասին սկսած Տրապիզոնից մինչև վերջին օրերը, որը կցուելու է դեսպաններին տրուած մեր յիշատակագրին:

Ժողովը մի քանի նկատողութիւններից յետոյ ընդհանրապէս հաւանութիւն տուեց զեկուցմանը: Ապա յանձնարարուեց Մ. Պապաջանեանին և Ա. Խատիսեանին կարդալ առանձին կերպով զեկուցումը և, համաձայն իրենց նկատողութիւնների, փոփոխել զեկուցման մի քանի տեղերը և այսպիսով վերջնական ձև տան նրան տպագրելու համար:

## Նիստ VIII

11-ին յուլիսի 1918, երեկոյեան Ժ. 10-ին: Ներկայ էին Ահարօնեան, Ա. Խատիսեան և Պապաջանեան և գործերի կառավարիչ Յ. Քոչարեան:

Խորհրդակցութեան նիւթն էր այն հարցերը, որոնք պէտք է նիւթ դառնային առաջիկայ տեսակցութեան մէջ Թալաթ փաշայի հետ տրուելիք խնդիրների համար:

Յարցերը բոլորում էին Ազգային Խորհրդից վերջերս ստացուած հեռագրերից՝ իրերի դրութեան մասին Հայաստանում:

Դրանք էին. 1. գաղթականների դրուփունը և այդ մասին մեր պահանջները, 2. մի շարք տեղերում եղած շարդերը թուրք-թաթարական բանդաներից, 3. մեր երկրի որոշ մասերը դեռ բռնուած են տաճկաց զորքերով և 4. երկաթուղու գծի մեր բաժինը յանձնել մեզ:

Այդ բոլոր կետերի մասին որոշուեց կազմել մի գրաւոր Note Verbale, որը ներկայացնել մեծ վեզիրին նրա հետ ունեցած խօսակցութիւններից յետոյ, իբրև անփոփում դրուած խնդիրների:

Յանձնուեց Մ. Պապաջանեանին պատրաստել այդ Note Verbale-ի նախագիծը:

Տաճկական զորքերի դուրս բերելու մասին որոշուեց հարցը դեռ չը դնել:

### Նիստ IX

18-ին յուլիսի, երեկ. ժամի 9-ին:

Ներկայ էին բոլորը, բացի Մ. Պապաջանեանից, որը հիւանդ էր:

Նախագահը զեկուցեց, որ նոյն օրը իր մօտ եկել էր էնվեր փաշայի կողմից Սուլտար բէրը և խնդրել էր, որ նրանց ներկայացնենք մեր սահմանների քարտեզը, որ, ինչպէս իրենք ասում են, ուրիշ պատուիրակութիւնները արդեն իրենցը տուել են, և մենք ենք միայն, որ դեռ չենք տուել:

Քննութեան դրուեց այս հարցը, թէ ինչ սահմաններով տալ այդ քարտեզը: Որոշուեց պատրաստել և ներկայացնել քարտեզը, նշանակելով ա. Բաթումի պայմանագրի համաձայն մեր տերրիտորիայի սահմանները, բ. առանձին գոյնով նշանակել Տաճկաստանի գրուած երկիրները՝ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի սահմաններից դուրս և գ. մտցնել քարտեզի մէջ բոլոր հայաբնակ գաւառները, նշանակելով առանձին թուրքերի և վրացիների կողմից վիճելի համարուած մասերը, մուծելով նաև քարտեզի մէջ Չանգեզուրի գաւառի հարաւային կեսի արևմտեան մասը և Նախիջևանի գաւառի Օրդուբաթի շրջանը:

Ծանօթ. N IX արձանագրութեանը:

Արձանագրութեան վերջին կետի առթիւ ամսոյս 19-ին և 20-ին եղած խօսակցութիւնների ժամանակ, երբ վերջնականապէս պատրաստվում էր քարտեզը էնվեր փաշային ներկայացնելու համար, Միք. Պապաջանեանը յայտնեց, որ ինքը միանգամայն դէմ է այդ կետին և այդ առթիւ տալիս է իր առանձին կարծիքը, որը խնդրեց պահել գործերի մէջ:

### Նիստ արտակարգ 26-ին յուլիսի

Ներկայ էին Ա. Ահարօնեան, Ա. Խատիսեան, Մ. Պապաջանեան և Յակ. Քոչարեան:

Մ. Պապաջանեանի առաջարկութեամբ ընդունուեց այն որոշումը, որ ներկայացուցչական ծախքերի համար 50-ական ոսկի տրուում է, բացի Խորհրդականներից (Գ. Խատիսեան և Մ. Բունիաթեան), նաև մնացեալ

պաշտօնեաներին, այն է պ. պ. Միրզոյեանին, Թախթաճեանին, զնդապետ Շահբաղեանին և Ա. Աղաբաբեանին:

### Նիստ X

29-ին յուլիսի 1918 թի, երեկ. ժամի 9 ½-ին:

Ներկայ էին Ա. Ահարօնեան, Ա. Խատիսեան, Մ. Պապաջանեան, զեներալ Կորգանեան և գործերի կառավարիչ Յ. Քոչարեան:

Ա. Խատիսեանը զեկուցեց այն հարցերի մասին, որ շոշափուել էին Արտաք. գ. նախարար Նեսսիմի բէյի հետ իր ունեցած վերջին տեսակցութեան ժամանակ, նոյն օրը՝ ճաշից յետոյ:

1. Գերիների հարց: Չարց է ծագել, թէ ում համարել հայկական գերիներ, քանի որ Ռուսաստանի գերիներ են, որ վերցրուած են Ռուսաստանի հետ ունեցած պատերազմից: Նախարարը համաձայնել է Ա. Խատիսեանի պարզած տեսակէտի հետ, այն է, որ համարել Չայաստանի գերիներ նրանց, որոնք ծնուած են հայկական գաւառներում և իրենց ճանաչում են Չայաստանի քաղաքացիներ: Խօստացել է այդ մտքով ներկայացնել խնդիրը էնվեր փաշային և մինիստր. Խորհրդին:

2. Գալով մեր տուած Note Verbale-ի մէջ յարուցած խնդիրներին, մինիստրների Խորհուրդը երկու նիստերում զբաղուել է դրանցով, կայացրել է մի շարք որոշումներ, որոնց մասին գրաւոր պատասխան կը տրուի մեզ, իսկ քանի որ այդ կարող է ուշանալ, ինքը բերանացի կը յայտնի դրանց մասին:

ա. գաղթականների մասին. ի նկատի առնելով, որ շատ տեղերում դեռ կրքերը չեն խաղաղուել և կարող են excess-ներ լինել դրանց վերաբերմամբ, որոշել են, որ անմիջապէս նրան կարելի է թոյլ տալ վերադառնալ Ալեքսանդրապոլի և Բաթումի շրջանները, իրենք արդէն հեռագրել են այդ երկու շրջանների մասին կարգադրութիւնը: Միւս շրջանների մասին հարցը դեռ քննութեան մէջ է և հետզհետէ կը թոյլատրուի, բացի Ղարսի և Ախալքալաքի շրջանները, որտեղ դեռևս դժուար է թոյլ տալը ի նկատի առնելով սուր յարաբերութիւնները:

Կովկաս մենք այլ ևս նոր զօրքեր չենք ուղարկելու. ասել է նա: Ախալքալաք գաւառում թիւրք զօրքեր այլևս չը կայ, այն կա միայն Բանդ (Bande)-եր:

բ. երկաթուղիների մասին մինիստրը յայտնել է, որ որոշուած է «Transmettre au gouvernement Arménien partout l'exploitation et l'administration des chemins de fer, mais garder sur la ligne des e'tapes militaires ottomanes»<sup>194</sup>, և այդ մտքով էլ կարող ենք հեռագրել:

գ. Որոշել են և հրաման տուել e'vacuer Bambak et Lori, առաջարկում է անմիջապէս հեռագրել մեր կառավարութեանը. որ այդ շրջանները իսկոյն բռնեն մեր հայկական զօրքերը և պաշտօնեաները: Այդ մտքով հեռագրելու են նաև Էսսադ փաշային Բաթում:

Այդ առթիւ մինիստրը զանգատուել է Անդրանիկի վրայ, որը կամաւորներ է հաւաքում և շարունակ դժուարութիւններ է ստեղծում թիւրքերի դէմ և խնդրել է միջոցներ ձեռք առնել նրա վրայ ազդելու համար:

դ. Գալով հայերի և թիւրք գաղթականների ուժով (e'change par force)<sup>195</sup> փոխանակութեանը, ասում է այդ մասին իրեն ոչինչ յայտնի չէ, և որոշուած է, որ ոչ մի դէպքում այդպիսի քայլեր չանեն:

Ե. Յայերին հաւաքելու և հեռացնելու, թիկունք տեղափոխելու մասին նույնպէս իրեն ոչինչ յայտնի չէ: Հեռագրուած է Էսսադ փաշային ոչ մի դէպքում չանեն այդ, իսկ եթէ կան հեռացրած հայեր՝ անմիջապէս վերադարձնել իրենց: Ընդհանրապէս մինիստրը յայտնեց, որ կարելի է ընդունել և կատարել մեր խնդիրներից այն բոլորը, ինչ զինուորական ռազմական տեսակետից անյարմարութիւն չի ներկայացնում:

3. Ապա հատիսեանը հարց է տվել և մինիստրը հաւանութիւն է տուել այն մասին, որ պէտք է աշխատել ուղղակի հեռագրագծով կապել Կ. Պօլիս-Բաթում-Երևան, նույնպէս և անմիջական պօստային կապ ստեղծել Երևանի հետ Բաթումի վրայով: Մինիստրը առաջարկել է այդ մասին հեռագրել և մեր կառավարութեանը:

4. Ա. հատիսեանը հարցրել է Երևան գնացող յատուկ զինուորական ներկայացուցչի մասին: Մինիստրը յայտնել է, որ գնում է Սեհմետ Ալի փաշա, որ լինելու է *representant militaire et diplomatique du gouv[ernement] Imp[eriale] Ottom[an] aupre's de la Rep[ublique] Arménienne*.<sup>196</sup>

5. Conferense-ի մասին մինիստրը ասել է, թէ դեռ խնդիրները չեն պարզուած, հաւանօրէն մի 10 օրից յետոյ կը պարզուի: Մինիստրը առաջարկել է, որ պատուիրակութիւնը վերոյիշեալ գլխաւոր որոշումների մասին մի հեռագիր կազմի իր կողմից Յայկ. կառավարութեանը, և ուղարկի մինիստրութեանը, որը իր կողմից կը վաւերացնի այն և կուղարկի համապատասխան ինստանցիաներ Էսսատ փաշային:

## Նիստ XI

Օգոստոսի 7-ին 1918թ., երեկ. 10 ժամին:

Ներկայ էին Ավ. Ահարօնեան, Ա. հատիսեան, Մ. Պապաջանեան, զինուորական խորհրդական գեն. Կորգանեան և գործերի կառավարիչ Յ. Քոչարեան:

1. Ի նկատի առնելով, որ գեն. Կորգանեանը ընտանեկան պատճառներով կարճ ժամանակով ստիպուած է գնալ Թիֆլիզ, նախագահը դրեց խորհրդակցութեան խնդիր այն զեկուցման մասին, որ պիտի անի գեներալը Ազգային հորհրդին և կառավարութեանը այստեղի ընթացիկ գործերի մասին: խորհրդակցութիւնը համառօտակի ընդգծեց այն գլխաւոր հարցերը, որ կարծարծի իր զեկուցման մէջ գեներալը:

2. Ապա դուրեց այն խնդիրը, թէ ինչ հարցեր պիտի շոշափել ներքին գործերի մինիստր Ջանփոլադ բէյի հետ վաղը ունենալիք տեսակ-

ցութեան միջոցին: Միք. Պապաջանեան յայտնեց այն կարծիքը, որ մինչև այժմ մենք էլ, կառավարութիւնն էլ միայն դեկլարացիաներ ենք արել, ժամանակն է, որ դեկլարացիաներից անցնենք գործի: Եւ այդ մըտքով էլ, նրա կարծիքով, պիտի խօսել մինիստրի հետ:

Մեր Note Verbale-ի դրած պահանջներից մինչև այժմ գրեթէ ոչինչ չի կատարուած, բացի այն հեռագրից, որը ուղարկուած է մի քանի օր առաջ, և որը չգիտենք, թէ ինչպէս է իրագործուած: Այժմ պէտք է պնդել, որ Բաթումի դաշնագրի պայմանները գոնէ կատարուին, որ է՝ մեր տերիտորիան մաքրուի տաճկական զօրքերից, երկաթուղին մեզ յանձնուի, և գաղթականների վերադարձը իրագործուի:

Բացի դրանցից, պէտք է նաև կօնֆերանսի հարցն էլ վերջապէս պարզել, թէ երբ է սկսելու: Այդ մտքերի շուրջը մտքերի փոխանակութիւն եղաւ, և որոշուեց աշխատել աւելի որոշ և կտրուկ կերպով դնել այդ խնդիրները կառավարութեան առաջ, և միևնոյն ժամանակ դնել այն հարցը, թէ ինչ է ուզում և ինչ է սպասում մեզնից ինքը՝ կառավարութիւնը:

## Նիստ XII

Կիրակի, 11-ին օգոստոսի, երեկոյեան ժամի 9 1/2-ին:

Ներկայ էին երեք պատուիրակները, գնդապետ Շահբաղեանը և գործերի կառավարիչ Յ. Քոչարեանը:

1. Գնդապետ Շահբաղեանը, պատուիրակութեան որոշմամբ, հարկը պահանջած դէպքերում փոխարինելու է զինուորական խորհրդական գեն. Կորգանեանին: Գնդապետը, գեներալ Կորգանեանի յանձնարարութեամբ, վարում էր հայ գերիների և փախստականների գործը Կ. Պօլսում: Նա համառօտ զեկուցում տուեց գերիների վիճակի մասին: Այդ օրը նա գնացել էր Սամաթիա, որտեղ գերիների կենտրոնավայրն է: Որոշուեց յանձնարարել գնդապետին կազմել գերիների անուանական ցուցակ և ապա առանձին գրութեամբ պատուիրակութեան կողմից ներկայացնել Էնվեր փաշային նրանց հայրենիք վերադարձնելու համար:

2. Այդ գերիներին նպաստներ տալու համար հարկաւոր են խոշոր գումարներ, մինչև տարուց սկզբները Յօլլանդ. դեսպանը նախատեսել էր տալիս նրանց, այժմ դադարել է: Պատուիրակութիւնը դրա համար խնդրել է Յայկական կառավարութիւնից յատուկ գումար. այն է 100.000 ռուբլի. բայց դեռ չէ ստացել:

Բացի դրանական կարիքից, պ. Շահբաղեանը զեկուցեց որ շատերը (փախստականներից) դիմում են մեզ և խնդրում են անցաթղթեր, այն ինչ մենք չենք կարող գոհացնել դրանց: Նա գտնում էր, որ մեր պատուիրակութիւնը պիտի մի յատուկ բաժին ունենայ, անցաթղթեր կան վիզիաներ տալու համար. Քանի որ մեր պետութիւնը այստեղ չունի հիւպատոսարան, այդ ֆունկցիան պիտի ինքը՝ պատուիրակութիւնը ստանձնի, յանձնելով այդ պաշտօնը իր միջից մի անդամի. Սկզբունքը՝

այդ միտքը հաւանութիւն գտաւ, և որոշուեց շուտով իրականացնել այդ առաջարկը:

### Եփսոս XIII

Օգոստոսի 14-ին, երեկոյեան 10 ժամին:

Ներկայ էին Ահարոնեան, Խատիսեան, Պապաջանեան, Գ. Խատիսեան, Մ. Բունիաթեան, Դ. Շահբաղեան և Յ. Քոչարեան:

Նախագահը բանալով նիստը յայտնեց, որ պատուիրակութեան ֆինանսական հորիզոնական Բունիաթեանը, որոշած լինելով այս օրերս մեկնել Պօլսից դէպի Թիֆլիզ, խնդրել է հրաւիրել այս նիստը իր կողմից մի քանի զեկուցումներ լսելու համար:

Մ. Բունիաթեանը ներկայացրեց երկու զեկուցում. 1. Հայաստանի ֆինանսական դրութեան մասին ներկայումս:

Ձեկուցման սկզբում կանգ առաւ այն ծանր ֆինանսական դրութեան վրայ, որի մէջ ներկայումս գտնուում է Հայաստանը՝ շնորհիւ ամբողջ այնտեղ անցուդարձի, ցոյց տուեց գաղթականութեան խոշոր կարիքները, և մօտաւորապէս ցոյց տուեց, որ առաջին տարուց ծախքերի համար պահանջուում է 260-ից մինչև 340 միլիօն ռուբլի: Հարց է ծագում, թէ որտեղի՞ց կարելի է գտնել այդ դրամը: Գլխաւոր միջոցը՝ թղթադրամ բաց թողնելն է, որի վրայ և առանձնապէս կանգ առաւ զեկուցողը: Թղթադրամ բաց թողնելը նրա կարծիքով պէտք է կազմակերպել՝ առանձին ընկերութեան միջոցով: Թղթադրամի տեսակները գտնուում է յարմար արդեն եղած սիստեմը այսինքն ռուբլիները: Քանակութիւնը, թէ որքան կարելի է բաց թողնել, զեկուցողը որոշում է առանձին եղանակով, օրինակ վերցնելով այն հիմունքները, որ կիրառուում էին Ռուսաստանում: Այդ հաշուով կարելի է բաց թողնել մինչև 250 միլիոնի թղթադրամ Հայաստանի համար:

Եկամուտի միւս աղբիւրն է արտաքին փոխառութիւնը, որի համար պէտք է ներկայացնել համապատասխան ապահովութիւն: Մեր ունեցած միակ ապահովութիւնն է երկաթուղու գիծը, որը կարող է մինչ 250 միլիոնի ապահովութիւն լինել:

Ձեկուցողը առաջարկում է այժմ և եթ գնել թղթադրամ տպելու մեքենայ, ինչպէս և ուրիշ մեր կառավարութեան համար անհրաժեշտ մեքենաներ և նիւթեր: Ձեկուցման առթիւ մտքերի փոխանակութիւն է տեղի ունենում: Թէ Ա. Խատիսեան և թէ Մ. Պապաջանեան առաջարկում են ուղարկել պ. Բունիաթեանի զեկուցումը մեր կառավարութեանը լրացնելով այն մեր կողմից ևս մի քանի բացատրութիւններով և առաջարկներով, և խնդրել կառավարութիւնից ուսումնասիրելով խնդիրը ամենայն կողմից մեզ տալ համապատասխան մանրատներ այստեղ գործելու համար, յատկապէս արտաքին փոխառութեան վերաբերմամբ, ժողովը ընդունում է այդ առաջարկը: Մ. Բունիաթեանի զեկուցումը կցւում է արձանագրութեանը:<sup>197</sup> Միևնոյն ժամանակ ժողովը գտնում է, որ ինքը՝ պ. Բունիաթեանը

անձամբ պիտի ներկայացնի Հ. կառավարութեանը և Ազգային հորհրդին իր պատճառաբանուած առաջարկները, որոնք բղխում են նրա զեկուցումից:

2. Ապա պ. Բունիաթեանը կարդաց մի ուրիշ զեկուցում, որը ներկայացնում է նրա անձնական կարծիքը այն մասին, թէ ինչ հիմունքների վրայ պիտի դրուի Հայաստանի ապագայ տնտեսական կազմակերպութիւնը:

Լսելով զեկուցումը՝ պատուիրակութեան անդամները գտան, որ զեկուցման նիւթը դուրս է պատուիրակութեան բուն գործունէութեան սահմաններից, և մենք չենք կարող այն քննութեան առնել: Բայց իբրև մի մասնաւոր կարծիք մենք կարող ենք այն ուղարկել ի տեղեկութիւն մեր կառավարութեան՝ իբրև նիւթ, առանց մեր կողմից որևէ առաջարկութեան կամ քննադատութեան: Պատուիրակութեան երկու անդամների (Ա. Խատիսեան և Մ. Պապաջանեան) ծայրով մէկի դէմ (Ահարոնեան) ընդունուում է վերջին որոշումը: Ա. Ահարոնեանը մնում է առանձին կարծիքի, որ այդ զեկուցումը, իբր միանգամայն մասնաւոր կարծիք և կապ չունեցող մեր գործունէութեան հետ, չը պէտք է մեր կողմից ուղարկուի կառավարութեանը:

3. Ա. Խատիսեանը ներկայացրեց համառօտ նախահաշիւ մեր ծախքերի՝ ներկայ օգոստոսի սկզբից մինչև Սեպտ. 15-ը, որը հասնում է 2500 լիրայի:

Այդ առթիւ հարց է ծագում, թէ ինչպէս գտնել այսքան դրամը, քանի որ մենք մեր կառավարութիւնից դեռ չենք ստացել և մեր դրամն էլ գրեթէ սպառուել է:

Մ. Պապաջանեան առաջարկում է վերցնել փոխառութիւն թիւրք կառավարութիւնից, ինչպէս նրանք մեզ արդեն տուել են:

Մեծամասնութիւնը, սակայն, գտնում է, որ առայժմ աշխատել գտնել ուրիշ միջոցներով: Ապա ընդունում է Մ. Պապաջանեանի միւս առաջարկը՝ փոխառութիւն անել Ադրբեջանի պատուիրակութիւնից, որքան որ կարելի է: Յանձնարարում է Մ. Պապաջանեանին՝ դիմել նրանց այդ խնդիրքով:

4. Գնդապետ Շահբաղեանը համառօտ զեկուցեց հայ գերիների և տեղահանուած (interie) ռուսահպատակ հայերի մասին: Տեղահանուած և արքորուածների թիւը ընդհանրապէս հասնում է 400-ի, մօտաւորապէս նոյնչափ էլ գերիների թիւն է ընդհանրապէս, որոնցից 32 հոգի գտնուում է Պօլսում: Դրանցից 4 սպաներ և 28 զինուորներ: Առաջարկուեց գնդապետին յաջորդ նիստին աւելի մանրամասն զեկուցում տալ, յատկապէս արքորուածների և գերիների և նրանց ընտանիքների վրա պահանջուելիք ծախքերի գումարի մասին:

### Եփսոս XIV

21-ին օգոստոսի 1918 թի, երեկ. ժ. 9 ½-ին: Ներկայ էին երեք պատուիրակները, երկու խորհրդակալներ, զինուորական խորհրդակալի փոխարեն գնդապետ Շահբաղեանը և գործերի կառավարիչ Յ. Քոչարեանը:

1. Այլ. հատիսեանը զեկուցեց մի քանի տեղեկութիւններ, որ նա ստացել է վրաց պատուիրակութիւնից:

2. Գ. հատիսեանը կարդաց իր պատրաստած յօդուածը, որ նա գրել է իբր պատասխան Շեյխ-ուլ-Իսլամովի յօդուածին՝ Ռասուլզադէի առաջաբանով, որ լույս է տեսել «Յաֆթալիք» շաբաթաթերթում, որը վերաբերում է Հայաստանի և Ադրբեջանի սահմանների խնդրին:

Մի քանի նկատողութիւններ անելով, ժողովը յանձնարարեց հեղինակին ըստ այնմ փոփոխել և վերջնական ձևով խմբագրել յօդուածը:

3. Գնդ. Շահբաղեանը զեկուցեց, որ շատերը ռուսահպատակ հայերից (զերիներից և քսորուածների ընտանիքներից) գալիս և դիմում են իրեն խնդրելով տալ իրենց անցագրեր: Մինչև վերջին ժամանակները Հօլլանդական դեսպանը տալիս էր այդպիսի անցագրեր, այժմ նա դադարեցրել է, յայտնելով, որ այժմ հայկական կառավարութեան ներկայացուցիչները այստեղ են և կարող են նրանք տալ անցագրեր: Այժմ հարց է դրուում, թէ ինչ անել այդ պահանջը բաւարարելու համար: Ա. հատիսեանը այդ առթիւ բացատրեց, որ վերջին տեսակցութեան ժամանակ նա արդեն այդ առթիւ լեզու էր բացել, որ այդպիսի պահանջ կայ, և նախարարը այն միտքն է յայտնել, որ քանի որ դելեգացիան այստեղ է, նա կարող է վկայականներ տալ: Հիմնուելով այս հանգամանքի վրայ, որոշուեց ձեռնարկել այդ գործին, պատրաստել անցաթղթի ձևը և յանձնարարել մեր արտաքին գործոց մինիստրին առաջիկայ տեսակցութեան միջոցին Նեսսիմի բէյի հետ՝ յայտնել նրան, որ հիմնուելով նրա բերանացի կերպով տուած հաւանութեան վրայ մենք արդեն սկսել ենք անցաթղթեր տալ մեզ դիմողներին և խնդրել նրանից, որ թիւրք կառավարութիւնը անհրաժեշտ կարգադրութիւնները անի, որպէսզի մեր տուած անցագրերը ընդունուեն և ճանաչուեն տեղական վարչական մարմինների կողմից:

## Նիստ XV

22-ին օգոստոսի 1918թ., երեկոյեան 10 ժամին: Ներկայ էին երեք պատուիրակները, խորհրդակալներ՝ Գեորգ հատիսեան և Ս. Բունիաթեան և գործերի կառավարիչը:

1. Այլ. հատիսեանը զեկուցեց այն խօսակցութիւնը, որ նա ունեցել է Համի բէյի հետ (պաշտօնեայ զինուորական մինիստրութեան քաղաքական բաժնում) նախընթաց օրը: Խնդիրը վերաբերում է Պօղոս փաշա Նուպարի դիմումին՝ Կլիմանսօին և վերջինիս պատասխանին, որը տպուել է Ֆրանսիական թերթերում: Բոլոր թիւրք թերթերը արտատպել էին այդ լուրը, և ինչպէս պարզուում է, այդ խնդիրը այժմ շատ զբաղեցնում է

օսմանեան ազդեցիկ կառավարչական շրջանները և պատգամաւորների մէջ և մանաւանդ այն շրջանները, որոնք առաջ էլ մեզ հակառակ էին և հակառակ էին մասնաւորապէս Հայկական անկախութիւն ստեղծելու խնդրում և այժմ էլ այդ փաստը բերում են իբրև մի ապացոյց մեր դէմ, իբրև ապացոյց մեր երկդիմի քաղաքականութեան: Այժմ այն տարրերը (ինչպէս ասում է Համի բէյը), որոնք մեզ պաշտպանել են առաջ և այժմ էլ ուզում են պաշտպանել, գտնում են, որ այդ փաստից իրօք կարող են օգտուել հակառակ տարրերը, մանաւանդ այժմ առաջ ունենալով քսորեալների վերադարձի խնդիրը, որի համար պարլամենտը բացուելիս մտցնելու են 2 միլիօն լիրայի կրեդիտի պահանջ կառավարութեան կողմից քսորեալների համար: Հակառակ տարրերը կարող են այդ փաստի վրայ յենուելով պարլամենտում մեզ հակառակ տրամադրութիւն ստեղծել և մերժել տալ այդ օրինագիծը: Յայտնի է, որ ինքը՝ Սուլթանը յատկապէս ցանկանում է այդ վերադարձը և մենք պէտք է օգտուենք այդ նպաստաւոր հանգամանքներից: Բացի դրանից, մեր առաջ կայ և Ղարաբաղի խնդիրը, որի համար մենք դարձեալ աւելի դժուարութիւնների կը հանդիպինք, եթէ ոյժ տանք մեր հակառակորդներին: Երկու տարրերից, որ պարլամենտում [կան], ինտելլիգենտ քաղաքացիական մասը աւելի մեզ պաշտպանում է, իսկ զինուորական տարրերը մեզ դէմ են, առարկելով, որ մենք մի քանի ֆրօնտներով ենք գործում: Պէտք է, գոնէ, որ հայկական կառավարութիւնը և նրան ներկայացնող պատուիրակութիւնը մի կերպով արտայայտուի, որ իրենք անկեղծ կերպով ուզում են գործ ունենալ թիւրքերի և նրա դաշնակիցների հետ, որ նրանք ոչ ոքի չեն լիազօրել իրենց անուսից դիմումներ անել համաձայնութեան պետութիւններին: Ա. հատիսեանը, զեկուցանելով այդ մասին, իր կողմից առաջարկում է մի նամակի ձևով պատուիրակութեան կողմից այդ բովանդակութեամբ մի յայտարարութիւն անել լրագրներում: Ձևը թողնում է մշակել ժողովին:

Ստքերի երկար փոխանակութիւն է տեղի ունենում այդ առթիւ: Բոլորն էլ գտնում են, որ իրօք կարևոր է մի կերպով տալ բացատրութիւն հետաքրքրուող շրջանների համար՝ այն մտքով, որ ֆրանսիական լրագրներում երևցած լուրը Նուպար փաշայի Կլիմենսօյին արած դիմումի մի մասին, արտատպուելով տեղական թերթերի մէջ առաջ է բերել թիւր կարծիքներ և եզրակացութիւններ, ուստի դրանք առաջն առնելու համար պատուիրակութիւնը յայտարարում է, որ Հայկական կառավարութեան կողմից որ և է յայտարարութիւններ անել կարող են միայն այն անձինք և պատուիրակութիւնները, որոնք յատկապէս լիազօրուած են նրա կողմից. և որ Նուպար փաշան Հայկ. կառավարութեան անուսից յայտարարութիւններ անելու լիազօրուած չէ:

Բացի դրանից, Ս. Պապաջանեանի առաջարկութեամբ ընդունուում է նաև այն, որ մեր այդ յայտարարութեան մէջ մտցուի, որ մեր պատուիրակութիւնը, որ եկել է այստեղ, յատկապէս հետաքրքրուած է թիւրքիոյ կառավարութեան հետ մի շարք հարցեր դնելու և լուծելու համար:

Ապա հարց է ծագում, թե ինչ ձևով տալ մեր բացատրութիւնը, արդեօ՞ք նամակի ձևով պատուիրակութեան կողմից, թե ինտերվիւի ձևով, որը կը տայ մեր արտաքին գործերի մինիստր Ա. Խատիսեանը մի քիւրքի ազդեցիկ լրագրի մէջ: Մտքերի փոխանակութիւնից յետոյ ժողովը գտնում է, որ աւելի յարմար է յայտարարութիւնը անել ինտերվիւի ձևով: Իսկ եթէ պարզուի, որ ինտերվիւի ձևը կարող է չը գոհացնել որոշ շրջանները, հրատարակել այդ նամակի ձևով պատուիրակութեան կողմից: Յանձնարարուեց Ալ. Խատիսեանին պարզել այդ խնդիրը և ապա կատարել կայացրած որոշումը:

#### Նիստ XVI

17-ին օգոստոսի 1918, երեկ. ժամի 9-ին: Ներկայ էին երեք պատուիրակները, խորհրդականներ Գ. Խատիսեան, Մ. Բունիաթեան, զինւոր. խորհրդականի տեղ զնդ. Շահբաղեան և գործերի կառավարիչը:

Նախ քան խորհրդականներին նիստի հրաւիրելը՝ վարչական նիստում հարց տրուեց, թէ կարելի է արդեօք բաւարարութիւն տալ Մ. Բունիաթեանի պահանջին՝ տալ իրեն ծանօթանալու համար պատուիրակութեան մէջ ստացուած բոլոր նամակները և դօքումենտները: Եզրակացութիւնը այն էր, որ խորհրդականները կարող են կարդալ և ծանօթանալ այն բոլոր թղթերի և գրութիւնների հետ, որոնք նախագահի կողմից յանձնուած են դիւանը:

1. Մտքերի փոխանակութիւն եղաւ այն հարցի մասին, թէ ինչ սահմաններ պէտք է ցոյց [տան] ենվեր փաշային մեր պատուիրակները, երբ նրանք այս օրերս ներկայանալու լինեն նրան՝ գաղթականների վերադարձի առթիւ սահմաններ որոշելու համար՝ տաճկակլան] զօրքերի ապահովութեան տեսակետից:

2. Գնդապետ Շահբաղեանը զեկուցում տուեց հայ զերիներին և ռուսահպատակ հայ արքորուածներին և նրանց ընտանիքներին օգնութիւն հասցնելու խնդրի մասին:

Գերիների թիւը Պոլսում 30 հոգի է (Սամաթիայում), իսկ գաւառներում 370 հոգի: Բացի դրանցից, կան նաև 4 գերի սպաներ:

Աքսորուած և տեղահանուածների թիւը Պոլսում 21 հոգի է, և 4 սեմինարիստներ, իսկ գաւառներում 372 հոգի են: Դրանց ցուցակները առանձին կազմուած են:

Հարց է դրուում դրամական օժանդակութեան մասին, և որոշուում է տալ իւրաքանչիւրին (թէ գերի և թէ արքորուած) միանուազ 1զ լիրա: Բացառիկ դէպքերի մասին առանձին կարգադրութիւն կարուի: Աքսորուածների ընտանիքների և մանաւանդ որբերի մասին որոշուեց աշխատել առանձին խնամք տանել, որբերին հաւաքել և մի կերպ տեղաւորել որբանոցներում: Իսկ ընտանիքներին և ազատուած գերիներին հետզհետեւ աշխատել շոգենաւով ուղարկել Բաթումի վրայով Հայաստան:

Միևնոյն ժամանակ որոշուեց ցանկացողներին, որոնք չուեն վկայական անցագիր, տալ մեր կողմից առանձին վկայականներ, նախապէս, իհարկէ, ստուգելով նրանց անձնաւորութիւնը:

#### Նիստ XVII

1. 3. Քոչարեանը զեկուցեց, որ համաձայն Բերլինի հայկ. պատուիրակութեան տուած գրութեան, որով նրանք խնդրում էին Գերման. կառավարութիւնից յատուկ ներկայացուցիչ ուղարկել Հայաստան, մատնացոյց անելով, որ Հայաստանից կարելի է արտահանել պղինձ, բամբակ և այլ նիւթեր, որոնց մասին կարող է տեղեկութիւններ տալ Պօլսի պատուիրակութիւնը, - Բերլինից դիմել էին այստեղ Գերման. դեսպանատունը և խնդրել էին, որ հայ պատուիրակութիւնից խնդրեն տալ իրենց տեղեկութիւններ այդ խնդրի մասին: Այդ հիման վրայ դեսպանատան քարտուղարը մի քանի օր առաջ դիմեց, Քոչարեանի միջոցով, պատուիրակութեանը, խնդրելով տալ այդ նիւթի մասին մեր տեղեկութիւնները՝ Բերլին ուղարկելու համար: Պատուիրակութիւնը յանձնեց խորհրդական Մ. Բունիաթեանին՝ կազմել զեկուցագիր այդ մասին:

Պ. Բունիաթեանը, կազմած լինելով զեկուցագիրը՝ կարդաց ժողովում: Նա կանգ առաւ թէ այն նիւթերի վրայ, որ կարելի է արտահանել Հայաստանից, և թէ այն ապրանքների վրայ, որ պէտք կը լինի ներմուծել Հայաստան, ինչպէս ալիւր, շաքար, մանուֆակտուրա, դեղորայք, ծծումբ և այլն:

Ժողովը հաւանութիւն տուեց զեկուցմանը և որոշեց ներկայացնել այն Գերմ. դեսպանին:

#### Նիստ XVIII

1-ին Սեպտ. 1918 թ., առավօտեան ժ. 10: Ներկայ էին երեք պատուիրակները և Ա. քարտուղարը:

Խորհրդակցութեան զխաւոր նիւթն էր մեր անելիքը ռուս-գերմանական վերջին լրացուցիչ համաձայնութեան առթիւ, որով Գերմանիան և Ռուսաստանը ճանաչում են Վրաստանի անկախութիւնը, իսկ Հայաստանի և Ադրբեջանի անկախութիւնը ոչ:

Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշուում է բոլոր հնարաւոր միջոցների դիմել մեր խնդիրը պարզելու և մեր անկախութիւնը ճանաչել տալու համար: Այդ հարցը որոշուում է դնել կտրուկ կերպով նախ հէնց այսօրուայ տեսակցութեան ժամանակ Նեսսիմի բէյի հետ, որը նշանակուած է ժամի 2-ին: Ապա որոշուում է դիմել այդ խնդրի վերաբերմամբ նաև գերմանական դեսպանին, նաև միւս դեսպաններին:

Նեսսիմի բէյի հետ կայանալիք տեսակցութեան առթիւ Մ. Պապաջանեանը դրեց հետևեալ հարցը. օգոստոսի 20-ի տեսակցութեան միջոցին ենվեր փաշան մեզ դրեց մի հարց, որը իր կարծիքով ուլտիմատումի բնոյթ



ուներ, այն է՝ ընդունում ենք, արդեօք, մենք entente կամ դաշն կամ confederation – թիրքերի հետ, թե ոչ: Եւ այդ հարցին մենք պետք է այժմ որոշ պատասխան տանք: Մենք պետք է ասենք, որ 1. մենք ընդունում ենք սկզբունքով entente թիրքերի հետ, 2. մեր մասնակցութիւնը entente-ի մէջ չի կարող լինել ագրեսիւ, այդ իրենք թիրքերն էլ ընդունում են, այլ միայն պաշտպանելու համար մեր չեզօքութիւնը, թիրքիային նպաստաւոր (благосжелательный) չեզօքութիւն:

Ահարօնեանն էլ ընդունում է վերջին տեսակէտը, այն է մեր բարեմիտ չեզօքութիւնը թիրքիայի վերաբերմամբ, պայմանով, որ թիրքիան յանձն է առնում ապահովել դաշնակիցների միջոցով, որ Ռուսաստանը չի առարկի մեր անկախութեան դէմ: Որոշում է այսօրուայ տեսակցութեան միջոցին Նեսսիմի բէյի հետ խօսք բաց անել այդ entente-ի խնդրի մասին: Յետոյ Մ. Պապաջանեանի առաջարկութեամբ ընդունում է, որ մենք այսօր հարց դնենք, որպէս զի Բերլինի առաջիկայ խորհրդակցութիւնների ընթացքում այն նիստերում, երբ զբաղուելու են մեր հարցով, հրաւիրուի ներկայ լինելու և մեր ներկայացուցիչը:

Դրանից յետոյ ժողովը նախագծեց և միւս բոլոր խնդիրների ցանկը, որոնք պիտի դրուեն այսօրուայ տեսակցութեան միջոցին Նեսսիմի բէյի հետ:

Որոշուեց նոյնպէս հարցապնդում անել այն մասին, որ, ինչպէս զեկուցեց գնդապետ Շահբաղեանը, երեկ բանտարկել են նորից բոլոր գերիներին (հայ, վրացի և ուրիշներ), և այդ մասին պատրաստել ու ներկայացնել առանձին գրութիւն:

## Նիստ XIX

Սեպտեմբերի 2-ին, երեկոյեան ժամի 9 ½-ին: Ներկայ էին երեք պատուիրակները և Ա. քարտուղարը:

1. Կարդացուեցին Բերլինից նոր ստացուած նամակները, և այդ առթիւ տեղի ունեցաւ մտքերի փոխանակութիւն: Առանձին ուշադրութիւն դարձրին Ա. Ջուրաբեանի նամակի մէջ յայտնուած մի քանի սխալ տեսակէտների վրայ, և յանձնարարուեց Ա. Խատիսեանին առանձին նամակ գրել նրան այս առթիւ:

2. Ահարօնեանը զեկուցեց իր այդ օրը ունեցած տեսակցութեան մասին Բուլղարական դեսպանի հետ: Վերջինս յայտնել է, ի միջի այլոց, որ մինչև օրս ոչ Աւստրիական և ոչ Գերմանական կառավարութիւնները չեն նշանակել իրենց ներկայացուցիչներ Երևան Զայկական կառավարութեան մօտ: Իմանալով այդ նա ինքն էլ դժուարանում է այժմ այնտեղ միսսիա ուղարկելու մասին Երևան, և որոշել է ուղարկել միայն զինուորական ներկայացուցիչ Բուլղարիայի կողմից:

3. Ա. Խատիսեան զեկուցում տուեց իր ունեցած տեսակցութեան մասին Աւստրիայի լիազօր գեներալի հետ: Պօմեանկովսկու հետ:

4. Ժողովը զբաղուեց այն խնդիրներով, որ պետք է դնել Թալաաթ փաշայի հետ լինելիք տեսակցութեան ժամանակ, որը նշանակուած է վաղը, ժամի 11գ -ին, ինչպէս նաև այն խնդիրներով, որ պիտի դնել Գերմանական դեսպանի հետ ունենալիք տեսակցութեան միջոցին: Ժողովը մանրամասնօրէն մշակեց այդ խնդիրների ցանկը:

Գլխաւոր խնդիրը վերաբերում է Զայաստանի անկախութեանը, որ պիտի աշխատել Բերլինում յաջողեցնել: Այդ առթիւ որոշուեց յայտնել Թալաաթին, որ մենք պատրաստուենք գալ Բերլին և պաշտպանել մեր խնդիրը, եթէ հարկաւոր լինի բացատրութիւններ տալ այնտեղ: Մինևոյն ժամանակ որոշուեց պարզ դնել entente-ի խնդիրը և ասել, որ մենք պատրաստ ենք զբաղուել դրանով: Թող նրանք պատրաստեն իրենց առաջարկը մշակուած ձևով և մեզ ներկայացնեն:

## Նիստ XX

Սեպտ. 10-ին, երեկոյեան ժամի 10-ին:

Ներկայ էին 3 պատուիրակները, խորհրդական Գ. Խատիսեանը և գործերի կառավարիչը:

Խորհրդակցութեան նիւթն է այն հարցը, թէ ինչ քայլեր պիտի անենք այն առթիւ, որ վերջին Ռուս-գերմ. լրացուցիչ համաձայնութեամբ ընդունում է Վրաստանի անկախութիւնը, իսկ Զայաստանինը և Ադրբեջանինը՝ ոչ: Յայտնուեց, որ Ադրբեջանի պատուիրակութիւնը այդ առթիւ ներկայացրել է բողոք թէ Տաճկաց կառավարութեանը և թէ միւս դաշնակից պետութիւններին:

Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշուեց, որ մենք վաղը և եթէ Նեսսիմ բէյին, արտաքին գործերի մինիստրին տանք մեր գրաւոր բողոքը այդ մասին: Մինևոյն ժամանակ գրաւոր բողոքներ որոշուեց ներկայացնել նոյն առթիւ Գերմանական, Աւստրո-Յունգարական և Բուլղարական դեսպաններին:

## Նիստ XXI

13-ին սեպտեմբերի, երեկոյեան ժամի 9գ-ին: Ներկայ էին երեք պատուիրակները, խորհրդական Գ. Խատիսեանը և Ա. քարտուղար 3. Քոչարեանը:

1. Կարդացուեցին նոյն օրը ստացուած նամակները Բերլինից՝ Ա. Ջուրաբեանից, և Վիեննայից՝ Գ. Օհանջանեանից: Ա. Ջուրաբեանի նամակի որոշ մասերը ցոյց էին տալիս նրա տեսակէտների տարբերութիւնը մեր պատուիրակութեան և առհասարակ մեր կառավարութեան և Ազգային Խորհրդի բռնած ուղղութիւնից, յատկապէս մեր անկախութեան խնդրի վերաբերմամբ: Որոշուեց նախ հեռագրել Վիեննա Օհանջանեանին, որ, ի նկատի առնելով Բերլինում տեղի ունեցող կարևոր բանակցութիւնները, անմիջապէս վերադառնալ Բերլին, թողնելով Վենգրիա գնալու մտադրո-

լթիւնը ուրիշ անգամի: Երկրորդ՝ հեռագրել Ա. Ջուրաբեանին Բերլին, որ Հ. Օհանջանեանի հետ միասին ներկայացնեն Ռուսաց կառավարութեան ներկայացուցչին մեր կառավարութեան անունից ուժգին բողոք Հայաստանի անկախութիւնը չընդունելու առթիւ և պնդել անպայման, որ ճանաչեն մեր անկախութիւնը, իբրև միակ միջոց մեր ժողովրդի փրկութիւն ներկայումս:

Սիւնոյն ժամանակ խնդրել Ալ. Խատիսեանին՝ առանձին նամակ ուղղել Ա. Ջուրաբեանին, ցոյց տալով, որ նա պիտի ղեկավարուի Ազգ. Խորհրդի տուած դիրեկտիւներով և ամեն կերպ մեր անկախութիւնը պաշտպանի:

2. Խորհրդակցութեան նիւթ եղաւ այդ օրուայ հեռագրներուն տպուած լուրը «Kreuz-Zeitung»-ից, ըստ որի՝ Թիւրքիայի սահմանները ապահովելու համար Ռուսաստանի կողմից պիտի Թիւրքիային կապուի և նրա կազմի մէջ մտնի կօնֆեդերատիւ կապերով՝ ամբողջ աւտօնոմ Հայաստանը: Որոշուեց գրել Բերլին, որ մենք այդ մտքին համակրանքով ենք վերաբերում՝ թողնելով, ի հարկէ, վերջնական լուծումը մեր կառավարութեանը:

3. Որոշուեց նոյնպէս գրել Բերլին, որ աշխատեն բժ. Ջաւրեանի հետ կապուել և պնդել, որ նա էլ շարունակի աշխատել մեր բռնած ուղութեամբ:

4. Գ. Խատիսեան զեկուցեց, որ նա եղել է գեն. Պօմեանկովսկու մօտ, որը յայտնել է, որ ինքը եղել է ենվեր փաշայի մօտ, խօսել է մեր գաղթականութեան մասին, և ենվեր փաշան կրկին ասել է, որ չի վստահում գաղթականներին, որ նրանք չեն դուրս գայ թիւրք զօրքերի դէմ: Որոշուեց առաջիկայ տեսակցութեան ժամանակ ենվեր փաշայի հետ այդ կետի մասին նոյնպէս խօսել:

5. Ա. Խատիսեան դրեց մի քանի տնտեսական, ֆինանսական հարցեր:

ա) պատուիրակութեան անդամների անձնական կարիքների համար առաջարկում է մեր գումարներից որոշ կրետիդ բաց անել յետոյ ռոճիկից վճարելու պայմանով: Որոշուեց բանալ կրետիտ 100-ից մինչև 200 լիրա:

բ) Ներկայացուցչական ծախքը, որը տրուած էր նախորդ որոշմամբ յունիսի վերջերին՝ նախագահին և միւս անդամներին՝ միայն որոշ ժամանակով էր, և այժմ կարիք կայ նոր որոշում տալու այդ կարգի ծախքերի համար: Ժողովը սկզբունքով ընդունեց առաջարկը և յանձնարարեց Ա. Խատիսեանին պատրաստել և ներկայացնել հետևեալ անգամ մի նախագիծ այդ խնդրի մասին:

Նիստ XXII

Սեպտ. 14-ին, երեկոյեան ժամի 6-ին:

Ներկայ էին երեք պատուիրակները, խորհրդական Գ. Խատիսեան և Ա. քարտուղարը:

Երևանից և Թիֆլիզից եկած՝ Հայաստանի խորհրդարանի անդամ Ա. Բաբալեանը տուեց մանրամասն զեկուցում բոլոր խնդիրների մասին, որ ներկայումս հետաքրքրում են թէ մեզ և թէ կառավարութեանը:

Նախ նա զեկուցեց ամբողջ անցած դարձածի պատմութիւնը, կառավարութեան և Ազգ. Խորհրդի տեղափոխութիւնը Երևան, Կառավարութեան կազմակերպութիւնը, յարաբերութիւնները Թիւրքերի հետ:

1. Գաղթականութեան վիճակը շատ ծանր է, մանաւանդ Ծալկայի շրջանի և Բակուրեանի տեղաւորուած Ախալքալաքի գաղթականութեան: Կառավարութիւնը խնդրում է, որ անյապաղ պիտի աշխատել յաջողեցնել դրանց վերադարձը իրենց տեղերը:

2. Երկրորդ կարևոր կետը, որի վրայ մեր ուշադրութիւնը հրաւիրում է զեկուցողը, պարենաւորման խնդիրն է: Հացը պակասելու է առաջիկայում, դրա համար մեր կառավարութիւնը դիմել է Ադրբեջանին և խնդրել է փոխարինաբար հաց տալ մեզ գաղթականների համար: Այժմ խնդրում են մեզ, որ այստեղ մենք աշխատենք տաճիկ կառավարութեան միջոցով ազդել Նուրի փաշայի վրայ, որ նա էլ յաջողեցնի Ադրբեջանից մեզ փոխարինաբար հաց տալը:

3. Կառավարութիւնը զբաղուած է նոյնպէս Ղարաբաղի խնդրով, և պնդում է, որ մենք ամեն կերպ պնդենք Ղարաբաղը մեր ձեռքում պահելու համար, իհարկէ, առանց սուր բնաւորութիւն տալու խնդրին: Առհասարակ, Ա. Բաբալեանի ասելով, այժմեան քաղաքական սիտուացիան այնպէս է, որ մենք չը պէտք է զիջող լինենք մեր տերրիտօրեալ պահանջների վերաբերմամբ:

Ապա Բաբալեանը պատմեց մեր ներքին և արտաքին յարաբերութեան մասին մի քանի տեղեկութիւններ: Կարգապահութիւնը կանօնաւոր է, ժողովուրդը գիտակցաբար է վերաբերում գործին: Վրաստանի հետ յարաբերութիւն պահում է Ա. Ջամալեանը, որը միևնոյն ժամանակ յարաբերութիւն է պահում նաև Գերմանիայի ներկայացուցիչ ֆոն Կրեսսի<sup>198</sup> և Աւստրիայի ներկայացուցիչ Ֆրանկենշտեյնի<sup>199</sup> հետ: Նրանք երկուսն էլ են էջմիածին, ծանոթացել են գաղթակ[անների] վիճակի հետ և մի քանի հեռագրեր և գրութիւններ են ուղարկել իրենց կառավարութեանը: Կաթողիկոսը ևս յատուկ գրութիւններ է ուղղել նրանց միջոցով Վիլիելմ կայսրին և Աւստր. կայսրին:

Վերջերումս օգոստ. 30-ին ֆոն Կրեսսը, ֆոն Ֆրանկենշտեյնը, Խալիլ փաշան (օսմանեան գլխ. հրամանատար, որ եկել է Բաղդատի ֆրօնտից) և Ա. Ջամալեանը գնացին Երևան՝ Հայոց կառավարութեան հետ յատուկ խորհրդակցութեան համար, որի նիւթը ինքը զեկուցողը չը գիտէ: Գերմանիան բաւական նոր զօրքեր է բերել վերջերում Փոթիի վրայով, այնտեղից ուղղելու համար Բագուի վրայ և թէ Հայաստանի սահմանները:

Ապա զեկուցողը ծանօթացրեց Բագուի խնդրի ներկայ դրութեան հետ: Յետոյ կանգ առաւ Անդրանիկի խմբի վրայ, որը ներկայումս արդէն միանգամայն լուծուած պէտք է համարել:

Ծանօթացրեց մեր զօրքի այժմեան վիճակի հետ, նա ներկայացնում է մի դիւիզիա, զեներալ Սիլիկովի հրամանատարութեամբ: Նիստը ընդհատուեց երեկոյեան շարունակելու համար:

### Նիստ XXIII

Սեպտ. 14-ին, երեկոյեան ժամի 10-ին:

Ներկայ էին երեք պատուիրակները, խորհրդական Գ. Խատիսեան և Ա. քարտուղարը:

Բժ. Ա. Բաբալեանը շարունակեց իր զեկուցումը:

Յարաբերութիւնները տեղական թուրքերի հետ շատ լաւ են Գանձակում և առհասարակ Ադրբեջանում՝ շնորհիւ Նուրի փաշայի: Այդ մասին երևանում վկայել է նոր եկած Խալիլ փաշան, որը ինքը ևս շատ լաւ տրամադրութիւններ ունի: Ղարաբաղում նոյնպէս յարաբերութիւնները շատ լաւ են: Տեղական թուրքերի մէջ նկատուում է դժգոհութիւն տաճիկներից, պատճառը գլխաւորապէս զօրահաւաքն է, նաև ուրիշ պատճառներ կան: Շատերը փախչում են և դեզիրտիր դառնում:

Ապա ծանօթացրեց Չայաստանի խորհրդարանի կազմի հետ: Կառավարութեան ծրագիրը զուտ գործնական է:

Տ. Բեգզատեանը ընդունել է Չայկական կառավարութեան ներկայացուցչի պաշտօնը Ադրբեջանում:

Կառավարութիւնը որոշել է սեփական հեռագր. գիծ ունենալ երևան-Թիֆլիզ, վերջացնելով զեկուցումը բժ. Բաբալեանը նորից պնդեց իր առաջարկած գլխաւոր կետերի վրայ, որոնց մասին պիտի աշխատի պատուիրակութիւնը, այն է.

1. գաղթականութեան վերադարձի խնդիրը,
2. պարէնաւորման խնդիրը, այն է՝ Ադրբեջանից 2 միլիոն փութ հաց խնդրել Նուրի փաշայի միջոցով,
3. գերիների վերադարձը արագացնել Ալեքսանդրապոլում: Չայկ. կառավարութեան ներկայացուցիչը թիւք շտաբում է՝ փաստաբան Խոյեցեանը<sup>260</sup>:

Ապա կարդացուեցին Արամի և Խ. Կարծիկեանի նամակները, ուղղած Ահարօնեանին և Խատիսեանին:

Ձեկուցման առթիւ խորհրդակցութիւնը և որոշումներ ընդունելը յետաձգուեց յաջորդ նիստին, որը նշանակուեց 15-ին Սեպտեմբերի:

### Նիստ XXIV

15-ին Սեպտեմբերի, երեկոյեան ժամի 9 ½-ին:

Ներկայ էին երեք պատուիրակները, խորհրդական Գ. Խատիսեան և Ա. գործերի կառավարիչը: Ներկայ էր նոյնպէս բժ. Ա. Բաբալեանը:

Ժողովը զբաղուեց արծարծելով այն խնդիրները, որոնք բղխում էին բժ. Բաբալեանի զեկուցումից: Որոշուեց դրանցից կարևորների մասին առանձին դիմումներ անել Նեսսիմի բէյին և Էնվեր փաշային:

Ահա դրանց ամփոփումը.

1. Անդրանիկի խմբի և ուրիշ խմբերի լուծուելու, երկաթուղու գծի ապահովութիւնը, զօրքերի կանոնաւոր և անարգել տեղափոխութիւնը մեր աջակցութեամբ:

2. Չայերի և թաթարների լաւ յարաբերութիւնները Ադրբեջանում և մեզ մօտ: Խալիլ փաշայի վկայութիւնը:

3. Պարէնաւորման խնդրի վերաբերմամբ՝ Ադրբեջանից փոխարինաբար հաց խնդրել, աշխատել ազդել այստեղից Նուրի փաշայի վրայ, որ օգնի մեզ այդ խնդրում:

Որոշուեց խնդրել 1 զ միլիոն փութ:

4. Էսսադ փաշայի մասին, որ այնքան էլ բարեկամական և ուշադիր տրամադրութիւն չէ ցոյց տալիս դէպի մեր պահանջները:

5. Ուղղակի հեռագրական հաղորդակցութիւն. Թիֆլիզ-Երևան և Երևան-Բաթում յաջողեցնել, կապուելով Պօլսի հետ:

6. Կարևորագոյն կետը՝ գաղթականների վերադարձը իրենց տեղերը արագացնել, մասնաւոր Ախալքալաքի շրջանի, Ախալքալաքի հայրենակց. միութեան գրութիւնը որոշուեց թարգմանել և ներկայացնել:

7. Գերիների շուտափոյթ վերադարձնելը:

8. Ալեքսանդրապոլի շրջանից տեղահանուած հայերի վերադարձը երզրումից:

9. Ղարաբաղի խնդիրը դնել անպայման և պնդել:

Այդ խնդիրների մասին յանձնարարուեց Ալ. Խատիսեանին՝ վաղը և եթ խօսել արտաք. գ. մինիստր Նեսսիմի բէյի հետ և դրանից յետոյ որոշուեց տեսակցութիւն խնդրել նաև Էնվեր փաշայից և նրա հետ խօսել կարևորագոյն պահանջների մասին:

### Նիստ XXV

20-ին Սեպտեմբերի, երեկոյեան ժամի 10-ին:

Ներկայ էին երեք պատուիրակները խորհրդական Գ. Խատիսեանը, Ա. Բաբալեանը և Ա. քարտուղարը:

1. Կարդացուեցին Վիեննայից ստացուած նամակները բժ. Օհանջանեանից և այդ առթիւ մտքերի փոխանակութիւն եղաւ:

2. Ահարօնեանը զեկուցեց իր ունեցած տեսակցութեան մասին Պարսից դեսպանի հետ, որ նոր է վերադարձել Բերլինից:

3. Ապա ժողովը մանրամասնօրէն ծրագրեց այն հարցերը, որ պիտի տրուին Էնվեր փաշայի հետ վաղը ունենալիք տեսակցութեան

ժամանակ: Ստբերի երկար փոխանակութիւնից յետոյ կազմուեց հետևեալ ցանկը հարցերի.

1). Գաղթականների վերադարձի խնդիրը, որ պետք է ամեն կերպ արագացնել, որոշելով դրա համար շրջանները և վերադարձը ապահովելով:

2). Պարենաւորման խնդիր, այն է՝ խնդրել Ադրբեջանից 1 գ միլիոն փութ հաց, և միջնորդել էնվեր փաշայի մօտ, որ ազդի Լուրի փաշայի վրայ այդ ուղղութեամբ:

3). Ուղղակի հեռագրական գիծ յաջողեցնել Երևան-Բաթում և Երևան - Թիֆլիզ, ապա Կ. Պօլիս:

4). Գերիների և քաղաքական interie'-ների վերադարձը:

5). Երզրումից վերադարձնել Ալեքսանդրապոլի շրջանի տեղահանուածներին, թուով մօտ 8000 գաղթականների մասին խօսելիս յատկապէս կանգ առնել Ախալքալաքի և Արեշի շրջանի գաղթականների վիճակի վրայ:

4. Արտ. Բաբալեանը հարց բարձրացրեց այն քարտէզի մասին, որ մենք ներկայացրել ենք կառավարութեանը և դեսպաններին՝ մեր ցանկացած սահմանների վերաբերմամբ և մի քանի առարկութիւններ արեց այդ առթիւ: Այդ մասին բացատրութիւններ տուեցին Սիք. Պապաջանեանը, Գ. Խատիսեանը և Ալ. Խատիսեանը, պաշտպանելով մեր ներկայացրած քարտէզը: Այժմ եթէ կան լրացնելու կամ փոփոխելու կետեր, մենք կարող ենք տալ մի լրացուցիչ գրութիւն և քարտէզ:

Բայց ներկայումս բոլորն էլ գտնում են, որ պետք է դեռ ևս սպասել, թէ ինչպէս կը պարզուեն հանգամանքները և ըստ այնմ վարուել ապագայում, երբ նորից կը դնենք այդ խնդիրը:

## Նիստ XXVI

Սեպտեմբերի 23-ին, երեկոյեան ժամի 4-ին:

Ներկայ էին երեք պատուիրակները, Գ. Խատիսեանը, բժ. Ա. Բաբալեանը և Յ. Քոչարեանը:

Ալ. Խատիսեանը զեկուցեց իր տեսակցութեան մասին գեներալ Պօմեանկովսկու հետ:

1. Նա ասել է, որ 22-ին եղել է էնվեր փաշայի մօտ, որը յայտնել է, որ մի օր առաջ հեռագրել է Էսսադ փաշային, որ անյապաղ Ախալքալաքի գաւառում պատրաստեն 100-125 հայ գիւղեր՝ փախստականներին տեղաւորելու համար:

2. Քանի որ մուսուլմաններին Ախալքալաքի գաւառից Բորչալու պիտի բերի, նա հեռագրել է Վրաստանի իր ներկայացուցչին, որ Վրաստանը թոյլ տա սրանց վերադառնալ, խնդրում է էնվերը, որ մենք էլ հեռագրենք մեր կառավարութեանը այդ մասին բանակցելու համար վրացիների հետ:

3. Նա խօսել է էնվեր փաշայի շտաբի կառավարիչ Սեկտ փաշայի հետ (զերմանացի), որը, երևում է, հայերին լաւ չի վերաբերում: Նա մի քանի փաստեր տուեց այդ մասին և խորհուրդ էր տալիս մեզ աշխատել Բերլինի միջոցով դրա վրայ ազդել մեր օգտին կամ որ և է այլ միջոցով ազդել նրա վրայ (թերևս դեսպանի միջոցով): Ապա Պօմեանկովսկին խնդրել է իրեն, տեղեկութիւն տալ մեր զօրքերի մասին. 1. որքա՞ն է նրանց թիւը այժմ, 2. որքա՞ն կարող ենք ունենալ maximum, 3. ինչքա՞ն ենք որոշել պահել, ինչ կոնտինգենտ: Բացի դրանից, խնդրեց տեղեկութիւն տալ իրեն դեռ գոյութիւն ունեցող խմբերի մասին գոնէ, գեներալ Սեկտը ասում է, որ Անդրանիկի տեղ այժմ երկու ուրիշ խմբեր են դուրս եկել ասպարեզ:

Գեներալը յայտնել է, որ ինքը նամակ է ստացել Վիեննայից գեներալ Արցից<sup>201</sup> (շտաբի գլխաւոր), որը գրում է, որ մերոնք եղել են նրա մօտ: Գրում է, որ Աւստրան սերտ կապուած է Գերմանիոյ հետ և գործում է համաձայնութեամբ, նրանք կապուած են բօլշևիկների կառավարութեան հետ, և չեն կարող ոչ մի քայլ անել, որը կարող է ուժեղացնել հակաբոլշևիկական տրամադրութիւնը երկրում՝ յօգուտ Ռուսաստանի քայքայման: Միևնոյն ժամանակ մենք շահագրգռուած ենք Թիւրքիայի հետ էլ լաւ գիծ պահել, հաշուի առնել նրան և կապ պահել նրա հետ, դրա համար էլ **Կովկասի և Բագուի խնդրում**, ըստ Արցի, մենք պիտի Գերմանիայի հետ միասին կօմպրօմիսի գիծ բռնենք Թիւրքիայի վերաբերմամբ: Եթէ դուք, հայերդ, ասում է գեներալը, որևէ կերպով ինքներդ յաջողեցնէք ձեռք բերել Ռուսաստանի հաճութիւնը (օրինակ պատգամաւորութիւն ուղարկելով Երևանից), քանի որ նրանք հայերի մասին լաւ կարծիք ունեն,- դուք կարող էք de facto ձեր անկախութիւնը ապահովել: Իսկ մենք արել ենք և կանենք այսուհետև ձեզ օգնելու համար: Առանձին ներկայացուցիչ ուղարկել Չայաստան առայժմ չենք կարող, բայց ֆօն Կրէսին և ֆօն Ֆրանկենշտեյնին գրուած է, որ հովանաւորութիւն ցոյց տան հայերին:

Ֆօն Արցը, ինքը զինուորական, և զինուորական կուսակցութիւնը ձեր դատի կողմակից է, նա գանգատուում է, որ Արտաքին գործ. մինիստրութեան մէջ առանձնապէս չեն հետաքրքրուում մեզնով, հարկաւոր է, որ մենք **Վիեննայում յատուկ ներկայացուցիչ ունենանք:**

Զեկուցումը լսելուց յետոյ որոշուեց մի քանի համապատասխան քայլեր անել և տալ գեներալին խնդրած տեղեկութիւնները:

## Նիստ XXVII

Սեպտեմբերի 25-ին, երեկոյեան ժամի 9 ½-ին:

Ներկայ էին Ահարօնեան, Ա. Խատիսեան, Մ. Պապաջանեան և Յ. Քոչարեան:

Նիստը ուներ զուտ վարչական բնոյթ:

Ա. Խատիսեանը ներկայացրեց նախագիծ, թէ որքան զուճար տալ լրացուցիչ ներկայացուցչական ծախքերի համար պատուիրակութեան անդամներին և պաշտօնեաներին: Նրա առաջարկութեամբ ընդունուեց հետևեալ բաշխումը. նախագահին՝ 200 լիրա, երկու միւս պատուիրակներին՝ 100-ական լիրա, խորհրդական Գ. Խատիսեանին, Ա. քարտուղար 3. Քոչարեանին և երկրորդ քարտուղար և հաշուապահ Տ. Միրզոյեանին ու քարտուղար-թարգման Ծ. Թախթաճեանին՝ 50-ական լիրա, ընդհանուր զուճարը՝ 600 լիրա:

#### Նիստ XXVIII

28-ին Սեպտեմբերի, երեկոյեան ժամի 10-ին:

Ներկայ էին երեք պատուիրակները, Գ. Խատիսեան, Ա. Բաբալեանը և 3. Քոչարեանը:

1. Կարդացուցին Բերլինից այդ օրը ստացուած երկու նամակները՝ Գ. Օհանջանեանի՝ 19-ից և 23-ից սեպտեմբերի, և այդ առթիւ եղաւ մտքերի փոխանակութիւն:

2. Այդ նամակների և մեր ունեցած ուրիշ տեղեկութիւնների հիման վրայ ժողովը քննութեան դրեց մեր մօտակայ անելիքի հարցը:

Նախ, բոլորն էլ գտնում էին, որ պէտք է միանգամից վերջնականապէս լուծել զաղթականներին իրենց տեղերը վերադարձնելու խնդիրը, և երկրորդ, անպայման աշխատել Բրեստի սահմանները ստանալ: Այդ ուղղութեամբ պիտի աշխատել հենց անմիջապէս խօսել այդ մասին Թալաթին ներկայանալու ժամանակ:

Ա. Պապաջանեանը առաջարկեց նաև, որ մենք դիմենք մեր կառավարութեանը երևան, որ մի ուժեղ պատգամաւորութիւն ուղարկի Մոսկվա բօլշևիկների կառավարութեան հետ յարաբերութիւններ հաստատելու համար: Միևնոյն ժամանակ նա առաջարկում էր աշխատել որ և է միջոցով յարաբերութիւններ ստեղծել Արևմտեան Եւրոպայի մեր գործիչների հետ:

#### Նիստ XXIX

5-ին Հոկտեմբերի 1918, ցերեկը ժամի 2-ին:

Ներկայ էին երեք պատուիրակները, Գ. Խատիսեանը, Ա. Բաբալեանը և 3. Քոչարեանը:

Ա. Ահարօնեանը զեկուցում տուեց Հալիլ բէյի հետ իր ունեցած տեսակցութեան մասին, որը կայացել էր առաւօտեան: Քանի որ Հալիլ բէյը առաջարկել էր համաձայնութեան գալ Ադրբեջանի ներկայացուցիչների հետ, ժողովը քննութեան առարկայ դարձրեց, թէ ինչ սահմանների վերայ մենք պէտք է պնդենք անպայման, ինչ զիջումներ մենք կարող ենք անել նրանց, Ղարաբաղը անպայման պիտի պահանջենք և ոչ մի զիջում այդ կողմից, միայն տալով թուրք ազգաբնակչութեանը նրանց եայլաղների յարմարութիւնները:

Մշակուեցին մի քանի կէտեր, որոնց վերաբերմամբ մենք կարող ենք աջակցութիւն ցոյց տալ մեր կողմից Ադրբեջանի կառավարութեանը, ինչպէս, օրինակ, նրանց անկախութիւնը պաշտպանել Ռուսաստանի առաջ, նաև Բագուի խնդրում նրանց իրաւունքները պաշտպանել, աջակցութիւն ցոյց տալ Վրաստանի հետ յարաբերութիւնների խնդրում և այլն: Ապա ժողովը մշակեց մանրամասն այն հիմունքները, որոնցով մենք պիտի պաշտպանենք մեր բռնած դիրքը մեր առաջիկայ բանակցութիւնների ժամանակ Ադրբեջանցիների հետ:

Յանձնարարուեց Գ. Խատիսեանին պատրաստել համառօտ ամփոփում մեր պահանջների և դրանց հիմնաւորումը:

Միևնոյն ժամանակ ժողովը յանձնարարեց Ա. Ահարօնեանին, Ա. Պապաջանեանին այսօր և եթ սկսել յարաբերութիւնները Ադրբեջանի ներկայացուցիչների հետ՝ խնդիրները շուտով պարզելու համար:

#### Նիստ XXX

8-ին հոկտեմբերի 1918, երեկոյեան ժամի 9 ½-ին:

Ներկայ էին երեք պատուիրակները, Գ. Խատիսեանը, Արտ. Բաբալեանը և 3. Քոչարեանը:

1. Նախագահը, ի նկատի առնելով, որ արդէն վերջնականապէս պարզուել է, որ կօնֆերանսը այլ ևս չի լինելու, և ուրեմն կարիք չի մնում պատուիրակութեանը պահել այստեղ իր ամբողջ կազմը, առաջարկեց ժողովին այդ առթիւ տալ իր որոշումը: Ժողովը միանգամայն համաձայնեց այդ տեսակետի հետ և գտաւ, որ երևի շատ մօտ ապագայում պատուիրակութիւնը ամբողջ կազմով պիտի վերադառնայ Երևան, թողնելով այստեղ միայն մէկ անձ՝ իբրև պաշտօնական ներկայացուցիչ Հայկական կառավարութեան, իսկ առայժմ ժողովը գտաւ, որ կարելի է պատուիրակութեան կազմից ուղարկել Կովկաս երեք հոգի, այն է՝ խորհրդական Գ. Խատիսեանին, Ա. քարտուղար 3. Քոչարեանին և քարտուղար թարգման Ծ. Թախթաճեանին, ըստ որում այստեղ կը մնան միայն երեք պատուիրակները և քարտուղար-հաշուապահ Տ. Միրզոյեանը: Որոշուեց անմիջապէս պատրաստել այդ երեք հոգու համար անհրաժեշտ թղթերը և ուղարկել նրանց առաջին մեկնող շոգենաւով:

2. Նախագահը յայտնեց, որ վաղը առաւօտեան ժամի 11-ին Հալիլ բէյի մօտ նշանակուած է տեսակցութիւն մեր պատուիրակութեան համար և առաջարկեց մտքերի փոխանակութիւն անել այդ առթիւ:

Ղրանից առաջ արդէն ժողովակազմները տեսակցութիւն էին ունեցել ադրբեջանցիների կողմից մասնաւոր կերպով մեզ մօտ եկած Ֆարուխ բէյ Վեզիրովի հետ: Թէ այդ տեսակցութեան վերայ հիմնուած և թէ այլ նրանց ներկայացուցիչների հետ ունեցած խօսակցութիւնների հիման վրայ ժողովը որոշեց յայտնել Հալիլ բէյին, որ Ղարաբաղի խնդիրը մենք առայժմ յետաձգում ենք Կովկասում յետոյ վճռելու համար. Նախիջևանը վերցնում

ենք, իսկ Ախալքալաքի մասին էլ որոշում ենք աշխատել համաձայնութեան գալ վրացիների հետ:

3. Համաձայն Համօյի նամակի, որոշում է նրան փոխադրել 20.000 մարկ:

Նիստ XXXI

11-ին հոկտեմբերի, առաւօտեան ժամի 12-ին:

Ներկայ էին երեք պատուիրակները, Գ. Խատիսեան, Ա. Բաբալեան և Յ. Քոչարեանը:

1. Կարդացուեց Թիֆլիզից Ա. Ջամալեանից Հոկտեմբերի 9-ից տրուած հեռագիրը, որը նախ հաղորդում էր, որ թիւրք կառավ. ներկայացուցիչները դժուարութիւններ են ստեղծում մեր կուրիերները ուղարկելու խնդրում և երկրորդ, որ Ղարաբաղի խնդրի շուրջը կարող են բարդութիւններ առաջ գալ և խնդրում է միջոցներ ձեռք առնել դրանց դէմ:

Նախքան մեր անելիքի մասին խօսելը լսուեցին նաև գեկուցումներ Ա. Ահարօնեանի և Ա. Խատիսեանի, իրենց արած այցելութիւնների մասին:

2. Ա. Ահարօնեան այդ առաւօտեան այցելել է գեներալ Ֆօն Լոսսովին: Վերջինին Ահարօնեանը ծանօթացրել է Հալիլ բէյի հետ իր ունեցած վերջին տեսակցութեան ժամանակ յարուցած խնդիրներին, և յայտնել է, որ մենք ցանկանում ենք այժմ մի թուրք ստանալ թիւրք կառավարութիւնից, որով վաւերացներ իր բերանացի յայտարարութիւնները Բրեստի սահմանների և զօրքերը հեռացնելու մասին:

Ֆ. Լոսսովը խորհուրդ է տուել այլ ևս չը դիմել Հալիլին, այլ սպասել և նոր կառավարութիւնը հաստատուելուց յետոյ դիմել Իզզէթ փաշային, որը կը տայ մեր ցանկացած թուրքը:

Առհասարակ նա ասել է, որ այժմ մեզ՝ հայերիս սպասւում է «un avenir très heureux»<sup>202</sup>, որ մենք պէտք է լաւ յարաբերութիւններ պահենք վրացիների հետ, որոնք, նրա ասելով՝ այժմ մեզ կը տան և Լոռին և Ախալքալաքը, և ինքն էլ այդ մտքով կաշխատի ազդել նրանց վրայ: Ադրբեջանի և Հիւսիս. Կովկասի կառավարութիւնների մասին նա բացասական վերաբերմունք ցոյց տուեց և յայտնեց, որ նրանք չեն կարող գոյութիւն ունենալ: Խորհուրդ տուեց մեզ դեռ սպասել և գնալու մասին չը մտածել նոր կառավարութիւնը տեսնելուց առաջ:

3. Ա. Խատիսեանը գեկուցեց գեներալ Պօմեանկովսկու հետ իր ունեցած տեսակցութեան մասին, որը տեղի է ունեցել առաւօտեան և տևել է 1 զ ժամ: Նա (գեներալը) սկզբում պարզել է ընդհանուր դրութիւնը, որ այժմ առաջ է եկել խաղաղութեան առաջարկի շուրջը: Ասել է, որ Թիւրքիան որոշել է յամենայն դէպս անջատ խաղաղութեան կապի և Գերմանիան ու Աւստրիան էլ որոշ պատճառներով հաւանութեան են տուել Թիւրքիայի այդ որոշմանը: Նոր կառավարութեան գլխաւոր անձը՝ Իզզէթ փաշան է, որի հետ և ինքը ևս կաշխատի անմիջապէս տեսնուել և համոզել նրան շուտով բաւարարել հայերի պահանջները, որոնք հետևեալն են. 1. տերիտորիան

մաքրել և յանձնել հայերին՝ զաղթականներին տեղաւորելու համար և 2. զօրքերը հեռացնել:

Այժմ, նրա ասելով, Գերմանիան և Աւստրիան այլ ևս այն ոյժը չեն ներկայացնում Թիւրքիայի աչքում, որից նա ճնշուեր և զիջումներ աներ, և այժմ նա սկսում է հակուել Entente-ի կողմը, ի միջի այլոց յայտնեց, որ Աւստրիան արդէն յետ է կանչել Կովկասից Ֆօն Ֆրանկենշտեյնին:

Ա. Պապաջանեանը հիմնուելով եղած գեկուցումների վրայ՝ գտնում է, որ այժմ աւելի ևս քան երբէք մնում ենք Թիւրքիայի հետ երես առ երես, քանի որ Գերմ. և Աւստր. այլևս ասպարէզից հեռանում են, իսկ Entente-ն էլ դեռ հեռու է, ուրեմն պէտք է աշխատենք մի կերպ նրա հետ համաձայնութեան գալ Ադրբեջանի խնդրում, գտնել մի որ և է ելք: Ինքը դեռ ևս չի ուզում մատնանիշ անել, թէ ինչ ելքը ամենայարմարն է, բայց առաջարկում է այդ մասին լրջօրէն մտածել:

Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշում է թողնել հարցի լուծումը յաջորդ նիստին, իսկ առայժմ Ղարաբաղին սպառնացող վտանգի առթիւ անմիջապէս տեսակցութիւն պահանջել Թալաաթից և Հալիլ բէյից, նաև ենվեր փաշայից: Միւս կողմից Ա. Խատիսեանը պիտի նորից տեսնի գեն. Պօմեանկովսկուն, իսկ Ա. Ահարօնեանը՝ գեն. Ֆօն Լոսսովին և Գերմ. դեսպան Բերնստօրֆին:

Նիստ XXXII

15-ին Հոկտեմբերի 1918թ., երեկ. ժամի 9-ին:

Ներկայ էին երեք պատուիրակները, խորհրդական Գ. Խատիսեանը, Արտ. Բաբալեան և Յ. Քոչարեանը:

1. Չեկուցեցին այդ օրը Բերլինից ստացուած նամակները՝ բժ. Հ. Օհանջանեանից հոկտ. 1-ից և 4-ից: Որոշուեց պատրաստել և ուղարկել բժ. Օհանջանեանի և պ. Գրինֆիլդի<sup>203</sup> համար պահանջուած թղթերը, նշանակելով առաջինին Հայկ. կառավարութեան լիազօր ներկայացուցիչ. իսկ երկրորդին՝ խորհրդական, որը իրաւունք պիտի ունենայ փոխարինելու առաջինին նրա բացակայութեան դէպքում: Նոյնպէս որոշուեց ուղարկել մի գրութիւն Ձածօյեանի<sup>204</sup> անուանը, նշանակելով նրան ներկայացուցիչ Ռկրաինայի համար:

2. Նախագահը գեկուցանելով, որ բժ. Ա. Բաբալեանը և Գ. Խատիսեանը վաղը ուղևորուում են Թիֆլիզ-Երևան, առաջարկեց քննութեան առնել, թէ ինչ խնդիրների մասին ցանկալի է, որ նրանք գեկուցանեն կառավարութեանը:

Ներկայ հանգամանքներում առանձին կարևորութիւն է ստանում Երոպայում մեր դատի պրօպագանդան վերսկսելու խնդիրը և ուժեղ բափով: Այդ մասին պիտի առաջարկել կառավարութեանը մշակել մի ծրագիր և մի պատգամաւորութիւն կազմել Երոպա ուղարկելու համար, իսկ մինչ այն պիտի աշխատել այժմէն իսկ կապ ստեղծել Նուպար փաշայի հետ և ուրիշ արտասահմանեան գործող մարմինների հետ:

ժողովը գալիս է այն եզրակացութեան, որ Եւրոպայում ցանկալի է, որ երևան գան և գործեն առանձին պատուիրակութիւններ, մէկը թիւրքահայերի կողմից և նրանց անունից, իսկ միւսը՝ ռուսահայերի կամ նորակազմ Հայաստանի կառավարութեան անունից: Պաշտօնապէս դրանք պիտի լինեն առանձին, իսկ իրականութեան մէջ կը գործեն ձեռք ձեռքի տուած և համերաշխ: Այդ ուղղութեամբ պէտք է այստեղից Երևան գնացող մեր ներկայացուցիչները աշխատեն, որ կառավարութիւնը քայլեր անի:

Միաժամանակ որոշուում է գրել Բերլին բժ. Օհանջանեանին, որ աշխատի շուտով անցնել Շվեյցարիա և, թերևս, Ֆրանսիա և այլ տեղեր և աշխատել կապեր ստեղծել եղած և գործող մարմինների հետ: Պօլսի մեր պատուիրակութիւնը պիտի աշխատի շուտով վերջացնել այստեղի գործերը և վերադառնայ Երևան՝ այնտեղ կառավարութեանը զեկուցում տալու և նոր անելիքը պատրաստելու համար:

Որոշուում է գրել կառավարութեանը, որ բժ. Բաբալեանը և Գ. Խատիսեանը երկուսը լիազօրուած են միասին գնալ Երևան և զեկուցում տալ կառավարութեանը այստեղի գործերի մասին: Այդ մասին, ինչպէս և դելեգացիայի մօտալուտ մեկնումի մասին, որոշուեց հեռագրել կառավարութեանը:

Նիստ XXXIII

18-ին Հոկտեմբերի, երեկոյեան ժամի 9½-ին:

Ներկայ էին երեք պատուիրակները և Յ. Քոչարեանը:

Ի նկատի առնելով, որ պատուիրակութիւնը արդէն վերջացրել է իր բանակցութիւնները և կօնֆերանսը այլ ևս չի կայանալու, միևնոյն ժամանակ նոր առաջ եկած հանգամանքների շնորհիւ անհրաժեշտ է, որ պատուիրակութիւնը շուտով խորհրդակցութիւն ունենայ կառավարութեան հետ առաջիկայ անելիքի մասին, պատուիրակութիւնը որոշուում է՝ պատրաստուել մօտ օրերում Հայաստան վերադառնալու համար:

Որոշուում է ամէն ջանք գործ դնել [Թուրքիայի] կառավարութիւնից ստանալ գրաւոր մի դօկումենտ՝ մեր տերիտորիան մաքրելու և մեզ վերադարձնելու մասին:

Մեկնելով այստեղից, որոշուում է թողնել այստեղ ժամանակաւորապէս ընթացիկ գործերը վարելու համար (յատկապէս գերիների և քաղաքացիական interne-ների վերաբերմամբ) պատուիրակութեան քարտուղար-թարգման Թախթաճեանին: Միաժամանակ որոշուում է հեռագրել կառավարութեանը Երևան՝ հաղորդելով մեր որոշումը և խնդրելով ուղարկել Կ. Պօլսի համար մի մնայուն ներկայացուցիչ, որ գիտենայ ֆրանսերէն և ծանօթ լինի Թիւրքիայի պայմաններին:

ՀԱԱ, ֆ.200. ց.1, գ.8, ք 32-99: Բնագիր. ձեռագիր

УПРАВЛЯЮЩЕГО ДЕЛАМИ ДЕЛЕГАЦИИ ЗАКАВКАЗСКОГО  
СЕЙМА ПО ВЕДЕНИЮ ПЕРЕГОВОРОВ О МИРЕ С ТУРЦИЕЙ

Февраль

22-Мирная делегация выехала из Тифлиса в 3 часа дня в специальном поезде. В Батум посланы необходимые распоряжения для подготовки отъезда в Трапезунд.

23-В полдень делегация со всеми сопровождающими персоналами и охраной в 50 человек погрузилась на вспомогательный крейсер "Король Карл".

В Трапезунд прибыли в 8 1/2 часов вечера.

Город перешел в полное обладание турок.

24-С раннего утра по городу движется длинная вереница войск по направлению к Ризэ. Турки считают себя полными хозяевами в Трапезунде.

Съехав на берег я обратился к Трапезундскому вали и Командующему пехотной дивизией, находившимся на пристани с почетным караулом для встречи нашей делегации, с приветствием от имени Председателя и сообщил что вся Закавказская делегация, в том числе и представители военного ведомства, должна быть размещена вместе, в одном здании.

В виду настояний вали о разоружении идущего с нами конвоя, я, считаясь с принципиальным характером вопроса /нейтральность Трапезунда/ и в согласии с данным мне Председателем поручением, заявил, что конвоём не может быть отделен от прочей свиты делегации и что делегация съедет на берег в том виде, как она того пожелает или, в противном случае, - целиком останется на крейсере. Не соглашаясь на это и ссылаясь на противность международным законам и обычаям сопровождения мирной делегации вооруженным конвоем, вали вновь подтвердил, что не может согласиться на пропуск в город вооруженных людей. Тогда я заявил ему, что наша делегация останется на крейсере до прибытия турецкой мирной делегации, совместно с которой и урегулируется этот вопрос.

После сказанного, я откланялся вали и прочим властям и вернулся на крейсер.

25-Сегодня Председатель мирной делегации Закавказского Сейма, съехав на берег и приняв почетный караул, в сопровождении Начальника Штаба фронта генерала Левандовского, Управляющего делами М. Туманова, делегата Гаидарова и обер-офицера для поручений Кизирия, посетил Начальника Трапезундского укрепленного раёна-

на генерала Колосовского и Трапезундского вали. В разговоре с последним, после взаимных приветствий, Председатель сообщил, что мирная делегация не считает для себя приемлемым дебаркироваться при условиях указанных Трапезундскими властями /разоружение конвоя или оставление его на крейсере/ и предпочитает оставаться на крейсере до прибытия турецких делегатов.

Вали обещал со своей стороны, снестись со своим начальством и спросить по этому поводу его инструкции.

Неоднократно, как во время моего с ним свидания /24 февраля/, так и сегодня вали подчеркивал, что мы его гости, и что он просит обращаться непосредственно к нему за провиантом и прочими надобностями и обещал предоставить в наше распоряжение моторную лодку для регулярных сношений с берегом.

Что касается прибытия Оттоманской мирной делегации, то вали объяснил, что им получено сообщение из ставки о выезде накануне из Константинополя делегатов, которые, по его расчету, должны быть в Трапезунде завтра, т. е. 26 февраля.

26-В виду сообщения Закавказского Правительства о требовании турецкого генералиссимуса касательно эвакуации Карса, Батума и Ардагана и запроса Е. П. Гегечкори о времени прибытия в Трапезунд турецкой делегации, Председатель нашей делегации обратился к Вали с просьбой письменно подтвердить о выезде турецких делегатов из Константинополя.

27-В 8 часов утра отправлено письмо к вали с сообщением, что в виду неприбытия Оттоманской делегации, после четырех дней ожидания мы отправляемся в 9 часов утра в Батум, за провиантом и будем ждать там известий турецких делегатов, при чем обещаем вернуться в Трапезунд, как только делегаты приедут туда.

Одновременно прибыл турецкий офицер от вали с сообщением, что делегация прибывает сегодня. В то же время показался крейсер "Бекли-Сефкет". Узнав о прибытии на нем делегатов, я по поручению нашего Председателя, в сопровождении нескольких лиц персонала, отправился на крейсер и приветствовал турецкую делегацию.

Явившийся затем на наш крейсер делегат Хосров-бей приветствовал нашего Председателя. После обмена мнениями решено устроить встречу двух Председателей на суше для обсуждения некоторых предварительных вопросов.

Встреча состоялась в 1 час дня. Мы были встречены на пристани почетным караулом. Вечером, в 6 часов, состоялся наш переезд в город.

28- Турецкая делегация была у нас с визитом. Мы посетили ее ответным визитом. Обмен любезностями. Турецкие делегаты говорили много о дружбе с Закавказьем. Ничего сколько нибудь конкретного. Видимо зондируют почву. Не исключена возможность, что их миссия этим и ограничивается.

### Март

1-Сегодня в 3 часа дня состоялось первое заседание мирной Конференции, открытой вступительной речью Председателем ставшего Рауф-бея. После ответной речи А.И. Чхенкели была избрана особая комиссия для проверки полномочий. Турки огласили затем запрос о форме государственного устройства Закавказья. Как слово Рауф-бея об особых задачах Турции на Кавказе, так и запрос произвели на нашу делегацию сильное впечатление.

2-Сегодня состоялось второе заседание Конференции. Обсуждался наш ответ на запрос турок о форме правления на Кавказе. Заседание открылось в начале официально, перешло затем в частное совещание в виду заявления А.И. Чхенкели о том, что вопросы внутреннего порядка хотя бы они и носили характер ознакомления, как то подчеркивали турки, в Конференции обсуждаться не могут. Турки интересовались историей возникновения Сейма. Сообщили, что имеют широкие полномочия для заключения мира.

3-Сегодня третье заседание Конференции продолжалось не более часа. Турки огласили декларацию с объяснением своей точки зрения по поводу нашего ответа на их запрос о независимости. После декларации мы просили перерыва для выработки ответа. В декларации турки признали нашу позицию неприемлемой. На Брестских условиях настаивают и вместе с тем требуют объявления независимости Закавказья.

4-Трехчасовое свидание А.И. Чхенкели с Рауф-беем и Хосров-беем. Обсуждались принципы, намеченные Сеймом и известные туркам из газет.

5-Весь день был посвящен обсуждению проекта ответа на турецкую декларацию о неудовлетворительности наших объяснений по поводу независимости.

6-Частное свидание Председателей, продолжавшееся 2 1/2 часа. Рауф-бей по прежнему исходит из Брестского договора. У нас раздаются голоса о необходимости ехать в Константинополь, для непосредственных переговоров с турецкими государственными деятелями.

7-Ничего примечательного. 4-е заседание Конференции. Очередной обмен декларациями по поводу объявления независимости Кавказа.



